Թողարկման 21-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2014

Նոյեմբեր

թիվ 11 (195)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Իզի Փեյ» ՍՊԸ-ին դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպության և վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպության լիցենզիա տրամադրելու, «Գարանտ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի «ոչ կյանքի ապահովագրության իրականացման» մի շարք դասերով լիցենզիան և «Ռ.Ռ.Հ. եղբայրներ» ՍՊԸգրավատան կազմակերպման լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև «Իմեքս Գրուպ» ՍՊԸ-ի փոխանակման կետի և «Ղռեր»ՍՊԸ-ի արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները որոշ ՓԲԸ-ների «ԲԵՍՏ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն, «Արփիներ թագուհի» ՍՊԸ-ին և «Փրիթի Ռեյ» ՍՊԸ թիվ 1 մասնաճյուղին արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ տրամադրելու, «Պրոկրեդիտ բանկ» ՓԲԸ-ի «Մաշտոց» մասնաճյուղի գործունեության դադարեցումը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի և որոշ ԲԲԸ-ների մասնաճյուղեր գրանցելու, ինչպես նաև 1 ՈՒՎԿ ՍՊԸ-ի նկատմամբ տուգանք կիրառելու և 6 արտարժույթի փոխանակման կետերի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 302Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 256-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 195-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

6 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 258-Ն որոշումը «Սուրբ Գրիգոր Լուսավորչի աջը» հուշադրամը շրջանառության մեջ դնելու և դրա նկարագրությունը հաստատելու մասին»

7 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 260-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 231-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

8 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 261-Ն որոշումը «Բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 101 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

22 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 262-Ն որոշումը «Ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերությունների և ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 002 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 232-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

35 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 263-Ն որոշումը «Վարկային կազմակերպությունների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 102 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին»

47 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 264-Ն որոշումը «Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 103 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին»

58 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 265-Ն որոշումը «Արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքների վերաբերյալ թիվ 104 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին»

66 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 266-Ն որոշումը «Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 103 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին»

77 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 267-Ն որոշումը «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կորպորատիվ ներդրումային ֆոնդերի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված կառավարիչ չունեցող ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 106 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին»

90 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 268-Ն որոշումը «Գրավատների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 107 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին»

100 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 269-Ն որոշումը «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 009 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 19-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

111 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 270-Ն որոշումը «Նոտարների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 003 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 233-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

122 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 271-Ն որոշումը «Խաղատների, շահումով խաղերի, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղերի կազմակերպիչների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 004 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 234-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

130 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 272-Ն որոշումը «Վիճակախաղերի կազմակերպիչների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 005 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 235-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

138 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 273-Ն որոշումը «Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման թիվ 008 հաշվետվության ձևը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 14-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

148 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 274-Ն որոշումը «Փաստաբանների, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 020 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 14-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

158 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 275-Ն որոշումը «Ռիելթորական գործունեություն իրականացնող անձանց կողմից կասկածելի գործարքի վերաբերյալ թիվ 024 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 15-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

168 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 276-Ն որոշումը «Աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 025 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 17-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

177 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 277-Ն որոշումը «Թանկարժեք մետաղների դիլերների, թանկարժեք քարերի դիլերների, արվեստի գործերի դիլերների և սակարկությունների կազմակերպիչների կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 026 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի փետրվարի 16-ի թիվ 22-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասի»

187 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 278-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի վերաբերյալ թիվ 007 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 236-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

197 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 279-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 269-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգը հաստատելու մասին»

208 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 280-Ն որոշումը ««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառման կարգը« հաստատելու մասին»

211 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 281-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

212 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 288-Ն որոշումը «Գնային չարաշահման դեպքերի առկայության չափանիշները, գնային չարաշահման դեպքերի արձանագրման համար հիմք հանդիսացող հանգամանքները և գնային չարաշահում չհամարվող դեպքերն ու գործողությունները« կանոնակարգ 4/17-ը հաստատելու մասին»

217 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 289-Ն որոշումը «Երկու հարյուր դրամ անվանական արժեքով՝ 2014 թվականի նմուշի Հայաստանի Հանրապետության շրջանառու հիշատակային մետաղադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

219 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 290-Ն որոշումը «2015 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

224 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 300-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտի թողարկման, սպասարկման և տարածման, ինչպես նաև վճարային քարտով գործառնությունների իրականացման կարգը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հունվարի 31-ի թիվ 39-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

230 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 301-Ն որոշումը «Աշխարհի ամենահին ծառերը» շարքի «Հարյուրավոր ծիերի շագանակենի», «Սխտորաշենի սոսի», «Հրեշտակի կաղնի» և «Գեներալ Շերմանի ծառը» հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

235 ԴՐԱՄՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության և վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ ու քլիրինգ իրականացնող կազմակերպության լիցենզիա է տրամադրվել*** «Իզի Փեյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 298Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Գարանտ Ինշուրանս» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության «ոչ կյանքի ապահովագրության իրականացման» մի շարք դասերով լիցենզիան, ինչպես նաև «Ռ.Ռ.Հ. եղբայրներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատան կազմակերպման լիցենզիան (որոշումներ թիվ 303Ա, 307Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Իմեքս Գրուպ», սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փոխանակման կետի, ինչպես նաև «Ղռեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները (որոշումներ թիվ 305Ա, 306Ա):
- «ԲԵՍՏ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում ***մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «ՎՏԲ-Հայաստան» և «Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 314Ա, 315Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «Արփինե թագուհի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և «Փրիթի Ուեյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թիվ 1 մասնաճյուղին (որոշումներ թիվ 318Ա, 319Ա):
- ***Գրանցվել է*** «ՊրոԿրեդիտ բանկ» փակ բաժնետիրական ընկերության «Մաշտոց» մասնաճյուղի գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/1110Ա):
- ***Գրանցվել են*** «Հայբիզնեսբանկ» փակ և «Զարգացման հայկական բանկ», «Արարատ բանկ» բաց բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար «Ալաշկերտ», «Արտաշատ», «Մալաթիա» և «Ուսանողական» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/1120Ա, 1/1168Ա, 1/1155Ա, 1/1173Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար «Առաջին հիփոթեքային ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 650000 դրամ գումարի չափով (որոշում թիվ 1/1125Ա), 6 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/1108Ա, 1/1109Ա, 1/1133Ա, 1/1134Ա, 1/1174Ա, 1/1175Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 302Ա որոշմամբ 2014 թ. նոյեմբերի 11-ից ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 6.75%:***

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 195-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով սահմանել Հայաստանի Հանրապետության տարածքում վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորման, գործունեության կարգավորման և վերահսկողության, լիցենզիայի գործողության կասեցման և ուժը կորցրած ճանաչելու, մասնաճյուղերի հաշվառման, ղեկավարների որակավորման ընթացակարգերը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, ծրագրային և անվտանգության պահանջները,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-22-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետությունում գործարար միջավայրի բարելավման հերթական քայլերի և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություն կատարելու մասին» թիվ 636-Ն որոշման 1-ին կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **ո ր ո շ ու մ է .**

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 195-Ն որոշմամբ հաստատված Կանոնակարգ 17/01-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգ 17/01-ի 42-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«42. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության հաճախորդների սպասարկման սրահը պետք է գտնվի փակ տարածքում, առանձնացված լինի արտաքին միջավայրից և ապահովի հաճախորդի անվտանգությունը գործարքի ժամանակ: Հեռահաղորդակցման օպերատորի/գյուղապետարանի տարածքում բացվող մասնաճյուղերի համար սպասարկման սրահ է համարվում հեռահաղորդակցման օպերատորի սպասարկման կամ գյուղապետարանի սրահը:»:

2) Կանոնակարգ 17/01-ի 191-րդ կետից հանել «42-րդ» բառը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N256-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

*«Սուրբ Գրիգոր Լուսավորչի աջը» հուշադրամը շրջանառության մեջ դնելու և դրա նկարագրությունը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. 2014 թվականի նոյեմբերի 20-ից շրջանառության մեջ դնել «Սուրբ Գրիգոր Լուսավորչի աջը» հուշադրամը:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամի նկարագրությունը, որը հուշադրամի էսքիզների հետ մեկտեղ ներկայացված է Հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N258-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 258-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱՋԸ» ՀՈՒՇԱԴՐԱՄԻ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պահվող Սուրբ Գրիգոր Լուսավորչի աջին նվիրված հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «1000 դրամ dram» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը, իսկ աջ եզրագծով ուղղահայաց մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են Սուրբ Գրիգոր Լուսավորչի պատկերը (անհայտ հայ նկարիչ, 18-րդ դար) և նրա մասունքներով Աջը: Վերևի եզրագծով «ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ HOLY ETCHMIADZIN» մակագրություններն են և «է» տառը: Ներքևի եզրագծով հուշադրամի թողարկման տարեթիվն է՝ «2014, ՌՆԿԳ» և նախշ: Ձախ եզրագծերով ուղղահայաց մակագրված են «ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱՋԸ» և «THE RIGHT HAND OF SAINT GREGORY THE ILLUMINATOR»:


Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	25,0 գ
Չափը	27,0x47,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 2500 հատ

Հուշադրամը հատվել է Գերմանիայի «Մայեր» դրամահատարանում:

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507), 12.11.2014):





ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 231-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Նպատակ ունենալով նախատեսել հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների և կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ հաշվետվությունների նոր ձևեր, փոփոխության ենթարկել դրանց տրամադրման կարգը և սահմանել ժամկետներին վերաբերող առավել մանրամասն կանոններ,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի «Բանկերի, վարկային կազմակերպությունների, արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք, արտարժույթի առուվաճառք իրականացնող անձանց, դրամական փոխանցումներ իրականացնող անձանց, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, գրավատների (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 001 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի թիվ 55-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 231-Ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N260-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

Բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 101 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին[*]

Նպատակ ունենալով նախատեսել հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների նոր ձևեր, փոփոխության ենթարկել դրանց տրամադրման կարգը և սահմանել ժամկետներին վերաբերող առավել մանրամասն կանոններ,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 101 հաշվետվության ձևը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:
2. Հաստատել «Բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 101 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 6-ի «ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումը բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 101 հաշվետվական ձև), բանկերի հաշվառման կարգը, բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգը և պայմանները, բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ժամկետները հաստատելու և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 231-Ն որոշումը բանկերի համար սահմանված պահանջների մասով ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 296-Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N261-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 261-Ն որոշմամբ

ՁԵՎ
ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 101 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

1.1. Հաշվառման համարը	1.2. Հաշվետվության ուղարկման ամսաթիվը	1.3. Հաշվետվության հերթական համարը	1.4. Ուղղման (լրացման) հերթական համարը

1.4.1. Ուղղման (լրացման) պատճառը

2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

☐ 2.1. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն

☐ 2.2. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն

3. ԳՈՐԾԱՐՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը

☐ 3.2. Կանխիկ եղանակով իրականացված գործարք

☐ 3.3. Անկանխիկ եղանակով իրականացված գործարք

3.2.1. Արժույթը

3.3.1. Արժույթը

3.2.2. Գումարը տվյալ արժույթով

3.3.2. Գումարը տվյալ արժույթով

3.2.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

3.3.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

3.4. Կասկածելի գործարքի չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.4.1. Լիազոր մարմնի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.4.2. Հաշվետվություն տրամադրող անձի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.4.3. Այլ

3.5. Կասկածների նկարագրությունը

3.6. Կապված հաշվետվության անվանումը

3.7. Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն

4. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ

4.1. Ավանդ

☐ Ցպահանջ ☐ Ժամկետային ☐ Կուտակային կենսաթոշակային

☐ 4.1.1. Մուտք

☐ 4.1.2. Ելք

4.1.3. Ավանդի տարեկան տոկոսադրույքը ☐ 4.1.4. Ավանդի ժամկետը ☐

4.2. Վճարահաշվարկային ծառայություններ

☐ Բանկային հաշվով փոխանցում ☐ Բանկային հաշվով ստացում

☐ Անհաշիվ փոխանցում ☐ Անհաշիվ ստացում

☐ Կանխիկ մուտք բանկային հաշվին հաշվետիրոջ կողմից

☐ Կանխիկ ելք բանկային հաշվից հաշվետիրոջ կողմից

☐ Կանխիկ մուտք բանկային հաշվին հաշվետեր չհանդիսացող անձի կողմից

☐ Կանխիկ ելք բանկային հաշվից հաշվետեր չհանդիսացող անձի կողմից

4.2.1. Նպատակ

☐ 4.2.1. 1. Գույքի դիմաց վճար

☐ 4.2.1.2. Ծառայության դիմաց վճար

☐ 4.2.1.3. Փոխառություն

Նկարագրություն

☐ 4.2.1.4. Արժեթղթերի առուվաճառք

Նկարագրություն

☐ 4.2.1.5. Ֆինանսական օգնություն

☐ 4.2.1.6. Անշարժ գույքի առուվաճառք

4.2.1.6.1. Անշարժ գույքի գտնվելու վայր

☐ 4.2.1.7. Այլ

Նկարագրություն

4.2.2. Դրամական փոխանցման համակարգ

☐ 4.3. Արտարժույթի փոխարկում

4.3.1. Առքի արժույթ 4.3.2. Առքի գումար

4.3.3. Վաճառքի արժույթ 4.3.4. Վաճառքի գումար

☐ 4.4. Ներդրումային գործունեություն

☐ 4.4.0.1. Արժեթղթերի ձեռքբերում

☐ 4.4.0.2. Արժեթղթերի օտարում

☐ 4.4.0.3. Արժեթղթերի փաթեթի կառավարում

☐ 4.4.0.4. Արժեթղթերի պահառություն

☐ 4.4.0.5. Փոխառության տրամադրում

☐ 4.4.0.6. Այլ

4.4.1. Պայմանագրի տեսակը

4.4.2. Արժեթղթի տեսակը

4.4.3. Արժեթղթի անվանական արժեքը

4.4.4. Արժեթղթի շուկայական արժեքը

5. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

5.1. ՀԱՃԱԽՈՐԴ

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ ☐ Պետական մարմին կամ համայնք

5.1.1. Անուն (անվանում)

5.1.2. Ազգանուն

5.1.3. Հայրանուն

5.1.4. Ծննդյան ամսաթիվը - -

5.1.5. Բնակության վայր (գտնվելու վայր)

5.1.5.1. Փողոց, շենք, բնակարան(տուն)

5.1.5.2. Քաղաք կամ գյուղ

5.1.5.3. Մարզ

5.1.5.4. Երկիր

5.1.6. Ֆիզիկական անձի հաշվառման վայր

5.1.6.1. Փողոց, շենք, բնակարան(տուն)

5.1.6.2. Քաղաք կամ գյուղ

5.1.6.3. Մարզ

5.1.6.4. Երկիր

5.1.7. Քաղաքացիություն

5.1.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

5.1.8.1. Փաստաթղթի սերիան և համարը

5.1.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

5.1.8.3. Ում կողմից է տրամադրվել

5.1.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը

5.1.9. Կազմակերպական- իրավական ձև

5.1.10. Անհատականացման (հաշվառման) համարը

5.1.11. ՀՎՀՀ

5.1.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

5.1.13. Բանկային հաշվի համարը կամ եզակի հղման համարը

5.1.14. Բանկի անվանում

5.1.15. Բանկի երկիր

5.1.16. Բանկի BIC (SWIFT) կոդ կամ BankMail համակարգի եզակի նույնականացման համար

5.2. ԳՈՐԾԱՐՔԻ ՄՅՈՒՍ ԿՈՂՄ
(Սույն բաժինը լրացնելիս, կախված գործարքի մյուս կողմի տեսակից, լրացման են ենթակա այն հատվածները, որոնք վերաբերում են տվյալ կողմին)

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ ☐ Պետական մարմին կամ համայնք

5.2.1. Անուն (անվանում)

5.2.2. Ազգանուն

5.2.3. Հայրանուն

5.2.4. Ծննդյան ամսաթիվը

5.2.5. Բնակության վայր (գտնվելու վայր)

5.2.5.1. Փողոց, շենք, բնակարան/տուն

5.2.5.2. Քաղաք կամ գյուղ

5.2.5.3. Մարզ

5.2.5.4. Երկիր

5.2.6. Ֆիզիկական անձի հաշվառման վայր

5.2.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

5.2.6.2. Քաղաք կամ գյուղ

5.2.6.3. Մարզ

5.2.6.4. Երկիր

5.2.7. Քաղաքացիություն

5.2.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

5.2.8.1. Փաստաթղթի սերիա և համար

5.2.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը

5.2.8.3. Ում կողմից է տրամադրվել

5.2.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը

5.2.9. Կազմակերպական-իրավական ձև

5.2.10. Անհատականացման (հաշվառման) համարը

5.2.11. ՀՎՀՀ

5.2.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

5.2.13. Բանկային հաշվի համարը կամ եզակի հղման համարը

5.2.14. Բանկի անվանումը

5.2.15. Բանկի երկիրը

5.2.16. Բանկի BIC (SWIFT) կոդ կամ BankMail համակարգի եզակի նույնականացման համար

5.3. ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ

5.3.1. Լիազորող անձ

(հաճախորդի անուն, ազգանուն (անվանում))

5.3.2. Անուն

5.3.3. Ազգանուն

5.3.4. Հայրանուն

5.3.5. Ծննդյան ամսաթիվը

5.3.6. Բնակության վայր

5.3.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

5.3.6.2. Քաղաք կամ գյուղ

5.3.6.3. Մարզ

5.3.6.4. Երկիր

5.3.7. Հաշվառման վայր

5.3.7.1. Փողոց, շենք, բնակարան(տուն)

5.3.7.2. Քաղաք կամ գյուղ

5.3.7.3. Մարզ

5.3.7.4. Երկիր

5.3.8. Քաղաքացիություն

5.3.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

5.3.9.1. Փաստաթղթի սերիա և համար

5.3.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը

5.3.9.3. Ում կողմից է տրամադրվել

5.3.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը

5.4. ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ

☐ Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը ☐ Չկա իրական շահառու ☐ Առկա է իրական շահառու

5.4.1. Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)

5.4.2. Անուն

5.4.3. Ազգանուն

5.4.4. Հայրանուն

5.4.5. Ծննդյան ամսաթիվը - -

5.4.6. Բնակության վայր

5.4.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

5.4.6.2. Քաղաք կամ գյուղ

5.4.6.3. Մարզ

5.4.6.4. Երկիր

5.4.7. Հաշվառման հասցե

5.4.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

5.4.7.2. Քաղաք կամ գյուղ

5.4.7.3. Մարզ

5.4.7.4. Երկիր

5.4.8. Քաղաքացիություն

5.4.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

5.4.9.1. Փաստաթղթի սերիա և համար

5.4.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

5.4.9.3. Ում կողմից է տրամադրվել

5.4.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

6. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ, ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

☐ 6.1. Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցում

6.1.1. Կասեցման ամսաթիվը - -

6.1.2. Կասեցման ժամկետը

6.1.3. Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառները

☐ 6.2. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում

6.2.1. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառները

☐ 6.3. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում

6.3.1. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառները

☐ 6.4. Գույքի սառեցում

6.4.1. Սառեցման ամսաթիվը ☐ - ☐ - ☐

6.4.2. Սառեցման ժամկետը ☐

6.4.3. Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը ☐

7. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

7.1. Անուն ☐

7.2. Ազգանուն ☐

7.3. Լրացման ամսաթիվը ☐ - ☐ - ☐

Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 261-Ն որոշմամբ

ԿԱՐԳ
ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 101 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 101 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է բանկերի (այսուհետ նաև՝ Հաշվետվություն տրամադրող անձ) կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հաշվետվության ձևի լրացման կարգը և հաշվետվությունների ներկայացման դեպքերը:

2. Կարգում հասկացություններն օգտագործվում են Օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Հաշվետվության ձևը լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվառված բանկերի կողմից:

4. Հաշվետվությունը ներկայացվում է Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքերում:

5. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն չի ներկայացվում, եթե կատարվել են հետևյալ գործարքները՝

1) Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջե և այդ բյուջեից կատարված վճարումները,

2) միջբանկային շուկայում կատարվող հետևյալ գործարքները՝

ա) Հայաստանի Հանրապետության գանձապետական պարտատոմսերի կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման դեպքում ձեռքբերումները,

բ) ֆինանսական երկրորդային շուկայում երկու մասնագիտացված անձանց միջև կնքվող գործարքները, որոնք կնքվում են իրենց հաշվին և իրենց անունից (օրինակ՝ երկրորդային շուկայում վաճառվող /ձեռք բերվող արժեթղթերը, ռեպո և հակադարձ ռեպո գործարքները, սվոպ գործարքները, միջբանկային ավանդները, վարկերը և այլն),

3) այն գործարքները, որոնց վերաբերյալ բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վարկային ռեգիստր տրամադրվել է տեղեկատվություն,
4) բանկի կողմից սեփական կարիքների համար կատարվող գործարքները բանկի ընթացիկ գործունեության ապահովման նպատակով՝ բացառությամբ իր հաճախորդներից ֆինանսական ակտիվների գնումների,
5) հաճախորդի հետ կնքված և նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքներում փոփոխությունները, որոնք չեն առաջացնում գործարքի գումարի կամ արժույթի փոփոխություն,
6) գործարքներ, որոնցում բանկը հանդես է գալիս որպես ապահովագրական գործակալ:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

6. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի կամ «Սի-Բի-էյ-Նեթ» համակարգի միջոցով:

7. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը կարող է ձեռք բերվել Ֆինանսական դիտարկումների կենտրոնին դիմելու կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջից արտահանելու միջոցով:

8. Հաշվետվությունը «Սի-Բի-էյ-Նեթ» համակարգի միջոցով ներկայացնելիս՝ հաշվետվությանն ուղեկցող նամակի «Վերնագիրը» պետք է պարունակի «Հաշվետվություն ֆինանսական դիտարկումների կենտրոնին» արտահայտությունը:

9. Հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով ներկայացվում են միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու կարգի» 4-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնագիր կնքելուց հետո:

10. Էլեկտրոնային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը ներկայացված է համարվում, եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաշվետվություն տրամադրող անձը չի ստանում սխալի վերաբերյալ հաղորդագրություն:

11. Սխալի վերաբերյալ հաղորդագրություն ստանալու դեպքում հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով՝ առանց հաշվետվության անվանման փոփոխության: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

12. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում այդ գործարքը կատարելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

13. Հաշվետվության տրամադրման օրերի հաշվարկը սկսվում է գործարքի կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից և ավարտվում է այդ օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 18:00-ին:

14. Գործարքի կատարման պահ է համարվում՝
1) փոխանցումների դեպքում՝ հաճախորդի կողմից տրված հանձնարարականի հիման վրա հաճախորդի հաշվի դեբետագրման պահը (ունի բանկում բացված հաշիվ) կամ հաճախորդի կողմից փաստացի գումարի մուծման և փոխանցման հանձնարարականի տրման պահը (անհաշիվ փոխանցում)՝ անկախ այն հանգամանքից, թե այդ պահին փոխանցումը կատարվել է, թե ոչ,
2) ստացումների դեպքում՝ հաճախորդի հաշիվը կրեդիտագրվելու պահը, եթե ստացողը բանկի հաճախորդն է (ունի բանկում բացված հաշիվ), կամ հաճախորդի՝ գումարը ստանալու նպատակով ներկայանալու օրը, եթե հաճախորդը բանկում չունի հաշիվ (անհաշիվ փոխանցում),
3) մնացած այլ դեպքերում՝ իրավունքների և պարտականությունների առաջացման պահը:

15. Գումարի ստացման պահից եռօրյա ժամկետում բանկի կողմից հաճախորդի հաշիվը չկրեդիտագրվելու կամ եռօրյա ժամկետում գումարը թղթակից բանկին հետ ուղարկվելու դեպքում երրորդ օրվանից սկսած երեք աշխատանքային օրվա ընթացքում գործարքի վերաբերյալ հաշվետվություն է տրամադրվում Ֆինանսական դիտարկումների կենտրոնին:

16. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում գործարքում կամ գործարար հարաբերությունում կասկածելիության չափանիշ հայտնաբերելու դեպքում՝ նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ն:

17. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել՝

1) աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,
2) ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

18. Հաշվետվության ձևը լրացվում է հնարավորինս պարզ, հակիրճ, միանշանակ ընկալվող հայերեն լեզվով, «ոչ յունիկոդ» տառատեսակով և մեծատառերով: «Անուն (անվանում)» 5.1.1 և 5.2.1, «Անուն» 5.3.2 և 5.4.2, «Ազգանուն» 5.1.2, 5.2.2, 5.3.3 և 5.4.3, «Հայրանուն» 5.1.3, 5.2.3, 5.3.4 և 5.4.4 ենթակետերը լրացվում են անգլերեն, երբ անհրաժեշտ տվյալները բանկին հասանելի են միայն անգլերեն լեզվով: Եթե նշված տվյալները հասանելի են այլ օտար լեզվով, ապա նշված ենթակետերը լրացվում են հայերեն կամ անգլերեն լեզվով:

19. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը լրացվում է՝ օգտագործելով ներկայացված էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները: Էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները փոփոխության ենթակա չեն: Ցանկացած ներկայացված հաշվետվություն, որը պարունակում է փոփոխություն, դիտվում է թերի կամ սխալ լրացված հաշվետվություն և հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

20. Լրացման համար պարտադիր են այն կետերը և ենթակետերը, որոնց վերաբերյալ բանկն ունի կամ պարտավոր է ունենալ տեղեկատվություն:

21. Յուրաքանչյուր գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ ներկայացվում է առանձին հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

22. «Հաշվառման համարը» 1.1 կետում լրացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվառման համարը (ութ նիշ):

23. «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2 կետում լրացվում է հաշվետվության ուղարկման օրը, ամիսը, տարին (վեց նիշ):

24. «Հաշվետվության հերթական համարը» 1.3 կետում լրացվում է տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (երեք նիշ):

25. «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետում լրացվում է տվյալ հաշվետվության ուղղման կամ լրացման նպատակով ներկայացվող հաշվետվության հերթական համարը (մեկից երեք նիշ): Այս կետը լրացվում է, եթե հաշվետվությունն ուղարկվում է նախկինում ուղարկված հաշվետվությունում առկա սխալի կամ թերության ուղղման նպատակով, ինչպես նաև, եթե սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:

26. Կարգի 10-րդ կետով սահմանված կարգով ներկայացված համարվող հաշվետվության մեջ ուղղում կամ լրացում կատարելու համար հիմք հանդիսացած պատճառները և հանգամանքները լրացվում են «Ուղղման (լրացման) պատճառը» 1.4.1 ենթակետում: Այս ենթակետը ենթակա է պարտադիր լրացման, եթե ուղղում կամ լրացում կատարվել է նախորդ հաշվետվությունը ներկայացնելու պահից երեք աշխատանքային օր հետո:

27. Ուղղում կամ լրացում կատարելու դեպքում ներկայացվում է նոր հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

28. «Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն» 2.1 կետը նշվում է, եթե՝

1) անկանխիկ եղանակով իրականացված գործարքի գումարը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը,
2) կանխիկի հետ կապված գործարքի գումարը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը:

29. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն» 2.2 կետը նշվում է, եթե ներկայացվում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

30. «Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը» 3.1 կետում լրացվում է տեղեկացման ենթակա գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման օրը, ամիսը, տարին: Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվու-

թյուն ներկայացնելիս, եթե գործարքը դեռևս չի կատարվել կամ գործարար հարաբերությունը դեռևս չի հաստատվել, լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ ներկայացվել է գործարք կատարելու կամ գործարար հարաբերություն հաստատելու առաջարկը, իսկ այն դեպքում, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է, նշվում են գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման օրը, ամիսը, տարին:

31. «Կանխիկի հետ կապված գործարք» 3.2 կետը նշվում է, եթե կատարվել է հետևյալ գործարքներից որևէ մեկը՝

1) կանխիկ եղանակով իրականացվող գործարքը, այդ թվում՝ մուտք բանկային հաշվին կամ ելք բանկային հաշվից,
2) կանխիկ եղանակով իրականացվող գործարքին նախորդած անհաշիվ ստացման գործարքը,
3) կանխիկ եղանակով իրականացված գործարքին հաջորդող անհաշիվ փոխանցման գործարքը:

32. «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.3 կետը նշվում է, եթե գործարքը կատարվել է անկանխիկ եղանակով:

33. «Արժույթը» 3.2.1 և 3.3.1 ենթակետերում լրացվում է այն արժույթը, որով կատարվել է գործարքը: Այն դեպքում, երբ նշվել է «Արտարժույթի փոխարկում» 4.3 կետը, «Արժույթը» 3.2.1 կետում լրացվում է վաճառված արժույթը:

34. «Գումարը տվյալ արժույթով» 3.2.2 և 3.3.2 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի չափը այն արժույթով, որով կատարվել է գործարքը: Եթե «Արժույթը» 3.2.1 և 3.3.1 ենթակետերում լրացվում է ՀՀ դրամ, ապա նույն գումարը լրացվում է և՛ «Գումարը տվյալ արժույթով» 3.2.2 ու 3.3.2, և՛ «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.3 ու 3.3.3 ենթակետերում:

35. «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.3 և 3.3.3 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով: Այն դեպքում, երբ նշվել է «Արտարժույթի փոխարկում» 4.3 կետը և կատարվել է մեկ արտարժույթի փոխարկում մեկ այլ արտարժույթի, ապա «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.3 կետում լրացվում է բանկի կողմից գնված արտարժույթին համարժեք գումարի դրամական արտահայտությունը: Այն դեպքում, երբ կատարվել է արտարժույթի և ՀՀ դրամի փոխարկում, ապա ,Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.3 կետում լրացվում է արտարժույթին համարժեք գումարի դրամական արտահայտությունը՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

36. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը» 3.4 կետում նշվում են 3.4.1– 3.4.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը: Եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշը կամ տիպաբանությունը սահմանված չէ 3.4.1 և 3.4.2 ենթակետերով նախատեսված իրավական ակտերում, ապա նշվում է «Այլ» 3.4.3 ենթակետը: 3.4.1 – 3.4.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը նշելու դեպքում այդ ենթակետերի ներքո նախատեսված դաշտում լրացվում է Լիազոր մարմնի իրավական ակտով, բանկի ներքին իրավական ակտով սահմանված կամ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության այլ չափանիշ կամ տիպաբանություն:

37. «Կասկածների նկարագրությունը» 3.5 կետում հնարավորինս մանրամասն նկարագրվում են գործարքի կամ գործարար հարաբերության նախապատմությունը, այն բոլոր հանգամանքները, որոնք վկայել են գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության մասին: Այս կետում կարող են նկարագրվել նաև բանկի՝ հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները:

38. «Կապված հաշվետվության անվանումը» 3.6 կետը լրացվում է, եթե ներկայացվող հաշվետվությամբ կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը, ըստ բանկի, պատճառահետևանքային կամ այլ առումով կապված է բանկի կողմից նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքի հետ: «Կապված հաշվետվության անվանումը» 3.6 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության ձևի «Հաշվառման համարը» 1.1, «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2, «Հաշվետվության հերթական համարը» 1.3, «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետերում (առկայության դեպքում) լրացված տեղեկատվությունը:

39. «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.7 կետում նշվում են գործարքին կամ գործարար հարաբերությանն առնչվող՝ բանկի կողմից կարևորվող այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 7. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ

40. «Ավանդ» 4.1 կետում նշվում է «Ցպահանջ ավանդ», «Ժամկետային ավանդ» կամ «Կուտակային կենսաթոշակային ավանդ» դաշտը՝ նշելով ավանդի «Մուտք» 4.1.1 ենթակետը կամ «Ելք» 4.1.2 ենթակետը:

41. «Ավանդի տարեկան տոկոսադրույքը» 4.1.3 ենթակետում լրացվում է ավանդային պայմանագրով որպես ավանդի տոկոսադրույք նշված տոկոսը:

42. «Ավանդի ժամկետ» 4.1.4 ենթակետում լրացվում է ավանդային պայմանագրով ավանդի ներգրավման սահմանված ժամկետը:

43. «Վճարահաշվարկային ծառայություն» 4.2 կետում նշվում է առաջարկվող դաշտերից որևէ մեկը: «Մուտք հաշվետիրոջ կողմից» և «Ելք հաշվետիրոջ կողմից» դաշտերը նշվում են միայն «Կանխիկ գործարք» 3.2 կետը նշելու դեպքում:

44. «Վճարահաշվարկային ծառայություն» 4.2 կետի ներքո նախատեսված «Կանխիկ մուտք բանկային հաշվին հաշվետիրոջ կողմից» կամ «Կանխիկ ելք բանկային հաշվից հաշվետիրոջ կողմից» դաշտերը նշելու դեպքում «Գործարքի կամ գործարար հարաբերության կողմեր» 5-րդ բաժնում լրացման են ենթակա միայն «Հաճախորդ» 5.1 կետի ներքո նախատեսված ենթակետերը և դաշտերը, իսկ «Կանխիկ մուտք բանկային հաշվին հաշվետեր չհանդիսացող անձի կողմից» կամ «Կանխիկ ելք բանկային հաշվից հաշվետեր չհանդիսացող անձի կողմից» դաշտերը նշելու դեպքում լրացման են ենթակա «Գործարքի կամ գործարար հարաբերության կողմեր» 5-րդ բաժնում «Հաճախորդ» 5.1 և «Գործարքի մյուս կողմ» 5.2 կետերի ներքո նախատեսված ենթակետերը և դաշտերը:

45. «Նպատակ» 4.2.1 կետում նշվում է վճարահաշվարկային ծառայության՝ 4.2.1.1-4.2.1.8 դաշտերում նախատեսված նպատակներից որևէ մեկը:

46. «Փոխառություն» 4.2.1.3 դաշտը նշելու դեպքում դրա ներքո նախատեսված դաշտում տեղեկատվության առկայության դեպքում լրացվում է փոխառության նկարագրությունը՝ նշելով փոխառության պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին և փոխառության պայմանագրի կողմերին:

47. «Արժեթղթերի առուվաճառք» 4.2.1.4 դաշտը նշելու դեպքում այդ դաշտի ներքո նախատեսված դաշտում լրացվում է արժեթուղթը թողարկող կազմակերպության անվանումը:

48. «Անշարժ գույքի առուվաճառք» 4.2.1.6 դաշտը նշելու դեպքում 4.2.1.6.1 դաշտում տեղեկատվության առկայության դեպքում լրացվում է անշարժ գույքի գտնվելու վայրի (հասցեի) վերաբերյալ տեղեկատվությունը, որը պարունակում է առնվազն հետևյալ վավերապայմանները՝ մարզ, համայնք, ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտ (թաղամաս, հրապարակ, փողոց, պողոտա, նրբանցք, անցում, փակուղի, զբոսայգի և այլն):

49. «Այլ» 4.2.1.7 դաշտը նշելու դեպքում այդ դաշտի ներքո նախատեսված դաշտում լրացվում է վճարահաշվարկային ծառայության նպատակը:

50. «Դրամական փոխանցման համակարգ» 4.2.2 ենթակետում լրացվում է դրամական փոխանցման համակարգը: Այս կետը լրացվում է, եթե «Վճարահաշվարկային ծառայություն» 4.2 կետում նշվել է «Անհաշիվ փոխանցում» կամ «Անհաշիվ ստացում» դաշտը:

51. «Արտարժույթի փոխարկում» 4.3 կետը նշվում է, եթե բանկը կատարել է արտարժույթի փոխարկում: Այս կետը նշելու դեպքում «Առքի արժույթ» 4.3.1 ենթակետում լրացվում է բանկի կողմից գնված արժույթը, «Առքի գումար» 4.3.2 ենթակետում լրացվում է բանկի կողմից գնված գումարը՝ արտահայտված գնման արժույթով, «Վաճառքի արժույթ» 4.3.3 ենթակետում լրացվում է բանկի կողմից վաճառված արժույթը, իսկ «Վաճառքի գումար» 4.3.4 ենթակետում լրացվում է բանկի կողմից վաճառված արժույթը՝ արտահայտված վաճառքի արժույթով:

52. «Ներդրումային գործունեություն» 4.4 կետը նշվում է, եթե բանկը կատարել է ներդրումային գործունեություն:

53. «Պայմանագրի տեսակը» 4.4.1 ենթակետում լրացվում է այն պայմանագիրը, որի հիման վրա կատարվել է գործարքը:

54. «Արժեթղթի տեսակը» 4.4.2 ենթակետում լրացվում է այն արժեթղթի տեսակը, որով կատարվել է գործարքը:

55. «Արժեթղթի անվանական արժեքը» 4.4.3 ենթակետում լրացվում է արժեթղթի անվանական արժեքը՝ արտահայտված ՀՀ դրամով:

56. «Արժեթղթի շուկայական արժեքը» 4.4.4 ենթակետում լրացվում է արժեթղթի շուկայական արժեքը՝ արտահայտված ՀՀ դրամով:

57. «Այլ» 4.5 կետը նշելու դեպքում այդ կետի ներքո նախատեսված դաշտում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության անվանումը:

ԳԼՈՒԽ 8. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

58. «Գործարքի կամ գործարար հարաբերության կողմեր» 5-րդ բաժնում լրացվում է հաճախորդի, գործարքի մյուս կողմի, լիազորված անձի և իրական շահառուի վերաբերյալ տեղեկատվություն:

59. «Հաճախորդ» 5.1 կետում նշվում է հաճախորդի տեսակը՝ ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ պետական մարմին կամ համայնք: Եթե գործարքը կատարվում է համատեղ հաշվով կամ գործարար հարաբերության հաստատումը կապված է համատեղ հաշվի հետ, ապա որպես հաճախորդ նշվում է համատեղ հաշվետերերից որևէ մեկը, իսկ մյուս հաշվետերերի վերաբերյալ տեղեկությունները լրացվում են «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.7 կետում:

60. «Անուն (անվանում)» 5.1.1 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ անունը կամ իրավաբանական անձի կամ պետական մարմնի կամ համայնքի անվանումը:

61. «Ազգանուն» 5.1.2 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը: Այն դեպքում, երբ հստակ չէ, թե որն է հաճախորդի անունը և որը ազգանունը, ապա 5.1.1 և 5.1.2 ենթակետերը լրացվում են բանկի հայեցողությամբ:

62. «Հայրանուն» 5.1.3 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հայրանունը:

63. «Ծննդյան ամսաթիվ» 5.1.4 ենթակետում լրացվում են ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան օրը, ամիսը, տարին:

64. «Բնակության վայր (գտնվելու վայր)» 5.1.5 ենթակետի ներքո նախատեսված 5.1.5.1 - 5.1.5.4 դաշտերում ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում լրացվում է այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում է, իսկ իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը): 5.1.5.1 - 5.1.5.4 դաշտերը չեն լրացվում, եթե ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը և հաշվառման վայրը նույնն է:

65. «Հաշվառման վայր» 5.1.6 ենթակետի ներքո նախատեսված 5.1.6.1 - 5.1.6.4 դաշտերում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը հաշվառված է:

66. «Քաղաքացիությունը» 5.1.7 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ քաղաքացիությունը:

67. «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 5.1.8 ենթակետում նշվում է անձնագիրը, նույնականացման քարտը կամ նորմատիվ իրավական ակտով սահմանված՝ ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձը (ինքնություն) հաստատող այլ փաստաթուղթը:

68. «Փաստաթղթի սերիան և համարը» 5.1.8.1, «Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը» 5.1.8.2 դաշտերում համապատասխանաբար լրացվում են «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 5.1.8 ենթակետում նշված փաստաթղթի սերիան, համարը, ինչպես նաև տրամադրման օրը, ամիսը, տարին:

69. «Ում կողմից է տրամադրվել» 5.1.8.3 դաշտում լրացվում է այն պետական մարմնի անվանումը կամ ծածկագիրը, որի կողմից տրամադրվել է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 5.1.8 ենթակետում նշված փաստաթուղթը:

70. «Փաստաթղթի վավերականության ժամկետը» 5.1.8.4 դաշտում լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ լրանում է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 5.1.8 ենթակետում նշված փաստաթղթի վավերականության ժամկետը:

71. «Կազմակերպական-իրավական ձևը» 5.1.9 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը կամ դրա հապավումը (օրինակ՝ ՍՊԸ, ԲԲԸ և այլն): Օտարերկրյա իրավաբանական անձանց կազմակերպական-իրավական ձևի վերաբերյալ տվյալները լրացվում են լատինատառ:

72. «Անհատականացման (հաշվառման) համարը» 5.1.10 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցումը (հաշվառումը) իրականացնող մարմնի կողմից տրամադրված անհատականացման (հաշվառման) համարը:

73. «ՀՎՀՀ» 5.1.11 ենթակետում լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը:

74. «Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն» 5.1.12 ենթակետում լրացվում են գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը:

75. «Բանկային հաշվի համարը կամ եզակի հղման համարը» 5.1.13 ենթակետում լրացվում է հաճախորդի բանկային հաշվի համարը: Այն դեպքում, երբ նշվել է «Անհաշիվ փոխանցում» կամ «Անհաշիվ ստացում», ապա լրացվում է եզակի հղման համարը:

76. «Բանկի անվանում» 5.1.14 ենթակետը լրացվում է, եթե հաշվետվություն տրամադրող անձը հանդիսանում է միջնորդ բանկ: Այս կետում լրացվում է այն բանկի անվանումը, որտեղ սպասարկվում է «Բանկային հաշվի համարը կամ եզակի հղման համարը» 5.1.13 ենթակետում լրացված հաշվի համարը կամ եզակի հղման համարը:

77. «Բանկի երկիր» 5.1.15 կետում լրացվում է այն երկիրը, որտեղ գրանցված է «Բանկի անվանում» 5.1.14 ենթակետում նշված բանկը, իսկ եթե գործարքը կատարվել է բանկի մասնաճյուղում, ապա նշվում է մասնաճյուղի գրանցման երկիրը:

78. «Բանկի BIC (SWIFT) կոդը կամ BankMail համակարգում եզակի նույնականացման համար» 5.1.16 ենթակետում լրացվում է «Բանկի անվանում» 5.1.14 ենթակետում նշված օտարերկրյա բանկի BIC (SWIFT) կոդը կամ ներպետական բանկի BankMail համակարգում եզակի նույնականացման համարը:

79. Հաշվետվության ձևի 5.2.1 - 5.2.13 ենթակետերը և դաշտերը լրացվում են Կարգի 60-75 կետերով սահմանված կարգով:

80. Հաշվետվության ձևի 5.2.14 - 5.2.16 ենթակետերը և դաշտերը լրացվում են Կարգի 76-78 կետերով սահմանված կարգով՝ անկախ հաշվետվություն տրամադրող անձի միջնորդ բանկ հանդիսանալու հանգամանքից:

81. «Լիազորված անձ» 5.3 կետի ներքո նախատեսված ենթակետերը և դաշտերը լրացվում են, եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կատարվում է լիազորված անձի միջոցով:

82. «Լիազորող անձ» 5.3.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում լիազորված անձն է հանդիսանում տվյալ անձը:

83. Հաշվետվության ձևի 5.3.2-5.3.9.4 ենթակետերը լրացվում են Կարգի 60-70 կետերով սահմանված կարգով:

84. «Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը» դաշտը նշվում է այն դեպքում, երբ բանկը չի կարողանում ստանալ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու, թե՝ ոչ:

85. «Չկա իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ բանկը պարզել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա չէ իրական շահառու (օրինակ՝ այդ մասին գրավոր հայտարարություն է տվել հաճախորդը):

86. «Առկա է իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ բանկը հաճախորդից կամ այլ աղբյուրից տեղեկացել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու:

87. «Առկա է իրական շահառու» դաշտը նշելուց հետո «Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)» 5.4.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում իրական շահառուն է հանդիսանում տվյալ անձը:

88. Հաշվետվության ձևի 5.4.2-5.4.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են միայն «Առկա է իրական շահառու» դաշտը նշելու դեպքում՝ Կարգի 60-70 կետերով սահմանված կարգով:

89. Հաշվետվության ձևի 5-րդ բաժինը, կախված անձանց թվից, լրացվում է համապատասխան քանակով:

ԳԼՈՒԽ 9. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ, ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

90. «Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցում» 6.1 կետը նշվում է, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցվել է:

91. «Կասեցման ամսաթիվը» 6.1.1 ենթակետում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման օրը, ամիսը, տարին:

92. «Կասեցման ժամկետը» 6.1.2 ենթակետում լրացվում է կասեցման ժամկետը:

93. «Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը» 6.1.3 ենթակետում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը:

94. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում» 6.2 կետը նշվում է, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է:

95. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառները» 6.2.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժելու համար:

96. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում» 6.3 կետը նշվում է, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցվել է:

97. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառները» 6.3.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցնելու համար:

98. «Գույքի սառեցում» 6.4 կետը նշվում է, երբ հաճախորդի գույքը սառեցվել է:

99. «Սառեցման ամսաթիվ» 6.4.1 ենթակետում լրացվում է գույքի սառեցման օրը, ամիսը, տարին:

100. «Սառեցման ժամկետը» 6.4.2 ենթակետում լրացվում է սառեցման ժամկետը:

101. «Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը» 6.4.3 ենթակետում լրացվում է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերի և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կատարման նպատակով Լիազոր մարմնի կողմից հրապարակված՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը:

ԳԼՈՒԽ 10. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

102. «Անուն» 7.1 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի անունը:

103. «Ազգանուն» 7.2 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի ազգանունը:

104. «Լրացման ամսաթիվը» 7.3 կետում լրացվում է հաշվետվության ձևը լրացնելու օրը, ամիսը, տարին:

*Ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերությունների և ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 002 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 232-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**[*]

Նպատակ ունենալով նախատեսել հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների նոր ձևեր, փոփոխության ենթարկել դրանց տրամադրման կարգը և սահմանել ժամկետներին վերաբերող առավել մանրամասն կանոններ,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **ո ր ո շ ու մ է .**

1. Հաստատել «Ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերությունների և ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 002 հաշվետվության ձևը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:
2. Հաստատել «Ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերությունների և ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 002 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի «ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումը ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերությունների և ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձանց (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 002 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի թիվ 56-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 232-Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N262-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28(507)[1], 12.11.2014):

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 262-Ն որոշմամբ

ՁԵՎ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ) ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ) ՄԻՋՆՈՐԴԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 002 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

1.1. Հաշվառման համարը	1.2. Հաշվետվության ուղարկման ամսաթիվը	1.3. Հաշվետվության հերթական համարը	1.4. Ուղղման (լրացման) հերթական համարը

1.4.1. Ուղղման (լրացման) պատճառը

2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

☐ 2.1. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն

☐ 2.2. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն

3. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը

3.1.1. Ապահովագրության պայմանագրի համարը

3.1.2. Ապահովագրության ժամկետը

☐ 3.2. Կանխիկ եղանակով իրականացված գործարք

☐ 3.3. Անկանխիկ եղանակով իրականացված գործարք

3.2.1. Արժույթը

3.2.2. Գումարը տվյալ արժույթով

3.2.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

3.3.1. Արժույթը

3.3.2. Գումարը տվյալ արժույթով

3.3.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

3.4. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը

☐ 3.4.1. Լիազոր մարմնի իրավական ակտով սահմանված չափանիշը կամ տիպաբանությունը

☐ 3.4.2. Հաշվետվություն տրամադրող անձի իրավական ակտով սահմանված չափանիշը կամ տիպաբանությունը

☐ 3.4.3. Այլ

3.5. Կասկածների նկարագրությունը

3.6. Կապված հաշվետվության անվանումը

3.7. Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը

☐ 3.7.1. Ապահովագրության պայմանագիր

☐ 3.7.2. Ապահովագրավճարի վճարում

☐ 3.7.3. Ապահովագրական հատուցման վճարում

3.8. Ապահովագրության տեսակները և դասերը

☐ 3.8.1. Ոչ կյանքի ապահովագրություն

Դասեր

☐ 3.8.1.1. Դժբախտ պատահարներից ապահովագրություն

☐ 3.8.1.2. Առողջության ապահովագրություն

☐ 3.8.1.3. Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն (բացառությամբ երկաթուղային)

☐ 3.8.1.4. Երկաթուղային տրանսպորտի ապահովագրություն

☐ 3.8.1.5. Օդանավերի ապահովագրություն

☐ 3.8.1.6. Ջրային փոխադրամիջոցների ապահովագրություն

☐ 3.8.1.7. Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն

☐ 3.8.1.8. Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն

☐ 3.8.1.9. Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն

☐ 3.8.1.10. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն

☐ 3.8.1.11. Օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն

☐ 3.8.1.12. Ջրային փոխադրամիջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն

☐ 3.8.1.13. Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն

☐ 3.8.1.14. Վարկի ապահովագրություն

☐ 3.8.1.15. Երաշխիքի տրամադրում

☐ 3.8.1.16. Ֆինանսական վնասների ապահովագրություն

☐ 3.8.1.17. Դատական և արտադատական ծախսերի ապահովագրություն

☐ 3.8.1.18. Աջակցության ապահովագրություն

☐ 3.8.2. Կյանքի ապահովագրություն

Դասեր

☐ 3.8.2.1. Կյանքի ապահովագրություն

☐ 3.8.2.2. Ամուսնության, ծննդի ապահովագրություն

☐ 3.8.2.3. Ներդրումային ակտիվներին կապվող ապահովագրություն

☐ 3.8.2.4. Կենսաթոշակային ֆոնդերի կառավարում

☐ 3.8.2.5. Տոնտի

☐ 3.8.2.6. Կապիտալի հատուցման ապահովագրություն

☐ 3.8.3. Վերաապահովագրություն

Դասեր

☐ 3.8.3.1. Ոչ կյանքի վերաապահովագրություն

☐ 3.8.3.2. Կյանքի վերաապահովագրություն

3.9. Ապահովագրական գումարը ☐

3.10. Ապահովագրավճարը ☐

☐ 3.11. Գործարքում կամ գործարար հարաբերությունում ապահովագրական բրոքերի առկայությունը

3.11.1. Անվանում ☐

3.11.2. Անհատականացման (հաշվառման) համար ☐

3.11.3. ՀՎՀՀ

3.11.3. Բանկային հաշվի համարը

3.11.4. Բանկի անվանումը

3.11.5. Բանկի երկիրը

☐ 3.12. Գործարքում կամ գործարար հարաբերությունում ապահովագրական գործակալի առկայությունը

3.12.1. Անուն (անվանում)

3.12.2. Ազգանուն

3.12.3. Հայրանուն

3.12.4. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

3.12.5. Փաստաթղթի սերիա և համար

3.12.6. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվ

3.12.7. Ում կողմից է տրամադրվել

3.12.8. Փաստաթղթի վավերականության ժամկետ

3. 12.9. Անհատականացման (հաշվառման) համար

3. 12.10. ՀՎՀՀ

3. 12.12. Բանկային հաշվի համար

3.12.13. Բանկի անվանում

3.12.14. Բանկի երկիր

3.13. Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն

4. ԱՊԱՀՈՎԱԴԻՐ ԵՎ ՇԱՀԱՌՈՒ

4.1. ԱՊԱՀՈՎԱԴԻՐ

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ ☐ Պետական մարմին կամ համայնք

4.1.1. Անուն (անվանում)

4.1.2. Ազգանուն

4.1.3. Հայրանուն

4.1.4. Ծննդյան ամսաթիվը - -

4.1.5. Բնակության վայր (գտնվելու վայր)

4.1.5.1. Փողոց, շենք, բնակարան/տուն

4.1.5.2. Քաղաք կամ գյուղ

4.1.5.3. Մարզ

4.1.5.4. Երկիր

4.1.6. Հաշվառման վայր

4.1.6.1. Փողոց, շենք, բնակարան/տուն

4.1.6.2. Քաղաք կամ գյուղ

4.1.6.3. Մարզ

4.1.6.4. Երկիր

4.1.7. Քաղաքացիություն

4.1.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.1.8.1. Փաստաթղթի սերիա և համար

4.1.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվ - -

4.1.8.3. Ում կողմից է տրամադրվել

4.1.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետ - -

4.1.9. Կազմակերպական- իրավական ձև

4.1.10. Անհատականացման (հաշվառման) համար

4.1.11. ՀՎՀՀ

4.1.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

4.1.13. Բանկային հաշվի համարը կամ եզակի հղման համարը

4.1.14. Բանկի անվանումը

4.1.15. Բանկի երկիրը

4.1.16. Բանկի BIC (SWIFT) կոդը կամ BankMail համակարգում եզակի նույնականացման համարը

☐ 4.1.17. Ապահովադիրը նաև շահառու է

4.2. ՇԱՀԱՌՈՒ

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ ☐ Պետական մարմին կամ համայնք

4.2.1. Անուն(Անվանում)

4.2.2. Ազգանուն

4.2.3. Հայրանուն

4.2.4. Ծննդյան ամսաթիվը - -

4.2.5. Բնակության վայր (գտնվելու վայր)

4.2.5.1. Փողոց, շենք, բնակարան/տուն

4.2.5.2. Քաղաք կամ գյուղ

4.2.5.3. Մարզ

4.2.5.4. Երկիր

4.2.6. Հաշվառման վայր

4.2.6.1. Փողոց, շենք, բնակարան/տուն

4.2.6.2. Քաղաք կամ գյուղ

4.2.6.3. Մարզ

4.2.6.4. Երկիր

4.2.7. Քաղաքացիություն

4.2.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.2.8.1. Փաստաթղթի սերիա և համար

4.2.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվ - -

4.2.8.3. Ում կողմից է տրամադրվել

4.2.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետ - -

4.2.9. Կազմակերպական-իրավական ձև

4.2.10. Անհատականացման (հաշվառման) համար

4.2.11. ՀՎՀՀ

4.2.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

4.2.13. Բանկային հաշվի համարը կամ եզակի հղման համարը

4.2.14. Բանկի անվանումը

4.2.15. Բանկի երկիրը

4.2.16. Բանկի BIC (SWIFT) կոդը կամ BankMail համակարգում եզակի նույնականացման համարը

4.3. ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ

4.3.1. Լիազորող անձ

(հաճախորդի անուն, ազգանուն (անվանում))

4.3.2. Անուն

4.3.3. Ազգանուն

4.3.4. Հայրանուն

4.3.5. Ծննդյան ամսաթիվը - -

4.3.6. Բնակության վայր

4.3.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.3.6.2. Քաղաք կամ գյուղ

4.3.6.3. Մարզ

4.3.6.4. Երկիր

4.3.7. Հաշվառման վայր

4.3.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.3.7.2. Քաղաք կամ գյուղ

4.3.7.3. Մարզ

4.3.7.4. Երկիր

4.3.8. Քաղաքացիություն

4.3.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.3.9.1. Փաստաթղթի սերիա և համար

4.3.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.3.9.3. Ում կողմից է տրամադրվել

4.3.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4.4. ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ

☐ Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը ☐ Չկա իրական շահառու ☐ Առկա է իրական շահառու

4.4.1. Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)

4.4.2. Անուն

4.4.3. Ազգանուն

4.4.4. Հայրանուն

4.4.5. Ծննդյան ամսաթիվ - -

4.4.6. Բնակության վայր

4.4.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.4.6.2. Քաղաք կամ գյուղ

4.4.6.3. Մարզ

4.4.6.4. Երկիր

4.4.7. Հաշվառման վայր

4.4.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.4.7.2. Քաղաք կամ գյուղ

4.4.7.3. Մարզ

4.4.7.4 Երկիր

4.4.8 Քաղաքացիություն

4.4.9 Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.4.9.1 Փաստաթղթի սերիա և համար

4.4.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.4.9.3. Ում կողմից է տրամադրվել

4.4.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

5. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

5.1. Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցում

5.1.1. Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը

5.2. Գործարքի իրականացման մերժում

5.2.1. Գործարքի իրականացման մերժման պատճառները

5.3. Գործարքի դադարեցում

5.3.1. Գործարքի դադարեցման պատճառները

5.4. Գույքի սառեցում

5.4.1. Սառեցման ամսաթիվը - -

5.4.2. Սառեցման ժամկետը

5.4.3. Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը

6. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

6.1. Անուն

6.2. Ազգանուն

6.3. Լրացման ամսաթիվը - -

Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 262-Ն որոշմամբ

ԿԱՐԳ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ) ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ) ՄԻՋՆՈՐԴԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 002 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերությունների և ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 002 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է ապահովագրական ըն-

կերությունների (ներառյալ՝ վերաապահովագրական) և ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձանց (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձ) կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հաշվետվության ձևի լրացման կարգը և հաշվետվությունների ներկայացման դեպքերը:

2. Կարգում օգտագործվող հասկացությունները մեկնաբանվում են օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Հաշվետվության ձևը լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվառված ապահովագրական ընկերությունների (ներառյալ՝ վերաապահովագրական) և ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) բրոքերների կողմից: Ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) գործակալի կողմից հաշվետվության ձևը լրացվում է ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերության հաշվառման համարի հիման վրա:

4. Հաշվետվությունը ներկայացվում է Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքերում: Ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) գործակալների կողմից հաշվետվությունը ներկայացվում է միայն Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում:

5. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն տրամադրվում է միայն կյանքի ապահովագրության և ներդրումային բնույթի այլ ապահովագրության վկայագրերի թողարկման և տեղաբաշխման դեպքում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

6. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի կամ «Սի-Բի-էյ-Նեթ» համակարգի միջոցով կամ թղթային տարբերակով:

7. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը կարող է ձեռք բերվել Ֆինանսական դիտարկումների կենտրոնին դիմելու կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջից արտահանելու միջոցով:

8. Հաշվետվությունը «Սի-Բի-էյ-Նեթ» համակարգի միջոցով ներկայացնելիս հաշվետվությանն ուղեկցող նամակի «Վերնագիրը» պետք է պարունակի «Հաշվետվություն ֆինանսական դիտարկումների կենտրոնին» արտահայտությունը:

9. Հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով ներկայացվում են միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու կարգի» 4-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնագիր կնքելուց հետո:

10. Էլեկտրոնային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը ներկայացված է համարվում, եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվություն տրամադրող անձը չի ստանում սխալի վերաբերյալ հաղորդագրություն:

11. Սխալի վերաբերյալ հաղորդագրություն ստանալու դեպքում հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով՝ առանց հաշվետվության անվանման փոփոխության: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

12. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում փակ կնքված (կնիքի առկայության դեպքում) ծրարով՝ «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին» նշագրումով՝ հետևյալ եղանակներից որևէ մեկով.

1) ֆիզիկապես ներկայացնելու միջոցով,

2) փոստի միջոցով:

13. Կարգի 12-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացված է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացականի, իսկ Կարգի 12-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից համապատասխան անդորրագրի տրամադրման պահից: Կարգի 12-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փոստային հասցեով (ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6):

14. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվության սխալի վերաբերյալ հետադարձ կապ ստանալու դեպքում հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով՝ առանց հաշվետվության անվանման փոփոխության: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

15. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում այդ գործարքը կատարելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

16. Հաշվետվության տրամադրման օրերի հաշվարկը սկսվում է գործարքի կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից և ավարտվում է այդ օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 18:00-ին:

17. Գործարքի կատարման պահ է համարվում՝

1) ապահովագրավճարների վճարման դեպքում՝ ապահովադրի կողմից գումարի անկանխիկ վճարման դեպքում ապահովագրական ընկերության հաշվին գումարը կրեդիտագրվելու պահը, կանխիկ վճարման դեպքում՝ ապահովագրական ընկերությանը փաստացի վճարելու պահը,

2) ապահովագրական հատուցման դեպքում՝ ապահովագրական ընկերության կողմից գումարը փաստացի վճարելու պահը,

3) մնացած այլ դեպքերում՝ իրավունքների և պարտականությունների առաջացման պահը:

18. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում գործարքում կամ գործարար հարաբերությունում կասկածելիության հիմք կամ չափանիշ հայտնաբերելու դեպքում՝ նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ն:

19. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել՝

1) աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

2) ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

20. Հաշվետվության ձևը լրացվում է հնարավորինս պարզ, հակիրճ, միանշանակ ընկալվող հայերեն լեզվով, «յունիկոդ» տառատեսակով և մեծատառերով: «Անուն (անվանում)» 4.1.1, «Ազգանուն» 4.1.2, «Հայրանուն» 4.1.3, «Անուն (անվանում)» 4.2.1, «Ազգանուն» 4.2.2, «Հայրանուն» 4.2.3, «Անուն» 4.3.2, «Ազգանուն» 4.3.3, «Հայրանուն» 4.3.4, «Անուն» 4.4.2, «Ազգանուն» 4.4.3, «Հայրանուն» 4.4.4 ենթակետերը լրացվում են անգլերեն, երբ անհրաժեշտ տվյալները հաշվետվություն տրամադրող անձին հասանելի են միայն անգլերեն լեզվով: Եթե նշված տվյալները հասանելի են այլ օտար լեզվով, ապա նշված ենթակետերը լրացվում են հայերեն կամ անգլերեն լեզվով:

21. Հաշվետվության ձևի թղթային տարբերակը լրացվում է համակարգչի օգնությամբ կամ գրիչով՝ յուրաքանչյուր վանդակում նշելով մեկ նիշ: Հաշվետվության ձևի 1.4.1, 3.4.3, 3.5, 3.13, 5.1.1, 5.2.1, 5.3.1 և 5.4.3 ենթակետերի ներքո նախատեսված դաշտերի սահմաններն անբավարար լինելու դեպքում անհրաժեշտ է օգտագործել հավելյալ թղթեր: Այդ թղթերի ձախ կողմում նշվում է այն կետը կամ ենթակետը, որի ներքո նախատեսված դաշտը լրացվում է: Այդ թղթերը ստորագրվում և հաստատվում են կնիքով (կնիքի առկայության դեպքում) և կցվում հիմնական հաշվետվության ձևին: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրվում է նաև այդ ուղղումների կողքին:

22. Հաշվետվության ձևի առաջին էջի ներքևի մասում նշվում է ներկայացվող հաշվետվության էջերի քանակը (ներառյալ՝ առաջին էջը): Հաշվետվության ձևի յուրաքանչյուր էջի ներքևի աջ անկյունում անհրաժեշտ է ստորագրել և հաստատել կնիքով (կնիքի առկայության դեպքում): Հաշվետվության ձևի այն էջերը, որոնք չեն լրացվել, կարող են չներկայացվել:

23. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը լրացվում է՝ օգտագործելով ներկայացված էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները: Էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները փոփոխության ենթակա չեն: Ցանկացած ներկայացված հաշվետվություն, որը պարունակում է փոփոխություն, դիտվում է թերի կամ սխալ լրացված հաշվետվություն և հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

24. Լրացման համար պարտադիր են այն կետերը և ենթակետերը, որոնց վերաբերյալ հաշվետվություն տրամադրող անձն ունի կամ պարտավոր է ունենալ տեղեկատվություն:

25. Յուրաքանչյուր գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ ներկայացվում է առանձին հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ

26. «Հաշվառման համարը» 1.1 կետում լրացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվառման համարը (ութ նիշ):

27. «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2 կետում լրացվում են հաշվետվության ուղարկման օրը, ամիսը, տարին (վեց նիշ):

28. «Հաշվետվության հերթական համարը» 1.3 կետում լրացվում է տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (երեք նիշ):

29. «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետում լրացվում է տվյալ հաշվետվության ուղղման կամ լրացման նպատակով ներկայացվող հաշվետվության հերթական համարը (մեկից երեք նիշ): Այս կետը լրացվում է, եթե հաշվետվությունն ուղարկվում է նախկինում ուղարկված հաշվետվությունում առկա սխալի կամ թերության ուղղման նպատակով, ինչպես նաև, եթե սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:

30. Կարգի 10-րդ և 13-րդ կետերով սահմանված կարգով ներկայացված համարվող հաշվետվության մեջ ուղղում կամ լրացում կատարելու համար հիմք հանդիսացած պատճառները կամ հանգամանքները լրացվում են «Ուղղման (լրացման) պատճառը» 1.4.1 ենթակետում: Այս ենթակետը ենթակա է պարտադիր լրացման, եթե ուղղում կամ լրացում կատարվել է նախորդ հաշվետվությունը ներկայացնելու պահից երեք աշխատանքային օր հետո:

31. Ուղղում կամ լրացում կատարելու դեպքում ներկայացվում է նոր հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4 (5)*.ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

32. «Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն» 2.1 կետը նշվում է, եթե ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի գումարը (այդ թվում՝ ապահովագրավճարի ընդհանուր գումարը), վճարվող ապահովագրավճարը կամ տրամադրվող ապահովագրական հատուցումը գերազանցում է՝

1) անկանխիկ գործարքի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը,

2) կանխիկ եղանակով իրականացվող գործարքի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը:

33. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն» 2.2 կետը նշվում է, եթե ներկայացվում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 5 (6). ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

34. «Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը» 3.1 կետում լրացվում է տեղեկացման ենթակա գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման օրը, ամիսը, տարին: Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելիս, եթե գործարքը դեռևս չի կատարվել կամ գործարար հարաբերությունը դեռևս չի հաստատվել, լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ ներկայացվել է գործարք կատարելու կամ գործարար հարաբերություն հաստատելու առաջարկը, իսկ այն դեպքում, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է, նշվում են գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման օրը, ամիսը, տարին:

35. «Ապահովագրության պայմանագրի համարը» 3.1.1 ենթակետում լրացվում է ապահովագրական պայմանագրի համարը:

36. «Ապահովագրության ժամկետը» 3.1.2 ենթակետում լրացվում է ապահովագրության օրերի քանակը:

37. «Կանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.2 կետը նշվում է, եթե գործարքը կատարվել է կանխիկ եղանակով:

38. «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.3 կետը նշվում է, եթե գործարքը կատարվել է անկանխիկ եղանակով:

39. «Արժույթը» 3.2.1 և 3.3.1 ենթակետերում լրացվում է այն արժույթը, որով կատարվել է գործարքը:

40. «Գումարը տվյալ արժույթով» 3.2.2 և 3.3.2 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի չափն այն արժույթով, որով կատարվել է գործարքը: Եթե «Արժույթը» 3.2.1 և 3.3.1 ենթակետերում լրացվում է ՀՀ դրամ, ապա նույն գումարը լրացվում է և՛ «Գումարը տվյալ արժույթով» 3.2.2 ու 3.3.2, և՛ «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.3 ու 3.3.3 ենթակետերում:

41. Այն դեպքում, երբ գործարքը իրականացվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակներով, և կանխիկ եղանակով վճարված գումարը գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը, իսկ անկանխիկ եղանակով վճարված գումարը գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը, միաժամանակ նշվում են «Կանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.2 և «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.3 կետերը, ինչպես նաև լրացվում են դրանց ներքո նախատեսված ենթակետերը:

42. «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.3 և 3.3.3 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

43. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը» 3.4 կետում նշվում է 3.4.1– 3.4.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը: Եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշը կամ տիպաբանությունը սահմանված չէ 3.4.1 և 3.4.2 ենթակետերով նախատեսված իրավական ակտերում, ապա նշվում է «Այլ» 3.4.3 ենթակետը: 3.4.1 -3.4.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը նշելու դեպքում այդ ենթակետերի ներքո նախատեսված դաշտում լրացվում է Լիազոր մարմնի իրավական ակտով, հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտով սահմանված կամ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության այլ չափանիշ կամ տիպաբանություն:

44. «Կասկածների նկարագրությունը» 3.5 կետում հնարավորինս մանրամասն նկարագրվում են գործարքի նախապատմությունը, այն բոլոր հանգամանքները, որոնք վկայել են գործարքի կասկածելիության մասին: Այս կետում

* *Պաշտոնական հրատարակության համարակալման մեջ սպրդել է տեխնիկական վրիպակ:*

կարող են նկարագրվել նաև հաշվետվություն տրամադրող անձի՝ հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները:

45. «Կապված հաշվետվության անվանումը» 3.6 կետը լրացվում է, եթե ներկայացվող հաշվետվությամբ կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը, ըստ հաշվետվություն տրամադրող անձի, պատճառահետևանքային կամ այլ առումով կապված է հաշվետվություն տրամադրող անձի կողմից նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքի հետ: «Կապված հաշվետվության անվանումը» 3.6 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության ձևի «Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվառման համարը» 1.1, «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2, «Հաշվետվության հերթական համարը» 1.3, «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետերում (առկայության դեպքում) լրացված տեղեկատվությունը: Թղթային տարբերակով հաշվետվություն ներկայացնելիս, եթե առկա է մեկից ավելի կապված հաշվետվություն, «Կապված հաշվետվության անվանումը» 3.6 կետը պատճենահանվում և լրացվում է համապատասխան քանակով:

46. «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» 3.7 կետում նշվում է այդ կետի ներքո նախատեսված ենթակետերից որևէ մեկը:

47. «Ապահովագրության պայմանագիր» 3.7.1 ենթակետը նշվում է, եթե հաշվետվություն է տրամադրվում ապահովագրական պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի գումարի (այդ թվում՝ ապահովագրավճարի ընդհանուր գումարի) վերաբերյալ:

48. «Ապահովագրավճարի վճարում» 3.7.2 ենթակետը նշվում է, եթե հաշվետվություն է տրամադրվում վճարվող ապահովագրավճարի վերաբերյալ:

49. «Ապահովագրական հատուցում» 3.7.3 ենթակետը նշվում է, եթե հաշվետվություն է տրամադրվում ապահովագրական հատուցման տրամադրման վերաբերյալ:

50. «Ապահովագրության տեսակները և դասերը» 3.8 կետի ներքո նախատեսված դաշտերում նշվում են ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրության տեսակը և դասը:

51. «Ապահովագրական գումարը» 3.9 կետում լրացվում է ապահովագրական գումարը դրամական արտահայտությամբ:

52. «Ապահովագրավճարը» 3.10 կետում լրացվում է ապահովագրավճարի գումարի չափը դրամական արտահայտությամբ այն դեպքում, եթե նշվել է 3.7.3 ենթակետը:

53. «Գործարքում կամ գործարար հարաբերությունում ապահովագրական բրոքերի առկայություն» 3.11 կետը նշվում է, եթե ապահովագրական պայմանագրի կատարմանը մասնակցել է ապահովագրական բրոքեր: Այս կետի ներքո նախատեսված ենթակետերը լրացվում են համապատասխանաբար Կարգի 58-րդ, 70-71-րդ, 73-75-րդ կետերով սահմանված կարգով:

54. «Գործարքում կամ գործարար հարաբերությունում ապահովագրական գործակալի առկայություն» 3.12 կետը նշվում է, եթե ապահովագրական պայմանագրի կատարմանը մասնակցել է ապահովագրական գործակալ: Այս կետի ներքո նախատեսված ենթակետերը լրացվում են համապատասխանաբար Կարգի 58-60-րդ, 65-68-րդ, 70-71-րդ, 73-75-րդ կետերով սահմանված կարգով:

55. «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.13 կետում նշվում են գործարքին կամ գործարար հարաբերությանն առնչվող՝ հաշվետվություն տրամադրող անձի կողմից կարևորվող այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 8. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

56. «Ապահովադիր և շահառու» 4-րդ բաժնում լրացվում է ապահովադրի և շահառուի վերաբերյալ տեղեկություններ:

57. «Ապահովադիր» 4.1 կետում նշվում է ապահովադրի տեսակը՝ ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ պետական մարմին կամ համայնք:

58. «Անուն (անվանում)» 4.1.1 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ անունը կամ իրավաբանական անձի կամ պետական մարմնի կամ համայնքի անվանումը:

59. «Ազգանուն» 4.1.2 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը: Այն դեպքում, երբ հստակ չէ, թե որն է ապահովադրի անունը և որը ազգանունը, ապա 4.1.1 և 4.1.2 ենթակետերը լրացվում են հաշվետվություն տրամադրող անձի հայեցողությամբ:

60. «Հայրանուն» 4.1.3 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հայրանունը:

61. «Ծննդյան ամսաթիվ» 4.1.4 ենթակետում լրացվում են ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան օրը, ամիսը, տարին:

62. «Բնակության վայր (գտնվելու վայր)» 4.1.5 ենթակետի ներքո նախատեսված 4.1.5.1-4.1.5.4 դաշտերում ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում լրացվում է այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում են, իսկ իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը): 4.1.5.1-4.1.5.4 դաշտերը չեն լրացվում, եթե ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը և հաշվառման վայրը նույնն են:

63. «Հաշվառման վայր» 4.1.6 ենթակետի ներքո նախատեսված 4.1.6.1.- 4.1.6.4 դաշտերում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը հաշվառված է:

64. «Քաղաքացիությունը» 4.1.7. ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ քաղաքացիությունը:

65. «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշվում է անձնագիրը, նույնականացման քարտը կամ նորմատիվ իրավական ակտով սահմանված՝ ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձը (ինքնություն) հաստատող այլ փաստաթուղթը:

66. «Փաստաթղթի սերիան և համարը» 4.1.8.1, «Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը» 4.1.8.2 դաշտերում համապատասխանաբար լրացվում են «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթղթի սերիան, համարը, ինչպես նաև տրամադրման օրը, ամիսը, տարին:

67. «Ում կողմից է տրամադրվել» 4.1.8.3 դաշտում լրացվում է այն պետական մարմնի անվանումը կամ ծածկագիրը, որի կողմից տրամադրվել է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթուղթը:

68. «Փաստաթղթի վավերականության ժամկետը» 4.1.8.4 դաշտում լրացվում է այն օրը, ամիսը, տարին, երբ լրանում է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթղթի վավերականության ժամկետը:

69. «Կազմակերպական-իրավական ձևը» 4.1.9 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը կամ դրա հապավումը (օրինակ՝ ՍՊԸ, ԲԲԸ և այլն): Օտարերկրյա իրավաբանական անձանց կազմակերպական-իրավական ձևի վերաբերյալ տվյալները լրացվում են լատինատառ:

70. «Անհատականացման (հաշվառման) համարը» 4.1.10 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցումը (հաշվառումը) իրականացնող մարմնի կողմից տրամադրված անհատականացման (հաշվառման) համարը:

71. «ՀՎՀՀ» 4.1.11 ենթակետում լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը:

72. «Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն» 4.1.12 ենթակետում լրացվում են գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը:

73. «Բանկային հաշվի համարը կամ եզակի հղման համարը» 4.1.13 ենթակետում լրացվում է ապահովադրի բանկային հաշվի համարը:

74. «Բանկի անվանումը» 4.1.14 ենթակետում լրացվում է այն բանկի անվանումը, որտեղ սպասարկվում է «Բանկային հաշվի համարը կամ եզակի հղման համարը» 4.1.13 ենթակետում լրացված հաշվի համարը կամ եզակի հղման համարը:

75. «Բանկի երկիրը» 4.1.15 ենթակետում լրացվում է այն երկիրը, որտեղ գրանցված է «Բանկի անվանում» 4.1.14 ենթակետում նշված բանկը:

76. «Բանկի BIC (SWIFT) կոդը կամ BankMail համակարգում եզակի նույնականացման համարը» 4.1.16 ենթակետում լրացվում է «Բանկի անվանում» 4.1.14 ենթակետում նշված օտարերկրյա բանկի BIC (SWIFT) կոդը կամ ներպետական բանկի BankMail համակարգում եզակի նույնականացման համարը:

77. «Ապահովադիրը նաև շահառու է» 4.1.17 ենթակետը նշվում է, եթե ապահովադիրը և շահառուն նույն անձն են: Այս կետը նշելու դեպքում «Շահառու» 4.2. կետի ներքո նախատեսված դաշտերը և ենթակետերը չեն լրացվում:

78. Հաշվետվության ձևի 4.2.1 – 4.2.16 ենթակետերը և դաշտերը լրացվում են Կարգի 58-76-կետերով սահմանված կարգով:

79. «Լիազորված անձ» 4.3 կետի ներքո նախատեսված ենթակետերը և դաշտերը լրացվում են, եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կատարվում է լիազորված անձի միջոցով:

80. «Լիազորող անձ» 4.3.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում լիազորված անձն է հանդիսանում տվյալ անձը:

81. «Իրական շահառուի վերաբերյալ տեղեկություններ» 4.4 կետում լրացվում է հաճախորդի կողմից իրական շահառուի վերաբերյալ ներկայացված կամ այլ աղբյուրից ստացված տեղեկատվությունը:

82. «Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը» դաշտը նշվում է այն դեպքում, երբ հաշվետվություն տրամադրող անձը չի կարողանում ստանալ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու, թե՝ ոչ:

83. «Չկա իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ հաշվետվություն տրամադրող անձը պարզել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա չէ իրական շահառու (օրինակ՝ այդ մասին գրավոր հայտարարություն է տվել հաճախորդը):

84. «Առկա է իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդից կամ այլ աղբյուրից տեղեկացել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու:

85. «Առկա է իրական շահառու» դաշտը նշելուց հետո «Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)» 4.4.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում իրական շահառուն է հանդիսանում տվյալ անձը:

86. Հաշվետվության ձևի 4.4.2-4.4.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են միայն «Առկա է իրական շահառու» դաշտը նշելու դեպքում՝ Կարգի 58-68 կետերով սահմանված կարգով:

87. Հաշվետվության ձևի 4-րդ բաժինը, կախված անձանց թվից, լրացվում է համապատասխան քանակով:

ԳԼՈՒԽ 9. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ, ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

88. «Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցում» 5.1 կետը նշվում է, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցվել է:

89. «Կասեցման ամսաթիվը» 5.1.1 ենթակետում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման օրը, ամիսը, տարին:

90. «Կասեցման ժամկետը» 5.1.2 ենթակետում լրացվում է կասեցման ժամկետը:

91. «Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը» 5.1.3 ենթակետում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը:

92. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում» 5.2 կետը նշվում է, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է:

93. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառները» 5.2.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժելու համար:

94. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում» 5.3 կետը նշվում է, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցվել է:

95. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառները» 5.3.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցնելու համար:

96. «Գույքի սառեցում» 5.4 կետը նշվում է, երբ հաճախորդի գույքը սառեցվել է:

97. «Սառեցման ամսաթիվ» 5.4.1 ենթակետում լրացվում են գույքի սառեցման օրը, ամիսը, տարին:

98. «Սառեցման ժամկետը» 5.4.2 ենթակետում լրացվում է սառեցման ժամկետը:

99. «Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը» 5.4.3 ենթակետում լրացվում է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերի կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կատարման նպատակով Լիազոր մարմնի կողմից հրապարակված՝ ահաբեկչության հետ կապված անձանց այն ցանկի անվանումը, որի հետ համընկնում է տեղի ունեցել:

ԳԼՈՒԽ 10. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

100. «Անուն» 6.1 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի անունը:

101. «Ազգանուն» 6.2 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի ազգանունը:

102. «Լրացման ամսաթիվը» 6.3 կետում լրացվում է հաշվետվության ձևը լրացնելու օրը, ամիսը, տարին:

Վարկային կազմակերպությունների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 102 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին[*]

Նպատակ ունենալով նախատեսել հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների և կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ հաշվետվությունների նոր ձևեր, փոփոխության ենթարկել դրանց տրամադրման կարգը և սահմանել ժամկետներին վերաբերող առավել մանրամասն կանոններ,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Վարկային կազմակերպությունների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 102 հաշվետվության ձևը» համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:
2. Հաստատել «Վարկային կազմակերպությունների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 102 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N263-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 263-Ն որոշմամբ

ՁԵՎ
ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 102 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

1.1. Հաշվառման համարը	1.2. Հաշվետվության ուղարկման ամսաթիվը	1.3. Հաշվետվության հերթական համարը	1.4. Ուղղման (լրացման) հերթական համարը

1.4.1. Ուղղման (լրացման) պատճառը

2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

☐ 2.1. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն

☐ 2.2. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն

3. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը ☐☐ - ☐☐ - ☐☐☐☐

☐ 3.2. Կանխիկի հետ կապված գործարք

3.2.1. Արժույթը (առքի արժույթ)

3.2.1.1. Գումարը տվյալ արժույթով

3.2.1.2. Գումարը համարժեք ՀՀ դրամին

3.2.2. Արժույթը (վաճառքի արժույթ)

3.2.2.1. Գումարը տվյալ արժույթով

3.2.2.2. Գումարը համարժեք ՀՀ դրամին

☐ 3.3. Անկանխիկ եղանակով իրականացված գործարք

3.3.1. Արժույթը (առքի արժույթ)

3.3.1.1. Գումարը տվյալ արժույթով

3.3.1.2. Գումարը համարժեք ՀՀ դրամին

3.3.2. Արժույթը (վաճառքի արժույթ)

3.3.2.1. Գումարը տվյալ արժույթով

3.3.2.2. Գումարը համարժեք ՀՀ դրամին

3.4. Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը

☐ 3.4.1. ձեռնարկատիրական վարկի տրամադրում

☐ 3.4.2. սպառողական վարկի տրամադրում

☐ 3.4.3. ձեռնարկատիրական փոխառության տրամադրում

☐ 3.4.4. սպառողական փոխառության տրամադրում

☐ 3.4.5. վարկի մարում

☐ 3.4.6. փոխառության մարում

☐ 3.4.7. ֆինանսական վարձակալություն (լիզինգ)

☐ 3.4.8. ֆակտորինգ

☐ 3.4.9. երաշխիքի տրամադրում

☐ 3.4.10. պարտքի ֆինանսավորում

☐ 3.4.11. առևտրային գործարքի ֆինանսավորում

☐ 3.4.12. հավատարմագրային (լիազորագրային) կառավարում

☐ 3.4.13. այլ անձանց ներդրումների կառավարում

☐ 3.4.14. բանկային ոսկու, ստանդարտացված ձուլակտորների և մետաղադրամի գնում, վաճառք և կառավարում

☐ 3.4.15. փոխառությունների ներգրավում

☐ 3.4.16. թանկարժեք մետաղների, քարերի, ոսկերչական իրերի, արժեթղթերի պահատվություն

☐ 3.4.17. պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելու միջոցով փոխառությունների ներգրավում

☐ 3.4.18. արտարժույթի առք

☐ 3.4.19. արտարժույթի վաճառք

☐ 3.4.20. դրամի և արտարժույթի ֆյուչերս

☐ 3.4.21. դրամի և արտարժույթի օպցիոն

☐ 3.4.22. այլ

3.5. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը

☐ 3.5.1. Լիազոր մարմնի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.5.2. Հաշվետվություն տրամադրող անձի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.5.3. Այլ

3.6. Կասկածների նկարագրությունը

3.7. Կապված հաշվետվության անվանումը

3.8. Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն

4. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

4.1. ՀԱՃԱԽՈՐԴ

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ ☐ Պետական մարմին կամ համայնք

4.1.1. Անուն (անվանում)

4.1.2. Ազգանուն

4.1.3. Հայրանուն

4.1.4. Ծննդյան ամսաթիվ - -

4.1.5. Բնակության վայր (գտնվելու վայր)

4.1.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.1.5.2. Քաղաք կամ գյուղ

4.1.5.3. Մարզ

4.1.5.4. Երկիր

4.1.6. Հաշվառման վայր

4.1.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.1.6.2. Քաղաք կամ գյուղ

4.1.6.3. Մարզ

4.1.6.4. Երկիր

4.1.7. Քաղաքացիություն

4.1.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.1.8.1. Փաստաթղթի սերիա և համար

4.1.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվ - -

4.1.8.3. Ում կողմից է տրամադրվել

4.1.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետ - -

4.1.9. Կազմակերպական իրավական ձև

4.1.10. Անհատականացման (հաշվառման) համար

4.1.11. ՀՎՀՀ

4.1.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

4.1.13. Բանկային հաշվի համար

4.2. ԳՈՐԾԱՐՔԻ ՄՅՈՒՍ ԿՈՂՄ

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ ☐ Պետական մարմին կամ համայնք

4.2.1. Անուն (անվանում)

4.2.2. Ազգանուն

4.2.3. Հայրանուն

4.2.4. Ծննդյան ամսաթիվը - -

4.2.5. Բնակության վայր (գտնվելու վայր)

4.2.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.2.5.2. Քաղաք կամ գյուղ

4.2.5.3. Մարզ

4.2.5.4. Երկիր

4.2.6. Հաշվառման վայր

4.2.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.2.6.2. Քաղաք կամ գյուղ

4.2.6.3. Մարզ

4.2.6.4. Երկիր

4.2.7. Քաղաքացիություն

4.2.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.2.8.1. Փաստաթղթի սերիա և համար

4.2.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.2.8.3. Ում կողմից է տրամադրվել

4.2.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4.2.9. Կազմակերպական-իրավական ձև

4.2.10. Անհատականացման (հաշվառման) համարը

4.2.11. ՀՎՀՀ

4.2.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

4.3. ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ

4.3.1. Լիազորող անձ

(հաճախորդի անուն, ազգանուն (անվանում))

4.3.2. Անուն

4.3.3. Ազգանուն

4.3.4. Հայրանուն

4.3.5. Ծննդյան ամսաթիվը - -

4.3.6. Բնակության վայր

4.3.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.3.6.2. Քաղաք կամ գյուղ

4.3.6.3. Մարզ

4.2.6.4. Երկիր

4.3.7. Հաշվառման վայր

4.3.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.3.7.2. Քաղաք կամ գյուղ

4.3.7.3. Մարզ

4.3.7.4. Երկիր

4.3.8. Քաղաքացիություն

4.3.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.3.9.1. Փաստաթղթի սերիա և համար

4.3.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.3.9.3. Ում կողմից է տրամադրվել

4.3.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4.4. ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ

☐ Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը ☐ Չկա իրական շահառու ☐ Առկա է իրական շահառու

4.4.1. Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)

4.4.2. Անուն

4.4.3. Ազգանուն

4.4.4. Հայրանուն

4.4.5. Ծննդյան ամսաթիվը - -

4.4.6. Բնակության վայր

4.4.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.4.6.2. Քաղաք կամ գյուղ

4.4.6.3. Մարզ

4.4.6.4. Երկիր

4.4.7. Հաշվառման վայր

4.4.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.4.7.2. Քաղաք կամ գյուղ

4.4.7.3. Մարզ

4.4.7.4. Երկիր

4.4.8. Քաղաքացիություն

4.4.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.4.9.1. Փաստաթղթի սերիա և համար

4.4.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.4.9.3. Ում կողմից է տրամադրվել

4.4.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

5. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ, ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

☐ 5.1. Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցում

5.1.1. Կասեցման ամսաթիվը - -

5.1.2. Կասեցման ժամկետը

5.1.3. Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը

☐ 5.2. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում

5.2.1. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառը

☐ 5.3. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում

5.3.1. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառը

☐ 5.4. Գույքի սառեցում

5.4.1. Սառեցման ամսաթիվը - -

5.4.2. Սառեցման ժամկետը

5.4.3. Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը

6. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

6.1. Անուն

6.2. Ազգանուն

6.3. Լրացման ամսաթիվը - -

Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 263-Ն որոշմամբ

ԿԱՐԳ

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 102 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Վարկային կազմակերպությունների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 102 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է վարկային կազմակերպությունների (այսուհետ՝ Հաշվետվություն տրամադրող անձ) կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հաշվետվության ձևի լրացման կարգը և հաշվետվությունների ներկայացման դեպքերը:

2. Կարգում հասկացություններն օգտագործվում են Օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Հաշվետվության ձևը լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվառված Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից:

4. Հաշվետվությունը ներկայացվում է Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքերում:

5. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն չի ներկայացվում, եթե կատարվել են հետևյալ գործարքները՝

1) ֆինանսական երկրորդային շուկայում երկու մասնագիտացված անձանց միջև կնքվող գործարքներ, որոնք կնքվում են իրենց հաշվին և իրենց անունից,
2) գործարքներ, որոնց վերաբերյալ հաշվետվություն տրամադրող անձի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վարկային ռեգիստր տրամադրվել է տեղեկատվություն,
3) Հաշվետվություն տրամադրող անձի կողմից սեփական կարիքների համար կատարվող գործարքներ՝ Հաշվետվություն տրամադրող անձի ընթացիկ գործունեության ապահովման նպատակով՝ բացառությամբ հաճախորդներից ֆինանսական ակտիվների գնումների,
4) հաճախորդի հետ կնքված և նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքներում փոփոխությունները, որոնք չեն առաջացնում գործարքի գումարի կամ արժույթի փոփոխություն:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

6. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով կամ «Սի-Բի-էյ-Նեթ» համակարգի միջոցով կամ թղթային տարբերակով:

7. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը կարող է ձեռք բերվել Ֆինանսական դիտարկումների կենտրոնին դիմելու կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջից արտահանելու միջոցով:

8. Հաշվետվությունը «Սի-Բի-էյ-Նեթ» համակարգի միջոցով ներկայացնելիս հաշվետվությանն ուղեկցող նամակի «Վերնագիրը» պետք է պարունակի «Հաշվետվություն ֆինանսական դիտարկումների կենտրոնին» արտահայտությունը:

9. Հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով ներկայացվում են միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու կարգի» 4-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնագիր կնքելուց հետո:

10. Էլեկտրոնային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը ներկայացված է համարվում, եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաշվետվություն տրամադրող անձը չի ստանում սխալի վերաբերյալ հաղորդագրություն:

11. Սխալի վերաբերյալ հաղորդագրություն ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով՝ առանց հաշվետվության անվանման փոփոխության: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

12. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում փակ կնքված (կնիքի առկայության դեպքում) ծրարով՝ «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին» նշագրմամբ՝ հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

1) ֆիզիկապես ներկայացնելու միջոցով,
2) փոստի միջոցով:

13. Կարգի 12-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացված է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացականի, իսկ Կարգի 12-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ «Հայփոստ» ՓԲԸ կողմից համապատասխան անդորրագրի տրամադրման պահից: Կարգի 12-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փոստային հասցեով (ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6):

14. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվության սխալի վերաբերյալ հետադարձ կապ ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

15. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում այդ գործարքը կատարելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվության տրամադրման օրերի հաշվարկը սկսվում է գործարքի կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից և ավարտվում այդ օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 18:00-ին:

16. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում գործարքում կամ գործարար հարաբերությունում կասկածելիության չափանիշ հայտնաբերելու դեպքում՝ նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ն:

17. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել՝

1) աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,
2) ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

18. Հաշվետվության ձևը լրացվում է հնարավորինս պարզ, հակիրճ, միանշանակ ընկալվող հայերեն լեզվով, «յունիկոդ» տառատեսակով և մեծատառերով: «Անուն (անվանում)» 4.1.1, 4.2.1, «Անուն» 4.3.2, 4.4.2, «Ազգանուն» 4.1.2, 4.2.2, 4.3.3 և 4.4.3, «Հայրանուն» 4.1.3, 4.2.3, 4.3.4 և 4.4.4 ենթակետերը լրացվում են անգլերեն, երբ անհրաժեշտ տվյալները Հաշվետվություն տրամադրող անձին հասանելի են միայն անգլերեն լեզվով: Եթե նշված տվյալները հասանելի են այլ օտար լեզվով, ապա նշված ենթակետերը լրացվում են հայերեն կամ անգլերեն լեզվով:

19. Հաշվետվության ձևի թղթային տարբերակը լրացվում է համակարգչի օգնությամբ կամ գրիչով՝ յուրաքանչյուր վանդակում նշելով մեկ նիշ: Հաշվետվության ձևի 1.4.1, 3.4.22, 3.5.3, 3.6, 3.8, 5.1.3, 5.2.1 և 5.3.1 կետերի և ենթակետերի ներքո նախատեսված դաշտերի սահմաններն անբավարար լինելու դեպքում անհրաժեշտ է օգտագործել հավելյալ թղթեր: Այդ թղթերի ձախ կողմում նշվում է այն կետը կամ ենթակետը, որի ներքո նախատեսված դաշտը լրացվում է: Այդ թղթերը ստորագրվում և հաստատվում են կնիքով (կնիքի առկայության դեպքում) և կցվում հիմնական հաշվետվության ձևին: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրվում է նաև այդ ուղղումների կողքին:

20. Հաշվետվության ձևի առաջին էջի ներքևի մասում նշվում է ներկայացվող հաշվետվության էջերի քանակը (ներառյալ՝ առաջին էջը): Հաշվետվության ձևի յուրաքանչյուր էջի ներքևի աջ անկյունում անհրաժեշտ է ստորագրել և հաստատել կնիքով (կնիքի առկայության դեպքում): Հաշվետվության ձևի այն էջերը, որոնք չեն լրացվել, կարող են չներկայացվել:

21. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը լրացվում է՝ օգտագործելով ներկայացված էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները: Էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները փոփոխության ենթակա չեն: Ցանկացած ներկայացված հաշվետվություն, որը պարունակում է փոփոխություն, դիտվում է թերի կամ սխալ լրացված հաշվետվություն և հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

22. Լրացման համար պարտադիր են այն կետերը և ենթակետերը, որոնց վերաբերյալ Հաշվետվություն տրամադրող անձն ունի կամ պարտավոր է ունենալ տեղեկատվություն:

23. Յուրաքանչյուր գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ ներկայացվում է առանձին հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

24. «Հաշվառման համարը» 1.1 կետում լրացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվառման համարը (ութ նիշ):

25. «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2 կետում լրացվում են հաշվետվության ուղարկման օրը, ամիսը, տարին (վեց նիշ):

26. «Հաշվետվության հերթական համարը» 1.3 կետում լրացվում է տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (երեք նիշ):

27. «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետում լրացվում է տվյալ հաշվետվության ուղղման կամ լրացման նպատակով ներկայացվող հաշվետվության հերթական համարը (մեկից երեք նիշ): Այս կետը լրացվում է, եթե հաշվետվությունն ուղարկվում է նախկինում ուղարկված հաշվետվությունում առկա սխալի կամ թերության ուղղման նպատակով, ինչպես նաև, եթե սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:

28. Կարգի 10-րդ և 13-րդ կետերով սահմանված կարգով ներկայացված համարվող հաշվետվության մեջ ուղղում կամ լրացում կատարելու համար հիմք հանդիսացած պատճառները և հանգամանքները լրացվում են «Ուղղման (լրացման) պատճառը» 1.4.1 ենթակետում: Այս ենթակետը ենթակա է պարտադիր լրացման, եթե ուղղում կամ լրացում կատարվել է նախորդ հաշվետվությունը ներկայացնելու պահից երեք աշխատանքային օր հետո:

29. Ուղղում կամ լրացում կատարելու դեպքում ներկայացվում է նոր հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

30. «Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն» 2.1 կետը նշվում է, եթե՝

1) անկանխիկ եղանակով իրականացվող գործարքի գումարը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը,
2) կանխիկի հետ կապված գործարքի գումարը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը:

31. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն» 2.2 կետը նշվում է, եթե ներկայացվում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

32. «Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը» 3.1 կետում լրացվում են տեղեկացման ենթակա գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման օրը, ամիսը, տարին: Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելիս, եթե գործարքը դեռևս չի կատարվել կամ գործարար հարաբերությունը դեռևս չի հաստատվել, լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ ներկայացվել է գործարք կատարելու կամ գործարար հարաբերություն հաստատելու առաջարկը, իսկ այն դեպքում, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է, նշվում են գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման օրը, ամիսը, տարին:

33. «Կանխիկի հետ կապված գործարք» 3.2 կետը նշվում է, եթե կատարվել է կանխիկի հետ կապված գործարք: Այն դեպքում, երբ գործարքն իրականացվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակներով, սակայն միայն կանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցել 5 միլիոն ՀՀ դրամը, նշվում է «Կանխիկի հետ կապված գործարք» 3.2 կետը, իսկ «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.8 կետում նշվում է գործարքի գումարի՝ նաև անկանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

34. «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.3 կետը նշվում է եթե գործարքը կատարվել է անկանխիկ եղանակով: Այն դեպքում, երբ գործարքը կատարվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակով, սակայն միայն անկանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցել 20 միլիոն ՀՀ դրամը, նշվում է «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.3 կետը, իսկ «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.8 կետում նշվում է գործարքի գումարի՝ նաև կանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

35. Այն դեպքում, երբ գործարքը կատարվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակներով, և կանխիկ եղանակով վճարված գումարը գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը, իսկ անկանխիկ եղանակով

վճարված գումարը գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը, միաժամանակ նշվում են «Կանխիկի հետ կապված գործարք» 3.2 և «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.3 կետերը, ինչպես նաև լրացվում են դրանց ներքո նախատեսված ենթակետերը:

36. «Արժույթը (առքի արժույթ)» 3.2.1 և 3.3.1 ենթակետերում լրացվում է այն արժույթը, որով կատարվել է գործարքը:

37. «Գումարը տվյալ արժույթով» 3.2.1.1 և 3.3.1.1 դաշտերում լրացվում է գործարքի գումարի չափը այն արժույթով, որով կատարվել է գործարքը: Եթե «Արժույթը (առքի արժույթ)» 3.2.1 և 3.3.1 ենթակետերում նշվում է ՀՀ դրամ, ապա նույն գումարը լրացվում է և՛ «Գումարը տվյալ արժույթով» 3.2.1.1 և 3.3.1.1, և՛ «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.1.2 և 3.3.1.2 դաշտերում:

38. «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.1.2 և 3.3.1.2 դաշտերում լրացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

39. «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» 3.4 կետի ներքո նախատեսված 3.4.18–3.4.21 ենթակետերը նշելու, ինչպես նաև «Այլ» 3.1.22 ենթակետում 3.1.18-3.4.21 ենթակետերով նախատեսված գործարքների նման այլ գործարք կամ գործարար հարաբերություն լրացնելու դեպքում գործարքի գումարի վերաբերյալ տվյալները լրացվում են հետևյալ սկզբունքով՝

1) «Արժույթը (առքի արժույթ)» 3.2.1 և 3.3.1 ենթակետերում նշվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից գնված արժույթը:
2) «Գումարը տվյալ արժույթով» 3.2.1.1 և 3.3.1.1 դաշտերում լրացվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից գնված արժույթի գումարը:
3) «Արժույթը (վաճառքի արժույթ)» 3.2.2 և 3.3.2 ենթակետերում նշվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից վաճառված արժույթը:
4) «Գումարը տվյալ արժույթով» 3.2.2.1 և 3.3.2.1 դաշտերում լրացվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից վաճառված արժույթի գումարը:
5) «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.1.2, 3.3.1.2, 3.2.2.2 և 3.3.2.2 դաշտերում լրացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

40. Այն դեպքում, երբ կատարվել է մեկ արտարժույթի փոխարկում մեկ այլ արտարժույթի, «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.1.2, 3.3.1.2, 3.2.2.2 և 3.3.2.2 դաշտերում լրացվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից գնված արտարժույթին համարժեք գումարի դրամական արտահայտությունը:Այն դեպքում, երբ կատարվել է արտարժույթի և դրամի փոխարկում, «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.1.2, 3.3.1.2, 3.2.2.2 և 3.3.2.2 դաշտերում լրացվում է արտարժույթին համարժեք գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

41. «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» 3.4 կետում նշվում է այդ կետի ներքո նախատեսված ենթակետերից որևէ մեկը: «Այլ» 3.4.22 ենթակետը նշելու դեպքում այդ կետի ներքո նախատեսված դաշտում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության անվանումը:

42. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը» 3.5 կետում նշվում է 3.5.1 – 3.5.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը: Եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշը կամ տիպաբանությունը սահմանված չէ 3.5.1 և 3.5.2 ենթակետերով նախատեսված իրավական ակտերում, ապա նշվում է «Այլ» 3.5.3 ենթակետը: 3.5.1 – 3.5.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը նշելու դեպքում այդ ենթակետերի ներքո նախատեսված դաշտում լրացվում է Լիազոր մարմնի իրավական ակտով, Հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտով սահմանված կամ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության այլ չափանիշ կամ տիպաբանություն:

43. «Կասկածների նկարագրությունը» 3.6 կետում հնարավորինս մանրամասն նկարագրվում են գործարքի կամ գործարար հարաբերության նախապատմությունը, այն բոլոր հանգամանքները, որոնք վկայել են գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության մասին: Այս կետում կարող են նկարագրվել նաև Հաշվետվություն տրամադրող անձի՝ հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները:

44. «Կապված հաշվետվության անվանումը» 3.7 կետը լրացվում է, եթե ներկայացվող հաշվետվությամբ կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը, ըստ Հաշվետվություն տրամադրող անձի, պատճառահետևանքային կամ այլ առումով կապված է Հաշվետվություն տրամադրող անձի կողմից նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքի հետ: «Կապված հաշվետվության անվանումը» 3.7 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության ձևի «Հաշվառման համարը» 1.1, «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2, «Հաշվետվության հերթական համարը» 1.3, «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետերում (առկայության դեպքում) լրացված տեղեկատվությունը: Թղթա-

յին տարբերակով հաշվետվություն ներկայացնելիս, եթե առկա է մեկից ավելի կապված հաշվետվություն, «Կապված հաշվետվության անվանումը» 3.7 ենթակետը պատճենահանվում և լրացվում է համապատասխան քանակով:

45. «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.8 կետում նշվում են Կարգի 33-րդ և 34-րդ կետերով նախատեսված տեղեկությունները, ինչպես նաև գործարքին կամ գործարար հարաբերությանը առնչվող՝ Հաշվետվություն տրամադրող անձի կողմից կարևորվող այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 7. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

46. «Հաճախորդ» 4.1 կետում նշվում է հաճախորդի տեսակը՝ ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, պետական մարմին կամ համայնք:

47. «Անուն (անվանում)» 4.1.1 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ անունը կամ իրավաբանական անձի կամ պետական մարմնի կամ համայնքի անվանումը:

48. «Ազգանուն» 4.1.2 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը: Այն դեպքում, երբ հստակ չէ, թե որն է հաճախորդի անունը և որը ազգանունը, ապա 4.1.1 և 4.1.2 ենթակետերը լրացվում են Հաշվետվություն տրամադրող անձի հայեցողությամբ:

49. «Հայրանուն» 4.1.3 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հայրանունը:

50. «Ծննդյան ամսաթիվ» 4.1.4 ենթակետում լրացվում են ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան օրը, ամիսը, տարին:

51. «Բնակության վայր (գտնվելու վայր)» 4.1.5 ենթակետի ներքո նախատեսված 4.1.5.1 - 4.1.5.4 դաշտերում ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում լրացվում է այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում է, իսկ իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը): 4.1.5.1 - 4.1.5.4 դաշտերը չեն լրացվում, եթե ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը և հաշվառման վայրը նույնն է:

52. «Հաշվառման վայր» 4.1.6 ենթակետի ներքո նախատեսված 4.1.6.1 - 4.1.6.4 դաշտերում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը հաշվառված է:

53. «Քաղաքացիություն» 4.1.7 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ քաղաքացիությունը:

54. «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշվում է անձնագիրը, նույնականացման քարտը կամ նորմատիվ իրավական ակտով սահմանված՝ ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձը (ինքնություն) հաստատող այլ փաստաթուղթը:

55. «Փաստաթղթի սերիա և համար» 4.1.8.1, «Փաստաթղթի տրամադրման ամսաթիվ» 4.1.8.2 դաշտերում համապատասխանաբար լրացվում են «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթղթի սերիան, համարը, ինչպես նաև տրամադրման օրը, ամիսը, տարին:

56. «Ում կողմից է տրամադրվել» 4.1.8.3 դաշտում լրացվում է այն պետական մարմնի անվանումը կամ ծածկագիրը, որի կողմից տրամադրվել է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթուղթը:

57. «Փաստաթղթի վավերականության ժամկետ» 4.1.8.4 դաշտում լրացվում է այն օրը, ամիսը, տարին, երբ լրանում է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթղթի վավերականության ժամկետը:

58. «Կազմակերպական-իրավական ձև» 4.1.9 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը կամ դրա հապավումը (օրինակ՝ ՍՊԸ, ԲԲԸ և այլն): Օտարերկրյա իրավաբանական անձանց կազմակերպական-իրավական ձևի վերաբերյալ տվյալները լրացվում են լատինատառ:

59. «Անհատականացման (հաշվառման) համար» 4.1.10 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցումը (հաշվառումը) իրականացնող մարմնի կողմից տրամադրված անհատականացման (հաշվառման) համարը:

60. «ՀՎՀՀ» 4.1.11 ենթակետում լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը:

61. «Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն» 4.1.12 ենթակետում լրացվում են գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը:

62. «Բանկային հաշվի համարը» 4.1.13 ենթակետում լրացվում է հաճախորդի բանկային հաշվի համարը:

63. Հաշվետվության ձևի 4.2.1 – 4.2.12 ենթակետերը լրացվում են Կարգի 47-61-րդ կետերով սահմանված կարգով:

64. «Լիազորված անձ» 4.3 կետը լրացվում է, եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կատարվում է լիազորված անձի միջոցով:

65. «Լիազորող անձ» 4.3.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում լիազորված անձն է հանդիսանում տվյալ անձը:

66. Հաշվետվության ձևի 4.3.2 - 4.3.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են Կարգի 47-57-րդ կետերով սահմանված կարգով:

67. «Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը չի կարողանում ստանալ տեղեկատվություն այն մասին, թե արդյո՞ք գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու, թե՝ ոչ:

68. «Չկա իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը պարզել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա չէ իրական շահառու (օրինակ՝ այդ մասին գրավոր հայտարարություն է տվել հաճախորդը):

69. «Առկա է իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդից կամ այլ աղբյուրից տեղեկացել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու:

70. «Առկա է իրական շահառու» դաշտը նշելուց հետո «Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)» 4.4.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում իրական շահառուն է հանդիսանում տվյալ անձը:

71. Հաշվետվության ձևի 4.4.2 - 4.4.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են միայն «Առկա է իրական շահառու» դաշտը նշելու դեպքում՝ Կարգի 47-57-րդ կետերով սահմանված կարգով:

72. Հաշվետվության ձևի 4-րդ բաժինը, կախված անձանց թվից, լրացվում է համապատասխան քանակով:

ԳԼՈՒԽ 8. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ, ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

73. «Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցում» 5.1 կետը նշվում է, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցվել է:

74. «Կասեցման ամսաթիվը» 5.1.1 ենթակետում լրացվում են գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման օրը, ամիսը, տարին:

75. «Կասեցման ժամկետը» 5.1.2 ենթակետում լրացվում է կասեցման ժամկետը:

76. «Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը» 5.1.3 ենթակետում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը:

77. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում» 5.2 կետը նշվում է, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է:

78. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառները» 5.2.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժելու համար:

79. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում» 5.3 կետը նշվում է, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցվել է:

80. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառները» 5.3.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցնելու համար:

81. «Գույքի սառեցում» 5.4 կետը նշվում է, երբ հաճախորդի գույքը սառեցվել է:

82. «Սառեցման ամսաթիվ» 5.4.1 ենթակետում լրացվում է գույքի սառեցման օրը, ամիսը, տարին:

83. «Սառեցման ժամկետը» 5.4.2 ենթակետում լրացվում է սառեցման ժամկետը:

84. «Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը» 5.4.3 ենթակետում լրացվում է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերի և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կատարման նպատակով Լիազոր մարմնի կողմից հրապարակված՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը:

ԳԼՈՒԽ 9. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

85. «Անուն» 6.1 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի անունը:

86. «Ազգանուն» 6.2 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի ազգանունը:

87. «Լրացման ամսաթիվը» 6.3 կետում լրացվում են հաշվետվության ձևը լրացնելու օրը, ամիսը, տարին:

Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 103 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին[*]

Նպատակ ունենալով նախատեսել հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների և կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ հաշվետվությունների նոր ձևեր, փոփոխության ենթարկել դրանց տրամադրման կարգը և սահմանել ժամկետներին վերաբերող առավել մանրամասն կանոններ,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 103 հաշվետվության ձևը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2. Հաստատել «Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 103 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2013 թ., N 264-Ն

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 264-Ն որոշմամբ

ՁԵՎ

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԴԻԼԵՐԱՅԻՆ-ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 103 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

1.1. Հաշվառման համարը	1.2. Հաշվետվության ուղարկման ամսաթիվը	1.3. Հաշվետվության հերթական համարը	1.4. Ուղղման (լրացման) հերթական համարը

1.4.1. Ուղղման (լրացման) պատճառը

2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

☐ 2.1. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն

☐ 2.2. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

3. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը ☐☐ – ☐☐ – ☐☐☐☐

3.2. Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը

☐ 3.2.1. Արտարժույթի շուկայում կնքվող գործարքներ

☐ 3.2.1.0.1. Սփոթ

☐ 3.2.1.0.2. Ֆյուչերս

☐ 3.2.1.0.3. Ֆորվարդ

☐ 3.2.1.0.4. Սվոպ

☐ 3.2.1.0.5. Օպցիոն

Գումարը

3.2.1.1. Առքի արժույթ

3.2.1.2. Առքի գումար

3.2.1.3. Վաճառքի արժույթ

3.2.1.4. Վաճառքի գումար

3.2.1.5. Գումարը համարժեք ՀՀ դրամին

☐ 3.2.2. Այլ

☐ 3.2.2.1. Կանխիկի հետ կապված գործարք

☐ 3.2.2.2. Անկանխիկ եղանակով իրականացված գործարք

3.2.2.1.1. Արժույթը

3.2.2.2.1. Արժույթը

3.2.2.1.2. Գումարը տվյալ արժույթով

3.2.2.2.2. Գումարը տվյալ արժույթով

3.2.2.1.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

3.2.2.2.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

3.3. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը

☐ 3.3.1. Լիազոր մարմնի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.3.2. Հաշվետվություն տրամադրող անձի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.3.3. Այլ

3.4. Կասկածների նկարագրությունը

☐ 3.5. Կապված հաշվետվության անվանումը

☐☐ - ☐☐ - ☐☐☐☐

3.6. Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն

4. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

4.1. ՀԱՃԱԽՈՐԴ

☐ Ֆիզիկական անձ

☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ

☐ Պետական մարմին կամ համայնք

4.1.1. Անուն (անվանում)

4.1.2. Ազգանուն

4.1.3. Հայրանուն

4.1.4. Ծննդյան ամսաթիվը ☐☐ - ☐☐ - ☐☐☐☐

4.1.5. Բնակության վայր (գտնվելու վայր)

4.1.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.1.5.2. Քաղաք կամ գյուղ

4.1.5.3. Մարզ

4.1.5.4. Երկիր

4.1.6. Հաշվառման վայր
4.1.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.1.6.2. Քաղաք կամ գյուղ

4.1.6.3. Մարզ

4.1.6.4. Երկիր

4.1.7. Քաղաքացիություն

4.1.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակը

4.1.8.1. Փաստաթղթի սերիան և համարը

4.1.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.1.8.3. Ում կողմից է տրամադրվել

4.1.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4.1.9. Կազմակերպական իրավական ձև

4.1.10. Անհատականացման (հաշվառման) համարը

4.1.11. ՀՎՀՀ

4.1.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

4.1.13. Բանկային հաշվի համար

4.2. ԳՈՐԾԱՐՔԻ ՄՅՈՒՍ ԿՈՂՄ

☐ Ֆիզիկական անձ

☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ

☐ Պետական մարմին կամ համայնք

4.2.1. Անուն (անվանում)

4.2.2. Ազգանուն

4.2.3. Հայրանուն

4.2.4. Ծննդյան ամսաթիվը - -

4.2.5. Բնակության վայր (գտնվելու վայր)
4.2.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.2.5.2. Քաղաք կամ գյուղ

4.2.5.3. Մարզ

4.2.5.4. Երկիր

4.2.6. Հաշվառման վայր
4.2.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.2.6.2. Քաղաք կամ գյուղ

4.2.6.3. Մարզ

4.2.6.4. Երկիր

4.2.7. Քաղաքացիություն

4.2.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.2.8.1. Փաստաթղթի սերիա և համար

4.2.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը

4.2.8.3. Ում կողմից է տրամադրվել

4.2.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը

4.2.9. Կազմակերպական իրավական ձև

4.2.10. Անհատականացման (հաշվառման) համարը

4.2.11. ՀՎՀՀ

4.2.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

4.3. ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ

4.3.1. Լիազորող անձ

4.3.2. Անուն

4.3.3. Ազգանուն

4.3.4. Հայրանուն

4.3.5. Ծննդյան ամսաթիվը

4.3.6. Բնակության վայր

4.3.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.3.6.2. Քաղաք կամ գյուղ

4.3.6.3. Մարզ

4.3.6.4. Երկիր

4.3.7. Հաշվառման վայր

4.3.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.3.7.2. Քաղաք կամ գյուղ

4.3.7.3. Մարզ

4.3.7.4. Երկիր

4.3.8. Քաղաքացիություն

4.3.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.3.9.1. Փաստաթղթի սերիա և համար

4.3.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը

4.3.9.3. Ում կողմից է տրամադրվել

4.3.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը

4.4. ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ

☐ Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը ☐ Չկա իրական շահառու ☐ Առկա է իրական շահառու

4.4.1. Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)

4.4.2. Անուն

4.4.3. Ազգանուն

4.4.4. Հայրանուն

4.4.5. Ծննդյան ամսաթիվը

4.4.6. Բնակության վայր

4.4.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.4.6.2. Քաղաք կամ գյուղ

4.4.6.3. Մարզ

4.4.6.4. Երկիր

4.4.7. Հաշվառման վայր

4.4.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.4.7.2. Քաղաք կամ գյուղ

4.4.7.3. Մարզ

4.4.7.4. Երկիր

4.4.8. Քաղաքացիություն

4.4.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.4.9.1. Փաստաթղթի սերիա և համար

4.4.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.4.9.3. Ում կողմից է տրամադրվել

4.4.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

5. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ, ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

☐ 5.1. Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցում

5.1.1. Կասեցման ամսաթիվը - -

5.1.2. Կասեցման ժամկետը

5.1.3. Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը

☐ 5.2. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում

5.2.1. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառը

☐ 5.3. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում

5.3.1. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառը

☐ 5.4. Գույքի սառեցում

5.4.1. Սառեցման ամսաթիվը - -

5.4.2. Սառեցման ժամկետը

5.4.3. Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը

6. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

6.1. Անուն

6.2. Ազգանուն

6.3. Լրացման ամսաթիվը - -

Հավելված 2

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 264-Ն որոշմամբ

ԿԱՐԳ
ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԴԻԼԵՐԱՅԻՆ-ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 103 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ և ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 103 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց (այսուհետ՝ Հաշվետվություն տրամադրող անձ) կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հաշվետվության ձևի լրացման կարգը և հաշվետվությունների ներկայացման դեպքերը:

2. Կարգում հասկացություններն օգտագործվում են Օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Հաշվետվության ձևը լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվառված Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից:

4. Հաշվետվությունը ներկայացվում է Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքերում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի կամ «Սի-Բի-էյ-Նեթ» համակարգի միջոցով կամ թղթային տարբերակով:

6. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը կարող է ձեռք բերվել Ֆինանսական դիտարկումների կենտրոնին դիմելու կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջից արտահանելու միջոցով:

7. Հաշվետվությունը «Սի-Բի-էյ-Նեթ» համակարգի միջոցով ներկայացնելիս հաշվետվությանն ուղեկցող նամակի «Վերնագիրը» պետք է պարունակի «Հաշվետվություն ֆինանսական դիտարկումների կենտրոնին» արտահայտությունը:

8. Հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով ներկայացվում են միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու կարգի» 4-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնագիր կնքելուց հետո:

9. Էլեկտրոնային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը ներկայացված է համարվում, եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաշվետվություն տրամադրող անձը չի ստանում սխալի վերաբերյալ հաղորդագրություն:

10. Սխալի վերաբերյալ հաղորդագրություն ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով՝ առանց հաշվետվության անվանման փոփոխության: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

11. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում փակ կնքված (կնիքի առկայության դեպքում) ծրարով՝ «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին» նշագրմամբ՝ հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

1) ֆիզիկապես ներկայացնելու միջոցով,
2) փոստի միջոցով:

12. Կարգի 11-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացված է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացականի, իսկ Կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ «Հայփոստ» ՓԲԸ կողմից համապատասխան անդորրագրի տրամադրման պահից: Կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փոստային հասցեով (ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6):

13. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվության սխալի վերաբերյալ հետադարձ կապ ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

14. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում այդ գործարքը կատարելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվության տրամադրման օրերի հաշվարկը սկսվում է գործարքի կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից և ավարտվում այդ օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 18:00-ին:

15. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում գործարքում կամ գործարար հարաբերությունում կասկածելիության չափանիշ հայտնաբերելու դեպքում՝ նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ն:

16. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել՝

1) աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,
2) ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խոչընդոտներով:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

17. Հաշվետվության ձևը լրացվում է հնարավորինս պարզ, հակիրճ, միանշանակ ընկալվող հայերեն լեզվով, «յունիկոդ» տառատեսակով և մեծատառերով: «Անուն (անվանում)» 4.1.1 և 4.2.1, «Անուն» 4.3.2 և 4.4.2, «Ազգանուն» 4.1.2, 4.2.2, 4.3.3 և 4.4.3, «Հայրանուն» 4.1.3, 4.2.3, 4.3.4 և 4.4.4 ենթակետերը լրացվում են անգլերեն, երբ անհրաժեշտ տվյալները Հաշվետվություն տրամադրող անձին հասանելի են միայն անգլերեն լեզվով: Եթե նշված տվյալները հասանելի են այլ օտար լեզվով, ապա նշված ենթակետերը լրացվում են հայերեն կամ անգլերեն լեզվով:

18. Հաշվետվության ձևի թղթային տարբերակը լրացվում է համակարգչի օգնությամբ կամ գրիչով՝ յուրաքանչյուր վանդակում նշելով մեկ նիշ: Հաշվետվության ձևի 1.4.1, 3.2.2, 3.3.3, 3.4, 3.6, 5.1.3, 5.2.1, և 5.3.1 կետերի և ենթակետերի ներքո նախատեսված դաշտերի սահմաններն անբավարար լինելու դեպքում անհրաժեշտ է օգտագործել հավելյալ թղթեր: Այդ թղթերի ձախ կողմում նշվում է այն կետը կամ ենթակետը, որի ներքո նախատեսված դաշտը լրացվում է: Այդ թղթերը ստորագրվում և հաստատվում են կնիքով (կնիքի առկայության դեպքում) և կցվում հիմնական հաշվետվության ձևին: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրվում է նաև այդ ուղղումների կողքին:

19. Հաշվետվության ձևի առաջին էջի ներքևի մասում նշվում է ներկայացվող հաշվետվության էջերի քանակը (ներառյալ՝ առաջին էջը): Հաշվետվության ձևի յուրաքանչյուր էջի ներքևի աջ անկյունում անհրաժեշտ է ստորագրել և հաստատել կնիքով (կնիքի առկայության դեպքում): Հաշվետվության ձևի այն էջերը, որոնք չեն լրացվել, կարող են չներկայացվել:

20. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը լրացվում է՝ օգտագործելով ներկայացված էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները: Էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները փոփոխության ենթակա չեն: Ցանկացած ներկայացված հաշվետվություն, որը պարունակում է փոփոխություն, դիտվում է թերի կամ սխալ լրացված հաշվետվություն և հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

21. Լրացման համար պարտադիր են այն կետերը և ենթակետերը, որոնց վերաբերյալ Հաշվետվություն տրամադրող անձն ունի կամ պարտավոր է ունենալ տեղեկատվություն:

22. Յուրաքանչյուր գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ ներկայացվում է առանձին հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ

23. «Հաշվառման համարը» 1.1 կետում լրացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվառման համարը (ութ նիշ):

24. «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2 կետում լրացվում են հաշվետվության ուղարկման օրը, ամիսը, տարին (վեց նիշ):

25. «Հաշվետվության հերթական համարը» 1.3 կետում լրացվում է տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (երեք նիշ):

26. «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետում լրացվում է տվյալ հաշվետվության ուղղման կամ լրացման նպատակով ներկայացվող հաշվետվության հերթական համարը (մեկից երեք նիշ): Այս կետը լրացվում է, եթե հաշվետվությունն ուղարկվում է նախկինում ուղարկված հաշվետվությունում առկա սխալի կամ թերության ուղղման նպատակով, ինչպես նաև, եթե սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:

27. Կարգի 9-րդ և 12-րդ կետով սահմանված կարգով ներկայացված համարվող հաշվետվության մեջ ուղղում կամ լրացում կատարելու համար հիմք հանդիսացած պատճառները և հանգամանքները լրացվում են «Ուղղման (լրացման) պատճառը» 1.4.1 ենթակետում: Այս ենթակետը ենթակա է պարտադիր լրացման, եթե ուղղում կամ լրացում կատարվել է նախորդ հաշվետվությունը ներկայացնելու պահից երեք աշխատանքային օր հետո:

28. Ուղղում կամ լրացում կատարելու դեպքում ներկայացվում է նոր հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

29. «Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն» 2.1 կետը նշվում է, եթե.

1) անկանխիկ եղանակով իրականացվող գործարքի գումարը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը,
2) կանխիկի հետ կապված գործարքի գումարը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը:

30. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն» 2.2 կետը նշվում է, եթե ներկայացվում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

31. «Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը» 3.1 կետում լրացվում են տեղեկացման ենթակա գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման օրը, ամիսը, տարին: Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելիս, եթե գործարքը դեռևս չի կատարվել կամ գործարար հարաբերությունը դեռևս չի հաստատվել, լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ ներկայացվել է գործարք կատարելու կամ գործարար հարաբերություն հաստատելու առաջարկը, իսկ այն դեպքում, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է, նշվում են գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման օրը, ամիսը, տարին:

32. «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» 3.2 կետում նշվում է այս կետի ներքո նախատեսված ենթակետերից որևէ մեկը: «Արտարժույթի շուկայում կնքվող գործարքներ» 3.2.1 ենթակետը նշելու դեպքում նշվում և լրացվում են այս ենթակետի ներքո նախատեսված դաշտերը:

33. «Առքի արժույթ» 3.2.1.1 դաշտում լրացվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից գնված արժույթը:

34. «Առքի գումար» 3.2.1.2 դաշտում լրացվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից գնված արժույթի գումարը:

35. «Վաճառքի արժույթ» 3.2.1.3 դաշտում լրացվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից վաճառված արժույթը:

36. «Վաճառքի գումար» 3.2.1.4 դաշտում լրացվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից վաճառված արժույթի գումարը:

37. «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.1.5 դաշտում լրացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

38. Այն դեպքում, երբ կատարվել է մեկ արտարժույթի փոխարկում մեկ այլ արտարժույթի, «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.1.5 դաշտում լրացվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից գնված արտարժույթին համարժեք գումարի դրամական արտահայտությունը:Այն դեպքում, երբ կատարվել է արտարժույթի և դրամի փոխարկում, «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.1.5 դաշտում լրացվում է արտարժույթին համարժեք գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

39. «Այլ» 3.2.2 ենթակետը նշելու դեպքում նշվում և լրացվում են այս կետի ներքո նախատեսված դաշտերը:

40. «Կանխիկի հետ կապված գործարք» 3.2.2.1 ենթակետը նշվում է, եթե կատարվել է կանխիկի հետ կապված գործարք: Այն դեպքում, երբ գործարքը կատարվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակով, սակայն միայն կանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցել 5 միլիոն ՀՀ դրամը, նշվում է «Կանխիկի հետ կապված գործարք» 3.2.2.1 ենթակետը, իսկ «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.6 կետում նշվում է գործարքի գումարի՝ նաև անկանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

41. «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.2.2.2 ենթակետը նշվում է, եթե գործարքը կատարվել է անկանխիկ եղանակով: Այն դեպքում, երբ գործարքը կատարվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակով, սակայն միայն անկանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցել 20 միլիոն ՀՀ դրամը, նշվում է «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.2.2.2 ենթակետը, իսկ «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.6 կետում նշվում է գործարքի գումարի՝ նաև կանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

42. Այն դեպքում, երբ գործարքը կատարվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակով, և կանխիկ եղանակով վճարված գումարը գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը, իսկ անկանխիկ եղանակով վճարված գումարը գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը, միաժամանակ նշվում են «Կանխիկի հետ կապված գործարք» 3.2.2.1 և «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.2.2.2 ենթակետերը, ինչպես նաև լրացվում են դրանց ներքո նախատեսված դաշտերը:

43. «Արժույթը» 3.2.2.1.1 և 3.2.2.2.1 կետերում լրացվում է այն արժույթը, որով կատարվել է գործարքը:

44. «Գումարը տվյալ արժույթով» 3.2.2.1.2 և 3.2.2.2.2 կետերում լրացվում է գործարքի գումարի չափը այն արժույթով, որով կատարվել է գործարքը: Եթե «Արժույթը» 3.2.2.1.1 և 3.2.2.2.1 կետերում նշվում է ՀՀ դրամ, ապա նույն գումարը լրացվում է և՛ «Գումարը տվյալ արժույթով» 3.2.2.1.2 և 3.2.2.2.2, և՛ «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.2.1.3 և 3.2.2.2.3 կետերում:

45. «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.2.1.3 և 3.2.2.2.3 կետերում լրացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

46. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը» 3.3 կետում նշվում է 3.3.1–3.3.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը: Եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշը կամ տիպաբանությունը սահմանված չէ 3.3.1 և 3.3.2 ենթակետերով նախատեսված իրավական ակտերում, ապա նշվում է «Այլ» 3.3.3 ենթակետը: 3.3.1 - 3.3.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը նշելու դեպքում այս ենթակետերի ներքո նախատեսված դաշտում լրացվում է Լիազոր մարմնի իրավական ակտով, Հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտով սահմանված կամ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության այլ չափանիշ կամ տիպաբանություն:

47. «Կասկածների նկարագրությունը» 3.4 կետում հնարավորինս մանրամասն նկարագրվում են գործարքի կամ գործարար հարաբերության նախապատմությունը, այն բոլոր հանգամանքները, որոնք վկայել են գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության մասին: Այս կետում կարող են նկարագրվել նաև Հաշվետվություն տրամադրող անձի՝ հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները:

48. «Կապված հաշվետվության անվանումը» 3.5 կետը լրացվում է, եթե ներկայացվող հաշվետվությամբ կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը, ըստ Հաշվետվություն տրամադրող անձի, պատճառահետևանքային կամ այլ առումով կապված է Հաշվետվություն տրամադրող անձի կողմից նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքի հետ: «Կապված հաշվետվության անվանումը» 3.5 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության ձևի «Հաշվառման համարը» 1.1, «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2, «Հաշվետվության հերթական համարը» 1.3, «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետերում (առկայության դեպքում) լրացված տեղեկատվությունը: Թղթային տարբերակով հաշվետվություն ներկայացնելիս, եթե առկա է մեկից ավելի կապված հաշվետվություն, «Կապված հաշվետվության անվանումը» 3.5 կետը պատճենահանվում և լրացվում է համապատասխան քանակով:

49. «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.6 կետում նշվում են Կարգի 40-րդ և 41-րդ կետերով նախատեսված տեղեկությունները, ինչպես նաև գործարքին կամ գործարար հարաբերությանն առնչվող՝ Հաշվետվություն տրամադրող անձի կողմից կարևորվող այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 7. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

50. «Հաճախորդ» 4.1 կետում նշվում է հաճախորդի տեսակը՝ ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ պետական մարմին կամ համայնք:

51. «Անուն (անվանում)» 4.1.1 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ անունը կամ իրավաբանական անձի կամ պետական մարմնի կամ համայնքի անվանումը:

52. «Ազգանուն» 4.1.2. ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը: Այն դեպքում, երբ հստակ չէ, թե որն է հաճախորդի անունը և որը ազգանունը, 4.1.1 և 4.1.2 ենթակետերը լրացվում են Հաշվետվություն տրամադրող անձի հայեցողությամբ:

53. «Հայրանուն» 4.1.3 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հայրանունը:

54. «Ծննդյան ամսաթիվ» 4.1.4 ենթակետում լրացվում են ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան օրը, ամիսը, տարին:

55. «Բնակության վայր (գտնվելու վայր)» 4.1.5 ենթակետի ներքո նախատեսված 4.1.5.1 - 4.1.5.4 դաշտերում ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում լրացվում է այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում է, իսկ իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը): 4.1.5.1 - 4.1.5.4 դաշտերը չեն լրացվում, եթե ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը և հաշվառման վայրը նույնն է:

56. «Հաշվառման վայր» 4.1.6 ենթակետի ներքո նախատեսված 4.1.6.1 - 4.1.6.4 դաշտերում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը հաշվառված է:

57. «Քաղաքացիությունը» 4.1.7 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ քաղաքացիությունը:

58. «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշվում է անձնագիրը, նույնականացման քարտը կամ նորմատիվ իրավական ակտով սահմանված՝ ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձը (ինքնություն) հաստատող այլ փաստաթուղթ:

59. «Փաստաթղթի սերիան և համարը» 4.1.8.1, «Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը» 4.1.8.2 դաշտերում համապատասխանաբար լրացվում են «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթղթի սերիան, համարը, ինչպես նաև տրամադրման օրը, ամիսը, տարին:

60. «Ում կողմից է տրամադրվել» 4.1.8.3 դաշտում լրացվում է այն պետական մարմնի անվանումը կամ ծածկագիրը, որի կողմից տրամադրվել է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթուղթը:

61. «Փաստաթղթի վավերականության ժամկետը» 4.1.8.4 դաշտում լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ լրանում է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթղթի վավերականության ժամկետը:

62. «Կազմակերպական-իրավական ձևը» 4.1.9 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը կամ դրա հապավումը (օրինակ՝ ՍՊԸ, ԲԲԸ և այլն): Օտարերկրյա իրավաբանական անձանց կազմակերպական-իրավական ձևի վերաբերյալ տվյալները լրացվում են լատինատառ:

63. «Անհատականացման (հաշվառման) համարը» 4.1.10 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցումը (հաշվառումը) իրականացնող մարմնի կողմից տրամադրված անհատականացման (հաշվառման) համարը:

64. «ՀՎՀՀ» 4.1.11 ենթակետում լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը:

65. «Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն» 4.1.12 ենթակետում լրացվում են գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը:

66. «Բանկային հաշվի համարը» 4.1.13 ենթակետում լրացվում է հաճախորդի բանկային հաշվի համարը:

67. Հաշվետվության ձևի 4.2.1 – 4.2.12 ենթակետերը և դաշտերը լրացվում են Կարգի 51-65-րդ կետերով սահմանված կարգով:

68. «Լիազորված անձ» 4.3 կետը լրացվում է, եթե գործարքը կատարվում կամ գործարար հարաբերությունը հաստատվում է լիազորված անձի միջոցով:

69. «Լիազորող անձ» 4.3.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում լիազորված անձն է հանդիսանում տվյալ անձը:

70. Հաշվետվության ձևի 4.3.2 - 4.3.9.4 ենթակետերը լրացվում են Կարգի 51-61-րդ կետերով սահմանված կարգով:

71. «Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը չի կարողանում ստանալ տեղեկատվություն այն մասին, թե արդյո՞ք գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու, թե՝ ոչ:

72. «Չկա իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը պարզել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա չէ իրական շահառու (օրինակ՝ այդ մասին գրավոր հայտարարություն է տվել հաճախորդը):

73. «Առկա է իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդից կամ այլ աղբյուրից տեղեկացել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու:

74. «Առկա է իրական շահառու» դաշտը նշելուց հետո «Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)» 4.4.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում իրական շահառուն է հանդիսանում տվյալ անձը:

75. Հաշվետվության ձևի 4.4.2 - 4.4.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են միայն «Առկա է իրական շահառու» դաշտը նշելու դեպքում՝ Կարգի 51-61-րդ կետերով սահմանված կարգով:

76. Հաշվետվության ձևի 4-րդ բաժինը, կախված անձանց թվից, լրացվում է համապատասխան քանակով:

ԳԼՈՒԽ 8. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ, ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

77. «Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցում» 5.1 կետը նշվում է, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցվել է:

78. «Կասեցման ամսաթիվը» 5.1.1 ենթակետում լրացվում են գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման օրը, ամիսը, տարին:

79. «Կասեցման ժամկետը» 5.1.2 ենթակետում լրացվում է կասեցման ժամկետը:

80. «Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը» 5.1.3 ենթակետում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը:

81. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում» 5.2 կետը նշվում է, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է:

82. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառը» 5.2.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժելու համար:

83. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում» 5.3 կետը նշվում է, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցվել է:

84. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառը» 5.3.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցնելու համար:

85. «Գույքի սառեցում» 5.4 կետը նշվում է, երբ հաճախորդի գույքը սառեցվել է:

86. «Սառեցման ամսաթիվը» 5.4.1 ենթակետում լրացվում են գույքի սառեցման օրը, ամիսը, տարին:

87. «Սառեցման ժամկետը» 5.4.2 ենթակետում լրացվում է սառեցման ժամկետը:

88. «Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը» 5.4.3 ենթակետում լրացվում է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերի և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կատարման նպատակով Լիազոր մարմնի կողմից հրապարակված ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը:

ԳԼՈՒԽ 9. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

89. «Անուն» 6.1 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի անունը:

90. «Ազգանուն» 6.2 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի ազգանունը:

91. «Լրացման ամսաթիվը» 6.3 կետում լրացվում են հաշվետվության ձևը լրացնելու օրը, ամիսը, տարին:

Արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքների վերաբերյալ թիվ 104 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին[*]

Նպատակ ունենալով նախատեսել հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ հաշվետվությունների նոր ձևեր, փոփոխության ենթարկել դրանց տրամադրման կարգը և սահմանել ժամկետներին վերաբերող առավել մանրամասն կանոններ,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **որոշում է**.

1. Հաստատել «Արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքների վերաբերյալ թիվ 104 հաշվետվության ձևը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2. Հաստատել «Արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքների վերաբերյալ թիվ 104 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N 265-Ն

Հավելված 1

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 265-Ն որոշմամբ

ՁԵՎ
ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 104 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

1.1. Հաշվառման համարը	1.2. Հաշվետվության ուղարկման ամսաթիվը	1.3. Հաշվետվության հերթական համարը	1.4. Ուղղման (լրացման) հերթական համարը

1.4.1. Ուղղման (լրացման) պատճառը

2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

☐ 2.1. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն

☐ 2.2. Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

3. ԳՈՐԾԱՐՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Գործարքի կատարման ամսաթիվը ☐☐ - ☐☐ - ☐☐☐☐

3.2. Գործարքի տեսակ

☐ 3.2.1. Արտարժույթի առք ☐ 3.2.2. Արտարժույթի վաճառք

3.3. Գործարքի գումար

3.3.1. Առքի արժույթ

3.3.2. Առքի գումար

3.3.3. Վաճառքի արժույթ

3.3.4. Վաճառքի գումար

3.3.5. Գումարը համարժեք ՀՀ դրամին

3.4. Կասկածելի գործարքի չափանիշը կամ տիպաբանությունը

☐ 3.4.1. Լիազոր մարմնի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.4.2. Հաշվետվություն տրամադրող անձի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.4.3. Այլ

3.5. Կասկածների նկարագրությունը

3.6. Կապված հաշվետվության անվանումը

3.7. Գործարքին վերաբերող այլ տեղեկատվություն

4. ԳՈՐԾԱՐՔԻ ԿՈՂՄ

4.1. ՀԱԾԱԽՈՐԴ

4.1.1. Անուն

4.1.2. Ազգանուն

4.1.3. Հայրանուն

4.1.4. Ծննդյան ամսաթիվը ☐☐ - ☐☐ - ☐☐☐☐

4.1.5. Բնակության վայր

4.1.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.1.5.2. Քաղաք կամ գյուղ

4.1.5.3. Մարզ

4.1.5.4. Երկիր

4.1.6. Հաշվառման վայր

4.1.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.1.6.2. Քաղաք կամ գյուղ

4.1.6.3. Մարզ

4.1.6.4. Երկիր

4.1.7. Քաղաքացիություն

4.1.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակը

4.1.8.1. Փաստաթղթի սերիան և համարը

4.1.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը

4.1.8.3. Ում կողմից է տրամադրվել

4.1.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը

4.2. ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ

4.2.1. Լիազորող անձ

(հաճախորդի անուն, ազգանուն)

4.2.2. Անուն

4.2.3. Ազգանուն

4.2.4. Հայրանուն

4.2.5. Ծննդյան ամսաթիվը

4.2.6. Բնակության վայր

4.2.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.2.6.2. Քաղաք կամ գյուղ

4.2.6.3. Մարզ

4.2.6.4. Երկիր

4.2.7. Հաշվառման վայր

4.2.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.2.7.2. Քաղաք կամ գյուղ

4.2.7.3. Մարզ

4.2.7.4. Երկիր

4.2.8. Քաղաքացիություն

4.2.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.2.9.1. Փաստաթղթի սերիա և համար

4.2.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը

4.2.9.3. Ում կողմից է տրամադրվել

4.2.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը

4.3. ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ

☐ Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը ☐ Չկա իրական շահառու ☐ Առկա է իրական շահառու

4.3.1. Հաճախորդի անուն, ազգանուն

4.3.2. Անուն

4.3.3. Ազգանուն

4.3.4. Հայրանուն

4.3.5. Ծննդյան ամսաթիվը

4.3.6. Բնակության վայր

4.3.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.3.6.2. Քաղաք կամ գյուղ

4.3.6.3. Մարզ

4.3.6.4. Երկիր

4.3.7. Հաշվառման վայր

4.3.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.3.7.2. Քաղաք կամ գյուղ

4.3.7.3. Մարզ

4.3.7.4. Երկիր

4.3.8. Քաղաքացիություն

4.3.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.3.9.1. Փաստաթղթի սերիա և համար

4.3.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.3.9.3. Ում կողմից է տրամադրվել

4.3.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

5. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՍԵՑՈՒՄ, ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

5.1. Գործարքի կասեցում

5.1.1. Կասեցման ամսաթիվը - -

5.1.2. Կասեցման ժամկետը

5.1.3. Գործարքի կասեցման պատճառը

5.2. Գործարքի իրականացման մերժում

5.2.1. Գործարքի իրականացման մերժման պատճառը

5.3. Գործարքի դադարեցում

5.3.1. Գործարքի դադարեցման պատճառը

5.4. Գույքի սառեցում

5.4.1. Սառեցման ամսաթիվը - -

5.4.2. Սառեցման ժամկետը

5.4.3. Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը

6. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

6.1. Անուն

6.2. Ազգանուն

6.3. Լրացման ամսաթիվը

Հավելված 2

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 265-Ն որոշմամբ

ԿԱՐԳ
ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 104 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքների վերաբերյալ թիվ 104 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց (այսուհետ՝ Հաշվետվություն տրամադրող անձ) կողմից «Փողերի

լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հաշվետվության ձևի լրացման կարգը և հաշվետվությունների ներկայացման դեպքերը:

2. Կարգում հասկացություններն օգտագործվում են Օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Հաշվետվության ձևը լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվառված Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից:

4. Հաշվետվությունը ներկայացվում է Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքերում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով կամ թղթային տարբերակով:

6. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը կարող է ձեռք բերվել Ֆինանսական դիտարկումների կենտրոնին դիմելու կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջից արտահանելու միջոցով:

7. Հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով ներկայացվում են միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու կարգի» 4-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնագիր կնքելուց հետո:

8. Էլեկտրոնային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը ներկայացված է համարվում, եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաշվետվություն տրամադրող անձը չի ստանում սխալի վերաբերյալ հաղորդագրություն:

9. Սխալի վերաբերյալ հաղորդագրություն ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով՝ առանց հաշվետվության անվանման փոփոխության: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

10. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում փակ կնքված (կնիքի առկայության դեպքում) ծրարով՝ «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին» նշագրմամբ՝ հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

1) ֆիզիկապես ներկայացնելու միջոցով,

2) փոստի միջոցով:

11. Կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացված է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացականի, իսկ Կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ «Հայփոստ» ՓԲԸ կողմից համապատասխան անդորրագրի տրամադրման պահից: Կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փոստային հասցեով (ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6):

12. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվության սխալի վերաբերյալ հետադարձ կապ ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

13. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում այդ գործարքը կատարելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվության տրամադրման օրերի հաշվարկը սկսվում է գործարքի կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից և ավարտվում այդ օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 18:00-ին:

14. Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում գործարքում կասկածելիության չափանիշ հայտնաբերելու դեպքում՝ նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ն:

15. Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվության տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել՝

1) աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

2) ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

16. Հաշվետվության ձևը լրացվում է հնարավորինս պարզ, հակիրճ, միանշանակ ընկալվող հայերեն լեզվով, «յունիկոդ» տառատեսակով և մեծատառերով: «Անուն» 4.1.1, 4.2.2, 4.3.2 «Ազգանուն» 4.1.2, 4.2.3, 4.3.3, «Հայրանուն» 4.1.3, 4.2.4, 4.3.4 ենթակետերը լրացվում են անգլերեն, երբ անհրաժեշտ տվյալները Հաշվետվություն տրամադրող անձին հասանելի են միայն անգլերեն լեզվով: Եթե նշված տվյալները հասանելի են այլ օտար լեզվով, ապա նշված ենթակետերը լրացվում հայերեն կամ անգլերեն լեզվով:

17. Հաշվետվության ձևի թղթային տարբերակը լրացվում է համակարգչի օգնությամբ կամ գրիչով՝ յուրաքանչյուր վանդակում նշելով մեկ նիշ: Հաշվետվության ձևի 1.4.1, 3.4.3, 3.5, 3.7, 5.1.3, 5.2.1 և 5.3.1 կետերի և ենթակետերի ներքո նախատեսված դաշտերի սահմաններն անբավարար լինելու դեպքում անհրաժեշտ է օգտագործել հավելյալ թղթեր: Այդ թղթերի ձախ կողմում նշվում է այն կետը կամ ենթակետը, որի ներքո նախատեսված դաշտը լրացվում է: Այդ թղթերը ստորագրվում և հաստատվում են կնիքով (կնիքի առկայության դեպքում) և կցվում հիմնական հաշվետվության ձևին: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրվում է նաև այդ ուղղումների կողքին:

18. Հաշվետվության ձևի առաջին էջի ներքևի մասում նշվում է ներկայացվող հաշվետվության էջերի քանակը (ներառյալ՝ առաջին էջը): Հաշվետվության ձևի յուրաքանչյուր էջի ներքևի աջ անկյունում անհրաժեշտ է ստորագրել և հաստատել կնիքով (կնիքի առկայության դեպքում): Հաշվետվության ձևի այն էջերը, որոնք չեն լրացվել, կարող են չներկայացվել:

19. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը լրացվում է՝ օգտագործելով ներկայացված էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները: Էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները փոփոխության ենթակա չեն: Ցանկացած ներկայացված հաշվետվություն, որը պարունակում է փոփոխություն, դիտվում է թերի կամ սխալ լրացված հաշվետվություն և հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

20. Լրացման համար պարտադիր են այն կետերը և ենթակետերը, որոնց վերաբերյալ Հաշվետվություն տրամադրող անձն ունի կամ պարտավոր է ունենալ տեղեկատվություն:

21. Յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ ներկայացվում է առանձին հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ

22. «Հաշվառման համարը» 1.1 կետում լրացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվառման համարը (ութ նիշ):

23. «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2 կետում լրացվում է հաշվետվության ուղարկման օրը, ամիսը, տարին (վեց նիշ):

24. «Հաշվետվության հերթական համարը» 1.3 կետում լրացվում է տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (երեք նիշ):

25. «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետում լրացվում է տվյալ հաշվետվության ուղղման կամ լրացման նպատակով ներկայացվող հաշվետվության հերթական համարը (մեկից երեք նիշ): Այս կետը լրացվում է, եթե հաշվետվությունն ուղարկվում է նախկինում ուղարկված հաշվետվությունում առկա սխալի կամ թերության ուղղման նպատակով, ինչպես նաև, եթե սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:

26. Կարգի 8-րդ և 11-րդ կետերով սահմանված կարգով ներկայացված համարվող հաշվետվության մեջ ուղղում կամ լրացում կատարելու համար հիմք հանդիսացած պատճառները և հանգամանքները լրացվում են «Ուղղման (լրացման) պատճառը» 1.4.1 ենթակետում: Այս ենթակետը ենթակա է պարտադիր լրացման, եթե ուղղում կամ լրացում կատարվել է նախորդ հաշվետվությունը ներկայացնելու պահից երեք աշխատանքային օր հետո:

27. Ուղղում կամ լրացում կատարելու դեպքում ներկայացվում է նոր հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

28. «Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն» 2.1 կետը նշվում է, եթե կանխիկ գործարքի գումարը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը:

29 «Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն» 2.2 կետը նշվում է, եթե ներկայացվում է կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

30. «Գործարքի կատարման ամսաթիվը» 3.1 կետում լրացվում են տեղեկացման ենթակա գործարքի կատարման օրը, ամիսը, տարին: Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելիս, եթե գործարքը դեռևս չի կատարվել, լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ ներկայացվել է գործարք կատարելու առաջարկը, իսկ այն դեպքում, երբ գործարքի իրականացումը մերժվել է, նշվում են գործարքի իրականացման մերժման օրը, ամիսը, տարին:

31. «Գործարքի տեսակ» 3.2 կետում նշվում է այդ կետի ներքո նախատեսված ենթակետերից որևէ մեկը:

32. «Առքի արժույթ» 3.3.1 դաշտում լրացվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից գնված արժույթը:

33. «Առքի գումար» 3.3.2 դաշտում լրացվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից գնված արժույթի գումարը:

34. «Վաճառքի արժույթ» 3.3.3 դաշտում լրացվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից վաճառված արժույթը:

35. «Վաճառքի գումար» 3.3.4 դաշտում լրացվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից վաճառված արժույթի գումարը:

36. «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.3.5 դաշտում լրացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

37. Այն դեպքում, երբ կատարվել է մեկ արտարժույթի փոխարկում մեկ այլ արտարժույթի, «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.3.5 դաշտում լրացվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից գնված արտարժույթին համարժեք գումարի դրամական արտահայտությունը: Այն դեպքում, երբ կատարվել է արտարժույթի և դրամի փոխարկում, «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.3.5 դաշտում լրացվում է արտարժույթին համարժեք գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

38. «Կասկածելի գործարքի չափանիշը կամ տիպաբանությունը» 3.4 կետում նշվում է 3.4.1 - 3.4.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը: Եթե գործարքը կասկածելի որակելու չափանիշը կամ տիպաբանությունը սահմանված չէ 3.4.1 և 3.4.2 ենթակետերով նախատեսված իրավական ակտերում, ապա նշվում է «Այլ» 3.4.3 ենթակետը: 3.4.1 - 3.4.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը նշելու դեպքում այդ ենթակետերի ներքո նախատեսված դաշտում լրացվում է Լիազոր մարմնի իրավական ակտով, Հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտով սահմանված կամ կասկածելի գործարքի այլ չափանիշ կամ տիպաբանություն:

39. «Կասկածների նկարագրությունը» 3.5 կետում հնարավորինս մանրամասն նկարագրվում են գործարքի նախապատմությունը, այն բոլոր հանգամանքները, որոնք վկայել են գործարքի կասկածելիության մասին: Այս կետում կարող են նկարագրվել նաև Հաշվետվություն տրամադրող անձի՝ հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները:

40. «Կապված հաշվետվության անվանումը» 3.6 կետը լրացվում է, եթե ներկայացվող հաշվետվությամբ կասկածելի գործարքը, ըստ Հաշվետվություն տրամադրող անձի, պատճառահետևանքային կամ այլ առումով կապված է Հաշվետվություն տրամադրող անձի կողմից նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքի հետ: «Կապված հաշվետվության անվանումը» 3.6 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության ձևի «Հաշվառման համարը» 1.1, «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2, «Հաշվետվության հերթական համարը» 1.3, «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետերում (առկայության դեպքում) լրացված տեղեկատվությունը: Թղթային տարբերակով հաշվետվություն ներկայացնելիս, եթե առկա է մեկից ավելի կապված հաշվետվություն, «Կապված հաշվետվության անվանումը» 3.6 կետը պատճենահանվում և լրացվում է համապատասխան քանակով:

41. «Գործարքին վերաբերող այլ տեղեկատվություն» 3.7 կետում նշվում են գործարքին առնչվող՝ Հաշվետվություն տրամադրող անձի կողմից կարևորվող այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 7. ԳՈՐԾԱՐՔԻ ԿՈՂՄ

42. «Հաճախորդ» 4.1 կետում նշվում են ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդի տվյալները:

43. «Անուն» 4.1.1 ենթակետում լրացվում է հաճախորդի անունը:

44. «Ազգանուն» 4.1.2 ենթակետում լրացվում է հաճախորդի ազգանունը: Այն դեպքում, երբ հստակ չէ, թե որն է հաճախորդի անունը և ազգանունը, 4.1.1 և 4.1.2 ենթակետերը լրացվում են Հաշվետվություն տրամադրող անձի հայեցողությամբ:

45. «Հայրանուն» 4.1.3 ենթակետում լրացվում է հաճախորդի հայրանունը:

46. «Ծննդյան ամսաթիվ» 4.1.4 ենթակետում լրացվում են հաճախորդի ծննդյան օրը, ամիսը, տարին:

47. «Բնակության վայր» 4.1.5 ենթակետի ներքո նախատեսված 4.1.5.1 - 4.1.5.4 դաշտերում լրացվում է հաճախորդի այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ հաճախորդը մշտապես կամ առավելապես բնակվում է: 4.1.5.1 - 4.1.5.4 դաշտերը չեն լրացվում, եթե հաճախորդի բնակության վայրը և հաշվառման վայրը նույնն է:

48. «Հաշվառման վայր» 4.1.6 ենթակետի ներքո նախատեսված 4.1.6.1 - 4.1.6.4 դաշտերում լրացվում է հաճախորդի այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ հաճախորդը հաշվառված է:

49. «Քաղաքացիությունը» 4.1.7 ենթակետում լրացվում է հաճախորդի քաղաքացիությունը:

50. «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշվում է անձնագիրը, նույնականացման քարտը կամ նորմատիվ իրավական ակտով սահմանված՝ ֆիզիկական անձի անձը (ինքնությունն) հաստատող այլ փաստաթուղթ:

51. «Փաստաթղթի սերիան և համարը» 4.1.8.1, «Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը» 4.1.8.2 դաշտերում համապատասխանաբար լրացվում են «Փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթղթի սերիան, համարը, ինչպես նաև տրամադրման օրը, ամիսը, տարին:

52. «Ում կողմից է տրամադրվել» 4.1.8.3 դաշտում լրացվում է այն պետական մարմնի անվանումը կամ ծածկագիրը, որի կողմից տրամադրվել է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթուղթը:

53. «Փաստաթղթի վավերականության ժամկետը» 4.1.8.4 դաշտում լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ լրանում է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթղթի վավերականության ժամկետը:

54. «Լիազորված անձ» 4.2 կետի ներքո նախատեսված ենթակետերը և դաշտերը լրացվում են, եթե գործարքը կատարվում է լիազորված անձի միջոցով:

55. «Լիազորող անձ» 4.2.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը, ում լիազորված անձն է հանդիսանում տվյալ անձը:

56. Հաշվետվության ձևի 4.2.2 - 4.2.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են Կարգի 43-53-րդ կետերով սահմանված կարգով:

57. «Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը չի կարողանում ստանալ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք գործարքում առկա է իրական շահառու, թե՝ ոչ:

58. «Չկա իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը պարզել է, որ գործարքում առկա չէ իրական շահառու (օրինակ՝ այդ մասին գրավոր հայտարարություն է տվել հաճախորդը):

59. «Առկա է իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդից կամ այլ աղբյուրից տեղեկացել է, որ գործարքում առկա է իրական շահառու:

60. «Առկա է իրական շահառու» դաշտը նշելուց հետո «Հաճախորդի անուն, ազգանուն» 4.3.1 ենթակետում լրացվում են այն հաճախորդի անունը, ազգանունը, ում իրական շահառուն է հանդիսանում տվյալ անձը:

61. Հաշվետվության ձևի 4.3.2 - 4.3.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են միայն «Առկա է իրական շահառու» դաշտը նշելու դեպքում՝ Կարգի 43 - 53-րդ կետերով սահմանված կարգով:

62. Հաշվետվության ձևի 4-րդ բաժինը, կախված անձանց թվից, լրացվում է համապատասխան քանակով:

ԳԼՈՒԽ 8. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՏԱՐՈՒՄ, ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

63. «Գործարքի կատարում» 5.1 կետը նշվում է, երբ գործարքը կատարվել է:

64. «Կատարման ամսաթիվը» 5.1.1 ենթակետում լրացվում են գործարքի կատարման օրը, ամիսը, տարին:

65. «Կատարման ժամկետը» 5.1.2 ենթակետում լրացվում է կատարման ժամկետը:

66. «Գործարքի կատարման պատճառը» 5.1.3 ենթակետում լրացվում է գործարքի կատարման պատճառը:

67. «Գործարքի իրականացման մերժում» 5.2 կետը նշվում է, երբ գործարքի իրականացումը մերժվել է:

68. «Գործարքի իրականացման մերժման պատճառը» 5.2.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքի իրականացումը մերժելու համար:

69. «Գործարքի դադարեցում» 5.3 կետը նշվում է, երբ գործարքը դադարեցվել է:

70. «Գործարքի դադարեցման պատճառը» 5.3.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքը դադարեցնելու համար:

71. «Գույքի սառեցում» 5.4 կետը նշվում է, երբ հաճախորդի գույքը սառեցվել է:

72. «Սառեցման ամսաթիվ» 5.4.1 ենթակետում լրացվում են գույքի սառեցման օրը, ամիսը, տարին:

73. «Սառեցման ժամկետը» 5.4.2 ենթակետում լրացվում է սառեցման ժամկետը:

74. «Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը» 5.4.3 ենթակետում լրացվում է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերի և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կատարման նպատակով Լիազոր մարմնի կողմից հրապարակված ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը:

ԳԼՈՒԽ 9. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

75. «Անուն» 6.1 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի անունը:

76. «Ազգանուն» 6.2 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի ազգանունը:

77. «Լրացման ամսաթիվը» 6.3 կետում լրացվում են հաշվետվության ձևը լրացնելու օրը, ամիսը, տարին:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 105 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին[*]

Նպատակ ունենալով նախատեսել հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների և կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ հաշվետվությունների նոր ձևեր, փոփոխության ենթարկել դրանց տրամադրման կարգը և սահմանել ժամկետներին վերաբերող առավել մանրամասն կանոններ,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 105 հաշվետվության ձևը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2. Հաստատել «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 105 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N 266-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

Հավելված 1

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 266-Ն որոշմամբ

ՁԵՎ
ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 105 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

1.1. Հաշվառման համարը	-	1.2. Հաշվետվության ուղարկման ամսաթիվը	-	1.3. Հաշվետվության հերթական համարը	-	1.4. Ուղղման (լրացման) հերթական համարը

1.4.1. Ուղղման (լրացման) պատճառը

2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

☐ 2.1. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն

☐ 2.2. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն

3. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը ☐☐ - ☐☐ - ☐☐☐☐

☐ 3.2. Կանխիկի հետ կապված գործարք

☐ 3.3. Անկանխիկ եղանակով իրականացված գործարք

3.2.1. Արժույթը

3.3.1. Արժույթը

3.2.2. Գումարը տվյալ արժույթով

3.3.2. Գումարը տվյալ արժույթով

3.2.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

3.3.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

3.4. Վճարահաշվարկային ծառայություններ

☐ 3.4.1. Վճարումների ընդունում

☐ 3.4.2. Վճարումների կատարում

☐ 3.4.3. Այլ

3.5. Նպատակը

3.6. Հաշվառման հաշվի համարը

3.7. Դրամական փոխանցման համակարգը

3.8. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը

☐ 3.8.1. Լիազոր մարմնի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.8.2. Հաշվետվություն տրամադրող անձի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.8.3. Այլ

3.9. Կասկածների նկարագրությունը

3.10. Կապված հաշվետվության անվանումը

3.11. Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն

4. ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

4.1. Հաճախորդ

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ

4.1.1. Անուն (անվանում)

4.1.2. Ազգանուն

4.1.3. Հայրանուն

4.3.5. Ծննդյան ամսաթիվը - -

4.1.5. Բնակության վայր (գտնվելու վայր)

4.1.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.1.5.2. Քաղաք կամ գյուղ

4.1.5.3. Մարզ

4.1.5.4. Երկիր

4.1.6. Հաշվառման վայր

4.1.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.1.6.2. Քաղաք կամ գյուղ

4.1.6.3. Մարզ

4.1.6.4. Երկիր

4.1.7. Քաղաքացիություն

4.1.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.1.8.1. Փաստաթղթի սերիան և համարը

4.1.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.1.8.3. Ում կողմից է տրամադրվել

4.1.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4.1.9. Կազմակերպական իրավական ձև

4.1.10. Անհատականացման (հաշվառման) համարը

4.1.11. ՀՎՀՀ

4.1.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

4.1.13. Եզակի հղման համար

4.2. Գործարքի մյուս կողմ

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ

4.2.1. Անուն (անվանում)

4.2.2. Ազգանուն

4.2.3. Հայրանուն

4.2.4. Ծննդյան ամսաթիվը - -

4.2.5. Բնակության վայր (գտնվելու վայր)
4.2.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.2.5.2. Քաղաք կամ գյուղ

4.2.5.3. Մարզ

4.2.5.4. Երկիր

4.2.6. Հաշվառման վայր
4.2.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.2.6.2. Քաղաք կամ գյուղ

4.2.6.3. Մարզ

4.2.6.4. Երկիր

4.2.7. Քաղաքացիություն

4.2.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.2.8.1. Փաստաթղթի սերիա և համար

4.2.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.2.8.3. Ում կողմից է տրամադրվել

4.2.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4.2.9. Կազմակերպական իրավական ձև

4.2.10. Անհատականացման (հաշվառման) համարը

4.1.11. ՀՎՀՀ

4.2.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

4.3. ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ
4.3.1. Լիազորող անձ
(հաճախորդի անուն, ազգանուն (անվանում))

4.3.2. Անուն

4.3.3. Ազգանուն

4.3.4. Հայրանուն

4.3.5. Ծննդյան ամսաթիվը - -

4.3.6. Բնակության վայր
4.3.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.3.6.2. Քաղաք կամ գյուղ

4.3.6.3. Մարզ

4.2.6.4. Երկիր

4.3.7. Հաշվառման վայր
4.3.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.3.7.2. Քաղաք կամ գյուղ

4.3.7.3. Մարզ

4.3.7.4. Երկիր

4.3.8. Քաղաքացիություն

4.3.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.3.9.1. Փաստաթղթի սերիա և համար

4.3.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.3.9.3. Ում կողմից է տրամադրվել

4.3.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4.4. ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ

☐ Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը ☐ Չկա իրական շահառու ☐ Առկա է իրական շահառու

4.4.1. Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)

4.4.2. Անուն

4.4.3. Ազգանուն

4.4.4. Հայրանուն

4.4.5. Ծննդյան ամսաթիվը - -

4.4.6. Բնակության վայր

4.4.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.4.6.2. Քաղաք կամ գյուղ

4.4.6.3. Մարզ

4.4.6.4. Երկիր

4.4.7. Հաշվառման վայր

4.4.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.4.7.2. Քաղաք կամ գյուղ

4.4.7.3. Մարզ

4.4.7.4. Երկիր

4.4.8. Քաղաքացիություն

4.4.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.4.9.1. Փաստաթղթի սերիա և համար

4.4.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.4.9.3. Ում կողմից է տրամադրվել

4.4.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

5. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ, ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

☐ 5.1. Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցում

5.1.1. Կասեցման ամսաթիվը - -

5.1.2. Կասեցման ժամկետը

5.1.3. Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը

☐ 5.2. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում

5.2.1. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառը

☐ 5.3. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում

5.3.1. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառը

☐ 5.4. Գույքի սառեցում

5.4.1. Սառեցման ամսաթիվը ☐ - ☐ - ☐

5.4.2. Սառեցման ժամկետը ☐

5.4.3. Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը ☐

6. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

6.1. Անուն ☐ 6.2. Ազգանուն ☐

6.3. Լրացման ամսաթիվը ☐ - ☐ - ☐

Հավելված 2
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 266-Ն որոշմամբ

ԿԱՐԳ
ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 105 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 105 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող անձանց (այսուհետ՝ Հաշվետվություն տրամադրող անձ) կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հաշվետվության ձևի լրացման կարգը և հաշվետվությունների ներկայացման դեպքերը:

2. Կարգում հասկացություններն օգտագործվում են Օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Հաշվետվության ձևը լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվառված Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից:

4. Հաշվետվությունը ներկայացվում է Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքերում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի կամ «Սի-Բի-էյ-Նեթ» համակարգի միջոցով կամ թղթային տարբերակով:

6. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը կարող է ձեռք բերվել Ֆինանսական դիտարկումների կենտրոնին դիմելու կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջից արտահանելու միջոցով:

7. Հաշվետվությունը «Սի-Բի-էյ-Նեթ» համակարգի միջոցով ներկայացնելիս հաշվետվությանն ուղեկցող նամակի «Վերնագիրը» պարունակում է «Հաշվետվություն ֆինանսական դիտարկումների կենտրոնին» արտահայտությունը:

8. Հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով ներկայացվում են միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու կարգի» 4-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնագիր կնքելուց հետո:

9. Էլեկտրոնային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը ներկայացված է համարվում, եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաշվետվություն տրամադրող անձը չի ստանում սխալի վերաբերյալ հաղորդագրություն:

10. Սխալի վերաբերյալ հաղորդագրություն ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով՝ առանց հաշվետվության անվանման փոփոխության: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

11. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում փակ կնքված (կնիքի առկայության դեպքում) ծրարով՝ «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին» նշագրմամբ, հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

1) ֆիզիկապես ներկայացնելու միջոցով,

2) փոստի միջոցով:

12. Կարգի 11-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացված է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացականի, իսկ Կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից համապատասխան անդորրագրի տրամադրման պահից: Կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փոստային հասցեով (ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6):

13. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվության սխալի վերաբերյալ հետադարձ կապ ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

14. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում այդ գործարքը կատարելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվության տրամադրման օրերի հաշվարկը սկսվում է գործարքի կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից և ավարտվում այդ օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 18:00-ին:

15. Գործարքի կատարման պահ է համարվում հաճախորդի կողմից տրված հանձնարարականի հիման վրա հաճախորդի հաշվառման հաշվի դեբետագրման պահը, կամ հաճախորդի կողմից փաստացի գումարի մուծման և փոխանցման հանձնարարականի տրման պահը՝ անկախ այն հանգամանքից, թե այդ պահին փոխանցումը կատարվել է, թե ոչ:

16. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում գործարքում կամ գործարար հարաբերությունում կասկածելիության չափանիշ հայտնաբերելու դեպքում՝ նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ն:

17. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել՝

1) աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

2) ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

18. Հաշվետվության ձևը լրացվում է հնարավորինս պարզ, հակիրճ, միանշանակ ընկալվող հայերեն լեզվով, «յունիկոդ» տառատեսակով և մեծատառերով: «Անուն (անվանում)» 4.1.1 և 4.2.1, «Անուն» 4.3.2 և 4.4.2, «Ազգանուն» 4.1.2, 4.2.2, 4.3.3 և 4.4.3, «Հայրանուն» 4.1.3, 4.2.3, 4.3.4 և 4.4.4 ենթակետերը լրացվում են անգլերեն, երբ անհրաժեշտ տվյալները Հաշվետվություն տրամադրող անձին հասանելի են միայն անգլերեն լեզվով: Եթե նշված տվյալները հասանելի են այլ օտար լեզվով, ապա նշված ենթակետերը լրացվում են հայերեն կամ անգլերեն լեզվով:

19. Հաշվետվության ձևի թղթային տարբերակը լրացվում է համակարգչի օգնությամբ կամ գրիչով՝ յուրաքանչյուր վանդակում նշելով մեկ նիշ: Հաշվետվության ձևի 1.4.1, 3.4.3, 3.5, 3.8.3, 3.9, 3.11, 5.1.3, 5.2.1 և 5.3.1 կետերի և ենթակետերի ներքո նախատեսված դաշտերի սահմաններն անբավարար լինելու դեպքում անհրաժեշտ է օգտագործել հավելյալ թղթեր: Այդ թղթերի ձախ կողմում նշվում է այն կետը կամ են-

թակետը, որի ներքո նախատեսված դաշտը լրացվում է: Այդ թղթերը ստորագրվում և հաստատվում են կնիքով (կնիքի առկայության դեպքում) և կցվում հիմնական հաշվետվության ձևին: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրվում է նաև այդ ուղղումների կողքին:

20. Հաշվետվության ձևի առաջին էջի ներքևի մասում նշվում է ներկայացվող հաշվետվության էջերի քանակը (ներառյալ՝ առաջին էջը): Հաշվետվության ձևի յուրաքանչյուր էջի ներքևի աջ անկյունում անհրաժեշտ է ստորագրել և հաստատել կնիքով (կնիքի առկայության դեպքում): Հաշվետվության ձևի այն էջերը, որոնք չեն լրացվել, կարող են չներկայացվել:

21. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը լրացվում է՝ օգտագործելով ներկայացված էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները: Էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները փոփոխության ենթակա չեն: Ցանկացած ներկայացված հաշվետվություն, որը պարունակում է փոփոխություն, դիտվում է թերի կամ սխալ լրացված հաշվետվություն և հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

22. Լրացման համար պարտադիր են այն կետերը և ենթակետերը, որոնց վերաբերյալ Հաշվետվություն տրամադրող անձն ունի կամ պարտավոր է ունենալ տեղեկատվություն:

23. Յուրաքանչյուր գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ ներկայացվում է առանձին հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

24. «Հաշվառման համարը» 1.1 կետում լրացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվառման համարը (ութ նիշ):

25. «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2 կետում լրացվում են հաշվետվության ուղարկման օրը, ամիսը, տարին (վեց նիշ):

26. «Հաշվետվության հերթական համարը» 1.3 կետում լրացվում է տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (երեք նիշ):

27. «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետում լրացվում է տվյալ հաշվետվության ուղղման կամ լրացման նպատակով ներկայացվող հաշվետվության հերթական համարը (մեկից երեք նիշ): Այս կետը լրացվում է, եթե հաշվետվությունն ուղարկվում է նախկինում ուղարկված հաշվետվությունում առկա սխալի կամ թերության ուղղման նպատակով, ինչպես նաև եթե սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:

28. Կարգի 9-րդ և 12-րդ կետերով սահմանված կարգով ներկայացված համարվող հաշվետվության մեջ ուղղում կամ լրացում կատարելու համար հիմք հանդիսացած պատճառները և հանգամանքները լրացվում են «Ուղղման (լրացման) պատճառը» 1.4.1 ենթակետում: Այդ ենթակետը ենթակա է պարտադիր լրացման, եթե ուղղում կամ լրացում կատարվել է նախորդ հաշվետվությունը ներկայացնելու պահից ոչ շուտ, քան երեք աշխատանքային օր հետո:

29. Ուղղում կամ լրացում կատարելու դեպքում ներկայացվում է նոր հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

30. «Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն» 2.1 կետը նշվում է, եթե՝

1) անկանխիկ եղանակով իրականացվող գործարքի գումարը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը,
2) կանխիկի հետ կապված գործարքի գումարը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով, գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը:

31. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն» 2.2 կետը նշվում է, եթե ներկայացվում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

32. «Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը» 3.1 կետում լրացվում են տեղեկացման ենթակա գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման օրը, ամիսը, տարին: Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելիս այն դեպքում, երբ գործարք չի կատարվել կամ գործարար հարաբերություն չի հաստատվել, լրացվում են գործարք կատարելու կամ գործարար հարաբերություն հաստատելու առաջարկի ներկայացման օրը, ամիսը, տարին: Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման դեպքում նշվում են գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման օրը, ամիսը, տարին:

33. «Կանխիկի հետ կապված գործարք» 3.2 կետը նշվում է, եթե կատարվել է կանխիկի հետ կապված գործարք: Այն դեպքում, երբ գործարքը կատարվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակներով, սակայն միայն կանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցել 5 միլիոն ՀՀ դրամը, նշվում է «Կանխիկի հետ կապված գործարք» 3.2 կետը, իսկ «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.11 կետում նշվում է գործարքի գումարի նաև անկանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

34. «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.3 կետը նշվում է, եթե գործարքը կատարվում է անկանխիկ եղանակով: Այն դեպքում, երբ գործարքը կատարվել է միաժամանակ անկանխիկ և կանխիկ եղանակով, սակայն միայն անկանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցում 20 միլիոն ՀՀ դրամը, նշվում է «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.3 կետը, իսկ «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.11 կետում նշվում է գործարքի գումարի նաև կանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

35. Այն դեպքում, երբ գործարքը կատարվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակներով, և կանխիկ եղանակով վճարված գումարը գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը, իսկ անկանխիկ եղանակով վճարված գումարը գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը, միաժամանակ նշվում են «Կանխիկի հետ կապված գործարք» 3.2 և «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.3 ենթակետերը, ինչպես նաև լրացվում են դրանց ներքո նախատեսված դաշտերը:

36. «Արժույթը» 3.2.1 և 3.3.1 ենթակետերում լրացվում է այն արժույթը, որով կատարվել է գործարքը:

37. «Գումարը տվյալ արժույթով» 3.2.2 և 3.3.2 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի չափը այն արժույթով, որով կատարվել է գործարքը: Եթե «Արժույթը» 3.2.1 և 3.3.1 ենթակետերում նշվում է ՀՀ դրամ, ապա նույն գումարը լրացվում է և՛ «Գումարը տվյալ արժույթով» 3.2.2 և 3.3.2, և՛ «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.3 և 3.3.3 ենթակետերում:

38. «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.3 և 3.3.3 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

39. «Վճարահաշվարկային ծառայություններ» 3.4 կետում նշվում է այդ կետի ներքո նախատեսված ենթակետերից որևէ մեկը:

40. «Նպատակը» 3.5 կետում լրացվում է գործարքի նպատակը:

41. «Հաշվառման հաշվի համարը» 3.6 կետում լրացվում է հաճախորդի հաշվառման հաշվի համարը:

42. «Դրամական փոխանցման համակարգը» 3.7 կետում նշվում է այն համակարգը, որի միջոցով փոխանցվել է գումարը:

43. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը» 3.8 կետում նշվում է 3.8.1–3.8.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը: Եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշը կամ տիպաբանությունը սահմանված չէ 3.8.1 և 3.8.2 ենթակետերով նախատեսված իրավական ակտերում, ապա նշվում է «Այլ» 3.8.3 ենթակետը: 3.8.1–3.8.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը նշելու դեպքում այդ ենթակետերի ներքո նախատեսված դաշտում լրացվում է Լիազոր մարմնի իրավական ակտով, Հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտով սահմանված կամ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության այլ չափանիշ կամ տիպաբանություն:

44. «Կասկածների նկարագրությունը» 3.9 կետում հնարավորինս մանրամասն նկարագրվում են գործարքի կամ գործարար հարաբերության նախապատմությունը, այն բոլոր հանգամանքները, որոնք վկայել են գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության մասին: Այս կետում կարող են նկարագրվել նաև Հաշվետվություն տրամադրող անձի՝ հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները:

45. «Կապված հաշվետվության անվանումը» 3.10 կետը լրացվում է, եթե ներկայացվող հաշվետվությամբ կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը, ըստ Հաշվետվություն տրամադրող անձի, պատճառահետևանքային կամ այլ առումով կապված է Հաշվետվություն տրամադրող անձի կողմից նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքի հետ: «Կապված հաշվետվության անվանումը» 3.10 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության ձևի «Հաշվառման համարը» 1.1, «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2, «Հաշվետվության հերթական համարը» 1.3, «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետերում (առկայության դեպքում) լրացված տեղեկատվությունը: Թղթային տարբերակով հաշվետվություն ներկայացնելիս, եթե առկա է մեկից ավելի կապված հաշվետվություն, «Կապված հաշվետվության անվանումը» 3.10 կետը պատճենահանվում և լրացվում է համապատասխան քանակով:

46. «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.11 կետում նշվում են Կարգի 33-րդ և 34-րդ կետերով նախատեսված տեղեկությունները, ինչպես նաև գործարքին կամ գործարար հարաբերությանն առնչվող՝ Հաշվետվություն տրամադրող անձի կողմից կարևորվող այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 7. ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

47. «Հաճախորդ» 4.1 կետում նշվում է հաճախորդի տեսակը՝ ֆիզիկական անձ, իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր:

48. «Անուն (անվանում)» 4.1.1 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ անունը կամ իրավաբանական անձի անվանումը:

49. «Ազգանուն» 4.1.2 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը: Այն դեպքում, երբ հստակ չէ, թե որն է հաճախորդի անունը և որը ազգանունը, 4.1.1 և 4.1.2 ենթակետերը լրացվում են Հաշվետվություն տրամադրող անձի հայեցողությամբ:

50. «Հայրանուն» 4.1.3 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հայրանունը:

51. «Ծննդյան ամսաթիվը» 4.1.4 ենթակետում լրացվում են ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան օրը, ամիսը, տարին:

52. «Բնակության վայր (գտնվելու վայր)» 4.1.5 ենթակետի ներքո նախատեսված 4.1.5.1 - 4.1.5.4 դաշտերում ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում լրացվում է այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում է, իսկ իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը): 4.1.5.1 - 4.1.5.4 դաշտերը չեն լրացվում, եթե ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը և հաշվառման վայրը նույնն է:

53. «Հաշվառման վայր» 4.1.6 ենթակետի ներքո նախատեսված 4.1.6.1 - 4.1.6.4 դաշտերում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը հաշվառված է:

54. «Քաղաքացիությունը» 4.1.7 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ քաղաքացիությունը:

55. «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշվում է անձնագիրը, նույնականացման քարտը կամ նորմատիվ իրավական ակտով սահմանված՝ ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձը (ինքնություն) հաստատող այլ փաստաթուղթը:

56. «Փաստաթղթի սերիան և համարը» 4.1.8.1, «Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը» 4.1.8.2 դաշտերում համապատասխանաբար լրացվում են «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթղթի սերիան, համարը, ինչպես նաև տրամադրման օրը, ամիսը, տարին:

57. «Ում կողմից է տրամադրվել» 4.1.8.3 դաշտում լրացվում է այն պետական մարմնի անվանումը կամ ծածկագիրը, որի կողմից տրամադրվել է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթուղթը:

58. «Փաստաթղթի վավերականության ժամկետը» 4.1.8.4 դաշտում լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ լրանում է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթղթի վավերականության ժամկետը:

59. «Կազմակերպական-իրավական ձևը» 4.1.9 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը կամ դրա հապավումը (օրինակ՝ ՍՊԸ, ԲԲԸ և այլն): Օտարերկրյա իրավաբանական անձանց կազմակերպական-իրավական ձևի վերաբերյալ տվյալները լրացվում են լատիներեն:

60. «Անհատականացման (հաշվառման) համարը» 4.1.10 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցումը (հաշվառումը) իրականացնող մարմնի կողմից տրամադրված անհատականացման (հաշվառման) համարը:

61. «ՀՎՀՀ» 4.1.11 ենթակետում լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը:

62. «Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն» 4.1.12 ենթակետում լրացվում են գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը:

63. «Եզակի հղման համար» 4.1.13 կետում լրացվում է փոխանցումն ուղեկցող եզակի հղման համարը:

64. Հաշվետվության ձևի 4.2.1 - 4.2.12 ենթակետերը լրացվում են Կարգի 48-62-րդ կետերով սահմանված կարգով:

65. «Լիազորված անձ» 4.3 կետը լրացվում է, եթե գործարքը կատարվում կամ գործարար հարաբերությունը հաստատվում է լիազորված անձի միջոցով:

66. «Լիազորող անձ» 4.3.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը, ում լիազորված անձն է հանդիսանում տվյալ անձը:

67. Հաշվետվության ձևի 4.3.2 - 4.3.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են Կարգի 48-58-րդ կետերով սահմանված կարգով:

68. «Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը չի կարողանում ստանալ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու, թե՝ ոչ:

69. «Չկա իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը պարզել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա չէ իրական շահառու (օրինակ՝ այդ մասին գրավոր հայտարարություն է տվել հաճախորդը):

70. «Առկա է իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդից կամ այլ աղբյուրից տեղեկացել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու:

71. «Առկա է իրական շահառու» դաշտը նշելուց հետո «Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)» 4.4.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում իրական շահառուն է հանդիսանում տվյալ անձը:

72. Հաշվետվության ձևի 4.4.2 - 4.4.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են միայն «Առկա է իրական շահառու» դաշտը նշելու դեպքում՝ Կարգի 48-58-րդ կետերով սահմանված կարգով:

73. Հաշվետվության ձևի 4-րդ բաժինը, կախված անձանց թվից, լրացվում է համապատասխան քանակով:

ԳԼՈՒԽ 8. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ, ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

74. «Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցում» 5.1 կետը նշվում է, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցվել է:

75. «Կասեցման ամսաթիվը» 5.1.1 ենթակետում լրացվում են գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման օրը, ամիսը, տարին:

76. «Կասեցման ժամկետը» 5.1.2 ենթակետում լրացվում է կասեցման ժամկետը:

77. «Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը» 5.1.3 ենթակետում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը**:**

78. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում» 5.2 կետը նշվում է, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է:

79. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառը» 5.2.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժելու համար:

80. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում» 5.3 կետը նշվում է, երբ գործարքը դադարեցվել է:

81. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառը» 5.3.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցնելու համար:

82. «Գույքի սառեցում» 5.4 կետը նշվում է, երբ հաճախորդի գույքը սառեցվել է:

83. «Սառեցման ամսաթիվը» 5.4.1 ենթակետում լրացվում են գույքի սառեցման օրը, ամիսը, տարին:

84. «Սառեցման ժամկետը» 5.4.2 ենթակետում լրացվում է սառեցման ժամկետը:

85. «Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը» 5.4.3 ենթակետում լրացվում է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերի և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կատարման նպատակով Լիազոր մարմնի կողմից հրապարակված ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը:

ԳԼՈՒԽ 9. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

86. «Անուն» 6.1 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի անունը:

87. «Ազգանուն» 6.2 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի ազգանունը:

88. «Լրացման ամսաթիվը» 6.3 կետում լրացվում է հաշվետվության ձևը լրացնելու օրը, ամիսը, տարին:

*«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կորպորատիվ ներդրումային ֆոնդերի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված կառավարիչ չունեցող ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 106 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին**[*]*

Նպատակ ունենալով նախատեսել հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների և կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ հաշվետվությունների նոր ձևեր, փոփոխության ենթարկել դրանց տրամադրման կարգը և սահմանել ժամկետներին վերաբերող առավել մանրամասն կանոններ,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կորպորատիվ ներդրումային ֆոնդերի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված կառավարիչ չունեցող ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 106 հաշվետվության ձևը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2. Հաստատել ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կորպորատիվ ներդրումային ֆոնդերի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված կառավարիչ չունեցող ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 106 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N 267-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

Հավելված 1

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 267-Ն որոշմամբ

ՁԵՎ
«ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ, ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՉՈՒՆԵՑՈՂ ՈՉ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 106 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

1.1. Հաշվառման համարը	1.2. Հաշվետվության ուղարկման ամսաթիվը	1.3. Հաշվետվության հերթական համարը	1.4. Ուղղման (լրացման) հերթական համարը

1.4.1. Ուղղման (լրացման) պատճառը

2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

☐ 2.1. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն

☐ 2.2. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն

3. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը ☐☐ ☐☐ ☐☐☐☐

☐ 3.2. Կանխիկի հետ կապված գործարք

3.2.1. Արժույթը

3.2.2. Գումարը տվյալ արժույթով

3.2.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

☐ 3.3. Անկանխիկ եղանակով իրականացված գործարք

3.3.1. Արժույթը (առքի արժույթ)	3.3.2. Արժույթը (վաճառքի արժույթ)
3.3.1.1. Գումարը տվյալ արժույթով	3.3.2.1. Գումարը տվյալ արժույթով
3.3.1.2. Գումարը համարժեք ՀՀ դրամին	3.3.2.2. Գումարը համարժեք ՀՀ դրամին

3.4. Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը

☐ 3.4.1. ներդրումային ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) ձեռքբերում

☐ 3.4.2. արժեթղթերի ձեռքբերում

☐ 3.4.3. արժեթղթերի օտարում

☐ 3.4.4. արժեթղթերի փաթեթի կառավարում

☐ 3.4.5. արժեթղթերի պահառություն

☐ 3.4.6. փոխառության տրամադրում

☐ 3.4.7. փոխառության մարում

☐ 3.4.8. արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք

☐ 3.4.8.1. սփոթ	☐ 3.4.8.4. սվոպ
☐ 3.4.8.2. ֆյուչերս	☐ 3.4.8.5. օպցիոն

☐ 3.4.8.3. ֆորվարդ

☐ 3.4.9. Այլ

3.5. Պայմանագրի տեսակը

3.6. Արժեթղթի տեսակը

3.7. Արժեթղթի անվանական արժեքը

3.8. Արժեթղթի շուկայական արժեքը

3.9. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը

☐ 3.9.1. Լիազոր մարմնի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.9.2. Հաշվետվություն տրամադրող անձի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.9.3. Այլ

3.10. Կասկածների նկարագրությունը

3.11. Կապված հաշվետվության անվանումը

3.12. Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն

4. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐ

4.1. Անվանում

4.2. Գտնվելու վայր
4.2.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.2.2. Քաղաք կամ գյուղ

4.2.3. Մարզ

4.2.4. Երկիր

4.3. Կազմակերպական իրավական ձև

4.4. Անհատականացման (հաշվառման) համարը

4.5. ՀՎՀՀ

4.6. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

5. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

5.1. ՀԱՃԱԽՈՐԴ

☐ Ֆիզիկական անձ

☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ

☐ Պետական մարմին կամ համայնք

5.1.1. Անուն (անվանում)

5.1.2. Ազգանուն

5.1.3. Հայրանուն

5.1.4. Ծննդյան ամսաթիվը - -

5.1.5. Բնակության վայր (գտնվելու վայր)
5.1.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

5.1.5.2. Քաղաք կամ գյուղ

5.1.5.3. Մարզ

5.1.5.4. Երկիր

5.1.6. Հաշվառման վայր
5.1.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

5.1.6.2. Քաղաք կամ գյուղ

5.1.6.3. Մարզ

5.1.6.4. Երկիր

5.1.7. Քաղաքացիությունը

5.1.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակը

5.1.8.1. Փաստաթղթի սերիան և համարը

5.1.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

5.1.8.3. Ում կողմից է տրամադրվել

5.1.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

5.1.9. Կազմակերպական-իրավական ձև

5.1.10. Անհատականացման (հաշվառման) համարը

5.1.11. ՀՎՀՀ

5.1.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

5.1.13. Բանկային հաշվի համարը

5.2. ԳՈՐԾԱՐՔԻ ՄՅՈՒՍ ԿՈՂՄ

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ ☐ Պետական մարմին կամ համայնք

5.2.1. Անուն (անվանում)

5.2.2. Ազգանուն

5.2.3. Հայրանուն

5.2.4. Ծննդյան ամսաթիվը - -

5.2.5. Բնակության վայր (գտնվելու վայր)
5.2.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

5.2.5.2. Քաղաք կամ գյուղ

5.2.5.3. Մարզ

5.2.5.4. Երկիր

5.2.6. Հաշվառման վայր
5.2.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

5.2.6.2. Քաղաք կամ գյուղ

5.2.6.3. Մարզ

5.2.6.4. Երկիր

5.2.7. Քաղաքացիություն

5.2.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

5.2.8.1. Փաստաթղթի սերիա և համար

5.2.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

5.2.8.3. Ում կողմից է տրամադրվել

5.2.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

5.2.9. Կազմակերպական-իրավական ձև

5.2.10. Անհատականացման (հաշվառման) համարը

5.2.11. ՀՎՀՀ

5.2.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

5.3. ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ

5.3.1. Լիազորող անձ

(հաճախորդի անուն, ազգանուն (անվանում))

5.3.2. Անուն

5.3.3. Ազգանուն

5.3.4. Հայրանուն

5.3.5. Ծննդյան ամսաթիվը - -

5.3.6. Բնակության վայր

5.3.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

5.3.6.2. Քաղաք կամ գյուղ

5.3.6.3. Մարզ

5.3.6.4. Երկիր

5.3.7. Հաշվառման հասցե

5.3.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

5.3.7.2. Քաղաք կամ գյուղ

5.3.7.3. Մարզ

5.3.7.4. Երկիր

5.3.8. Քաղաքացիություն

5.3.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

5.3.9.1. Փաստաթղթի սերիա և համար

5.3.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

5.3.9.3. Ում կողմից է տրամադրվել

5.3.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

5.4. ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ

☐ Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը ☐ Չկա իրական շահառու ☐ Առկա է իրական շահառու

5.4.1. Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)

5.4.2. Անուն

5.4.3. Ազգանուն

5.4.4. Հայրանուն

5.4.5. Ծննդյան ամսաթիվը - -

5.4.6. Բնակության վայր
5.4.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

5.4.6.2. Քաղաք կամ գյուղ

5.4.6.3. Մարզ

5.4.6.4. Երկիր

5.4.7. Հաշվառման վայր
5.4.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

5.4.7.2. Քաղաք կամ գյուղ

5.4.7.3. Մարզ

5.4.7.4. Երկիր

5.4.8. Քաղաքացիություն

5.4.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

5.4.9.1. Փաստաթղթի սերիա և համար

5.4.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

5.4.9.3. Ում կողմից է տրամադրվել

5.4.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

6. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ, ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

☐ 6.1. Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցում

6.1.1. Կասեցման ամսաթիվը - -

6.1.2. Կասեցման ժամկետը

6.1.3. Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը

☐ 6.2. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում

6.2.1. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառը

☐ 6.3. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում

6.3.1. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառը

☐ 6.4. Գույքի սառեցում

6.4.1. Սառեցման ամսաթիվը - -

6.4.2. Սառեցման ժամկետը

6.4.3. Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը

7. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ (ՂԵԿԱՎԱՐ)

7.1. Անուն

7.2. Ազգանուն

7.3. Լրացման ամսաթիվը - -

Հավելված 2

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 267-Ն որոշմամբ

ՁԵՎ

«ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ, ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՉՈՒՆԵՑՈՂ ՈՉ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 106 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կորպորատիվ ներդրումային ֆոնդերի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված կառավարիչ չունեցող ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 106 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կորպորատիվ ներդրումային ֆոնդերի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված կառավարիչ չունեցող ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերի (այսուհետ՝ Հաշվետվություն տրամադրող անձ) կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հաշվետվության ձևի լրացման կարգը և հաշվետվությունների ներկայացման դեպքերը:

2. Կարգում հասկացություններն օգտագործվում են Օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Հաշվետվության ձևը լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվառված Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից:

4. Հաշվետվությունը ներկայացվում է Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքերում:

5. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն չի ներկայացվում, եթե կատարվել են հետևյալ գործարքները՝

1) ֆինանսական երկրորդային շուկայում երկու մասնագիտացված անձանց միջև կնքվող գործարքներ, որոնք կնքվում են իրենց հաշվին և իրենց անունից,
2) հաշվետվություն տրամադրող անձի կողմից սեփական կարիքների համար կատարվող գործարք՝ հաշվետվություն տրամադրող անձի ընթացիկ գործունեության ապահովման նպատակով՝ բացառությամբ իր հաճախորդներից ֆինանսական ակտիվների գնումների,
3) հաճախորդի հետ կնքված և նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքներում փոփոխությունները, որոնք չեն առաջացնում գործարքի գումարի կամ արժույթի փոփոխություն:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

6. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի կամ «Սի-Բի-էյ-Նեթ» համակարգի միջոցով կամ թղթային տարբերակով:

7. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը կարող է ձեռք բերվել Ֆինանսական դիտարկումների կենտրոնին դիմելու կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջից արտահանելու միջոցով:

8. Հաշվետվությունը «Սի-Բի-էյ-Նեթ» համակարգի միջոցով ներկայացնելիս հաշվետվությանն ուղեկցող նամակի «Վերնագիրը» պարունակում է «Հաշվետվություն ֆինանսական դիտարկումների կենտրոնին» արտահայտությունը:

9. Հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով ներկայացվում են միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի

2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու կարգի» 4-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնագիր կնքելուց հետո:

10. Էլեկտրոնային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը ներկայացված է համարվում, եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաշվետվություն տրամադրող անձը չի ստանում սխալի վերաբերյալ հաղորդագրություն:

11. Սխալի վերաբերյալ հաղորդագրություն ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով՝ առանց հաշվետվության անվանման փոփոխության: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

12. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում փակ կնքված (կնիքի առկայության դեպքում) ծրարով՝ «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին» նշագրմամբ, հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

1) ֆիզիկապես ներկայացնելու միջոցով,

2) փոստի միջոցով:

13. Կարգի 12-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացված է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացականի, իսկ Կարգի 12-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից համապատասխան անդորրագրի տրամադրման պահից: Կարգի 12-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փոստային հասցեով (ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6):

14. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվության սխալի վերաբերյալ հետադարձ կապ ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

15. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում այդ գործարքը կատարելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվության տրամադրման օրերի հաշվարկը սկսվում է գործարքի կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից և ավարտվում այդ օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 18:00-ին:

16. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում գործարքում կամ գործարար հարաբերությունում կասկածելիության չափանիշ հայտնաբերելու դեպքում՝ նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ն:

17. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել՝

1) աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

2) ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

18. Հաշվետվության ձևը լրացվում է հնարավորինս պարզ, հակիրճ, միանշանակ ընկալվող հայերեն լեզվով, «յունիկոդ» տառատեսակով և մեծատառերով: «Անվանում» 4.1, «Անուն (անվանում)» 5.1.1, 5.2.1, «Անուն» 5.3.2, 5.4.2, «Ազգանուն» 5.1.2, 5.2.2, 5.3.3 և 5.4.3, «Հայրանուն» 5.1.3, 5.2.3, 5.3.4 և 5.4.4 ենթակետերը լրացվում են անգլերեն, երբ անհրաժեշտ տվյալները Հաշվետվություն տրամադրող անձին հասանելի են միայն անգլերեն լեզվով: Եթե նշված տվյալները հասանելի են այլ օտար լեզվով, ապա նշված ենթակետերը լրացվում են հայերեն կամ անգլերեն լեզվով:

19. Հաշվետվության ձևի թղթային տարբերակը լրացվում է համակարգչի օգնությամբ կամ գրիչով՝ յուրաքանչյուր վանդակում նշելով մեկ նիշ: Հաշվետվության ձևի 1.4.1, 3.4.9, 3.9.3, 3.10, 3.12, 6.1.3, 6.2.1 և 6.3.1 կետերի և ենթակետերի ներքո նախատեսված դաշտերի սահմաններն անբավարար լինելու դեպքում անհրաժեշտ է օգտագործել հավելյալ թղթեր: Այդ թղթերի ձախ կողմում նշվում է այն կետը կամ ենթակետը, որի ներքո նախատեսված դաշտը լրացվում է: Այդ թղթերը ստորագրվում և հաստատվում են կնիքով (կնիքի առկայության դեպքում) և կցվում հիմնական հաշվետվության ձևին: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրվում է նաև այդ ուղղումների կողքին:

20. Հաշվետվության ձևի առաջին էջի ներքևի մասում նշվում է ներկայացվող հաշվետվության էջերի քանակը (ներառյալ՝ առաջին էջը): Հաշվետվության ձևի յուրաքանչյուր էջի ներքևի աջ անկյունում անհրաժեշտ է ստորագրել և հաստատել կնիքով (կնիքի առկայության դեպքում): Հաշվետվության ձևի այն էջերը, որոնք չեն լրացվել, կարող են չներկայացվել:

21. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը լրացվում է՝ օգտագործելով ներկայացված էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները: Էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները փոփոխության ենթակա չեն: Ցանկացած ներկայացված հաշվետվություն, որը պարունակում է փոփոխություն, դիտվում է թերի կամ սխալ լրացված հաշվետվություն և հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

22. Լրացման համար պարտադիր են այն կետերը և ենթակետերը, որոնց վերաբերյալ Հաշվետվություն տրամադրող անձն ունի կամ պարտավոր է ունենալ տեղեկատվություն:

23. Յուրաքանչյուր գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ ներկայացվում է առանձին հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

24. «Հաշվառման համարը» 1.1 կետում լրացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվառման համարը (ութ նիշ):

25. «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2 կետում լրացվում են հաշվետվության ուղարկման օրը, ամիսը, տարին (վեց նիշ):

26. «Հաշվետվության հերթական համարը» 1.3 կետում լրացվում է տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (երեք նիշ):

27. «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետում լրացվում է տվյալ հաշվետվության ուղղման կամ լրացման նպատակով ներկայացվող հաշվետվության հերթական համարը (մեկից երեք նիշ): Այս կետը լրացվում է, եթե հաշվետվությունն ուղարկվում է նախկինում ուղարկված հաշվետվությունում առկա սխալի կամ թերության ուղղման նպատակով, ինչպես նաև, եթե սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:

28. Կարգի 10-րդ և 13-րդ կետերով սահմանված կարգով ներկայացված համարվող հաշվետվության մեջ ուղղում կամ լրացում կատարելու համար հիմք հանդիսացած պատճառները և հանգամանքները լրացվում են «Ուղղման (լրացման) պատճառը» 1.4.1 ենթակետում: Այդ ենթակետը ենթակա է պարտադիր լրացման, եթե ուղղում կամ լրացում կատարվել է նախորդ հաշվետվությունը ներկայացնելու պահից ոչ շուտ, քան երեք աշխատանքային օր հետո:

29. Ուղղում կամ լրացում կատարելու դեպքում ներկայացվում է նոր հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

30. «Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն» 2.1 կետը նշվում է, եթե՝

1) անկանխիկ եղանակով իրականացվող գործարքի գումարը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը՝ բացառությամբ 2-րդ ենթակետով նախատեսված դեպքի,
2) կանխիկ եղանակով իրականացվող գործարքի գումարը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը:

31. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն» 2.2 կետը նշվում է, եթե ներկայացվում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

32. «Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը» 3.1 կետում լրացվում են տեղեկացման ենթակա գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման օրը, ամիսը, տարին: Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելիս, եթե գործարքը դեռևս չի կատարվել կամ գործարար հարաբերությունը դեռևս չի հաստատվել, լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ ներկայացվել է գործարք կատարելու կամ գործարար հարաբերություն հաստատելու առաջարկը, իսկ այն դեպքում, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է, նշվում են գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման օրը, ամիսը, տարին:

33. «Կանխիկի հետ կապված գործարք» 3.2 կետը նշվում է, եթե կատարվել է կանխիկի հետ կապված գործարք: Այն դեպքում, երբ գործարքը կատարվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակով, սակայն միայն կանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցել 5 միլիոն ՀՀ դրամը, նշվում է «Կանխիկի հետ կապված գործարք» 3.2 կետը, իսկ «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.12 կետում նշվում է գործարքի գումարի նաև անկանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

34. «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.3 կետը նշվում է, եթե գործարքը կատարվում է անկանխիկ եղանակով: Այն դեպքում, երբ գործարքը կատարվել է միաժամանակ անկանխիկ և կանխիկ եղանակով, սակայն միայն անկանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցում 20 միլիոն ՀՀ դրամը, նշվում է «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.3 կետը, իսկ «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.12 կետում նշվում է գործարքի գումարի նաև կանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

35. Այն դեպքում, երբ գործարքը կատարվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակով, և կանխիկ եղանակով վճարված գումարը գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը, իսկ անկանխիկ եղանակով վճարված գումարը գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը, միաժամանակ նշվում են «Կանխիկի հետ կապված գործարք» 3.2 և «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.3 ենթակետերը, ինչպես նաև լրացվում են դրանց ներքո նախատեսված դաշտերը:

36. «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» 3.4 կետի ներքո նախատեսված՝ 3.4.1 - 3.4.7 և «Այլ» 3.4.9 ենթակետերը նշելու դեպքում գործարքի գումարի վերաբերյալ տվյալները լրացվում են «Կանխիկի հետ կապված գործարք» 3.2 և «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.3 կետերի ներքո նախատեսված 3.2.1 - 3.2.3 և 3.3.1-3.3.1.2 ենթակետերում և դաշտերում:

37. «Արժույթը» 3.2.1 և «Արժույթը (առքի արժույթ)» 3.3.1 ենթակետերում լրացվում է այն արժույթը, որով կատարվել է գործարքը:

38. «Գումարը տվյալ արժույթով» 3.2.2 և 3.3.1.1 ենթակետում և դաշտում լրացվում է գործարքի գումարի չափը այն արժույթով, որով կատարվել է գործարքը: Եթե «Արժույթը» 3.2.1 և «Արժույթը (առքի արժույթ)» 3.3.1 ենթակետերում նշվում է ՀՀ դրամ, ապա նույն գումարը լրացվում է և՛ «Գումարը տվյալ արժույթով» 3.2.2 և 3.3.1.1, և՛ «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.3 և 3.3.1.2 ենթակետերում և դաշտերում:

39. «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.3 և 3.3.1.2 ենթակետում և դաշտում լրացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

40. «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» 3.4 կետի ներքո նախատեսված «Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք» 3.4.8 ենթակետը նշելու դեպքում գործարքի գումարի վերաբերյալ տվյալները լրացվում են «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.3 կետերի ներքո նախատեսված դաշտերում:

41. «Արժույթը (առքի արժույթ)» 3.3.1 ենթակետում նշվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից գնված արժույթը:

42. «Գումարը տվյալ արժույթով» 3.3.1.1 դաշտում լրացվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից գնված արժույթի գումարը:

43. «Արժույթը (վաճառքի արժույթ)» 3.3.2 ենթակետերում նշվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից վաճառված արժույթը:

44. «Գումարը տվյալ արժույթով» 3.3.2.1 դաշտերում լրացվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից վաճառված արժույթի գումարը:

45. «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.3.1.2 և 3.3.2.2 դաշտերում լրացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

46. Այն դեպքում, երբ կատարվել է մեկ արտարժույթի փոխարկում մեկ այլ արտարժույթի, «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.3.1.2 և 3.3.2.2 դաշտերում լրացվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից գնված արտարժույթին համարժեք գումարի դրամական արտահայտությունը: Այն դեպքում, երբ կատարվել է արտարժույթի և դրամի փոխարկում, «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.3.1.2 և 3.3.2.2 դաշտերում լրացվում է արտարժույթին համարժեք գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

47. «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» 3.4 կետում նշվում է այդ կետի ներքո նախատեսված ենթակետերից որևէ մեկը: «Այլ» 3.4.8 ենթակետը նշելու դեպքում «Այլ» 3.4.9 ենթակետի ներքո նախատեսված դաշտում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության անվանումը: «Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք» 3.4.8 ենթակետը նշելու դեպքում, կախված այն հանգամանքից, թե ինչ պայմանով է իրականացվել արտարժույթի առուվաճառքը, նշվում է 3.4.8.1 - 3.4.8.5 դաշտերից մեկը:

48. «Պայմանագրի տեսակը» 3.5 կետում լրացվում է այն պայմանագիրը, որի հիման վրա կատարվել է գործարքը:

49. «Արժեթղթի տեսակը» 3.6 կետում լրացվում է այն արժեթղթի տեսակը, որով կատարվել է գործարքը:

50. «Արժեթղթի անվանական արժեքը» 3.7 կետում լրացվում է արժեթղթի անվանական արժեքը՝ արտահայտված ՀՀ դրամով:

51. «Արժեթղթի շուկայական արժեքը» 3.8 կետում լրացվում է արժեթղթի շուկայական արժեքը՝ արտահայտված ՀՀ դրամով:

52. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը» 3.9 կետում նշվում են 3.9.1 – 3.9.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը: Եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշը կամ տիպաբանությունը սահմանված չէ 3.9.1 և 3.9.2 ենթակետերով նախատեսված իրավական ակտերում, ապա նշվում է «Այլ» 3.9.3 ենթակետը: 3.9.1–3.9.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը նշելու դեպքում այդ ենթակետերի ներքո նախատեսված դաշտում լրացվում է Լիազոր մարմնի իրավական ակտով, Հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտով սահմանված կամ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության այլ չափանիշ կամ տիպաբանություն:

53. «Կասկածների նկարագրությունը» 3.10 կետում հնարավորինս մանրամասն նկարագրվում են գործարքի կամ գործարար հարաբերության նախապատմությունը, այն բոլոր հանգամանքները, որոնք վկայել են գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության մասին: Այս կետում կարող են նկարագրվել նաև Հաշվետվություն տրամադրող անձի՝ հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները:

54. «Կապված հաշվետվության անվանումը» 3.11 կետը լրացվում է, եթե ներկայացվող հաշվետվությամբ կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը, ըստ Հաշվետվություն տրամադրող անձի, պատճառահետևանքային կամ այլ առումով կապված է Հաշվետվություն տրամադրող անձի կողմից նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքի հետ: «Կապված հաշվետվության անվանումը» 3.11 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության ձևի «Հաշվառման համարը» 1.1, «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2, «Հաշվետվության հերթական համարը» 1.3, «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետերում (առկայության դեպքում) լրացված տեղեկատվությունը: Թղթային տարբերակով հաշվետվություն ներկայացնելիս, եթե առկա է մեկից ավելի կապված հաշվետվություն, «Կապված հաշվետվության անվանումը» 3.11 կետը պատճենահանվում և լրացվում է համապատասխան քանակով:

55. «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.12 կետում նշվում են Կարգի 33-րդ և 34-րդ կետերով նախատեսված տեղեկությունները, ինչպես նաև գործարքին կամ գործարար հարաբերությանն առնչվող՝ Հաշվետվություն տրամադրող անձի կողմից կարևորվող այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 7. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԸ

56. «Անվանում» 4.1 կետում լրացվում է արժեթուղթ թողարկող ընկերության անվանումը:

57. «Գտնվելու վայր» 4.2 կետի ներքո նախատեսված 4.2.1 - 4.2.4 դաշտերում լրացվում է թողարկողի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը):

58. «Կազմակերպական-իրավական ձևը» 4.3 կետում լրացվում է թողարկողի կազմակերպական-իրավական ձևը կամ դրա հապավումը (օրինակ՝ ՍՊԸ, ԲԲԸ և այլն): Օտարերկրյա իրավաբանական անձանց կազմակերպական-իրավական ձևի վերաբերյալ տվյալները լրացվում են լատինատառ:

59. «Անհատականացման համարը» 4.4 կետում լրացվում է թողարկողին գրանցումն իրականացնող մարմնի կողմից տրամադրված անհատականացման համարը:

60. «ՀՎՀՀ» 4.5 կետում լրացվում է թողարկողի՝ հարկ վճարողի հաշվառման համարը:

61. «Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն» 4.6 ենթակետում լրացվում են գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը:

ԳԼՈՒԽ 8. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

62. «Հաճախորդ» 5.1 կետում նշվում է հաճախորդի տեսակը՝ ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, պետական մարմին կամ համայնք:

63. «Անուն (անվանում)» 5.1.1 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ անունը կամ իրավաբանական անձի կամ պետական մարմնի կամ համայնքի անվանումը:

64. «Ազգանուն» 5.1.2 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը: Այն դեպքում, երբ հստակ չէ, թե որն է հաճախորդի անունը և որը ազգանունը, ապա 5.1.1 և 5.1.2 ենթակետերը լրացվում են Հաշվետվություն տրամադրող անձի հայեցողությամբ:

65. «Հայրանուն» 5.1.3 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հայրանունը:

66. «Ծննդյան ամսաթիվը» 5.1.4 ենթակետում լրացվում են ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան օրը, ամիսը, տարին:

67. «Բնակության վայր (գտնվելու վայր)» 5.1.5 ենթակետի ներքո նախատեսված 5.1.5.1 - 5.1.5.4 դաշտերում ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում լրացվում է այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում է, իսկ իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը): 5.1.5.1 - 5.1.5.4 դաշտերը չեն լրացվում, եթե Ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը և հաշվառման վայրը նույնն են:

68. «Հաշվառման վայր» 5.1.6 ենթակետի ներքո նախատեսված 5.1.6.1 - 5.1.6.4 դաշտերում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը հաշվառված է:

69. «Քաղաքացիությունը» 5.1.7 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ քաղաքացիությունը:

70. «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 5.1.8 ենթակետում նշվում է անձնագիրը, նույնականացման քարտը կամ նորմատիվ իրավական ակտով սահմանված՝ ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձը (ինքնություն) հաստատող այլ փաստաթուղթը:

71. «Փաստաթղթի սերիան և համարը» 5.1.8.1, «Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը» 5.1.8.2 դաշտերում համապատասխանաբար լրացվում են «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 5.1.8 ենթակետում նշված փաստաթղթի սերիան, համարը, ինչպես նաև տրամադրման օրը, ամիսը, տարին:

72. «Ում կողմից է տրամադրվել» 5.1.8.3 դաշտում լրացվում է այն պետական մարմնի անվանումը կամ ծածկագիրը, որի կողմից տրամադրվել է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 5.1.8 ենթակետում նշված փաստաթուղթը:

73. «Փաստաթղթի վավերականության ժամկետը» 5.1.8.4 դաշտում լրացվում է այն օրը, ամիսը, տարին, երբ լրանում է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 5.1.8 ենթակետում նշված փաստաթղթի վավերականության ժամկետը:

74. Հաշվետվության ձևի 5.1.9 - 5.1.12 ենթակետերը լրացվում են Կարգի 58-61-րդ կետերով սահմանված կարգով:

75. «Բանկային հաշվի համարը» 5.1.13 ենթակետում լրացվում է հաճախորդի բանկային հաշվի համարը:

76. Հաշվետվության ձևի 5.2.1 - 5.2.12 ենթակետերը լրացվում են Կարգի 63 - 74-րդ կետերի ենթակետերով սահմանված կարգով:

77. «Լիազորված անձ» 5.3 կետը լրացվում է, եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կատարվում է լիազորված անձի միջոցով:

78. «Լիազորող անձ» 5.3.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում լիազորված անձն է հանդիսանում տվյալ անձը:

79. Հաշվետվության ձևի 5.3.2 - 5.3.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են Կարգի 63 - 73-րդ կետերով սահմանված կարգով:

80. «Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը չի կարողանում ստանալ տեղեկատվություն այն մասին, թե արդյո՞ք գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու, թե՝ ոչ:

81. «Չկա իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը պարզել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա չէ իրական շահառու (օրինակ՝ այդ մասին գրավոր հայտարարություն է տվել հաճախորդը):

82. «Առկա է իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդից կամ այլ աղբյուրից տեղեկացել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու:

83. «Առկա է իրական շահառու» դաշտը նշելուց հետո «Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)» 5.4.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում իրական շահառուն է հանդիսանում տվյալ անձը:

84. 5.4.2 - 5.4.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են միայն «Առկա է իրական շահառու» դաշտը նշելու դեպքում Կարգի 63-73-րդ կետերով սահմանված կարգով:

85. Հաշվետվության ձևի 5-րդ բաժինը, կախված անձանց թվից, լրացվում է համապատասխան քանակով:

ԳԼՈՒԽ 9. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ, ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

86. «Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցում» 6.1 կետը նշվում է, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցվել է:

87. «Կասեցման ամսաթիվը» 6.1.1 ենթակետում լրացվում են գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման օրը, ամիսը, տարին:

88. «Կասեցման ժամկետը» 6.1.2 ենթակետում լրացվում է կասեցման ժամկետը:

89. «Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը» 6.1.3 ենթակետում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը:

90. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում» 6.2 կետը նշվում է, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է:

91. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառը» 6.2.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժելու համար:

92. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում» 6.3 կետը նշվում է, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցվել է:

93. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառը» 6.3.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցնելու համար:

94. «Գույքի սառեցում» 6.4 կետը նշվում է, երբ հաճախորդի գույքը սառեցվել է:

95. «Սառեցման ամսաթիվը» 6.4.1 ենթակետում լրացվում են գույքի սառեցման օրը, ամիսը, տարին:

96. «Սառեցման ժամկետը» 6.4.2 ենթակետում լրացվում է սառեցման ժամկետը:

97. «Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը» 6.4.3 ենթակետում լրացվում է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերի և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կատարման նպատակով Լիազոր մարմնի կողմից հրապարակված ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը:

ԳԼՈՒԽ 10. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

98. «Անուն» 7.1 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի անունը:

99. «Ազգանուն» 7.2 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի ազգանունը:

100. «Լրացման ամսաթիվը» 7.3 կետում լրացվում են հաշվետվության ձևը լրացնելու օրը, ամիսը, տարին:

Գրավատների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 107 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին[*]

Նպատակ ունենալով նախատեսել հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների նոր ձևեր, փոփոխության ենթարկել դրանց տրամադրման կարգը և սահմանել ժամկետներին վերաբերող առավել մանրամասն կանոններ,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Գրավատների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 107 հաշվետվության ձևը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2. Հաստատել «Գրավատների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 107 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N 268-Ն

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 268-Ն որոշմամբ

ՁԵՎ
ԳՐԱՎԱՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 107 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

1.1. Հաշվառման համարը	1.2. Հաշվետվության ուղարկման ամսաթիվը	1.3. Հաշվետվության հերթական համարը	1.4. Ուղղման (լրացման) հերթական համարը

1.4.1. Ուղղման (լրացման) պատճառը

2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

☐ 2.1. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն

☐ 2.2. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն

3. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը ☐☐ - ☐☐ - ☐☐☐☐

☐ 3.2. Կանխիկի հետ կապված գործարք

☐ 3.3. Անկանխիկ եղանակով իրականացված գործարք

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

3.2.1. Արժույթը

3.3.1. Արժույթը

3.2.2. Գումարը տվյալ արժույթով

3.3.2. Գումարը տվյալ արժույթով

3.2.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

3.3.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

3.4. Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը

☐ 3.4.1. անձնական օգտագործման շարժական գույքի գրավով ապահովված վարկի տրամադրում տոկոսավճարով

☐ 3.4.2. տրամադրված վարկի մարում

☐ 3.4.3. տրամադրված վարկի տոկոսի մարում

☐ 3.4.4. կազմակերպությունից վարկի ներգրավում

☐ 3.4.5. կազմակերպությունից փոխառության ներգրավում

☐ 3.4.6. մասնակցից փոխառության ներգրավում

☐ 3.4.7. ներգրավված վարկի կամ փոխառության մարում

☐ 3.4.8. ներգրավված վարկի կամ փոխառության տոկոսի մարում

☐ 3.4.9. գրավատան կողմից թողարկված սահմանափակ շրջանառության իրավունքով արժեթղթերի տեղաբաշխում

☐ 3.4.10. բաժնետոմսերի տեղաբաշխում

☐ 3.4.11. որպես գրավ կամ պահատվության հանձնված գույքի իրացում

☐ 3.4.12. այլ

3.5. Գրավի առարկան

3.6. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը

☐ 3.6.1. Լիազոր մարմնի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.6.2. Հաշվետվություն տրամադրող անձի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.6.3. Այլ

3.7. Կասկածների նկարագրությունը

3.8. Կապված հաշվետվության անվանումը

3.9. Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն

4. ԳՈՐԾԱՐՔԻ ԿՈՂՄ

4.1. Հաճախորդ

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ

4.1.1. Անուն (անվանում)

4.1.2. Ազգանուն

4.1.3. Հայրանուն

4.1.4. Ծննդյան ամսաթիվը - -

4.1.5. Բնակության վայր (գտնվելու վայր)

4.1.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.1.5.2. Քաղաք կամ գյուղ

4.1.5.3. Մարզ

4.1.5.4. Երկիր

4.1.6. Հաշվառման վայր

4.1.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.1.6.2. Քաղաք կամ գյուղ

4.1.6.3. Մարզ

4.1.6.4. Երկիր

4.1.7. Քաղաքացիություն

4.1.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.1.8.1. Փաստաթղթի սերիան և համարը

4.1.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.1.8.3. Ում կողմից է տրամադրվել

4.1.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4.1.9. Կազմակերպական իրավական ձև

4.1.10. Անհատականացման (հաշվառման) համարը

4.1.11. ՀՎՀՀ

4.1.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

4.1.13. Բանկային հաշվի համարը

4.2. Լիազորված անձ

4.2.1. Լիազորող անձ

(հաճախորդի անուն, ազգանուն (անվանում))

4.2.2. Անուն

4.2.3. Ազգանուն

4.2.4. Հայրանուն

4.2.5. Ծննդյան ամսաթիվը - -

4.2.6. Բնակության վայր

4.2.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.2.6.2. Քաղաք կամ գյուղ

4.2.6.3. Մարզ

4.2.6.4. Երկիր

4.2.7. Հաշվառման վայր

4.2.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.2.7.2. Քաղաք կամ գյուղ

4.2.7.3. Մարզ

4.2.7.4. Երկիր

4.2.8. Քաղաքացիություն

4.2.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.2.9.1. Փաստաթղթի սերիա և համար

4.2.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվ - -

4.2.9.3. Ում կողմից է տրամադրվել

4.2.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետ - -

4.3. Իրական շահառու

☐ Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը ☐ Չկա իրական շահառու ☐ Առկա է իրական շահառու

4.3.1. Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)

4.3.2. Անուն

4.3.3. Ազգանուն

4.3.4. Հայրանուն

4.3.5. Ծննդյան ամսաթիվը - -

4.3.6. Բնակության վայր

4.3.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.3.6.2. Քաղաք կամ գյուղ

4.3.6.3. Մարզ

4.3.6.4. Երկիր

4.3.7. Հաշվառման վայր

4.3.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.3.7.2. Քաղաք կամ գյուղ

4.3.7.3. Մարզ

4.3.7.4. Երկիր

4.3.8. Քաղաքացիություն

4.3.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.3.9.1. Փաստաթղթի սերիա և համար

4.3.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.3.9.3. Ում կողմից է տրամադրվել

4.3.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

5. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ, ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

☐ 5.1. Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցում

5.1.1. Կասեցման ամսաթիվը - -

5.1.2. Կասեցման ժամկետը

5.1.3. Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը

☐ 5.2. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում

5.2.1. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառը

☐ 5.3. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում

5.3.1. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառը

☐ 5.4. Գույքի սառեցում

5.4.1. Սառեցման ամսաթիվը - -

5.4.2. Սառեցման ժամկետը

5.4.3. Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը

6. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ (ՂԵԿԱՎԱՐ)

6.1. Անուն

6.2. Ազգանուն

6.3. Լրացման ամսաթիվը

- -

Հավելված 2
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 268-Ն որոշմամբ

ԿԱՐԳ
ԳՐԱՎԱՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 107 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Գրավատների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 107 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է գրավատների (այսուհետ՝ Հաշվետվություն տրամադրող անձ) կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հաշվետվության ձևի լրացման կարգը և հաշվետվությունների ներկայացման դեպքերը:

2. Կարգում հասկացություններն օգտագործվում են Օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Հաշվետվության ձևը լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվառված Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից:

4. Հաշվետվությունը ներկայացվում է Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքերում:

5. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն չի ներկայացվում, եթե կատարվել են հետևյալ գործարքները՝

1) ֆինանսական երկրորդային շուկայում այլ մասնագիտացված անձանց հետ կնքվող գործարքները, որոնք կնքվում են իրենց հաշվին և իրենց անունից,
2) Հաշվետվություն տրամադրող անձի կողմից սեփական կարիքների համար կատարվող գնումները Հաշվետվություն տրամադրող անձի ընթացիկ գործունեության ապահովման նպատակով բացառությամբ հաճախորդներից ֆինանսական ակտիվների գնումների,
3) հաճախորդի հետ կնքված և նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքներում փոփոխությունները, որոնք չեն առաջացնում գործարքի գումարի կամ արժույթի փոփոխություն:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

6. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով կամ թղթային տարբերակով:

7. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը կարող է ձեռք բերվել Ֆինանսական դիտարկումների կենտրոնին դիմելու կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջից արտահանելու միջոցով:

8. Հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով ներկայացվում են միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և

այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու կարգի» 4-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնագիր կնքելուց հետո:

9. Էլեկտրոնային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը ներկայացված է համարվում, եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաշվետվություն տրամադրող անձը չի ստանում սխալի վերաբերյալ հաղորդագրություն:

10. Սխալի վերաբերյալ հաղորդագրություն ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով՝ առանց հաշվետվության անվանման փոփոխության: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

11. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում փակ կնքված (կնիքի առկայության դեպքում) ծրարով՝ «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին» նշագրմամբ՝ հետևյալ եղանակներից որևէ մեկով.

1) ֆիզիկապես ներկայացնելու միջոցով,

2) փոստի միջոցով:

12. Կարգի 11-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացված է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացականի, իսկ Կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ «Հայփոստ» ՓԲԸ կողմից համապատասխան անդորրագրի տրամադրման պահից: Կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փոստային հասցեով (ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6):

13. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվության սխալի վերաբերյալ հետադարձ կապ ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

14. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում այդ գործարքը կատարելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվության տրամադրման օրերի հաշվարկը սկսվում է գործարքի կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից և ավարտվում այդ օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 18:00-ին:

15. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում գործարքում կամ գործարար հարաբերությունում կասկածելիության չափանիշ հայտնաբերելու դեպքում՝ նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ը:

16. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել՝

1) աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

2) ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

17. Հաշվետվության ձևը լրացվում է հնարավորինս պարզ, հակիրճ, միանշանակ ընկալվող հայերեն լեզվով, «յունիկոդ» տառատեսակով և մեծատառերով: «Անուն (անվանում)» 4.1.1, «Անուն» 4.2.2 և 4.3.2, «Ազգանուն» 4.1.2, 4.2.3 և 4.3.3, «Հայրանուն» 4.1.3, 4.2.4 և 4.3.4 ենթակետերը լրացվում են անգլերեն, երբ անհրաժեշտ տվյալները Հաշվետվություն տրամադրող անձին հասանելի են միայն անգլերեն լեզվով: Եթե նշված տվյալները հասանելի են այլ օտար լեզվով, ապա նշված ենթակետերը լրացվում են հայերեն կամ անգլերեն լեզվով:

18. Հաշվետվության ձևի թղթային տարբերակը լրացվում է համակարգչի օգնությամբ կամ գրիչով՝ յուրաքանչյուր վանդակում նշելով մեկ նիշ: Հաշվետվության ձևի 1.4.1, 3.4.12, 3.5, 3.6.3, 3.7, 3.9, 5.1.3, 5.2.1 և 5.3.1 կետերի և ենթակետերի ներքո նախատեսված դաշտերի սահմաններն անբավարար լինելու դեպքում անհրաժեշտ է օգտագործել հավելյալ թղթեր: Այդ թղթերի ձախ կողմում նշվում է այն կետը կամ ենթակետը, որի ներքո նախատեսված դաշտը լրացվում է: Այդ թղթերը ստորագրվում և հաստատվում են կնիքով (կնիքի առկայության դեպքում) և կցվում հիմնական հաշվետվության ձևին: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրվում է նաև այդ ուղղումների կողքին:

19. Հաշվետվության ձևի առաջին էջի ներքևի մասում նշվում է ներկայացվող հաշվետվության էջերի քանակը (ներառյալ՝ առաջին էջը): Հաշվետվության ձևի յուրաքանչյուր էջի ներքևի աջ անկյունում անհրաժեշտ է ստորագրել և հաստատել կնիքով (կնիքի առկայության դեպքում): Հաշվետվության ձևի այն էջերը, որոնք չեն լրացվել, կարող են չներկայացվել:

20. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը լրացվում է՝ օգտագործելով ներկայացված էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները: Էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները փո-

փոխության ենթակա չեն: Ցանկացած ներկայացված հաշվետվություն, որը պարունակում է փոփոխություն, դիտվում է թերի կամ սխալ լրացված հաշվետվություն և հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

21. Լրացման համար պարտադիր են այն կետերը և ենթակետերը, որոնց վերաբերյալ Հաշվետվություն տրամադրող անձն ունի կամ պարտավոր է ունենալ տեղեկատվություն:

22. Յուրաքանչյուր գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ ներկայացվում է առանձին հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

23. «Հաշվառման համարը» 1.1 կետում լրացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվառման համարը (ութ նիշ):

24. «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2 կետում լրացվում է հաշվետվության ուղարկման օրը, ամիսը, տարին (վեց նիշ):

25. «Հաշվետվության հերթական համարը» 1.3 կետում լրացվում է տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (երեք նիշ):

26. «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետում լրացվում է տվյալ հաշվետվության ուղղման կամ լրացման նպատակով ներկայացվող հաշվետվության հերթական համարը (մեկից երեք նիշ): Այս կետը լրացվում է, եթե հաշվետվությունն ուղարկվում է նախկինում ուղարկված հաշվետվությունում առկա սխալի կամ թերության ուղղման նպատակով, ինչպես նաև, եթե սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:

27. Կարգի 9-րդ և 12-րդ կետերով սահմանված կարգով ներկայացված համարվող հաշվետվության մեջ ուղղում կամ լրացում կատարելու համար հիմք հանդիսացած պատճառները և հանգամանքները լրացվում են «Ուղղման (լրացման) պատճառը» 1.4.1 ենթակետում: Այս ենթակետը ենթակա է պարտադիր լրացման, եթե ուղղում կամ լրացում կատարվել է նախորդ հաշվետվությունը ներկայացնելու պահից երեք աշխատանքային օր հետո:

28. Ուղղում կամ լրացում կատարելու դեպքում ներկայացվում է նոր հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

29. «Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն» 2.1 կետը նշվում է, եթե՝

1) անկանխիկ եղանակով իրականացվող գործարքի գումարը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը,
2) կանխիկի հետ կապված գործարքի գումարը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը:

30. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն» 2.2 կետը նշվում է, եթե ներկայացվում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

31. «Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը» 3.1 կետում լրացվում են տեղեկացման ենթակա գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման օրը, ամիսը, տարին: Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելիս, եթե գործարքը դեռևս չի կատարվել կամ գործարար հարաբերությունը դեռևս չի հաստատվել, լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ ներկայացվել է գործարք կատարելու կամ գործարար հարաբերություն հաստատելու առաջարկը, իսկ այն դեպքում, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է, նշվում են գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման օրը, ամիսը, տարին:

32. «Կանխիկի հետ կապված գործարք» 3.2 կետը նշվում է, եթե կատարվել է կանխիկի հետ կապված գործարք: Այն դեպքում, երբ գործարքն իրականացվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակներով, սակայն միայն կանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցել 5 միլիոն ՀՀ դրամը, նշվում է «Կանխիկի հետ կապված գործարք» 3.2 կետը, իսկ «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.9 կետում նշվում է գործարքի գումարի նաև անկանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

33. «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.3 կետը նշվում է, եթե գործարքը կատարվել է անկանխիկ եղանակով: Այն դեպքում, երբ գործարքը կատարվել է միաժամանակ անկանխիկ և կանխիկ

եղանակներով, սակայն միայն անկանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցում 20 միլիոն ՀՀ դրամը, նշվում է «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.3 կետը, իսկ «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.9 կետում նշվում է գործարքի գումարի նաև կանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

34. Այն դեպքում, երբ գործարքը կատարվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակներով, և կանխիկ եղանակով վճարված գումարը գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը, իսկ անկանխիկ եղանակով վճարված գումարը գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը, միաժամանակ նշվում են «Կանխիկի հետ կապված գործարք» 3.2 և «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.3 ենթակետերը, ինչպես նաև լրացվում են դրանց ներքո նախատեսված դաշտերը:

35. «Արժույթը» 3.2.1 և 3.3.1 ենթակետերում լրացվում է այն արժույթը, որով կատարվել է գործարքը:

36. «Գումարը տվյալ արժույթով» 3.2.2 և 3.3.2 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի չափը այն արժույթով, որով կատարվել է գործարքը: Եթե «Արժույթը» 3.2.1 և 3.3.1 ենթակետերում նշվում է ՀՀ դրամ, ապա նույն գումարը լրացվում է և՛ «Գումարը տվյալ արժույթով» 3.2.2 և 3.3.2, և՛ «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.3 և 3.3.3 ենթակետերում:

37. «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.3 և 3.3.3 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

38. «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» 3.4 կետում նշվում է այդ կետի ներքո նախատեսված ենթակետերից որևէ մեկը: «Այլ» 3.4.12 ենթակետը նշելու դեպքում այդ ենթակետի ներքո նախատեսված դաշտում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության անվանումը:

39. «Գրավի առարկան» 3.5 կետում լրացվում է գրավի առարկան:

40. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը» 3.6 կետում նշվում է 3.6.1 – 3.6.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը: Եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշը կամ տիպաբանությունը սահմանված չէ 3.6.1 և 3.6.2 ենթակետերով նախատեսված իրավական ակտերում, ապա նշվում է «Այլ» 3.6.3 ենթակետը: 3.6.1 – 3.6.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը նշելու դեպքում այդ ենթակետերի ներքո նախատեսված դաշտում լրացվում է Լիազոր մարմնի իրավական ակտով, Հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտով սահմանված կամ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության այլ չափանիշ կամ տիպաբանություն:

41. «Կասկածների նկարագրությունը» 3.7 կետում հնարավորինս մանրամասն նկարագրվում են գործարքի կամ գործարար հարաբերության նախապատմությունը, այն բոլոր հանգամանքները, որոնք վկայել են գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության մասին: Այս կետում կարող են նկարագրվել նաև Հաշվետվություն տրամադրող անձի՝ հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները:

42. «Կապված հաշվետվության անվանումը» 3.8 կետը լրացվում է, եթե ներկայացվող հաշվետվությամբ կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը, ըստ Հաշվետվություն տրամադրող անձի, պատճառահետևանքային կամ այլ առումով կապված է Հաշվետվություն տրամադրող անձի կողմից նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքի հետ: «Կապված հաշվետվության անվանումը» 3.8 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության ձևի «Հաշվառման համարը» 1.1, «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2, «Հաշվետվության հերթական համարը» 1.3, «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետերում (առկայության դեպքում) լրացված տեղեկատվությունը: Թղթային տարբերակով հաշվետվություն ներկայացնելիս, եթե առկա է մեկից ավելի կապված հաշվետվություն, «Կապված հաշվետվության անվանումը» 3.8 կետը պատճենահանվում և լրացվում է համապատասխան քանակով:

43. «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.9 կետում նշվում են Կարգի 32-րդ և 33-րդ կետերով նախատեսված տեղեկությունները, եթե դրանք առկա են, ինչպես նաև գործարքին կամ գործարար հարաբերությանն առնչվող՝ Հաշվետվություն տրամադրող անձի կողմից կարևորվող այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 7. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄ

44. «Հաճախորդ» 4.1 կետում նշվում է հաճախորդի տեսակը՝ ֆիզիկական անձ, իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր:

45. «Անուն (անվանում)» 4.1.1 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ անունը կամ իրավաբանական անձի անվանումը:

46. «Ազգանուն» 4.1.2 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը: Այն դեպքում, երբ հստակ չէ, թե որն է հաճախորդի անունը և որը ազգանունը, ապա 4.1.1 և 4.1.2 ենթակետերը լրացվում են Հաշվետվություն տրամադրող անձի հայեցողությամբ:

47. «Հայրանուն» 4.1.3 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հայրանունը:

48. «Ծննդյան ամսաթիվը» 4.1.4 ենթակետում լրացվում են ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան օրը, ամիսը, տարին:

49. «Բնակության վայր (գտնվելու վայր)» 4.1.5 ենթակետի ներքո նախատեսված 4.1.5.1-4.1.5.4 դաշտերում ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում լրացվում է այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում է, իսկ իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը): 4.1.5.1-4.1.5.4 դաշտերը չեն լրացվում, եթե ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը և հաշվառման վայրը նույնն է:

50. «Հաշվառման վայր» 4.1.6 ենթակետի ներքո նախատեսված 4.1.6.1-4.1.6.4 դաշտերում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը հաշվառված է:

51. «Քաղաքացիությունը» 4.1.7 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ քաղաքացիությունը:

52. «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշվում է անձնագիրը, նույնականացման քարտը կամ նորմատիվ իրավական ակտով սահմանված՝ ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձը (ինքնություն) հաստատող այլ փաստաթուղթը:

53. «Փաստաթղթի սերիան և համարը» 4.1.8.1, «Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը» 4.1.8.2 դաշտերում համապատասխանաբար լրացվում են «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթղթի սերիան, համարը, ինչպես նաև տրամադրման օրը, ամիսը, տարին:

54. «Ում կողմից է տրամադրվել» 4.1.8.3 դաշտում լրացվում է այն պետական մարմնի անվանումը կամ ծածկագիրը, որի կողմից տրամադրվել է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթուղթը:

55. «Փաստաթղթի վավերականության ժամկետը» 4.1.8.4 դաշտում լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ լրանում է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթղթի վավերականության ժամկետը

56. «Կազմակերպական-իրավական ձևը» 4.1.9 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը կամ դրա հապավումը (օրինակ՝ ՍՊԸ, ԲԲԸ և այլն): Օտարերկրյա իրավաբանական անձանց կազմակերպական-իրավական ձևի վերաբերյալ տվյալները լրացվում են լատիներեն տառ:

57. «Անհատականացման (հաշվառման) համարը» 4.1.10 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցումը (հաշվառումը) իրականացնող մարմնի կողմից տրամադրված անհատականացման (հաշվառման) համարը:

58. «ՀՎՀՀ» 4.1.11 ենթակետում լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը:

59. «Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն» 4.1.12 ենթակետում լրացվում են գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը:

60. «Բանկային հաշվի համարը» 4.1.13 ենթակետում լրացվում է հաճախորդի բանկային հաշվի համարը:

61. «Լիազորված անձ» 4.2 կետը լրացվում է, եթե գործարքը կատարվում կամ գործարար հարաբերությունը հաստատվում է լիազորված անձի միջոցով:

62. «Լիազորող անձ» 4.2.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում լիազորված անձն է հանդիսանում տվյալ անձը:

63. Հաշվետվության ձևի 4.2.2 - 4.2.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են Կարգի 45-55-րդ կետերով սահմանված կարգով:

64. «Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը չի կարողանում ստանալ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու, թե՝ ոչ:

65. «Չկա իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը պարզել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա չէ իրական շահառու (օրինակ՝ այդ մասին գրավոր հայտարարություն է տվել հաճախորդը):

66. «Առկա է իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդից կամ այլ աղբյուրից տեղեկացել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու:

67. «Առկա է իրական շահառու» դաշտը նշելուց հետո «Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)» 4.3.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում իրական շահառուն է հանդիսանում տվյալ անձը:

68. Հաշվետվության ձևի 4.3.2-4.3.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են միայն «Առկա է իրական շահառու» դաշտը նշելու դեպքում Կարգի 45-55-րդ կետերով սահմանված կարգով:

69. Հաշվետվության ձևի 4-րդ բաժինը, կախված անձանց թվից, լրացվում է համապատասխան քանակով:

ԳԼՈՒԽ 8. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ, ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

70. «Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցում» 5.1 կետը նշվում է, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցվել է:

71. «Կասեցման ամսաթիվը» 5.1.1 ենթակետում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման օրը, ամիսը, տարին:

72. «Կասեցման ժամկետը» 5.1.2 ենթակետում լրացվում է կասեցման ժամկետը:

73. «Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը» 5.1.3 ենթակետում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը:

74. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում» 5.2 կետը նշվում է, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է:

75. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառը» 5.2.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժելու համար:

76. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում» 5.3 կետը նշվում է, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցվել է:

77. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառը» 5.3.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցնելու համար:

78. «Գույքի սառեցում» 5.4 կետը նշվում է, երբ հաճախորդի գույքը սառեցվել է:

79. «Սառեցման ամսաթիվը» 5.4.1 ենթակետում լրացվում են գույքի սառեցման օրը, ամիսը, տարին:

80. «Սառեցման ժամկետը» 5.4.2 ենթակետում լրացվում է սառեցման ժամկետը:

81. «Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը» 5.4.3 ենթակետում լրացվում է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերի և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կատարման նպատակով Լիազոր մարմնի կողմից հրապարակված ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը:

ԳԼՈՒԽ 9. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

82. «Անուն» 6.1 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի անունը:

83. «Ազգանուն» 6.2 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի ազգանունը:

84. «Լրացման ամսաթիվը» 6.3 կետում լրացվում է հաշվետվության ձևը լրացնելու օրը, ամիսը, տարին:

«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 009 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 19-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին[*]

Նպատակ ունենալով նախատեսել հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների և կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ հաշվետվությունների նոր ձևեր, փոփոխության ենթարկել դրանց տրամադրման կարգը և սահմանել ժամկետներին վերաբերող առավել մանրամասն կանոններ,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին»: Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 009 հաշվետվության ձևը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2. Հաստատել ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 009 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի «Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման թիվ 009 հաշվետվական ձևը, տրամադրման կարգը և ժամկետները, Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 19-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N 269-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 269-Ն որոշմամբ

ՁԵՎ

«ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 009 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

1.1. Հաշվառման համարը	1.2. Հաշվետվության ուղարկման ամսաթիվը	1.3. Հաշվետվության հերթական համարը	1.4. Ուղղման (լրացման) հերթական համարը

1.4.1. Ուղղման (լրացման) պատճառը

2. ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը

☐ 2.2. Կանխիկի հետ կապված գործարք

2.2.1. Արժույթը

2.2.2. Գումարը տվյալ արժույթով

2.2.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

☐ 2.3. Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք

2.3.1. Արժույթը

2.3.2. Գումարը տվյալ արժույթով

2.3.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

2.4 .ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆ

☐ 2.4.1. ընկերության կանոնադրական կապիտալում (բաժնեհավաք կապիտալում, բաժնային ֆոնդում և այլն) բաժնի (մասնակցության, փայի և այլն) ձեռքբերման հետ կապված գրանցում

☐ 2.4.2. ընկերության կանոնադրական կապիտալում (բաժնեհավաք կապիտալում, բաժնային ֆոնդում և այլն) բաժնի (մասնակցության, փայի և այլն) օտարման հետ կապված գրանցում

☐ 2.4.3. բաժնետոմսերի անվանական արժեքի փոփոխության (կապիտալի ավելացում, նվազեցում, կոնսոլիդացիա և այլն) հետ կապված գրանցում

☐ 2.4.4. լրացուցիչ բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայաբաժինների և այլն) տեղաբաշխման միջոցով ընկերության կանոնադրական կապիտալի (բաժնեհավաք կապիտալի, բաժնային ֆոնդի և այլն) ավելացման հետ կապված գրանցում

☐ 2.4.5. բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայաբաժինների և այլն) ընդհանուր քանակի պակասեցման միջոցով ընկերության կանոնադրական կապիտալի (բաժնեհավաք կապիտալի, բաժնային ֆոնդի և այլն) նվազեցման հետ կապված գրանցում

☐ 2.4.6. Այլ

2.5. Պայմանագրի տեսակը

2.6. Արժեթղթի տեսակը

2.7. Արժեթղթի անվանական արժեքը

2.8. Գործառնության կատարման օրվա դրությամբ կանոնադրական կապիտալի (բաժնեհավաք կապիտալի, բաժնային ֆոնդի և այլն) չափը

2.9. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը

☐ 2.9.1. Լիազոր մարմնի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 2.9.2. Հաշվետվություն տրամադրող անձի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 2.9.3. Այլ

2.10. Կասկածների նկարագրությունը

2.11. Կապված հաշվետվության անվանումը

2.12. Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն

3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐ

3.1. Անվանում

3.2. Գտնվելու վայր
3.2.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.2.2. Քաղաք կամ գյուղ

3.2.3. Մարզ

3.2.4. Երկիր

3.3. Կազմակերպական- իրավական ձև

3.4. Անհատականացման (հաշվառման) համարը

3.5. ՀՎՀՀ

3.6. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

4. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

4.1. ՀԱԾԱԽՈՐԴ

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ

4.1.1. Անուն (անվանում)

4.1.2. Ազգանուն

4.1.3. Հայրանուն

4.1.4. Ծննդյան ամսաթիվը - -

4.1.5. Բնակության վայր (գտնվելու վայր)
4.1.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.1.5.2. Քաղաք կամ գյուղ

4.1.5.3. Մարզ

4.1.5.3. Երկիր

4.1.6. Հաշվառման վայր
4.1.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.1.6.2. Քաղաք կամ գյուղ

4.1.6.3. Մարզ

4.1.6.4. Երկիր

4.1.7. Քաղաքացիություն

4.1.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակը

4.1.8.1. Փաստաթղթի սերիան և համարը

4.1.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.1.8.3. Ում կողմից է տրամադրվել

4.1.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4.1.9. Կազմակերպական իրավական ձև

4.1.10. Անհատականացման (հաշվառման) համարը

4.1.11. ՀՎՀՀ

4.1.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

4.2. ԳՈՐԾԱՐՔԻ ՄՅՈՒՍ ԿՈՂՄ

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ

4.2.1. Անուն (անվանում)

4.2.2. Ազգանուն

4.2.3. Հայրանուն

4.2.4. Ծննդյան ամսաթիվը - -

4.2.5. Բնակության վայր (գտնվելու վայր)
4.2.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.2.5.2. Քաղաք կամ գյուղ

4.2.5.3. Մարզ

4.2.5.4. Երկիր

4.2.6. Հաշվառման վայր
4.2.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.2.6.2. Քաղաք կամ գյուղ

4.2.6.3. Մարզ

4.2.6.4. Երկիր

4.2.7. Քաղաքացիություն

4.2.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.2.8.1. Փաստաթղթի սերիա և համար

4.2.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.2.8.3. Ում կողմից է տրամադրվել

4.2.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4.2.9. Կազմակերպական-իրավական ձև

4.2.10. Անհատականացման (հաշվառման) համարը

4.2.11. ՀՎՀՀ

4.2.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

4.3. ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ

4.3.1. Լիազորող անձ

(հաճախորդի անուն, ազգանուն (անվանում))

4.3.2. Անուն

4.3.3. Ազգանուն

4.3.4. Հայրանուն

4.3.5. Ծննդյան ամսաթիվը - -

4.3.6. Բնակության վայր

4.3.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.3.6.2. Քաղաք կամ գյուղ

4.3.6.3. Մարզ

4.2.6.4. Երկիր

4.3.7. Հաշվառման վայր

4.3.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.3.7.2. Քաղաք կամ գյուղ

4.3.7.3. Մարզ

4.3.7.4. Երկիր

4.3.8. Քաղաքացիություն

4.3.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.3.9.1. Փաստաթղթի սերիա և համար

4.3.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.3.9.3. Ում կողմից է տրամադրվել

4.3.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4.4. ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ

☐ Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը ☐ Չկա իրական շահառու ☐ Առկա է իրական շահառու

4.4.1. Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)

4.4.2. Անուն

4.4.3. Ազգանուն

4.4.4. Հայրանուն

4.4.5. Ծննդյան ամսաթիվը - -

4.4.6. Բնակության վայր

4.4.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.4.6.2. Քաղաք կամ գյուղ

4.4.6.3. Մարզ

4.4.6.4. Երկիր

4.4.7. Հաշվառման վայր

4.4.7.1. Փողոց, շենք, բնակարան(տուն)

4.4.7.2. Քաղաք կամ գյուղ

4.4.7.3. Մարզ

4.4.7.4. Երկիր

4.4.8. Քաղաքացիություն

4.4.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.4.9.1. Փաստաթղթի սերիա և համար

4.4.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.4.9.3. Ում կողմից է տրամադրվել

4.4.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

5. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ, ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

☐ 5.1. Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցում

5.1.1. Կասեցման ամսաթիվը - -

5.1.2. Կասեցման ժամկետը

5.1.3. Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը

☐ 5.2. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում

5.2.1. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառը

☐ 5.3. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում

5.3.1. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառը

☐ 5.4. Գույքի սառեցում

5.4.1. Սառեցման ամսաթիվը - -

5.4.2. Սառեցման ժամկետը

5.4.3. Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը

6. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ (ՂԵԿԱՎԱՐ)

6.1. Անուն

6.2. Ազգանուն

6.3. Լրացման ամսաթիվը - -

Հավելված 2

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 269-Ն որոշմամբ

ԿԱՐԳ
«ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 009 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 009 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Կենտրոնական դեպոզիտարիայի (այսուհետ՝ Հաշվետվություն տրամադրող անձ) կողմից «Փողերի լվացման և

ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հաշվետվության ձևի լրացման կարգը և հաշվետվությունների ներկայացման դեպքերը:

2. Կարգում հասկացություններն օգտագործվում են Օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Հաշվետվության ձևը լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվառված Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից:

4. Հաշվետվությունը ներկայացվում է Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի կամ «Սի-Բի-էյ-Նեթ» համակարգի միջոցով կամ թղթային տարբերակով:

6. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը կարող է ձեռք բերվել Ֆինանսական դիտարկումների կենտրոնին դիմելու կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջից արտահանելու միջոցով:

7. Հաշվետվությունը «Սի-Բի-էյ-Նեթ» համակարգի միջոցով ներկայացնելիս հաշվետվությանն ուղեկցող նամակի «Վերնագիրը» պարունակում է «Հաշվետվություն ֆինանսական դիտարկումների կենտրոնին» արտահայտությունը:

8. Հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով ներկայացվում են միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու կարգի» 4-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնագիր կնքելուց հետո:

9. Էլեկտրոնային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը ներկայացված է համարվում, եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաշվետվություն տրամադրող անձը չի ստանում սխալի վերաբերյալ հաղորդագրություն:

10. Սխալի վերաբերյալ հաղորդագրություն ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով՝ առանց հաշվետվության անվանման փոփոխության: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

11. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում փակ կնքված (կնիքի առկայության դեպքում) ծրարով՝ ,Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին» նշագրմամբ, հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

1) ֆիզիկապես ներկայացնելու միջոցով,

2) փոստի միջոցով:

12. Կարգի 11-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացված է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացականի, իսկ Կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից համապատասխան անդորրագրի տրամադրման պահից: Կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փոստային հասցեով (ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6):

13. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվության սխալի վերաբերյալ հետադարձ կապ ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

14. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում գործարքում կամ գործարար հարաբերությունում կասկածելիության չափանիշ հայտնաբերելու դեպքում՝ նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ը:

15. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել՝

1) աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

2) ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

16. Հաշվետվության ձևը լրացվում է հնարավորինս պարզ, հակիրճ, միանշանակ ընկալվող հայերեն լեզվով, «յունիկոդ» տառատեսակով և մեծատառերով: «Անվանում» 3.1, «Անուն (անվանում)» 4.1.1, 4.2.1, «Անուն» 4.3.2, 4.4.2, «Ազգանուն» 4.1.2, 4.2.2, 4.3.3 և 4.4.3, «Հայրանուն» 4.1.3, 4.2.3, 4.3.4 և 4.4.4 ենթակետերը լրացվում են անգլերեն, երբ անհրաժեշտ տվյալները Հաշվետվություն տրամադրող անձին հասանելի են միայն անգլերեն լեզվով: Եթե նշված տվյալները հասանելի են այլ օտար լեզվով, ապա նշված ենթակետերը լրացվում են հայերեն կամ անգլերեն լեզվով:

17. Հաշվետվության ձևի թղթային տարբերակը լրացվում է համակարգչի օգնությամբ կամ գրիչով՝ յուրաքանչյուր վանդակում նշելով մեկ նիշ: Հաշվետվության ձևի 1.4.1, 2.4.6, 2.9.3, 2.10, 2.12, 5.1.3, 5.2.1 և 5.3.1 կետերի և ենթակետերի ներքո նախատեսված դաշտերի սահմաններն անբավարար լինելու դեպքում անհրաժեշտ է օգտագործել հավելյալ թղթեր: Այդ թղթերի ձախ կողմում նշվում է այն կետը կամ ենթակետը, որի ներքո նախատեսված դաշտը լրացվում է: Այդ թղթերը ստորագրվում և հաստատվում են կնիքով (կնիքի առկայության դեպքում) և կցվում հիմնական հաշվետվության ձևին: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրվում է նաև այդ ուղղումների կողքին:

18. Հաշվետվության ձևի առաջին էջի ներքևի մասում նշվում է ներկայացվող հաշվետվության էջերի քանակը (ներառյալ՝ առաջին էջը): Հաշվետվության ձևի յուրաքանչյուր էջի ներքևի աջ անկյունում անհրաժեշտ է ստորագրել և հաստատել կնիքով (կնիքի առկայության դեպքում): Հաշվետվության ձևի այն էջերը, որոնք չեն լրացվել, կարող են չներկայացվել:

19. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը լրացվում է՝ օգտագործելով ներկայացված էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները: Էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները փոփոխության ենթակա չեն: Ցանկացած ներկայացված հաշվետվություն, որը պարունակում է փոփոխություն, դիտվում է թերի կամ սխալ լրացված հաշվետվություն և հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

20. Լրացման համար պարտադիր են այն կետերը և ենթակետերը, որոնց վերաբերյալ Հաշվետվություն տրամադրող անձը ունի կամ պարտավոր է ունենալ տեղեկատվություն:

21. Յուրաքանչյուր գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ ներկայացվում է առանձին հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

22. «Հաշվառման համարը» 1.1 կետում լրացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվառման համարը (ութ նիշ):

23. «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2 կետում լրացվում է հաշվետվության ուղարկման օրը, ամիսը, տարին (վեց նիշ):

24. «Հաշվետվության հերթական համարը» 1.3 կետում լրացվում է տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (երեք նիշ):

25. «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետում լրացվում է տվյալ հաշվետվության ուղղման կամ լրացման նպատակով ներկայացվող հաշվետվության հերթական համարը (մեկից երեք նիշ): Այս կետը լրացվում է, եթե հաշվետվությունն ուղարկվում է նախկինում ուղարկված հաշվետվությունում առկա սխալի կամ թերության ուղղման նպատակով, ինչպես նաև եթե սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:

26. Կարգի 9-րդ և 12-րդ կետով սահմանված կարգով ներկայացված համարվող հաշվետվության մեջ ուղղում կամ լրացում կատարելու համար հիմք հանդիսացած պատճառները և հանգամանքները լրացվում են «Ուղղման (լրացման) պատճառը» 1.4.1 ենթակետում: Այդ ենթակետը ենթակա է պարտադիր լրացման, եթե ուղղում կամ լրացում կատարվել է նախորդ հաշվետվությունը ներկայացնելու պահից ոչ շուտ, քան երեք աշխատանքային օր հետո:

27. Ուղղում կամ լրացում կատարելու դեպքում ներկայացվում է նոր հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 5. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

28. «Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը» 2.1 կետում լրացվում են տեղեկացման ենթակա գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման օրը, ամիսը, տարին:

29. «Կանխիկի հետ կապված գործարք» 2.2 կետը նշվում է, եթե կատարվել է կանխիկի հետ կապված գործարք: Այն դեպքում, երբ գործարքը կատարվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակով, սակայն միայն կանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցել 5 միլիոն ՀՀ դրամը, նշվում է «Կանխիկի հետ կապված գործարք» 2.2 կետը, իսկ «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 2.12 կետում նշվում է գործարքի գումարի նաև անկանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

30. «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 2.3 կետը նշվում է եթե գործարքը կատարվել է անկանխիկ եղանակով: Այն դեպքում, երբ գործարքը կատարվել է միաժամանակ անկանխիկ և կանխիկ եղանակով, սակայն միայն անկանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցում 20 միլիոն ՀՀ դրամը, նշվում է «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 2.3 կետը, իսկ «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 2.12 կետում նշվում է գործարքի գումարի նաև կանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

31. Այն դեպքում, երբ գործարքը կատարվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակով, և կանխիկ եղանակով վճարված գումարը գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը, իսկ անկանխիկ եղանակով վճարված գումարը գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը, միաժամանակ նշվում են ,Կանխիկի հետ կապված գործարք» 2.2 և «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 2.3 ենթակետերը, ինչպես նաև լրացվում են դրանց ներքո նախատեսված դաշտերը:

32. «Արժույթը» 2.2.1 և 2.3.1 ենթակետերում լրացվում է այն արժույթը, որով կատարվել է գործարքը:

33. «Գումարը տվյալ արժույթով» 2.2.2 և 2.3.2 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի չափը այն արժույթով, որով կատարվել է գործարքը: Եթե «Արժույթը» 2.2.1 և 2.3.1 ենթակետերում նշվում է ՀՀ դրամ, ապա նույն գումարը լրացվում է և՛ «Գումարը տվյալ արժույթով» 2.2.2 և 2.3.2, և՛ «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 2.2.3 և 2.3.3 ենթակետերում:

34. «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 2.2.3 և 2.3.3 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

35. «Գործառնություն» 2.4 կետում նշվում է այդ կետի ներքո նախատեսված ենթակետերից որևէ մեկը: «Այլ» 2.4.6 ենթակետը նշելու դեպքում «Այլ» 2.4.6 ենթակետի ներքո նախատեսված դաշտում լրացվում է գործառնության անվանումը:

36. «Պայմանագրի տեսակը» 2.5 կետում լրացվում է այն պայմանագիրը, որի հիման վրա կատարվել է «Գործառնություն» 2.4 կետի ներքո նախատեսված գործառնություններից որևէ մեկը:

37. «Արժեթղթի տեսակը» 2.6 կետում լրացվում է այն արժեթղթի տեսակը, որով կատարվել է գործարքը:

38. «Արժեթղթի անվանական արժեքը» 2.7 կետում լրացվում է արժեթղթի անվանական արժեքը՝ արտահայտված ՀՀ դրամով:

39. «Գործառնության կատարման օրվա դրությամբ կանոնադրական կապիտալի (բաժնեհավաք կապիտալի, բաժնային ֆոնդի և այլն) չափը» 2.8 կետում լրացվում է գործառնության կատարման օրվա դրությամբ (մինչև գործառնության կատարումը) կանոնադրական կապիտալի (բաժնեհավաք կապիտալի, բաժնային ֆոնդի և այլն) չափը:

40. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը» 2.9 կետում նշվում են 2.9.1–2.9.2 ենթակետերից մեկը կամ մի քանիսը: Եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշը կամ տիպաբանությունը սահմանված չէ 2.9.1 և 2.9.2 ենթակետերով նախատեսված իրավական ակտերում, ապա նշվում է «Այլ» 2.9.3 ենթակետը: 2.9.1–2.9.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը նշելու դեպքում այդ ենթակետերի ներքո նախատեսված դաշտում լրացվում են Լիազոր մարմնի իրավական ակտով, Հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտով սահմանված կամ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության այլ չափանիշ կամ տիպաբանություն:

41. «Կասկածների նկարագրությունը» 2.10 կետում հնարավորինս մանրամասն նկարագրվում են գործարքի կամ գործարար հարաբերության նախապատմությունը, այն բոլոր հանգամանքները, որոնք վկայել են գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության մասին: Այս կետում կարող են նկարագրվել նաև Հաշվետվություն տրամադրող անձի՝ հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները:

42. «Կապված հաշվետվության անվանումը» 2.11 կետը լրացվում է, եթե ներկայացվող հաշվետվությամբ կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը, ըստ Հաշվետվություն տրամադրող անձի, պատճառահետևանքային կամ այլ առումով կապված է Հաշվետվություն տրամադրող անձի կողմից նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքի հետ: «Կապված հաշվետվության անվանումը» 2.11 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության ձևի «Հաշվառման համարը» 1.1, «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2, «Հաշվետվության հերթական համարը» 1.3, «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետերում (առկայության դեպքում) լրացված տեղեկատվությունը: Թղթային տարբերակով հաշվետվություն ներկայացնելիս, եթե առկա է մեկից ավելի կապված հաշվետվություններ, «Կապված հաշվետվության անվանումը» 2.11 կետը պատճենահանվում և լրացվում է համապատասխան քանակով:

43. «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 2.12 կետում նշվում են Կարգի 29-րդ և 30-րդ կետերով նախատեսված տեղեկությունները, ինչպես նաև գործարքին կամ գործարար հարաբերությանն առնչվող՝ Հաշվետվություն տրամադրող անձի կողմից կարևորվող այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 6. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԸ

44. «Անվանում» 3.1 կետում լրացվում է արժեթուղթ թողարկողի անվանումը:

45. «Գտնվելու վայր» 3.2. կետի ներքո նախատեսված 3.2.1 - 3.2.4 դաշտերում լրացվում է թողարկողի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը):

46. «Կազմակերպական-իրավական ձևը» 3.3 կետում լրացվում է թողարկողի կազմակերպական-իրավական ձևը կամ դրա հապավումը (օրինակ՝ ՍՊԸ, ԲԲԸ և այլն): Օտարերկրյա իրավաբանական անձանց կազմակերպական-իրավական ձևի վերաբերյալ տվյալները լրացվում են լատինատառ:

47. «Անհատականացման համարը» 3.4 կետում լրացվում է թողարկողին գրանցումն իրականացնող մարմնի կողմից տրամադրված անհատականացման համարը:

48. «ՀՎՀՀ» 3.5 կետում լրացվում է թողարկողի՝ հարկ վճարողի հաշվառման համարը:

49. «Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն» 3.6 կետում լրացվում են գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը:

ԳԼՈՒԽ 7. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

50. «Հաճախորդ» 4.1 կետում նշվում է հաճախորդի տեսակը՝ ֆիզիկական անձ, իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր:

51. «Անուն (անվանում)» 4.1.1 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ անունը կամ իրավաբանական անձի անվանումը:

52. «Ազգանուն» 4.1.2. ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը: Այն դեպքում, երբ հստակ չէ, թե որն է հաճախորդի անունը և որը ազգանունը, ապա 4.1.1 և 4.1.2 ենթակետերը լրացվում են Հաշվետվություն տրամադրող անձի հայեցողությամբ:

53. «,Հայրանուն» 4.1.3 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հայրանունը:

54. «Ծննդյան ամսաթիվը» 4.1.4 ենթակետում լրացվում են ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան օրը, ամիսը, տարին:

55. «Բնակության վայր (գտնվելու վայր)» 4.1.5 ենթակետի ներքո նախատեսված 4.1.5.1 - 4.1.5.4 դաշտերում ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում լրացվում է այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում է, իսկ իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը): 4.1.5.1 - 4.1.5.4 դաշտերը չեն լրացվում, եթե ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը և հաշվառման վայրը նույնն է:

56. «Հաշվառման վայր» 4.1.6 ենթակետի ներքո նախատեսված 4.1.6.1-4.1.6.4 դաշտերում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը հաշվառված է:

57. «Քաղաքացիությունը» 4.1.7 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ քաղաքացիությունը:

58. «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշվում է անձնագիրը, նույնականացման քարտը կամ նորմատիվ իրավական ակտով սահմանված՝ ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձը (ինքնություն) հաստատող այլ փաստաթուղթ:

59. «Փաստաթղթի սերիան և համարը» 4.1.8.1, «Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը» 4.1.8.2 դաշտերում համապատասխանաբար լրացվում են «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթղթի սերիան, համարը, ինչպես նաև տրամադրման օրը, ամիսը, տարին:

60. «Ում կողմից է տրամադրվել» 4.1.8.3 դաշտում լրացվում է այն պետական մարմնի անվանումը կամ ծածկագիրը, որի կողմից տրամադրվել է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթուղթը:

61. «Փաստաթղթի վավերականության ժամկետը» 4.1.8.4 դաշտում լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ լրանում է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթղթի վավերականության ժամկետը:

62. Հաշվետվության ձևի 4.1.9 – 4.1.12 ենթակետերը լրացվում են Կարգի 46-49-րդ կետերով սահմանված կարգով:

63. Հաշվետվության ձևի 4.2.1 – 4.2.12 ենթակետերը լրացվում են Կարգի 51-62-րդ կետերով սահմանված կարգով:

64. «Լիազորված անձ» 4.3 կետը լրացվում է, եթե գործարքը կատարվում կամ գործարար հարաբերությունը հաստատվում է լիազորված անձի միջոցով:

65. «Լիազորող անձ» 4.3.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում լիազորված անձն է հանդիսանում տվյալ անձը:

66. Հաշվետվության ձևի 4.3.2 - 4.3.9.2 ենթակետերը և դաշտերը լրացվում են Կարգի 51-61-րդ կետերով սահմանված կարգով:

67. «Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը չի կարողանում ստանալ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու, թե՝ ոչ:

68. «Չկա իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը պարզել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա չէ իրական շահառու (օրինակ՝ այդ մասին գրավոր հայտարարություն է տվել հաճախորդը):

69. «Առկա է իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդից կամ այլ աղբյուրից տեղեկացել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու:

70. «Առկա է իրական շահառու» դաշտը նշելուց հետո «Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)» 4.4.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում իրական շահառուն է հանդիսանում տվյալ անձը:

71. Հաշվետվության ձևի 4.4.2 - 4.4.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են միայն «Առկա է իրական շահառու» դաշտը նշելու դեպքում Կարգի 51-61-րդ կետերով սահմանված կարգով:

72. Հաշվետվության ձևի 4-րդ բաժինը, կախված անձանց թվից, լրացվում է համապատասխան քանակով:

ԳԼՈՒԽ 8. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ, ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

73. Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցում» 5.1 կետը նշվում է, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցվել է:

74. «Կասեցման ամսաթիվը» 5.1.1 ենթակետում լրացվում են գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման օրը, ամիսը, տարին:

75. «Կասեցման ժամկետը» 5.1.2 ենթակետում լրացվում է կասեցման ժամկետը:

76. «Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը» 5.1.3 ենթակետում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պատճառը:

77. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում» 5.2 կետը նշվում է, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է:

78. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառը» 5.2.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժելու համար:

79. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում» 5.3 կետը նշվում է, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցվել է:

80. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառը» 5.3.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցնելու համար:

81. «Գույքի սառեցում» 5.4 կետը նշվում է, երբ հաճախորդի գույքը սառեցվել է:

82. «Սառեցման ամսաթիվ» 5.4.1 ենթակետում լրացվում են գույքի սառեցման օրը, ամիսը, տարին:

83. «Սառեցման ժամկետը» 5.4.2 ենթակետում լրացվում է սառեցման ժամկետը:

84. «Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը» 5.4.3 ենթակետում լրացվում է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերի և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կատարման նպատակով Լիազոր մարմնի կողմից հրապարակված ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը:

ԳԼՈՒԽ 9. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

85. «Անուն» 6.1 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի անունը:

86. «Ազգանուն» 6.2 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի ազգանունը:

87. «Լրացման ամսաթիվը» 6.3 կետում լրացվում են հաշվետվության ձևը լրացնելու օրը, ամիսը, տարին:

Նոտարների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 003 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 233-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին[*]

Նպատակ ունենալով նախատեսել հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների նոր ձևեր, փոփոխության ենթարկել դրանց տրամադրման կարգը և սահմանել ժամկետներին վերաբերող առավել մանրամասն կանոններ,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Նոտարների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 003 հաշվետվության ձևը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2. Հաստատել «Նոտարների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 003 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման» կարգը՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի «ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումը նոտարների (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 003 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի թիվ 57-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 233-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N 270-Ն

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 270-Ն որոշմամբ

ՁԵՎ
ՆՈՏԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 003 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

	-	-	-
1. Հաշվառման համարը	1.2. Հաշվետվության ուղարկման ամսաթիվը	1.3. Հաշվետվության հերթական համարը	1.4. Ուղղման (լրացման) հերթական համարը

1.4.1. Ուղղման (լրացման) պատճառը

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

☐ 2.1. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն

☐ 2.2. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն

3. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը ☐ - ☐ - ☐

☐ 3.2. Կանխիկ եղանակով իրականացվող գործարք

☐ 3.2.1. Արժույթը

☐ 3.2.2. Գումարը տվյալ արժույթով

☐ 3.2.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

☐ 3.3. Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք

☐ 3.3.1. Արժույթը

☐ 3.3.2. Գումարը տվյալ արժույթով

☐ 3.3.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

3.4. Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը

☐ 3.4.1. Անշարժ գույքի առուվաճառք

☐ 3.4.2. Գույքի հավատարմագրային կառավարում

☐ 3.4.3. Փոխառություն

☐ 3.4.4. Դրամական գումարների և արժեթղթերի դեպոզիտի ընդունում և պահպանում

☐ 3.4.5. Պահատվության պայմանագիր

☐ 3.4.6. Իրավաբանական անձանց հիմնադրման, գործունեության կամ կառավարման համար գույքի տրամադրում

☐ 3.4.7. Իրավաբանական անձի բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) օտարում (ձեռքբերում) կամ կանոնադրական կապիտալում (բաժնեհավաք կապիտալում և այլն) մասնակցության, փայի և այլնի օտարում (ձեռքբերում)

☐ 3.4.8. Այլ

3.5. Գործարքի առարկան

☐ 3.5.1. Դրամական միջոց

☐ 3.5.2. Արժեթուղթ

Նկարագրություն

☐ 3.5.3. Շարժական այլ գույք

Նկարագրություն

☐ 3.5.4. Անշարժ գույք

Նկարագրություն

☐ 3.5.4.1. Գրավադրում

3.5.4.2. Գտնվելու վայրը

3.6. Նոտարի սեղանամատյանի համարը ☐

3.7. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.7.1. Լիազոր մարմնի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.7.2. Հաշվետվություն տրամադրող անձի իրավական ակտով սահմանված չափ

☐ 3.7.3. Այլ

- Գնորդ
- Գնորդ (գրավատու, վարկառու)
- Գրավատու
- Փոխառու
- Հավատարմագրային կառավարիչ
- Պահառու
- «Այլ»

3.8. Կասկածների նկարագրությունը

3.9. Կապված հաշվետվության անվանումը ☐ - ☐ - ☐ - ☐

3.10. Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն

4. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

4.1. ՀԱՃԱԽՈՐԴ 1

Հաճախորդ 1-ի կարգավիճակը

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ ☐ Պետական մարմին կամ համայնք

4.1.1. Անուն (անվանում)

4.1.2. Ազգանուն

4.1.3. Հայրանուն

4.1.4. Ծննդյան ամսաթիվը - -

4.1.5. Բնակության վայր (գտնվելու վայր)

4.1.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.1.5.2. Քաղաք կամ գյուղ

4.1.5.3. Մարզ

4.1.5.4. Երկիր

4.1.6. Ֆիզիկական անձի հաշվառման վայր

4.1.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.1.6.2. Քաղաք կամ գյուղ

4.1.6.3. Մարզ

4.1.6.4. Երկիր

- Վաճառող
- Վարկատու (գրավառու)
- Փոխատու
- Կառավարման հիմնադիր
- Պահատու
- Ներդրող
- «Այլ»

4.1.7. Քաղաքացիություն

4.1.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.1.8.1. Անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը

4.1.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.1.8.3. Ում կողմից է տրամադրվել

4.1.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4.1.9. Կազմակերպական- իրավական ձևը

4.1.10. Անհատականացման (հաշվառման) համար

4.1.11. ՀՎՀՀ

4.1.10. Անհատականացման (հաշվառման) համար

4.2. ՀԱՃԱԽՈՐԴ 2

Հաճախորդ 2-ի կարգավիճակը

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ ☐ Պետական մարմին կամ համայնք

4.2.1. Անուն (անվանում)

4.2.2. Ազգանուն

4.2.3. Հայրանուն

4.2.4. Ծննդյան ամսաթիվը - -

4.2.5. Բնակության վայր (գտնվելու վայր)
4.2.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.2.5.2. Քաղաք կամ գյուղ

4.2.5.3. Մարզ

4.2.5.4. Երկիր

4.2.6. Ֆիզիկական անձի հաշվառման վայր
4.2.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.2.6.2. Քաղաք կամ գյուղ

4.2.6.3. Մարզ

4.2.6.4. Երկիր

4.2.7. Քաղաքացիություն

4.2.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.2.8.1. Փաստաթղթի սերիա և համար

4.2.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.2.8.3. Ում կողմից է տրամադրվել

4.2.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4.2.9. Կազմակերպական-իրավական ձև

4.2.10. Անհատականացման (հաշվառման) համարը

4.2.11. ՀՎՀՀ

4.2.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

4.3. ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ
4.3.1. Լիազորող անձ

(հաճախորդի անուն, ազգանուն (անվանում))

4.3.2. Անուն

4.3.3. Ազգանուն

4.3.4. Հայրանուն

4.3.5. Ծննդյան ամսաթիվը - -

4.3.6. Բնակության վայր
4.3.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.3.6.2. Քաղաք կամ գյուղ

4.3.6.3. Մարզ

4.3.6.4. Երկիր

4.3.7. Հաշվառման վայր
4.3.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.3.7.2. Քաղաք կամ գյուղ

4.3.7.3. Մարզ

4.3.7.4. Երկիր

4.3.8. Քաղաքացիություն

4.3.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.3.9.1. Փաստաթղթի սերիա և համար

4.3.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.3.9.3. Ում կողմից է տրամադրվել

4.3.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4.4. ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ

☐ Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը ☐ Չկա իրական շահառու ☐ Առկա է իրական շահառու

4.4.1. Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)

4.4.2. Անուն

4.4.3. Ազգանուն

4.4.4. Հայրանուն

4.4.5. Ծննդյան ամսաթիվը - -

4.4.6. Բնակության վայր

4.4.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.4.6.2. Քաղաք կամ գյուղ

4.4.6.3. Մարզ

4.4.6.4. Երկիր

4.4.7. Հաշվառման վայր

4.4.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.4.7.2. Քաղաք կամ գյուղ

4.4.7.3. Մարզ

4.4.7.4. Երկիր

4.4.8. Քաղաքացիություն

4.4.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.4.9.1. Փաստաթղթի սերիա և համար

4.4.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.4.9.3. Ում կողմից է տրամադրվել

4.4.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

5. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

☐ 5.1. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում

5.1.1. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառները

☐ 5.2. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում

5.2.1. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառները

☐ 5.3. Գույքի սառեցում

5.3.1. Սառեցման ամսաթիվը - -

5.3.2. Սառեցման ժամկետը

5.3.3. Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը

6. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

6.1. Անուն

6.2. Ազգանուն

6.3. Լրացման ամսաթիվը

- -

Հավելված 2
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 270-Ն որոշմամբ

ԿԱՐԳ
ՆՈՏԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 003 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՒԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Նոտարների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 003 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է նոտարների կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հաշվետվության ձևի լրացման կարգը և հաշվետվությունների ներկայացման դեպքերը:

2. Կարգում հասկացություններն օգտագործվում են Օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Հաշվետվության ձևը լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվառված նոտարների կողմից:

4. Հաշվետվությունը ներկայացվում է Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի և 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ 6-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին ենթակետի «ա»-«ե» պարբերությամբ սահմանված դեպքերում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով կամ թղթային տարբերակով:

6. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը կարող է ձեռք բերվել Ֆինանսական դիտարկումների կենտրոնին դիմելու կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջից արտահանելու միջոցով:

7. Հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով ներկայացվում են միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու կարգի» 4-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնագիր կնքելուց հետո:

8. Էլեկտրոնային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը ներկայացված է համարվում, եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում նոտարը չի ստանում սխալի վերաբերյալ հաղորդագրություն:

9. Սխալի վերաբերյալ հաղորդագրություն ստանալու դեպքում նոտարը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով՝ առանց հաշվետվության անվանման փոփոխության: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

10. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում փակ կնքված (կնիքի առկայության դեպքում) ծրարով՝ ,Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին» նշագրմամբ՝ հետևյալ եղանակներից որևէ մեկով.

1) ֆիզիկապես ներկայացնելու միջոցով,

2) փոստի միջոցով:

11. Կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացված է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացականի, իսկ կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ «Հայփոստ» ՓԲԸ կողմից համապատասխան անդորրագրի տրամադրման պահից: Կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փոստային հասցեով (ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6):

12. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվության սխալի վերաբերյալ հետադարձ կապ ստանալու դեպքում նոտարը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

13. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում այդ գործարքը կատարելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

14. Հաշվետվության տրամադրման օրերի հաշվարկը սկսվում է գործարքի կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից և ավարտվում է այդ օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 18:00-ին:

15. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում գործարքում կամ գործարար հարաբերությունում կասկածելիության չափանիշ հայտնաբերելու դեպքում՝ նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ը:

16. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել՝

1) աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

2) ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՋԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

17. Հաշվետվության ձևը լրացվում է հնարավորինս պարզ, հակիրճ, միանշանակ ընկալվող հայերեն լեզվով, «յունիկոդ» տառատեսակով և մեծատառերով: «Անուն (անվանում)» 4.1.1, 4.2.1 կետերը, «Անուն» 4.3.2, 4.4.2 կետերը, «Ազգանուն» 4.1.2, 4.2.2, 4.3.3, 4.4.3, «Հայրանուն» 4.1.3, 4.2.3, 4.3.4, 4.4.4 ենթակետերը լրացվում են անգլերեն, երբ անհրաժեշտ տվյալները նոտարներին հասանելի են միայն անգլերեն լեզվով: Եթե նշված տվյալները հասանելի են այլ օտար լեզվով, ապա նշված ենթակետերը լրացվում են հայերեն կամ անգլերեն լեզվով:

18. Հաշվետվության ձևի թղթային տարբերակը լրացվում է համակարգչի օգնությամբ կամ գրիչով՝ յուրաքանչյուր վանդակում նշելով մեկ նիշ: Հաշվետվության ձևի 1.4.1, 3.4.8, 3.5.2, 3.5.3, 3.5.4, 3.5.4.2, 3.7.3, 3.8, 3.10 5.1.1 և 5.2.1 կետերի և ենթակետերի ներքո նախատեսված դաշտերի սահմաններն անբավարար լինելու դեպքում անհրաժեշտ է օգտագործել հավելյալ թղթեր: Այդ թղթերի ձախ կողմում նշվում է այն կետը կամ ենթակետը, որի ներքո նախատեսված դաշտը լրացվում է: Այդ թղթերը ստորագրվում և հաստատվում են կնիքով և կցվում հիմնական հաշվետվության ձևին: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրվում է նաև այդ ուղղումների կողքին:

19. Հաշվետվության ձևի առաջին էջի ներքևի մասում նշվում է ներկայացվող հաշվետվության էջերի քանակը (ներառյալ՝ առաջին էջը): Հաշվետվության ձևի յուրաքանչյուր էջի ներքևի աջ անկյունում անհրաժեշտ է ստորագրել և հաստատել կնիքով: Հաշվետվության ձևի այն էջերը, որոնք չեն լրացվել, կարող են չներկայացվել:

20. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը լրացվում է՝ օգտագործելով ներկայացված էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները: Էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները փոփոխության ենթակա չեն: Ցանկացած ներկայացված հաշվետվություն, որը պարունակում է փոփոխություն, դիտվում է թերի կամ սխալ լրացված հաշվետվություն և հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

21. Լրացման համար պարտադիր են այն կետերը և ենթակետերը, որոնց վերաբերյալ նոտարներն ունեն կամ պարտավոր են ունենալ տեղեկատվություն:

22. Յուրաքանչյուր գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ ներկայացվում է առանձին հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

23. «Հաշվառման համարը» 1.1 կետում լրացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոն կողմից տրամադրված հաշվառման համարը (ութ նիշ):

24. «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2 կետում լրացվում են հաշվետվության ուղարկման օրը, ամիսը, տարին (վեց նիշ):

25. «Հաշվետվության հերթական համարը» 1.3 կետում լրացվում է տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (երեք նիշ):

26. «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետում լրացվում է տվյալ հաշվետվության ուղղման կամ լրացման նպատակով ներկայացվող հաշվետվության հերթական համարը (մեկից երեք նիշ): Այս կետը լրացվում է, եթե հաշվետվությունն ուղարկվում է նախկինում ուղարկված հաշվետվությունում առկա սխալի կամ թերության ուղղման նպատակով, ինչպես նաև եթե սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:

27. Կարգի 8-րդ և 11-րդ կետերով սահմանված կարգով ներկայացված համարվող հաշվետվության մեջ ուղղում և լրացում կատարելու համար հիմք հանդիսացած պատճառները և հանգամանքները լրացվում են «Ուղղման (լրացման) պատճառը» 1.4.1 ենթակետում: Այս ենթակետը ենթակա է պարտադիր լրացման, եթե ուղղում կամ լրացում կատարվել է նախորդ հաշվետվությունը ներկայացնելու պահից երեք աշխատանքային օր հետո:

28. Ուղղում կամ լրացում կատարելու դեպքում ներկայացվում է նոր հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

29. «Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն» 2.1 կետը նշվում է, եթե՝

1) անկանխիկ եղանակով իրականացվող գործարքի գումարը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը,
2) անկանխիկ եղանակով իրականացվող անշարժ գույքի առուվաճառքի գործարքի գումարը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով գերազանցում է 50 միլիոն ՀՀ դրամը,
3) կանխիկ եղանակով իրականացվող գործարքի գումարը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը:

30. Կարգի 29-րդ կետի պահանջը կիրառվում է միայն հաճախորդի համար նախապատրաստվող կամ իրականացվող հետևյալ գործարքների կամ գործարար հարաբերությունների մասով՝

1) անշարժ գույքի առուվաճառք,
2) հաճախորդի գույքի կառավարում,
3) բանկային և արժեթղթային հաշիվների կառավարում,
4) իրավաբանական անձանց հիմնադրման, գործունեության կամ կառավարման համար գույքի տրամադրում,
5) իրավաբանական անձանց հիմնադրման, գործունեության կամ կառավարման գործառույթների իրականացում, ինչպես նաև իրավաբանական անձանց կանոնադրական (բաժնեհավաք և այլն) կապիտալում բաժնեմասի (մասնակցության, փայի և այլն) օտարում (ձեռքբերում), կամ իրավաբանական անձանց անվանական կամ շուկայական արժեքով բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի և այլն) օտարում (ձեռքբերում):

31. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն» 2.2 կետը նշվում է, եթե ներկայացվում է Կարգի 30-րդ կետով նախատեսված գործարքի կամ գործարար հարաբերության մասին կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

32. «Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը» 3.1 կետում լրացվում են տեղեկացման ենթակա գործարքի կատարման (օրինակ՝ վավերացման, հաստատման) կամ գործարար հարաբերության հաստատման օրը, ամիսը, տարին: Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելիս, եթե գործարքը դեռևս չի կատարվել կամ գործարար հարաբերությունը դեռևս չի հաստատվել, լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ ներկայացվել է գործարք կատարելու կամ գործարար հարաբերություն հաստատելու առաջարկը, իսկ այն դեպքում, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է, նշվում են գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման օրը, ամիսը, տարին:

33. «Կանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.2 կետը նշվում է, եթե գործարքը կատարվել է կանխիկ եղանակով: Այն դեպքում, երբ գործարքն իրականացվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակով, սակայն միայն կանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցել 5 միլիոն ՀՀ դրամը, ապա նշվում է «Կանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.2 կետը, իսկ «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.10 կետում նշվում է գործարքի գումարի նաև անկանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

34. «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.3 կետը նշվում է, եթե գործարքը կատարվել է անկանխիկ եղանակով: Այն դեպքում, երբ գործարքն իրականացվել է միաժամանակ անկանխիկ և կանխիկ եղանակով, սակայն միայն անկանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցում 20 միլիոն ՀՀ դրամը, իսկ անշարժ գույքի առուվաճառքի գործարքի դեպքում 50 միլիոն ՀՀ դրամը, ապա նշվում է «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.3 կետը, իսկ «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.10 կետում նշվում է գործարքի կամ գործարար հարաբերության գումարի նաև կանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

35. Այն դեպքում, երբ գործարքն իրականացվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակով և կանխիկ եղանակով վճարված գումարը գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը, անկանխիկ եղանակով վճարված գումարը գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը, իսկ անշարժ գույքի առուվաճառքի գործարքի դեպքում՝ 50 միլիոն ՀՀ դրամը, ապա միաժամանակ նշվում են «Կանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.2 և «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.3 կետերը, ինչպես նաև լրացվում են դրանց ներքո նախատեսված ենթակետերը:

36. «Արժույթը» 3.2.1 և 3.3.1 ենթակետերում լրացվում է այն արժույթը, որով կատարվել է գործարքը:

37. «Գումարը տվյալ արժույթով» 3.2.2 և 3.3.2 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի չափը, այն արժույթով, որով կնքվել է գործարքը: Եթե «Արժույթը» 3.2.1 և 3.3.1 ենթակետերում լրացվում է ՀՀ դրամ, ապա նույն գումարը լրացվում է և «Գումարը տվյալ արժույթով» 3.2.2 ու 3.3.2, և «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.3 ու 3.3.3 ենթակետերում:

38. «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.3 և 3.3.3 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

39. «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» 3.4 կետում նշվում է այդ կետի ներքո նախատեսված ենթակետերից որևէ մեկը: «Այլ» 3.4.8 ենթակետը նշելու դեպքում այդ ենթակետի ներքո նախատեսված դաշտում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության անվանումը: Կախված գործարքի տեսակից՝ հաշվետվության ձևի «Գործարքի կամ գործարար հարաբերության նկարագրություն» 3-րդ բաժնում լրացվում են միայն այն կետերը և ենթակետերը, որոնք վերաբերում են տվյալ տեսակի գործարքին:

40. «Գործարքի առարկան» 3.5 կետում նշվում է գործարքի առարկայի տեսակը՝ դրամական միջոց, արժեթուղթ, շարժական այլ գույք կամ անշարժ գույք:

41. «Դրամական միջոց» 3.5.1 ենթակետը նշվում է, եթե գործարքի առարկան ՀՀ դրամ կամ արտարժույթ է:

42. «Արժեթուղթ» 3.5.2 ենթակետը նշվում է, եթե գործարքի առարկան արժեթուղթ է: 3.8.2 ենթակետի ներքո առկա «Նկարագրություն» դաշտում լրացվում են արժեթղթի տեսակը, այն թողարկողի, տեղաբաշխողի վերաբերյալ տվյալները, ինչպես նաև արժեթուղթը նույնականացնող այլ տվյալների վերաբերյալ տեղեկությունները:

43. «Շարժական այլ գույք» 3.5.3 ենթակետը նշվում է, եթե գործարքի առարկան հանդիսանում է այլ գույք, քան 3.5.1 և 3.5.2 ենթակետերում նշված գույքը, օրինակ, ավտոմեքենա: 3.5.3 ենթակետի ներքո առկա «Նկարագրություն» դաշտում լրացվում են այդ գույք անվանման և նույնականացման այլ տվյալների վերաբերյալ տեղեկությունները:

44. «Անշարժ գույք» 3.5.4 ենթակետը նշվում է, եթե գործարքի առարկան անշարժ գույք է: 3.8.4 ենթակետի ներքո առկա «Նկարագրություն» դաշտում լրացվում են այդ գույքի անվանման, նույնացման համարի և անհատականացնող այլ տվյալների մասին տեղեկությունները. օրինակ, եթե անշարժ գույքը հողամաս է, ապա պետք է նշվի հողամասի չափի և նշանակության (տնամերձ, արտադրական, գյուղատնտեսական) վերաբերյալ տեղեկություններ:

45. «Գրավադրում» 3.5.4.1 դաշտը նշվում է, եթե անշարժ գույքի առուվաճառքի առարկան (կամ այլ անշարժ գույք) գրավադրվել է երրորդ կողմի մոտ որպես այդ պայմանագրից բխող պարտավորության ապահովման միջոց: Այն դեպքում, եթե գրավադրվել է առուվաճառքի պայմանագրի առարկա չհանդիսացող այլ գույք, ապա այդ գույքի վերաբերյալ տվյալները լրացվում են «Անշարժ գույք» 3.8.4 ենթակետի ներքո առկա «Նկարագրություն» դաշտում, իսկ գտնվելու վայրը՝ «Անշարժ գույքի գտնվելու վայրը» 3.8.4.3 կետում:

46. «Անշարժ գույքի գտնվելու վայրը» 3.5.4.2 դաշտում լրացվում է անշարժ գույքի գտնվելու վայրի (հասցեի) վերաբերյալ տեղեկատվությունը, որը պարունակում է առնվազն հետևյալ վավերապայմանները՝ մարզ, համայնք, ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտ (թաղամաս, հրապարակ, փողոց, պողոտա, նրբանցք, անցում, փակուղի, զբոսայգի և այլն):

47. «Նոտարի սեղանամատյանի համարը» 3.6 կետում լրացվում է պայմանագրի վրա նշված՝ նոտարի սեղանամատյանի համարը:

48. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը» 3.7 կետում նշվում են 3.7.1 - 3.7.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը: Եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշը կամ տիպաբանությունը սահմանված չէ 3.7.1 - 3.7.2 ենթակետերով նախատեսված իրավական ակտերում, ապա նշվում է «Այլ» 3.7.3 ենթակետը: 3.7.1 - 3.7.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը նշելու դեպքում այդ ենթակետերի ներքո նախատեսված դաշտում լրացվում է Լիազոր մարմնի իրավական ակտով, նոտարների ներքին իրավական ակտով սահմանված կամ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության այլ չափանիշ կամ տիպաբանություն:

49. «Կասկածների նկարագրությունը» 3.8 կետում հնարավորինս մանրամասն նկարագրվում են գործարքի կամ գործարար հարաբերության նախապատմությունը, այն բոլոր հանգամանքները, որոնք վկայել են գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության մասին: Այս կետում կարող են նկարագրվել նաև նոտարների՝ հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները:

50. «Կապված հաշվետվության անվանումը» 3.9 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության անվանումը, եթե ներկայացվող հաշվետվությամբ կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը, ըստ նոտարների, պատճառահետևանքային կամ այլ առումով կապված է նոտարների կողմից նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքի կամ գործարար հարաբերության հետ: «Կապված հաշվետվության անվանումը» 3.9 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության ձևի «Հաշվառման համարը» 1.1, «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2, «Հաշվետվության հերթական համարը» 1.3, «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետերում (առկայության դեպքում) լրացված տեղեկատվությունը: Թղթային տարբերակով հաշվետվություն ներկայացնելիս, եթե առկա է մեկից ավելի կապված հաշվետվություն, «Կապված հաշվետվության անվանումը» 3.9 կետը պատճենահանվում և լրացվում է համապատասխան քանակով:

51. «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.10 կետում նշվում են Կարգի 33-րդ և 34-րդ կետերով նախատեսված տեղեկությունները, ինչպես նաև գործարքին կամ գործարար հարաբերությանն առնչվող՝ նոտարների կողմից կարևորվող այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 7. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

52. «Հաճախորդ 1» 4.1 կետի ներքո նախատեսված «Հաճախորդի կարգավիճակը» դաշտում նշվում է գնորդ, գնորդ (գրավատու, վարկառու), գրավատու, փոխառու, հավատարմագրային կառավարիչ, պահառու կամ «Այլ»: «Այլ» տարբերակը նշելու դեպքում այդ կետի ներքո նախատեսված դաշտում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության կողմի կարգավիճակը՝ կախված գործարքի կամ գործարար հարաբերության տեսակից:

53. «Հաճախորդ 1» 4.1 կետում նշվում է հաճախորդի տեսակը՝ ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր, իրավաբանական անձ կամ պետական մարմին կամ համայնք:

54. «Անուն (անվանում)» 4.1.1 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ անունը կամ իրավաբանական անձի կամ պետական մարմնի կամ համայնքի անվանումը:

55. «Ազգանուն» 4.1.2 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը: Այն դեպքում, երբ հստակ չէ, թե որն է հաճախորդի անունը և որը ազգանունը, ապա 4.1.1 և 4.1.2 ենթակետերը լրացվում են նոտարների հայեցողությամբ:

56. «Հայրանուն» 4.1.3 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հայրանունը:

57. «Ծննդյան ամսաթիվը» 4.1.4 ենթակետում լրացվում են ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան օրը, ամիսը, տարին:

58. «Բնակության վայր (գտնվելու վայր)» 4.1.5 ենթակետի ներքո նախատեսված 4.1.5.1 - 4.1.5.4 դաշտերում լրացվում է այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում է, իսկ իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը): 4.1.5.1 - 4.1.5.4 դաշտերը չեն լրացվում, եթե Ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը և հաշվառման վայրը նույն է:

59. «Հաշվառման վայր» 4.1.6 ենթակետի ներքո նախատեսված 4.1.6.1 - 4.1.6.4 դաշտերում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը հաշվառված է:

60. «Քաղաքացիությունը» 4.1.7 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ քաղաքացիությունը:

61. «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշվում է անձնագիրը, նույնականացման քարտը կամ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձը (ինքնությունը) հաստատող այլ փաստաթուղթ:

62. «Փաստաթղթի սերիան և համարը» 4.1.8.1, «Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը» 4.1.8.2 դաշտերում համապատասխանաբար լրացվում են «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթղթի սերիան, համարը, ինչպես նաև տրամադրման օրը, ամիսը, տարին:

63. «Ում կողմից է տրամադրվել» 4.1.8.3 դաշտում լրացվում է այն պետական մարմնի անվանումը կամ ծածկագիրը, որի կողմից տրամադրվել է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթուղթը:

64. «Փաստաթղթի վավերականության ժամկետը» 4.1.8.4 դաշտում լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ լրանում է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթղթի վավերականության ժամկետը

65. «Կազմակերպական-իրավական ձևը» 4.1.9 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը կամ դրա հապավումը (օրինակ՝ ՍՊԸ, ԲԲԸ և այլն): Օտարերկրյա իրավաբանական անձանց կազմակերպական-իրավական ձևի վերաբերյալ տվյալները լրացվում են լատինատառ:

66. «Անհատականացման (հաշվառման) համարը» 4.1.10 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցումը (հաշվառումը) իրականացնող մարմնի կողմից տրամադրված անհատականացման (հաշվառման) համարը:

67. «ՀՎՀՀ» 4.1.11 ենթակետում լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը:

68. «Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն» 4.1.12 ենթակետում լրացվում են գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը:

69. «Հաճախորդ 2» 4.2 կետի ներքո նախատեսված «Հաճախորդի կարգավիճակը» դաշտում նշվում է վաճառող, վարկատու (գրավառու), փոխատու, կառավարման հիմնադիր, պահատու կամ «Այլ»: «Այլ» տարբերակը նշելու դեպքում այդ կետի ներքո նախատեսված դաշտում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության մյուս կողմի կարգավիճակը՝ կախված գործարքի կամ գործարար հարաբերության տեսակից:

70. Հաշվետվության ձևի 4.2.1 - 4.2.12 ենթակետերը լրացվում են Կարգի 54 - 68 կետերով սահմանված կարգով:

71. «Լիազորված անձ» 4.3 կետը լրացվում է, եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կատարվում է լիազորված անձի միջոցով:

72. «Լիազորող անձ» 4.3.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում լիազորված անձն է հանդիսանում տվյալ անձը:

73. Հաշվետվության ձևի 4.3.2 - 4.3.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են Կարգի 54-64 կետերով սահմանված կարգով:

74. «Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը» դաշտը նշվում է այն դեպքում, երբ նոտարները չեն կարողանում ստանալ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու, թե՝ ոչ:

75. «Չկա իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ նոտարները պարզել են, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա չէ իրական շահառու (օրինակ՝ այդ մասին գրավոր հայտարարություն է տվել հաճախորդը):

76. «Առկա է իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ նոտարները հաճախորդից կամ այլ աղբյուրից տեղեկացել են, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու:

77. «Առկա է իրական շահառու» դաշտը նշելուց հետո «Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)» 4.4.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում իրական շահառուն է հանդիսանում տվյալ անձը:

78. «Իրական շահառուի տվյալները» 4.4.2 - 4.4.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են միայն «Առկա է իրական շահառու» դաշտը նշելու դեպքում՝ Կարգի 54 - 64 կետերով սահմանված կարգով:

79. Հաշվետվության ձևի 4-րդ բաժինը, կախված անձանց թվից, լրացվում է համապատասխան քանակով:

ԳԼՈՒԽ 8. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

80. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում» 5.1 կետը նշվում է, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է:

81. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառները» 5.1.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժելու համար:

82. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում» 5.2 կետը նշվում է, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցվել է:

83. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառները» 5.2.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցնելու համար:

84. «Գույքի սառեցում» 5.3 կետը նշվում է, երբ հաճախորդի գույքը սառեցվել է:

85. «Սառեցման ամսաթիվ» 5.3.1 ենթակետում լրացվում են գույքի սառեցման օրը, ամիսը, տարին:

86. «Սառեցման ժամկետը» 5.3.2 ենթակետում լրացվում է սառեցման ժամկետը:

87. «Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը» 5.3.3 ենթակետում լրացվում է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերի և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կատարման նպատակով Ֆինանսական դիտարկումների կենտրոն կողմից հրապարակած ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը:

ԳԼՈՒԽ 9. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

88. «Անուն» 6.1 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի անունը:

89. «Ազգանուն» 6.2 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի ազգանունը:

90. «Լրացման ամսաթիվը» 6.3 կետում լրացվում է հաշվետվության ձևը լրացնելու օրը, ամիսը, տարին:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Խաղատների, շահումով խաղերի, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղերի կազմակերպիչների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 004 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 234-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին[*]

Նպատակ ունենալով նախատեսել հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների և կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ հաշվետվությունների նոր ձևեր, փոփոխության ենթարկել դրանց տրամադրման կարգը և սահմանել ժամկետներին վերաբերող առավել մանրամասն կանոններ,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Խաղատների, շահումով խաղերի, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղերի կազմակերպիչների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 004 հաշվետվության ձևը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2. Հաստատել «Խաղատների, շահումով խաղերի, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղերի կազմակերպիչների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 004 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի «ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումը խաղատների և շահումով խաղ կազմակերպող անձանց, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձանց (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 004 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի թիվ 58-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 234-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N 271-Ն

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 271-Ն որոշմամբ

ՁԵՎ
ԽԱՂԱՏՆԵՐԻ, ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ՆԵՐԱՌՅԱԼ՝ ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 004 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

1.1. Հաշվառման համարը	1.2. Հաշվետվության ուղարկման ամսաթիվը	1.3. Հաշվետվության հերթական համարը	1.4. Ուղղման (լրացման) հերթական համարը

1.4.1. Ուղղման (լրացման) պատճառը

2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

☐ 2.1. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն

☐ 2.2. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն

3. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3. Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը ☐☐ - ☐☐ - ☐☐☐☐

☐ 3.2. Կանխիկ եղանակով իրականացված գործարք ☐ 3.3. Անկանխիկ եղանակով իրականացված գործարք

3.2.1. Գումարը

3.3.1. Գումարը

3.4. Գործառնության տեսակ

☐ 3.4.1. Խաղանիշերի գնում

☐ 3.4.2. Խաղադրույքի կատարում

☐ 3.4.3. Շահումի վճարում կամ տրամադրում

☐ 3.4.4. Նախորդ երեքի հետ կապված ֆինանսական գործարք

3.5. Շահումով խաղի տեսակը

☐ 3.5.1. Մեքենայացված խաղ

☐ 3.5.2. Կենդանի խաղ

☐ 3.5.3. Ինտերնետի կամ այլ գլոբալ համակարգի միջոցով կազմակերպվող խաղ

☐ 3.5.4. Համակարգված ցանցային կապուղիների միջոցով կազմակերպվող խաղ

3.6. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը

☐ 3.6.1. Լիազոր մարմնի իրավական ակտով սահմանված չափանիշներ և տիպաբանություններ

☐ 3.6.2. Հաշվետվություն տրամադրող անձի իրավական ակտով սահմանված չափանիշներ կամ տիպաբանություններ

☐ 3.6.3. Այլ

3.7. Կասկածների նկարագրությունը

3.8. Կապված հաշվետվության անվանումը

3.9. Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն

4. ՀԱՃԱԽՈՐԴ

4.1. Անուն

4.2. Ազգանուն

4.3. Հայրանուն

4.4. Ծննդյան ամսաթիվը - -

4.5. Բնակության վայր
4.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.5.2. Քաղաք կամ գյուղ

4.5.3. Մարզ

4.5.4. Երկիր

4.6. Հաշվառման վայր
4.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.6.2. Քաղաք կամ գյուղ

4.6.3. Մարզ

4.6.4. Երկիր

4.7. Քաղաքացիություն

4.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.8.1. Անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը

4.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.8.3. Ում կողմից է տրամադրվել

4.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

5. ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ

☐ Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը ☐ Չկա իրական շահառու ☐ Առկա է իրական շահառու

5.1. Անուն

5.2. Ազգանուն

5.3. Հայրանուն

5.4. Ծննդյան ամսաթիվը - -

5.5. Բնակության վայր
5.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

5.5.2. Քաղաք կամ գյուղ

5.5.3. Մարզ

5.5.4. Երկիր

5.5. Բնակության վայր
5.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

5.6. Հաշվառման վայր
5.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

5.6.2. Քաղաք կամ գյուղ

5.6.3. Մարզ

5.6.4. Երկիր

5.7. Քաղաքացիություն

5.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

5.8.1. Փաստաթղթի սերիա և համար

5.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

5.8.3. Ում կողմից է տրամադրվել

5.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

6. ԳՈՐԾԱՐՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

☐ 6.1. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում

6.1.1. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառները

☐ 6.2. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում

6.2.1. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառները

☐ 6.3. Գույքի սառեցում

6.3.1. Սառեցման ամսաթիվը - -

6.3.2. Սառեցման ժամկետը

6.3.3. Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը

7. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

7.1. Անուն

7.2. Ազգանուն

7.3. Լրացման ամսաթիվը - -

Հավելված 2
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 271-Ն որոշմամբ

ԿԱՐԳ
ԽԱՂԱՏՆԵՐԻ, ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ՆԵՐԱՌՅԱԼ՝ ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 004 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Խաղատների, շահումով խաղերի, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղերի կազմակերպիչների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 004 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է խաղատների, շահումով խաղերի, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղերի կազմակերպիչների (այսուհետ՝ Հաշվետվություն տրամադրող անձ) կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հաշվետվության ձևի լրացման կարգը և հաշվետվությունների ներկայացման դեպքերը:

2. Կարգում հասկացություններն օգտագործվում են Օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Հաշվետվության ձևը լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվառված Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից:

4. Հաշվետվությունը ներկայացվում է Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի և 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքերում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի կամ «Սի-Բի-էյ-Նեթ» համակարգի միջոցով կամ թղթային տարբերակով:

6. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը կարող է ձեռք բերվել Ֆինանսական դիտարկումների կենտրոնին դիմելու կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջից արտահանելու միջոցով:

7. Հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով ներկայացվում են միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու կարգի» 4-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնագիր կնքելուց հետո:

8. Էլեկտրոնային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը ներկայացված է համարվում, եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաշվետվություն տրամադրող անձը չի ստանում սխալի վերաբերյալ հաղորդագրություն:

9. Սխալի վերաբերյալ հաղորդագրություն ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով՝ առանց հաշվետվության անվանման փոփոխության: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

10. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում փակ կնքված (կնիքի առկայության դեպքում) ծրարով՝ «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին» նշագրումով՝ հետևյալ եղանակներից որևէ մեկով.

1) ֆիզիկապես ներկայացնելու միջոցով,

2) փոստի միջոցով:

11. Կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացված է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական

բանկի կողմից ստացականի, իսկ Կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ «Հայփոստ» ՓԲԸ կողմից համապատասխան անդորրագրի տրամադրման պահից: Կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փոստային հասցեով (ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6):

12. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվության սխալի վերաբերյալ հետադարձ կապ ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

13. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում այդ գործարքը կատարելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

14. Հաշվետվության տրամադրման օրերի հաշվարկը սկսվում է գործարքի կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից և ավարտվում է այդ օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 18:00-ին:

15. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում գործարքում կամ գործարար հարաբերությունում կասկածելիության հիմք կամ չափանիշ հայտնաբերելու դեպքում՝ նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ն:

16. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել.

1) աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

2) ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

17. Հաշվետվության ձևը լրացվում է հնարավորինս պարզ, հակիրճ, միանշանակ ընկալվող հայերեն լեզվով, «յունիկոդ» կոդավորմամբ տառատեսակով և մեծատառերով: «Անուն» 4.1, «Ազգանուն» 4.2, «Հայրանուն» 4.3 ենթակետերը լրացվում են անգլերեն, երբ անհրաժեշտ տվյալները Հաշվետվություն տրամադրող անձին հասանելի են միայն անգլերեն լեզվով: Եթե նշված տվյալները հասանելի են այլ օտար լեզվով, ապա նշված ենթակետերը լրացվում են հայերեն կամ անգլերեն լեզվով:

18. Հաշվետվության ձևի թղթային տարբերակը լրացվում է համակարգչի օգնությամբ կամ գրիչով՝ յուրաքանչյուր վանդակում նշելով մեկ նիշ: Հաշվետվության ձևի 1.4.1, 3.6.3, 3.7, 3.9, 6.1.1, 6.2.1 կետերի ներքո նախատեսված դաշտերի սահմաններն անբավարար լինելու դեպքում անհրաժեշտ է օգտագործել հավելյալ թղթեր: Այդ թղթերի ձախ կողմում նշվում է այն կետը կամ ենթակետը, որի ներքո նախատեսված դաշտը լրացվում է: Այդ թղթերը ստորագրվում և հաստատվում են կնիքով (կնիքի առկայության դեպքում) և կցվում հիմնական հաշվետվության ձևին: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրվում է նաև այդ ուղղումների կողքին:

19. Հաշվետվության ձևի առաջին էջի ներքևի մասում նշվում է ներկայացվող հաշվետվության էջերի քանակը (ներառյալ՝ առաջին էջը): Հաշվետվության ձևի յուրաքանչյուր էջի ներքևի աջ անկյունում անհրաժեշտ է ստորագրել և հաստատել կնիքով (կնիքի առկայության դեպքում): Հաշվետվության ձևի այն էջերը, որոնք չեն լրացվել կարող են չներկայացվել:

20. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը լրացվում է՝ օգտագործելով ներկայացված էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները: Էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները փոփոխության ենթակա չեն: Ցանկացած ներկայացված հաշվետվություն, որը պարունակում է փոփոխություն, դիտվում է թերի կամ սխալ լրացված հաշվետվություն և հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

21. Լրացման համար պարտադիր են այն կետերը և ենթակետերը, որոնց վերաբերյալ Հաշվետվություն տրամադրող անձը ունի կամ պարտավոր է ունենալ տեղեկատվություն:

22. Յուրաքանչյուր գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ ներկայացվում է առանձին հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

23. «Հաշվառման համարը» 1.1 կետում լրացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվառման համարը (ութ նիշ):

24. «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2 կետում լրացվում է հաշվետվության ուղարկման օրը, ամիսը, տարին (վեց նիշ):

25. «Հաշվետվության հերթական համարը» 1.3 կետում լրացվում է տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (երեք նիշ):

26. «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետում լրացվում է տվյալ հաշվետվության ուղղման կամ լրացման նպատակով ներկայացվող հաշվետվության հերթական համարը (մեկից երեք նիշ): Այս կետը լրացվում է, եթե հաշվետվությունն ուղարկվում է նախկինում ուղարկված հաշվետվությունում առկա սխալի կամ թերության ուղղման նպատակով, ինչպես նաև, եթե սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:

27. Կարգի 8-րդ և 11-րդ կետերով սահմանված կարգով ներկայացված համարվող հաշվետվության մեջ ուղղում կամ լրացում կատարելու համար հիմք հանդիսացած պատճառները և հանգամանքները լրացվում են «Ուղղման (լրացման) պատճառը» 1.4.1 ենթակետում: Այս ենթակետը ենթակա է պարտադիր լրացման, եթե ուղղում կամ լրացում կատարվել է նախորդ հաշվետվությունը ներկայացնելու պահից երեք աշխատանքային օր հետո:

28. Ուղղում կամ լրացում կատարելու դեպքում ներկայացվում է նոր հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

29. «Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն» 2.1 կետը նշվում է, եթե խաղանիշերի մեկ անկանխիկ գնումը, մեկ անկանխիկ խաղադրույքը կամ ստացված մեկ անկանխիկ շահումը կամ 24 ժամվա ընթացքում խաղանիշերի անկանխիկ գնումների, անկանխիկ խաղադրույքների կամ ստացված անկանխիկ շահումների հանրագումարը գերազանցում է 20 միլիոն դրամը, ինչպես նաև, եթե խաղանիշերի մեկ կանխիկ գնումը, մեկ կանխիկ խաղադրույքը, ստացված մեկ կանխիկ շահումը կամ 24 ժամվա ընթացքում խաղանիշերի կանխիկ գնումների, կանխիկ խաղադրույքների կամ ստացված կանխիկ շահումների հանրագումարը գերազանցում է 5 միլիոն դրամը:

30. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն» 2.2 կետը նշվում է, եթե ներկայացվում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

31. «Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը» 3.1 կետում լրացվում են տեղեկացման ենթակա գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման օրը, ամիսը, տարին: Այնպիսի գործարքների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելիս, որոնց հանրագումարային արժեքը 24 ժամվա ընթացքում գերազանցում է 20 միլիոն դրամը, նշվում է դրանցից վերջինի կնքման ամսաթիվը: Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելիս, եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը դեռևս չի կատարվել, լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ ներկայացվել է գործարք կատարելու կամ գործարար հարաբերություն հաստատելու առաջարկը, իսկ այն դեպքում, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է, նշվում են գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման օրը, ամիսը, տարին:

32. «Կանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.2 կետը նշվում է, եթե գործարքը կատարվել է կանխիկ եղանակով: Այն դեպքում, երբ գործարքն իրականացվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակներով, սակայն միայն կանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցել 5 միլիոն դրամը, ապա նշվում է «Կանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.2 կետը, իսկ «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.9 կետում նշվում է գործարքի գումարի նաև անկանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

33. «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.3 կետում նշվում է գործարքի՝ անկանխիկ եղանակով իրականացված լինելու մասին տեղեկատվությունը: Այն դեպքում, երբ գործարքը իրականացվել է միաժամանակ անկանխիկ և կանխիկ եղանակներով, սակայն միայն անկանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցում 20 միլիոն ՀՀ դրամը, ապա նշվում է «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.3 կետը, իսկ «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.9 կետում նշվում է գործարքի գումարի նաև կանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

34. Այն դեպքում, երբ գործարքն իրականացվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակներով, և կանխիկ եղանակով վճարված գումարը գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը, իսկ անկանխիկ եղանակով վճարված գումարը գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը, ապա միաժամանակ նշվում են «Կանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.2 և «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.3 կետերը, ինչպես նաև լրացվում են դրանց ներքո նախատեսված ենթակետերը:

35. «Գումարը» 3.2.1 և 3.3.1 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի չափը ՀՀ դրամով:

36. «Գործառնության տեսակ» 3.4 կետում նշվում է այդ կետի ներքո նախատեսված ենթակետերից որևէ մեկը:

37. «Շահումով խաղի տեսակը» 3.5 կետում նշվում է այդ կետի ներքո նախատեսված ենթակետերից որևէ մեկը:

38. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը» 3.6 կետում նշվում է 3.6.1 - 3.6.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը: Եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշը կամ տիպաբանությունը սահմանված չէ 3.6.1 և 3.6.2 ենթակետերով նախատեսված իրավական ակտերում, ապա նշվում է «Այլ» 3.6.3 ենթակետը: 3.6.1 - 3.6.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը նշելու դեպքում այդ ենթակետերի ներքո նախատեսված դաշտում լրացվում է Լիազոր մարմնի իրավական ակտով, Հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտով սահմանված կամ այլ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշ կամ տիպաբանություն:

39. «Կասկածների նկարագրությունը» 3.7 կետում հնարավորինս մանրամասն նկարագրվում են գործարքի կամ գործարար հարաբերության նախապատմությունը, այն բոլոր հանգամանքները, որոնք վկայել են գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության մասին: Այս կետում կարող են նկարագրվել նաև Հաշվետվություն տրամադրող անձի՝ հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները:

40. «Կապված հաշվետվության անվանումը» 3.8 կետը լրացվում է, եթե ներկայացվող հաշվետվությամբ կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը, ըստ Հաշվետվություն տրամադրող անձի, պատճառահետևանքային կամ այլ առումով կապված է Հաշվետվություն տրամադրող անձի կողմից նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքի հետ: «Կապված հաշվետվության անվանումը» 3.8 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության ձևի «Հաշվառման համարը» 1.1, «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2, «Հաշվետվության հերթական համարը» 1.3, «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետերում (առկայության դեպքում) լրացված տեղեկատվությունը: Թղթային տարբերակով հաշվետվություն ներկայացնելիս, եթե առկա է մեկից ավելի կապված հաշվետվություն, ապա «Կապված հաշվետվության անվանումը» 3.8 կետը պատճենահանվում է և լրացվում է համապատասխան քանակով:

41. «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.9 կետում նշվում են Կարգի 32-րդ, 33-րդ և 40-րդ կետերով նախատեսված տեղեկությունները, ինչպես նաև գործարքին կամ գործարար հարաբերությանն առնչվող՝ Հաշվետվություն տրամադրող անձի կողմից կարևորվող այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 6. ՀԱՃԱԽՈՐԴ

42. «Անուն» 4.1 կետում լրացվում է հաճախորդի անունը:

43. «Ազգանուն» 4.2 կետում լրացվում է հաճախորդի ազգանունը: Այն դեպքում, երբ հստակ չէ, թե որն է հաճախորդի անունը և որը ազգանունը, ապա 4.1 և 4.2 կետերը լրացվում են Հաշվետվություն տրամադրող անձի հայեցողությամբ:

44. «Հայրանուն» 4.3 կետում լրացվում է հաճախորդի հայրանունը:

45. «Ծննդյան ամսաթիվը» 4.4 կետում լրացվում են հաճախորդի ծննդյան օրը, ամիսը, տարին:

46. «Բնակության վայր» 4.5 կետի ներքո նախատեսված 4.5.1 - 4.5.4 ենթակետերում լրացվում է այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ հաճախորդը մշտապես կամ առավելապես բնակվում է:

47. «Հաշվառման վայր» 4.6 կետի ներքո նախատեսված 4.6.1 - 4.6.4 ենթակետերում լրացվում է հաճախորդի այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ նա հաշվառված է: 4.6.1 - 4.6.4 ենթակետերը չեն լրացվում, եթե հաճախորդի բնակության վայրը և հաշվառման վայրը նույնն է:

48. «Քաղաքացիությունը» 4.7 կետում լրացվում է հաճախորդի քաղաքացիությունը:

49. «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.8 կետում նշվում է հաճախորդի անձնագիրը, նույնականացման քարտը կամ նորմատիվ իրավական ակտով սահմանված անձը (ինքնություն) հաստատող այլ փաստաթուղթը:

50. «Փաստաթղթի սերիան և համարը» 4.8.1, «Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը» 4.8.2 ենթակետերում համապատասխանաբար լրացվում են «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.8 կետում նշված փաստաթղթի սերիան, համարը, ինչպես նաև տրամադրման օրը, ամիսը, տարին:

51. «Ում կողմից է տրամադրվել» 4.8.3 ենթակետում լրացվում է այն պետական մարմնի անվանումը կամ ծածկագիրը, որի կողմից տրամադրվել է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.8 կետում նշված փաստաթուղթը:

52. «Փաստաթղթի վավերականության ժամկետը» 4.8.4 ենթակետում լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ լրանում է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.8 կետում նշված փաստաթղթի վավերականության ժամկետը:

ԳԼՈՒԽ 7. ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ

53. «Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը չի կարողանում ստանալ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու, թե՝ ոչ:

54. «Չկա իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը պարզել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա չէ իրական շահառու (օրինակ՝ այդ մասին գրավոր հայտարարություն է տվել հաճախորդը):

55. «Առկա է իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդից կամ այլ աղբյուրից տեղեկացել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու:

56. 5.1 - 5.8.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են միայն «Առկա է իրական շահառու» դաշտը նշելու դեպքում՝ Կարգի 42 - 52-րդ կետերով սահմանված կարգով:

57. Հաշվետվության ձևի 5-րդ բաժինը, կախված անձանց թվից, լրացվում է համապատասխան քանակով:

ԳԼՈՒԽ 8. ԳՈՐԾԱՐՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

58. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում» 6.1 կետը նշվում է, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է:

59. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառները» 6.1.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժելու համար:

60. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում» 6.2 կետը նշվում է, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցվել է:

61. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառները» 5.2.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցնելու համար:

62. «Գույքի սառեցում» 6.3 կետը նշվում է, երբ հաճախորդի գույքը սառեցվել է:

63. «Սառեցման ամսաթիվ» 6.3.1 ենթակետում լրացվում են գույքի սառեցման օրը, ամիսը, տարին:

64. «Սառեցման ժամկետը» 6.3.2 ենթակետում լրացվում է սառեցման ժամկետը:

65. «Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը» 6.3.3 ենթակետում լրացվում է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերի և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կատարման նպատակով Լիազոր մարմնի կողմից հրապարակած ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը:

ԳԼՈՒԽ 9. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

66. «Անուն» 7.1 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի անունը:

67. «Ազգանուն» 7.2 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի ազգանունը:

68. «Լրացման ամսաթիվը» 7.3 կետում լրացվում են հաշվետվության ձևը լրացնելու օրը, ամիսը, տարին:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Վիճակախաղերի կազմակերպիչների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 005 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 235-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին[*]

Նպատակ ունենալով հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների և կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ հաշվետվությունների նոր ձևեր, փոփոխության ենթարկել դրանց տրամադրման կարգը և սահմանել ժամկետներին վերաբերող առավել մանրամասն կանոններ,

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Վիճակախաղերի կազմակերպիչների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 005 հաշվետվության ձևը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2. Հաստատել «Վիճակախաղերի կազմակերպիչների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 005 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի «Վիճակախաղ կազմակերպող անձանց (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 005 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի թիվ 59-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 235-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N 272-Ն

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 272-Ն որոշմամբ

ՁԵՎ
ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԹԻՎ 005 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

1.1. Հաշվառման համարը	1.2. Հաշվետվության ուղարկման ամսաթիվը	1.3. Հաշվետվության հերթական համարը	1.4. Ուղղման (լրացման) հերթական համարը

1.4.1. Ուղղման (լրացման) պատճառը

2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

☐ 2.1. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն

☐ 2.2. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն

3. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը ☐☐ - ☐☐ - ☐☐☐☐

☐ 3.2. Կանխիկ եղանակով իրականացված գործարք ☐ 3.3. Անկանխիկ եղանակով իրականացված գործարք

3.2.1. Գումարը

3.3.1. Գումարը

3.4. Գործառնության տեսակ

☐ 3.4.1. Վիճակախաղի տոմսի գնում,

☐ 3.4.2. Շահումի վճարում կամ տրամադրում

☐ 3.4.3. Նախորդ երկուսի հետ կապված ֆինանսական գործարք

3.5. Վիճակախաղի տեսակը

☐ 3.5.1. Ոչ խաղարկությունով վիճակախաղ

☐ 3.5.2. Խաղարկությունով վիճակախաղ

☐ 3.5.3. Համակցված վիճակախաղ

☐ 3.5.4. Տոտալիզատոր

☐ 3.5.4.1. Անմիջական (խաղասրահում) կազմակերպվող տոտալիզատոր

☐ 3.5.4.2. Ինտերնետի կամ այլ գլոբալ համակարգի միջոցով կազմակերպվող տոտալիզատոր

☐ 3.5.4.3 Համակարգված ցանցային կապուղիների միջոցով կազմակերպվող տոտալիզատոր

3.6 Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը

☐ 3.6.1. Լիազոր մարմնի իրավական ակտով սահմանված չափանիշներ և տիպաբանություններ

☐ 3.6.2 Հաշվետվություն տրամադրող անձի իրավական ակտով սահմանված չափանիշներ կամ տիպաբանություններ

☐ 3.6.3 Այլ

3.7 Կասկածների նկարագրությունը

3.8. Կապված հաշվետվության անվանումը

3.9 Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն

4. ՀԱՃԱԽՈՐԴ

4.1. Անուն															
4.2. Ազգանուն															
4.3. Հայրանուն															
4.4. Ծննդյան ամսաթիվը			-			-									
4.5. Բնակության վայր 4.5.1 Փողոց, շենք, բնակարան (տուն)															
4.5.2 Քաղաք կամ գյուղ															
4.5.3 Մարզ															
4.5.4 Երկիր															
4.6 Հաշվառման վայր 4.6.1 Փողոց, շենք, բնակարան (տուն)															
4.6.2 Քաղաք կամ գյուղ															
4.6.3 Մարզ															
4.6.4 Երկիր															
4.7 Քաղաքացիություն															
4.8 Անձը հաստատող փաստաթղթի տեսակը															
4.8.1. Փաստաթղթի սերիան և համարը															
4.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը			-			-									
4.8.3. Ում կողմից է տրամադրվել															
4.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը			-			-									

5. ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ

☐ Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը ☐ Չկա իրական շահառու ☐ Առկա է իրական շահառու

5.1. Անուն

5.2. Ազգանուն

5.3. Հայրանուն

5.4. Ծննդյան ամսաթիվը - -

5.5. Բնակության վայր
5.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

5.5.2. Քաղաք կամ գյուղ

5.5.3. Մարզ

5.5.4. Երկիր

5.6. Հաշվառման վայր
5.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

5.6.2. Քաղաք կամ գյուղ

5.6.3. Մարզ

5.6.4. Երկիր

5.7. Քաղաքացիություն

5.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

5.8.1. Փաստաթղթի սերիա և համար

5.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

5.8.3. Ում կողմից է տրամադրվել

5.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

6. ԳՈՐԾԱՐՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

☐ 6.1. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում

6.1.1. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառները

☐ 6.2. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում

6.2.1. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառները

☐ 6.3. Գույքի սառեցում

6.3.1. Սառեցման ամսաթիվը - -

6.3.2. Սառեցման ժամկետը

6.3.3. Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը

7. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ (ՂԵԿԱՎԱՐ)

7.1. Անուն

7.2. Ազգանուն

7.3. Լրացման ամսաթիվը - -

Հավելված 2
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 272-Ն որոշմամբ

ԿԱՐԳ
ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 005 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Վիճակախաղերի կազմակերպիչների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 005 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է վիճակախաղերի կազմակերպիչների (այսուհետ՝ Հաշվետվություն տրամադրող անձ) կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հաշվետվության ձևի լրացման կարգը և հաշվետվությունների ներկայացման դեպքերը:

2. Կարգում հասկացություններն օգտագործվում են Օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Հաշվետվության ձևը լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվառված Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից:

4. Հաշվետվությունը ներկայացվում է Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի և 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքերում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի կամ «Սի-Բի-էյ-Նեթ» համակարգի միջոցով կամ թղթային տարբերակով:

6. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը կարող է ձեռք բերվել Ֆինանսական դիտարկումների կենտրոնին դիմելու կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջից արտահանելու միջոցով:

7. Հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով ներկայացվում են միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու կարգի» 4-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնագիր կնքելուց հետո:

8. Էլեկտրոնային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը ներկայացված է համարվում, եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաշվետվություն տրամադրող անձը չի ստանում սխալի վերաբերյալ հաղորդագրություն:

9. Սխալի վերաբերյալ հաղորդագրություն ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով՝ առանց հաշվետվության անվանման փոփոխության: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

10. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում փակ կնքված (կնիքի առկայության դեպքում) ծրարով՝ «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին» նշագրումով՝ հետևյալ եղանակներից որևէ մեկով.

1) ֆիզիկապես ներկայացնելու միջոցով,

2) փոստի միջոցով:

11. Կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացված է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացականի, իսկ Կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից համապատասխան անդորրագրի տրամադրման պահից: Կարգի 10-րդ կետի 2-րդ

ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փոստային հասցեով (ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6):

12. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվության սխալի վերաբերյալ հետադարձ կապ ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

13. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում այդ գործարքը կատարելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

14. Հաշվետվության տրամադրման օրերի հաշվարկը սկսվում է գործարքի կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից և ավարտվում է այդ օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 18:00-ին:

15. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում գործարքում կամ գործարար հարաբերությունում կասկածելիության հիմք կամ չափանիշ հայտնաբերելու դեպքում՝ նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ը:

16. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել՝

1) աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

2) ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

17. Հաշվետվության ձևը լրացվում է հնարավորինս պարզ, հակիրճ, միաձևանակ ընկալվող հայերեն լեզվով, «յունիկոդ» կոդավորմամբ տառատեսակով և մեծատառերով: «Անուն» 4.1, «Ազգանուն» 4.2, «Հայրանուն» 4.3 ենթակետերը լրացվում են անգլերեն, երբ անհրաժեշտ տվյալները Հաշվետվություն տրամադրող անձին հասանելի են միայն անգլերեն լեզվով: Եթե նշված տվյալները հասանելի են այլ օտար լեզվով, ապա նշված ենթակետերը լրացվում են հայերեն կամ անգլերեն լեզվով:

18. Հաշվետվության ձևի թղթային տարբերակը լրացվում է համակարգչի օգնությամբ կամ գրիչով՝ յուրաքանչյուր վանդակում նշելով մեկ նիշ: Հաշվետվության ձևի 1.4.1, 3.6.3, 3.7, 3.9, 6.1.1, 6.2.1 կետերի ներքո նախատեսված դաշտերի սահմաններն անբավարար լինելու դեպքում անհրաժեշտ է օգտագործել հավելյալ թղթեր: Այդ թղթերի ձախ կողմում նշվում է այն կետը կամ ենթակետը, որի ներքո նախատեսված դաշտը լրացվում է: Այդ թղթերը ստորագրվում և հաստատվում են կնիքով (կնիքի առկայության դեպքում) և կցվում հիմնական հաշվետվության ձևին: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրվում է նաև այդ ուղղումների կողքին:

19. Հաշվետվության ձևի առաջին էջի ներքևի մասում նշվում է ներկայացվող հաշվետվության էջերի քանակը (ներառյալ՝ առաջին էջը): Հաշվետվության ձևի յուրաքանչյուր էջի ներքևի աջ անկյունում անհրաժեշտ է ստորագրել և հաստատել կնիքով (կնիքի առկայության դեպքում): Հաշվետվության ձևի այն էջերը, որոնք չեն լրացվել կարող են չներկայացվել:

20. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը լրացվում է՝ օգտագործելով ներկայացված էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները: Էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները փոփոխության ենթակա չեն: Ցանկացած ներկայացված հաշվետվություն, որը պարունակում է փոփոխություն, դիտվում է թերի կամ սխալ լրացված հաշվետվություն և հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

21. Լրացման համար պարտադիր են այն կետերը և ենթակետերը, որոնց վերաբերյալ Հաշվետվություն տրամադրող անձը ունի կամ պարտավոր է ունենալ տեղեկատվություն:

22. Յուրաքանչյուր գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ ներկայացվում է առանձին հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

23. «Հաշվառման համարը» 1.1 կետում լրացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվառման համարը (ութ նիշ):

24. «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2 կետում լրացվում են հաշվետվության ուղարկման օրը, ամիսը, տարին (վեց նիշ):

25. «Հաշվետվության հերթական համարը» 1.3 կետում լրացվում է տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (երեք նիշ):

26. «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետում լրացվում է տվյալ հաշվետվության ուղղման կամ լրացման նպատակով ներկայացվող հաշվետվության հերթական համարը (մեկից երեք նիշ): Այս կետը լրացվում է, եթե հաշվետվությունն ուղարկվում է նախկինում ուղարկված հաշվետվությու-

նում առկա սխալի կամ թերության ուղղման նպատակով, ինչպես նաև եթե սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:

27. Կարգի 8-րդ և 11-րդ կետերով սահմանված կարգով ներկայացված համարվող հաշվետվության մեջ ուղղում կամ լրացում կատարելու համար հիմք հանդիսացած պատճառները և հանգամանքները լրացվում են «Ուղղման (լրացման) պատճառը» 1.4.1 ենթակետում: Այս ենթակետը ենթակա է պարտադիր լրացման, եթե ուղղում կամ լրացում կատարվել է նախորդ հաշվետվությունը ներկայացնելու պահից երեք աշխատանքային օր հետո:

28. Ուղղում կամ լրացում կատարելու դեպքում ներկայացվում է նոր հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

29. «Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն» 2.1 կետը նշվում է, եթե վիճակախաղի տոմսերի մեկ անկանխիկ գնումը կամ ստացված մեկ անկանխիկ շահումը կամ 24 ժամվա ընթացքում վիճակախաղի տոմսերի անկանխիկ գնումների կամ ստացված անկանխիկ շահումների հանրագումարը գերազանցում է 20 միլիոն դրամը, ինչպես նաև եթե վիճակախաղի տոմսերի մեկ կանխիկ գնումը կամ մեկ կանխիկ շահումը կամ 24 ժամվա ընթացքում վիճակախաղի տոմսերի կանխիկ գնումների կամ ստացված կանխիկ շահումների հանրագումարը գերազանցում է 5 միլիոն դրամը:

30. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն» 2.2 կետը նշվում է, եթե ներկայացվում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

31. «Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը» 3.1 կետում լրացվում են տեղեկացման ենթակա գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման օրը, ամիսը, տարին: Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելիս, եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը դեռևս չի կատարվել, լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ ներկայացվել է գործարք կատարելու կամ գործարար հարաբերություն հաստատելու առաջարկը, իսկ այն դեպքում, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է, նշվում են գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման օրը, ամիսը, տարին:

32. «Կանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.2 կետը նշվում է, եթե գործարքը կատարվել է կանխիկ եղանակով: Այն դեպքում, երբ գործարքն իրականացվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակներով, սակայն միայն կանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցել 5 մլն դրամը, ապա նշվում է «Կանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.2 կետը, իսկ «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.9 կետում նշվում է գործարքի գումարի նաև անկանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

33. «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.3 կետում նշվում է գործարքի՝ անկանխիկ եղանակով իրականացված լինելու մասին տեղեկատվությունը: Այն դեպքում, երբ գործարքը իրականացվել է միաժամանակ անկանխիկ և կանխիկ եղանակներով, սակայն միայն անկանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցում 20 միլիոն ՀՀ դրամը, ապա նշվում է «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.3 կետը, իսկ «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.9 կետում նշվում է գործարքի գումարի նաև կանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

34. «Գումարը» 3.2.1 և 3.3.1 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի չափը ՀՀ դրամով:

35. «Գործառնության տեսակ» 3.4 կետում նշվում է այդ կետի ներքո նախատեսված ենթակետերից որևէ մեկը:

36. «Վիճակախաղի տեսակը» 3.5 կետում նշվում է այդ կետի ներքո նախատեսված ենթակետերից կամ դաշտերից որևէ մեկը:

37. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը» 3.6 կետում նշվում է 3.6.1 – 3.6.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը: Եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշը կամ տիպաբանությունը սահմանված չէ 3.6.1 և 3.6.2 ենթակետերով նախատեսված իրավական ակտերում, ապա նշվում է «Այլ» 3.6.3 ենթակետը: 3.6.1 – 3.6.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը նշելու դեպքում այդ ենթակետերի ներքո նախատեսված դաշտում լրացվում է Լիազոր մարմնի իրավական ակտով, Հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտով սահմանված կամ այլ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշ կամ տիպաբանություն:

38. «Կասկածների նկարագրությունը» 3.7 կետում հնարավորինս մանրամասն նկարագրվում են գործարքի կամ գործարար հարաբերության նախապատմությունը, այն բոլոր հանգամանքները, որոնք վկայել են գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության մասին: Այս կետում կարող են նկա-

րագրվել նաև Հաշվետվություն տրամադրող անձի՝ հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները:

39. «Կապված հաշվետվության անվանումը» 3.8 կետը լրացվում է, եթե ներկայացվող հաշվետվությամբ կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը, ըստ Հաշվետվություն տրամադրող անձի, պատճառահետևանքային կամ այլ առումով կապված է Հաշվետվություն տրամադրող անձի կողմից նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքի հետ: «Կապված հաշվետվության անվանումը» 3.8 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության ձևի «Հաշվառման համարը» 1.1, «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2, «Հաշվետվության հերթական համարը» 1.3, «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետերում (առկայության դեպքում) լրացված տեղեկատվությունը: Թղթային տարբերակով հաշվետվություն ներկայացնելիս, եթե առկա է մեկից ավելի կապված հաշվետվություն, ապա «Կապված հաշվետվության անվանումը» 3.8 կետը պատճենահանվում է և լրացվում է համապատասխան քանակով:

40. «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 3.9 կետում նշվում են Կարգի 32-րդ, 33-րդ և 40-րդ կետերով նախատեսված տեղեկությունները, ինչպես նաև գործարքին կամ գործարար հարաբերությանն առնչվող՝ Հաշվետվություն տրամադրող անձի կողմից կարևորվող այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 6 (7)*. ՀԱՃԱԽՈՐԴ

41. «Անուն» 4.1 կետում լրացվում է հաճախորդի անունը:

42. «Ազգանուն» 4.2 կետում լրացվում է հաճախորդի ազգանունը: Այն դեպքում, երբ հստակ չէ, թե որն է հաճախորդի անունը և որը ազգանունը, ապա 4.1 և 4.2 կետերը լրացվում են Հաշվետվություն տրամադրող անձի հայեցողությամբ:

43. «Հայրանուն» 4.3 կետում լրացվում է հաճախորդի հայրանունը:

44. «Ծննդյան ամսաթիվը» 4.4 կետում լրացվում են հաճախորդի ծննդյան օրը, ամիսը, տարին:

45. «Բնակության վայր» 4.5 կետի ներքո նախատեսված 4.5.1 - 4.5.4 ենթակետերում լրացվում է այն հասցեն (փողոցը, շենքը, տունը(բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ հաճախորդը մշտապես կամ առավելապես բնակվում է:

46. «Հաշվառման վայր» 4.6 կետի ներքո նախատեսված 4.6.1 - 4.6.4 ենթակետերում լրացվում է հաճախորդի այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ նա հաշվառված է: 4.6.1 - 4.6.4 ենթակետերը չեն լրացվում, եթե հաճախորդի բնակության վայրը և հաշվառման վայրը նույնն է:

47. «Քաղաքացիությունը» 4.7 կետում լրացվում է հաճախորդի քաղաքացիությունը:

48. «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.8 կետում նշվում է հաճախորդի անձնագիրը, նույնականացման քարտը կամ նորմատիվ իրավական ակտով սահմանված անձը (ինքնություն) հաստատող այլ փաստաթուղթը:

49. «Փաստաթղթի սերիան և համարը» 4.8.1, «Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը» 4.8.2 ենթակետերում, համապատասխանաբար, լրացվում են «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.8 կետում նշված փաստաթղթի սերիան, համարը, ինչպես նաև տրամադրման օրը, ամիսը, տարին:

50. «Ում կողմից է տրամադրվել» 4.8.3 ենթակետում լրացվում է այն պետական մարմնի անվանումը կամ ծածկագիրը, որի կողմից տրամադրվել է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.8 կետում նշված փաստաթուղթը:

51. «Փաստաթղթի վավերականության ժամկետը» 4.8.4 ենթակետում լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ լրանում է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.8 կետում նշված փաստաթղթի վավերականության ժամկետը:

ԳԼՈՒԽ 7 (8)*. ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ

52. «Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը չի կարողանում ստանալ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու, թե՝ ոչ:

53. «Չկա իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը պարզել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա չէ իրական շահառու (օրինակ՝ այդ մասին գրավոր հայտարարություն է տվել հաճախորդը):

54. «Առկա է իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդից կամ այլ աղբյուրից տեղեկացել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու:

---

* *Պաշտոնական հրատարակության համարակալման մեջ սպրդել է տեխնիկական վրիպակ:*

55. 5.1 - 5.8.4 ենթակետերը լրացվում են միայն «Առկա է իրական շահառու» դաշտը նշելու դեպքում՝ Կարգի 41 - 51-րդ կետերով սահմանված կարգով:

56. Հաշվետվության ձևի 5-րդ բաժինը, կախված անձանց թվից, լրացվում է համապատասխան քանակով:

ԳԼՈՒԽ 8 (9). ԳՈՐԾԱՐՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

57. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում» 6.1 կետը նշվում է, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է:

58. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառները» 6.1.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժելու համար:

59. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում» 6.2 կետը նշվում է, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցվել է:

60. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառները» 5.2.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցնելու համար:

61. «Գույքի սառեցում» 6.3 կետը նշվում է, երբ հաճախորդի գույքը սառեցվել է:

62. «Սառեցման ամսաթիվ» 6.3.1 ենթակետում լրացվում է գույքի սառեցման օրը, ամիսը, տարին:

63. «Սառեցման ժամկետը» 6.3.2 ենթակետում լրացվում է սառեցման ժամկետը:

64. «Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը» 6.3.3 ենթակետում լրացվում է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերի և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կատարման նպատակով Լիազոր մարմնի կողմից հրապարակած ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը:

ԳԼՈՒԽ 9 (10). ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

65. «Անուն» 7.1 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի անունը:

66. «Ազգանուն» 7.2 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի ազգանունը:

67. «Լրացման ամսաթիվը» 7.3 կետում լրացվում են հաշվետվության ձևը լրացնելու օրը, ամիսը, տարին:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման թիվ 008 հաշվետվության ձևը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 14-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Նպատակ ունենալով նախատեսել հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների նոր ձևեր, փոփոխության ենթարկել դրանց տրամադրման կարգը և սահմանել ժամկետներին վերաբերող առավել մանրամասն կանոններ,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին»: Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման թիվ 008 հաշվետվության ձևը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2. Հաստատել «Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 008 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ին «ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումը իրավաբանական անձանց գրանցող մարմնի (պետական ռեգիստրի) կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման թիվ 008 հաշվետվական ձևը, տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները, իրավաբանական անձանց գրանցող մարմնի (պետական ռեգիստրի) հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 14-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N 273-Ն

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 273-Ն որոշմամբ

ՁԵՎ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 008 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

[ ] - [ ] - [ ] - [ ]

1.1. Հաշվառման համարը | 1.2. Հաշվետվության ուղարկման ամսաթիվը | 1.3. Հաշվետվության հերթական համարը | 1.4. Ուղղման (լրացման) հերթական համարը

1.4.1. Ուղղման (լրացման) պատճառը

[ ]

2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

[ ] 2.1. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն

[ ] 2.2. Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն

3. ԳՈՐԾԱՐՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Գործարքի կատարման ամսաթիվը [ ][ ] - [ ][ ] - [ ][ ][ ][ ]

[ ] 3.2. Կանխիկ եղանակով իրականացված գործարք [ ] 3.3. Անկանխիկ եղանակով իրականացված գործարք

3.2.1. Գումարը [ ] 3.3.1. Գումարը [ ]

3.4. Գործարքի տեսակ

[ ] Իրավաբանական անձանց կանոնադրական (բաժնեհավաք և այլն) կապիտալի ձևավորման պետական գրանցում

[ ] Իրավաբանական անձանց կանոնադրական (բաժնեհավաք և այլն) կապիտալում բաժնեմասի (մասնակցության, փայի և այլն) օտարման (ձեռքբերման) պետական գրանցում

[ ] Իրավաբանական անձանց կանոնադրական (բաժնեհավաք և այլն) կապիտալում փոփոխություն

3.5. Գործարքի առարկա

☐ 3.5.1. Դրամական միջոց

☐ 3.5.2. Արժեթուղթ

Նկարագրություն

☐ 3.5.3. Շարժական այլ գույք

Նկարագրություն

☐ 3.5.4. Անշարժ գույք

3.5.4.1. Անշարժ գույքի գտնվելու վայր

☐ 3.5.5. Գույքային իրավունք

Նկարագրություն

☐ 3.5.6. Դրամական գնահատում ունեցող այլ իրավունք

Նկարագրություն

3.6. Ձևավորման, օտարման (ձեռքբերման), փոփոխության արդյունքում կանոնադրական (բաժնեհավաք և այլն) կապիտալի չափը

3.7. Կասկածելի գործարքի չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.7.1. Լիազոր մարմնի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.7.2. Հաշվետվություն տրամադրող անձի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.7.3. Այլ

3.8. Կասկածների նկարագրությունը

3.9. Կապված հաշվետվության անվանումը

3.10. Գործարքին վերաբերող այլ տեղեկատվություն

4. ԳՈՐԾԱՐՔԻ ԿՈՂՄԵՐ

4.1. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ

4.1.1. Անվանում

4.1.2. Գտնվելու վայր

4.1.2.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.1.2.2. Քաղաք կամ գյուղ

4.1.2.3. Մարզ

4.1.2.4. Երկիր

4.1.3. Կազմակերպական-իրավական ձև

4.1.4. Պետական գրանցման համար

4.1.5. ՀՎՀՀ

4.1.6. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

4.2. ՀԱՃԱԽՈՐԴ

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ

4.2.1. Անուն (անվանում)

4.2.2. Ազգանուն

4.2.3. Հայրանուն

4.2.4. Ծննդյան ամսաթիվը - -

4.2.5. Բնակության վայր (գտնվելու վայր)
4.2.5.1. Փողոց, շենք, բնակարան/տուն

4.2.5.2. Քաղաք կամ գյուղ

4.2.5.3. Մարզ

4.2.5.4. Երկիր

4.2.6. Հաշվառման վայր
4.2.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.2.6.2. Քաղաք կամ գյուղ

4.2.6.3. Մարզ

4.2.6.4. Երկիր

4.2.7. Քաղաքացիություն

4.2.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.2.8.1. Փաստաթղթի սերիա և համար

4.2.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվ - -

4.2.8.3. Ում կողմից է տրամադրվել

4.2.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետ - -

4.2.9. Կազմակերպական-իրավական ձև

4.2.10. Անհատականացման (հաշվառման) համար

4.1.5. ՀՎՀՀ

4.2.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

4.3. ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ
4.3.1. Լիազորող անձ

(հաճախորդի անուն, ազգանուն (անվանում))

4.3.2. Անուն

4.3.3. Ազգանուն

4.3.4. Հայրանուն

4.3.5. Ծննդյան ամսաթիվը - -

4.3.6. Բնակության վայր
4.3.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.3.6.2. Քաղաք կամ գյուղ

4.3.6.3. Մարզ

4.2.6.4. Երկիր

4.3.7. Հաշվառման վայր
4.3.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.3.7.2. Քաղաք կամ գյուղ

4.3.7.3. Մարզ

4.3.7.4. Երկիր

4.3.8. Քաղաքացիություն

4.3.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.3.9.1. Փաստաթղթի սերիա և համար

4.3.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.3.9.3. Ում կողմից է տրամադրվել

4.3.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4.4. ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ

☐ Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը ☐ Չկա իրական շահառու ☐ Առկա է իրական շահառու

4.4.1. Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)

4.4.2. Անուն

4.4.3. Ազգանուն

4.4.4. Հայրանուն

4.4.5. Ծննդյան ամսաթիվը - -

4.4.6. Բնակության վայր
4.4.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.4.6.2 Քաղաք կամ գյուղ

4.4.6.3 Մարզ

4.4.6.4 Երկիր - -

4.4.7. Հաշվառման վայր
4.4.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.4.7.2. Քաղաք կամ գյուղ

4.4.7.3. Մարզ

4.4.7.4. Երկիր

4.4.8. Քաղաքացիություն

4.4.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.4.9.1. Փաստաթղթի սերիա և համար

4.4.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.4.9.3. Ում կողմից է տրամադրվել

4.4.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՇԽԱՏԱԿԻՑ

5.1. Անուն

5.2. Ազգանուն

5.3. Լրացման ամսաթիվը - -

Հավելված 2

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 273-Ն որոշմամբ

ԿԱՐԳ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 008 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի վերաբերյալ թիվ 008 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձ) կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հաշվետվության ձևի լրացման կարգը և հաշվետվությունների ներկայացման դեպքերը:

2. Կարգում հասկացություններն օգտագործվում են Օրենքով սահմանված հասկացությունների իմաստով՝ բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի:

3. Հաշվետվության ձևը լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվառված հաշվետվություն տրամադրող անձանց կողմից:

4. Հաշվետվությունը ներկայացվում է Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի և 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ 6-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետով սահմանված դեպքերում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի կամ Միասնական տեղեկատվական տիրույթ համակարգի միջոցով կամ թղթային տարբերակով:

2. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը կարող է ձեռք բերվել Ֆինանսական դիտարկումների կենտրոնին դիմելու կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջից արտահանելու միջոցով:

3. Հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով ներկայացվում են միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու կարգի» 4-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնագիր կնքելուց հետո:

4. Հաշվետվությունները Միասնական տեղեկատվական տիրույթ համակարգի միջոցով ներկայացվում են միայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Միասնական տեղեկատվական տիրույթ համակարգին միացման և դրա շահագործման մասին» պայմանագիրը կնքելուց հետո:

5. Էլեկտրոնային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը ներկայացված է համարվում, եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվություն տրամադրող անձը չի ստանում սխալի վերաբերյալ հաղորդագրություն:

6. Սխալի վերաբերյալ հաղորդագրություն ստանալու դեպքում հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով՝ առանց հաշվետվության անվանման փոփոխության: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

7. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում փակ կնքված (կնիքի առկայության դեպքում) ծրարով՝ «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին» նշագրումով՝ հետևյալ եղանակներից որևէ մեկով.

1) ֆիզիկապես ներկայացնելու միջոցով,

2) փոստի միջոցով:

8. Կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացված է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացականի, իսկ Կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից համապատասխան անդորրագրի տրամադրման պահից: Կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փոստային հասցեով (ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6):

9. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվության սխալի վերաբերյալ հետադարձ կապ ստանալու դեպքում հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով՝ առանց հաշվետվության անվանման փոփոխության: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

10. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում այդ գործարքը կատարելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

11. Հաշվետվության տրամադրման օրերի հաշվարկը սկսվում է գործարքի կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից և ավարտվում է այդ օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 18:00-ին:

12. Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում գործարքում կասկածելիության չափանիշ հայտնաբերելու դեպքում՝ նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ն:

13. Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվության տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել՝

1) աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

2) ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

14. Հաշվետվության ձևը լրացվում է հնարավորինս պարզ, հակիրճ, միանշանակ ընկալվող հայերեն լեզվով, «յունիկոդ» տառատեսակով և մեծատառերով: «Անվանում» 4.1.1, «Անուն (անվանում)» 4.2.1, «Ազգանուն» 4.2.2 և «Հայրանուն» 4.2.3 ենթակետերը լրացվում են անգլերեն, երբ անհրաժեշտ տվյալները հաշվետվություն տրամադրող անձին հասանելի են միայն անգլերեն լեզվով: Եթե նշված տվյալները հասանելի են այլ օտար լեզվով, ապա նշված ենթակետերը լրացվում են հայերեն կամ անգլերեն լեզվով:

15. Հաշվետվության ձևի թղթային տարբերակը լրացվում է համակարգչի օգնությամբ կամ գրիչով՝ յուրաքանչյուր վանդակում նշելով մեկ նիշ: Հաշվետվության ձևի 1.4.1, 3.5.2, 3.5.3 - 3.5.6, 3.7.3, 3.8, 5.1.1, 5.2.1 և 5.3.3 կետերի և ենթակետերի ներքո նախատեսված դաշտերի սահմաններն անբավարար լինելու դեպքում անհրաժեշտ է օգտագործել հավելյալ թղթեր: Այդ թղթերի ձախ կողմում նշվում է այն կետը կամ ենթակետը, որի ներքո նախատեսված դաշտը լրացվում է: Այդ թղթերը ստորագրվում և հաստատվում են կնիքով և կցվում հիմնական հաշվետվության ձևին: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրվում է նաև այդ ուղղումների կողքին:

16. Հաշվետվության ձևի առաջին էջի ներքևի մասում նշվում է ներկայացվող հաշվետվության էջերի քանակը (ներառյալ՝ առաջին էջը): Հաշվետվության ձևի յուրաքանչյուր էջի ներքևի աջ անկյունում անհրաժեշտ է ստորագրել և հաստատել կնիքով (կնիքի առկայության դեպքում): Հաշվետվության ձևի այն էջերը, որոնք չեն լրացվել, կարող են չներկայացվել:

17. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը լրացվում է՝ օգտագործելով ներկայացված էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները: Էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները փոփոխության ենթակա չեն: Ցանկացած ներկայացված հաշվետվություն, որը պարունակում է փոփոխություն, դիտվում է թերի կամ սխալ լրացված հաշվետվություն և հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

18. Լրացման համար պարտադիր են այն կետերը և ենթակետերը, որոնց վերաբերյալ հաշվետվություն տրամադրող անձը ունի կամ պարտավոր է ունենալ տեղեկատվություն:

19. Յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ ներկայացվում է առանձին հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ

20. «Հաշվառման համարը» 1.1 կետում լրացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվառման համարը (ութ նիշ):

21. «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2 կետում լրացվում են հաշվետվության ուղարկման օրը, ամիսը, տարին (վեց նիշ):

22. «Հաշվետվության հերթական համարը» 1.3 կետում լրացվում է տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (երեք նիշ):

23. «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետում լրացվում է տվյալ հաշվետվության ուղղման կամ լրացման նպատակով ներկայացվող հաշվետվության հերթական համարը (մեկից երեք նիշ): Այս կետը լրացվում է, եթե հաշվետվությունն ուղարկվում է նախկինում ուղարկված հաշվետվությունում առկա սխալի կամ թերության ուղղման նպատակով, ինչպես նաև, եթե սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:

24. Կարգի 5-րդ և 8-րդ կետերով սահմանված կարգով ներկայացված համարվող հաշվետվության մեջ ուղղում կամ լրացում կատարելու համար հիմք հանդիսացած պատճառները և հանգամանքները լրացվում են «Ուղղման (լրացման) պատճառը» 1.4.1 ենթակետում: Այս ենթակետը ենթակա է պարտադիր լրացման, եթե ուղղում կամ լրացում կատարվել է նախորդ հաշվետվությունը ներկայացնելու պահից ոչ շուտ, քան երեք աշխատանքային օր հետո:

25. Ուղղում կամ լրացում կատարելու դեպքում ներկայացվում է նոր հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

26. «Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն» 2.1 կետը նշվում է, եթե՝

1) անկանխիկ եղանակով իրականացվող գործարքի գումարը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը՝ բացառությամբ 2-րդ ենթակետով նախատեսված գործարքի դեպքի,
2) կանխիկ եղանակով իրականացվող գործարքի գումարը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը:

27. «Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն» 2.2 կետը նշվում է, եթե ներկայացվում է կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 5. ԳՈՐԾԱՐՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

28. «Գործարքի կատարման ամսաթիվը» 3.1. կետում լրացվում է տեղեկացման ենթակա գործարքի կատարման օրը, ամիսը, տարին: Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելիս, եթե գործարքը դեռևս չի կատարվել կամ գործարար հարաբերությունը դեռևս չի հաստատվել, լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ ներկայացվել է գործարք կատարելու կամ գործարար հարաբերություն հաստատելու առաջարկը, իսկ այն դեպքում, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է, նշվում են գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման օրը, ամիսը, տարին:

29. «Կանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.2 կետը նշվում է, եթե գործարքը կատարվել է կանխիկ եղանակով: Այն դեպքում, երբ գործարքը իրականացվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակով, սակայն միայն կանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցել 5 միլիոն ՀՀ դրամը, ապա նշվում է «Կանխիկի հետ կապված գործարք» 3.2 կետը, իսկ «Գործարքին վերաբերող այլ տեղեկատվություն» 3.14 կետում նշվում է գործարքի գումարի՝ նաև անկանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

30. «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.3 կետը նշվում է, եթե գործարքը կատարվել է անկանխիկ եղանակով: Այն դեպքում, երբ գործարքը իրականացվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակով, սակայն միայն անկանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցել 20 միլիոն ՀՀ դրամը, ապա նշվում է «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.3 կետը, իսկ «Գործարքին վերաբերող այլ տեղեկատվություն» 3.14 կետում նշվում է գործարքի գումարի՝ նաև կանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

31. Այն դեպքում, երբ գործարքը իրականացվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակով, և կանխիկ եղանակով վճարված գումարը գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը, իսկ անկանխիկ եղանակով վճարված գումարը գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը, ապա միաժամանակ նշվում են «Կանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.2 և «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.3 կետերը, ինչպես նաև լրացվում են դրանց ներքո նախատեսված ենթակետերը:

32. «Գումարը» 3.2.1 և 3.3.1 կետում լրացվում է գործարքի գումարի չափը:

33. «Գործարքի տեսակ» 3.4 կետում նշվում է այդ կետի ներքո նախատեսված ենթակետերից որևէ մեկը:

34. «Գործարքի առարկա» 3.5 կետում նշվում է գործարքի առարկայի տեսակը՝ դրամական միջոց, արժեթուղթ, շարժական այլ գույք, անշարժ գույք, գույքային իրավունք կամ դրամական գնահատում ունեցող այլ իրավունք:

35. «Դրամական միջոց» 3.5.1 ենթակետը նշվում է, եթե գործարքի առարկան ՀՀ դրամ է:

36. «Արժեթուղթ» 3.5.2 ենթակետը նշվում է, եթե գործարքի առարկան արժեթուղթ է: 3.5.2 ենթակետի ներքո առկա «Նկարագրություն» դաշտում լրացվում են արժեթղթի տեսակը, այն թողարկողի, տեղաբաշխողի վերաբերյալ տվյալները, ինչպես նաև արժեթուղթը նույնականացնող այլ տվյալների վերաբերյալ տեղեկությունները:

37. «Շարժական այլ գույք» 3.5.3 ենթակետը նշվում է, եթե գործարքի առարկան հանդիսանում է այլ գույք, քան 3.5.1 և 3.5.2 ենթակետերում նշված գույքը, օրինակ, ավտոմեքենա: 3.5.3 ենթակետի ներքո առկա «Նկարագրություն» դաշտում լրացվում են այդ գույք անվանման և նույնականացնող այլ տվյալների վերաբերյալ տեղեկությունները:

38. «Անշարժ գույք» 3.5.4 ենթակետը նշվում է, եթե գործարքի առարկան անշարժ գույք է: 3.5.4 ենթակետի ներքո առկա «Նկարագրություն» դաշտում լրացվում են այդ գույքի անվանման, նույնացման համարի և անհատականացնող այլ տվյալների մասին տեղեկությունները, օրինակ՝ եթե անշարժ գույքը հողամաս է, ապա պետք է նշվի հողամասի չափի, նշանակության (տնամերձ, արտադրական, գյուղատնտեսական) վերաբերյալ տեղեկություններ:

39. «Անշարժ գույքի գտնվելու վայրը» 3.5.4.1 դաշտում լրացվում է անշարժ գույքի գտնվելու վայրի (հասցեի) վերաբերյալ տեղեկատվությունը, որը պարունակում է առնվազն հետևյալ վավերապայմանները՝ մարզ, համայնք, ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտ (թաղամաս, հրապարակ, փողոց, պողոտա, նրբանցք, անցում, փակուղի, զբոսայգի և այլն), անշարժ գույքի հերթական համար:

40. «Գույքային իրավունք» 3.5.5 ենթակետը նշվում է, եթե գործարքի առարկան գույքային իրավունք է: 3.5.5 ենթակետի ներքո առկա «Նկարագրություն» դաշտում լրացվում են այդ գույքային իրավունքի վերաբերյալ տեղեկություններ:

41. «Դրամական գնահատում ունեցող այլ իրավունք» 3.5.6 ենթակետը նշվում է, եթե գործարքի առարկան հանդիսանում է այլ իրավունք, քան 3.5.5 ենթակետում նշված իրավունքը: 3.5.6 ենթակետի ներքո առկա «Նկարագրություն» դաշտում լրացվում են այդ իրավունքի վերաբերյալ տեղեկությունները:

42. «Ձևավորման, օտարման (ձեռքբերման), փոփոխության արդյունքում կանոնադրական (բաժնեհավաք և այլն) կապիտալի չափը» 3.6 կետի ներքո առկա դաշտում լրացվում է կատարված գործարքի արդյունքում ձևավորված կանոնադրական (բաժնեհավաք և այլն) կապիտալի չափը:

43. «Կասկածելի գործարքի չափանիշը կամ տիպաբանությունը» 3.7 կետում նշվում է 3.7.1 - 3.7.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը: Եթե գործարքը կասկածելի որակելու չափանիշը կամ տիպաբանությունը սահմանված չէ 3.7.1 և 3.7.2 ենթակետերով նախատեսված իրավական ակտերում, ապա նշվում է «Այլ» 3.7.3 ենթակետը: 3.7.1 - 3.7.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը նշելու դեպքում այդ ենթակետերի ներքո նախատեսված դաշտում լրացվում է Լիազոր մարմնի իրավական ակտով, հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտով սահմանված կամ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության այլ չափանիշ կամ տիպաբանություն:

44. «Կասկածների նկարագրությունը» 3.8 կետում հնարավորինս մանրամասն նկարագրվում են գործարքի նախապատմությունը, այն բոլոր հանգամանքները, որոնք վկայել են գործարքի կասկածելիության մասին: Այս կետում կարող են նկարագրվել նաև հաշվետվություն տրամադրող անձի՝ հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները:

45. «Կապված հաշվետվության անվանումը» 3.9 կետը լրացվում է, եթե ներկայացվող հաշվետվությամբ կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը, ըստ բանկի, պատճառահետևանքային կամ այլ առումով կապված է բանկի կողմից նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքի հետ: «Կապված հաշվետվության անվանումը» 3.9 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության ձևի «Հաշվառման համարը» 1.1, «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2, «Հաշվետվության հերթական համարը» 1.3, «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետերում (առկայության դեպքում) լրացված տեղեկատվությունը: Թղթային տարբերակով հաշվետվություն ներկայացնելիս, եթե առկա է մեկից ավելի կապված հաշվետվություն, «Կապված հաշվետվության անվանումը» 3.9 կետը պատճենահանվում և լրացվում է համապատասխան քանակով:

46. «Գործարքին վերաբերող այլ տեղեկատվություն» 3.10 կետում նշվում է Կարգի 30-րդ և 31-րդ կետերով նախատեսված տեղեկությունները, ինչպես նաև գործարքին առնչվող՝ հաշվետվություն տրամադրող անձի կողմից կարևորվող այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐՔԻ ԿՈՂՄԵՐ

47. «Անվանում» 4.1.1 կետում լրացվում է այն իրավաբանական անձի անվանումը, որի կանոնադրական (բաժնեհավաք և այլն) կապիտալում բաժնեմասի (մասնակցության, փայի և այլն) օտարման (ձեռքբերման) կամ կանոնադրական (բաժնեհավաք և այլն) կապիտալի ձևավորման կամ փոփոխության հետ կապված կատարվում է պետական գրանցում:

Կարգի իմաստով իրավաբանական անձ է այն կազմակերպությունը, որը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվող կամ պատասխանող:

48. «Գտնվելու վայր» 4.1.2 ենթակետի ներքո նախատեսված 4.1.2.1-4.1.2.4 դաշտերում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը):

49. «Կազմակերպական-իրավական ձև» 4.1.3 կետում լրացվում է իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը կամ դրա հապավումը (օրինակ, ՍՊԸ, ԲԲԸ և այլն):

50. «Պետական գրանցման համարը» 4.1.4 ենթակետում լրացվում է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրամադրված պետական գրանցման համարը:

51. «ՀՎՀՀ» 4.1.5 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի հարկ վճարողի հաշվառման համարը:

52. «Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն» 4.1.6 ենթակետում լրացվում են իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը:

53. «Հաճախորդ» 4.2 կետում նշվում է հաճախորդի տեսակը՝ իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք և այլն) կապիտալում բաժնեմասի (մասնակցության, փայի և այլն) օտարում (ձեռքբերում) կամ կանոնադրական (բաժնեհավաք և այլն) կապիտալի ձևավորում կամ փոփոխություն կատարող ֆիզիկական անձ, իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր:

54. «Անուն (անվանում)» 4.2.1 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ անունը կամ իրավաբանական անձի անվանումը:

55. «Ազգանուն» 4.2.2 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը: Այն դեպքում, երբ հստակ չէ, թե որն է հաճախորդի անունը և ազգանունը, ապա 4.2.1 և 4.2.2 ենթակետերը լրացվում են հաշվետվություն տրամադրող անձի հայեցողությամբ:

56. «Հայրանուն» 4.2.3 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հայրանունը:

57. «Ծննդյան ամսաթիվ» 4.2.4 ենթակետում լրացվում են ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան օրը, ամիսը, տարին:

58. «Բնակության վայր (գտնվելու վայր)» 4.2.5 ենթակետի ներքո նախատեսված 4.2.5.1 - 4.2.5.4 դաշտերում ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում լրացվում է այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում է, իսկ իրավաբանական անձի դեպքում 4.2.5 ենթակետի ներքո նախատեսված 4.2.5.1 - 4.2.5.4 դաշտերը լրացվում են Կարգի 49-րդ կետով սահմանված կարգով: 4.2.5.1 - 4.2.5.4 դաշտերը չեն լրացվում, եթե ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը և հաշվառման վայրը նույնն է:

59. «Հաշվառման վայր» 4.2.6 ենթակետի ներքո նախատեսված 4.2.6.1 - 4.2.6.4 դաշտերում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը հաշվառված է:

60. «Քաղաքացիությունը» 4.2.7 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ քաղաքացիությունը:

61. «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.2.8 ենթակետում նշվում է անձնագիրը, նույնականացման քարտը կամ նորմատիվ իրավական ակտով սահմանված՝ ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձը (ինքնություն) հաստատող այլ փաստաթուղթը:

62. «Փաստաթղթի սերիան և համարը» 4.2.8.1, «Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը» 4.2.8.2 դաշտերում համապատասխանաբար լրացվում են «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.2.8 ենթակետում նշված փաստաթղթի սերիան, համարը, ինչպես նաև տրամադրման օրը, ամիսը, տարին:

63. «Ում կողմից է տրամադրվել» 4.2.8.3 դաշտում լրացվում է այն պետական մարմնի անվանումը կամ ծածկագիրը, որի կողմից տրամադրվել է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.2.8 ենթակետում նշված փաստաթուղթը:

64. «Փաստաթղթի վավերականության ժամկետը» 4.2.8.4 դաշտում լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ լրանում է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.2.8 ենթակետում նշված փաստաթղթի վավերականության ժամկետը:

65. Հաշվետվության ձևի 4.2.9 և 4.2.12 ենթակետերը լրացվում են Կարգի 50 և 53 կետերով սահմանված կարգով: Օտարերկրյա իրավաբանական անձանց կազմակերպական-իրավական ձևի վերաբերյալ տվյալները լրացվում են լատինատառ:

66. «Անհատականացման (հաշվառման) համարը» 4.2.10 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցումը (հաշվառումը) իրականացնող մարմնի կողմից տրամադրված անհատականացման (հաշվառման) համարը:

67. «ՀՎՀՀ» 4.1.11 ենթակետում լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը:

68. «Լիազորված անձ» 4.3 կետը լրացվում է, եթե գործարքը կատարվում է լիազորված անձի միջոցով:

69. «Լիազորող անձ» 4.3.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում լիազորված անձն է հանդիսանում տվյալ անձը:

70. Հաշվետվության ձևի 4.3.2 - 4.3.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են Կարգի 54-64րդ կետերով սահմանված կարգով:

71. «Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը» դաշտը նշվում է այն դեպքում, երբ հաշվետվություն տրամադրող անձը չի կարողանում ստանալ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք գործարքում առկա է իրական շահառու, թե՝ ոչ:

72. «Չկա իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ հաշվետվություն տրամադրող անձը պարզել է, որ գործարքում առկա չէ իրական շահառու (օրինակ՝ այդ մասին գրավոր հայտարարություն է տվել հաճախորդը):

73. «Առկա է իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդից կամ այլ աղբյուրից տեղեկացել է, որ գործարքում առկա է իրական շահառու:

ա. «Առկա է իրական շահառու» դաշտը նշելուց հետո «Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)» 4.4.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում իրական շահառուն է հանդիսանում տվյալ անձը:

բ. «Իրական շահառուի տվյալները» 4.4.2 - 4.4.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են միայն «Առկա է իրական շահառու» դաշտը նշելու դեպքում՝ Կարգի 54 - 64-րդ կետերով սահմանված կարգով:

74. Հաշվետվության ձևի 4-րդ բաժինը, կախված անձանց թվից, լրացվում է համապատասխան քանակով:

ԳԼՈՒԽ 7. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՇԽԱՏԱԿԻՑ

75. «Անուն» 5.1 կետում լրացվում է պատասխանատու աշխատակցի անունը:

76. «Ազգանուն» 5.2 կետում լրացվում է պատասխանատու աշխատակցի ազգանունը:

77. «Լրացման ամսաթիվը» 5.3 կետում լրացվում է հաշվետվության ձևը լրացնելու օրը, ամիսը, տարին:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Փաստաբանների, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 020 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 14-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին[*]

Նպատակ ունենալով նախատեսել հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառման նոր կարգ, նրանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների նոր ձևեր, փոփոխության ենթարկել դրանց տրամադրման կարգը և սահմանել ժամկետներին վերաբերող առավել մանրամասն կանոններ,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին»: Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Փաստաբանների, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 020 հաշվետվության ձևը»՝ համաձայն սույն որոշման Հավելվածի 1-ի:

2. Հաստատել «Փաստաբանների, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 020 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ «ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումը փաստաբանների, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման թիվ 020 հաշվետվական ձևը, տրամադրման կարգը և ժամկետները, փաստաբանների, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 16-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N 274-Ն

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 274-Ն որոշմամբ

ՁԵՎ

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 020 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

1.1. Հաշվառման համարը	1.2. Հաշվետվության ուղարկման ամսաթիվը	1.3. Հաշվետվության հերթական համարը	1.4. Ուղղման (լրացման) հերթական համարը

1.4.1. Ուղղման (լրացման) պատճառը

2. ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը

☐ 2.2. Կանխիկ եղանակով իրականացված գործարք

☐ 2.2.1. Արժույթը

☐ 2.2.2. Գումարը տվյալ արժույթով

☐ 2.2.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

☐ 2.3. Անկանխիկ եղանակով իրականացված գործարք

☐ 2.3.1. Արժույթը

☐ 2.3.2. Գումարը տվյալ արժույթով

☐ 2.3.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

2.4. Գործարքի էությունը

2.5. Գործարքի առարկան

☐ 2.5.1. Դրամական միջոց

☐ 2.5.2. Արժեթուղթ

Նկարագրություն

☐ 2.5.3. Շարժական այլ գույք

Նկարագրություն

☐ 2.5.4. Անշարժ գույք

Նկարագրություն

2.5.4.1. Գտնվելու վայր

2.6. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը

☐ 2.6.1. Լիազոր մարմնի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 2.6.2. Հաշվետվություն տրամադրող անձի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 2.6.3. Այլ

2.7. Կասկածների նկարագրությունը

2.8. Կապված հաշվետվության անվանումը ☐☐☐☐ - ☐☐☐☐ - ☐☐☐☐☐☐ - ☐☐☐☐

2.9. Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն

3. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

3.1. ՀԱՃԱԽՈՐԴ

Հաճախորդի կարգավիճակը

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ ☐ Պետական մարմին կամ համայնք

3.1.1. Անուն (անվանում)

3.1.2. Ազգանուն

3.1.3.Հայրանուն

3.1.4. Ծննդյան ամսաթիվը ☐☐ - ☐☐ - ☐☐☐☐

3.1.5. Բնակության վայր (գտնվելու վայր)

3.1.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.1.5.2. Քաղաք կամ գյուղ

3.1.5.3. Մարզ

3.1.5.4. Երկիր

3.1.6. Ֆիզիկական անձի հաշվառման վայր

3.1.6.1 . Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.1.6.2. Քաղաք կամ գյուղ

3.1.6.3. Մարզ

3.1.6.4. Երկիր

3.1.7. Քաղաքացիություն

3.1.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

3.1.8.1. Անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը

3.1.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը ☐☐ - ☐☐ - ☐☐☐☐

3.1.8.3. Ում կողմից է տրամադրվել

3.1.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը ☐☐ - ☐☐ - ☐☐☐☐

3.1.9. Կազմակերպական-իրավական ձև

3.1.10. Անհատականացման (հաշվառման) համարը

3.1.11. ՀՎՀՀ

3.1.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

3.2. ԳՈՐԾԱՐՔԻ ՄՅՈՒՍ ԿՈՂՄ
Գործարքի մյուս կողմի կարգավիճակը

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ ☐ Պետական մարմին կամ համայնք

3.2.1. Անուն (անվանում)

3.2.2. Ազգանուն

3.2.3. Հայրանուն

3.2.4. Ծննդյան ամսաթիվը - -

3.2.5. Բնակության վայր (գտնվելու վայր)
3.2.5.1 Փողոց, շենք, բնակարան(տուն)

3.2.5.2. Քաղաք կամ գյուղ

3.2.5.3. Մարզ

3.2.5.4. Երկիր

3.2.6. Ֆիզիկական անձի հաշվառման վայր
3.2.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.2.6.2. Քաղաք կամ գյուղ

3.2.6.3. Մարզ

3.2.6.4. Երկիր

3.2.7. Քաղաքացիություն

3.2.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

3.2.8.1. Անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը

3.2.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

3.2.8.3. Ում կողմից է տրամադրվել

3.2.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

3.2.9 Կազմակերպական-իրավական ձև

3.2.10. Անհատականացման (հաշվառման) համարը

3.2.11. ՀՎՀՀ

3.2.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

3.3. ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ
3.3.1. Լիազորող անձ
(հաճախորդի անուն, ազգանուն (անվանում))

3.3.2. Անուն

3.3.3. Ազգանուն

3.3.4. Հայրանուն

3.3.5. Ծննդյան ամսաթիվը - -

3.3.6. Բնակության վայր
3.3.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.3.6.2. Քաղաք կամ գյուղ

3.3.6.3. Մարզ

3.3.6.4. Երկիր

3.3.7. Հաշվառման վայր
3.3.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.3.7.2. Քաղաք կամ գյուղ

3.3.7.3. Մարզ

3.3.7.4. Երկիր

3.3.8. Քաղաքացիություն

3.3.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

3.3.9.1. Փաստաթղթի սերիա և համար

3.3.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

3.3.9.3. Ում կողմից է տրամադրվել

3.3.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

3.4. ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ

☐ Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը ☐ Չկա իրական շահառու ☐ Առկա է իրական շահառու

3.4.1. Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)

3.4.2. Անուն

3.4.3. Ազգանուն

3.4.4. Հայրանուն

3.4.5. Ծննդյան ամսաթիվը - -

3.4.6. Բնակության վայր
3.4.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.4.6.2. Քաղաք կամ գյուղ

3.4.6.3. Մարզ

3.4.6.4. Երկիր

3.4.7. Հաշվառման վայր
3.4.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.4.7.2. Քաղաք կամ գյուղ

3.4.7.3. Մարզ

3.4.7.4. Երկիր

3.4.8. Քաղաքացիություն

3.4.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

3.4.9.1. Փաստաթղթի սերիա և համար

3.4.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

3.4.9.3. Ում կողմից է տրամադրվել

3.4.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

☐ 4.1. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում

4.1.1. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառները

☐ 4.2. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում

4.2.1. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառները

☐ 4.3. Գույքի սառեցում

4.3.1. Սառեցման ամսաթիվը ☐☐☐☐ - ☐☐ - ☐☐

4.3.2. Սառեցման ժամկետը ☐☐☐☐

4.3.3. Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը ☐☐☐☐

5. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

5.1. Անուն ☐☐☐☐ 5.2. Ազգանուն ☐☐☐☐

5.3. Լրացման ամսաթիվը ☐☐☐☐ - ☐☐ - ☐☐

Հավելված 2
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 274-Ն որոշմամբ

ԿԱՐԳ

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 020 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Փաստաբանների, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 020 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է փաստաբանների, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց (այսուհետ՝ Հաշվետվություն տրամադրող անձ) կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հաշվետվության ձևի լրացման կարգը և հաշվետվությունների ներկայացման դեպքերը:

2. Կարգում հասկացություններն օգտագործվում են Օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Հաշվետվության ձևը լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվառված Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից:

4. Հաշվետվությունը ներկայացվում է Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ 6-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին ենթակետի «ա» - «ե» պարբերությամբ սահմանված դեպքերում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով կամ թղթային տարբերակով:

6. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը կարող է ձեռք բերվել Ֆինանսական դիտարկումների կենտրոնին դիմելու կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջից արտահանելու միջոցով:

7. Հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով ներկայացվում են միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կենտ-

րոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու կարգի» 4-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնագիր կնքելուց հետո:

8. Էլեկտրոնային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը ներկայացված է համարվում, եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաշվետվություն տրամադրող անձը չի ստանում սխալի վերաբերյալ հաղորդագրություն:

9. Սխալի վերաբերյալ հաղորդագրություն ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով՝ առանց հաշվետվության անվանման փոփոխության: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

10. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում փակ կնքված (կնիքի առկայության դեպքում) ծրարով՝ «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին» նշագրմամբ, հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

1) ֆիզիկապես ներկայացնելու միջոցով,

2) փոստի միջոցով:

11. Կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացված է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացականի, իսկ կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ «Հայփոստ» ՓԲԸ կողմից համապատասխան անդորրագրի տրամադրման պահից: Կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փոստային հասցեով (ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6):

12. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվության սխալի վերաբերյալ հետադարձ կապ ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

13. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում գործարքում կամ գործարար հարաբերությունում կասկածելիության չափանիշ հայտնաբերելու դեպքում՝ նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ը:

14. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել՝

1) աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

2) ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խոչընդոտներով:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

15. Հաշվետվության ձևը լրացվում է հնարավորինս պարզ, հակիրճ, միանշանակ ընկալվող հայերեն լեզվով, «յունիկոդ» տառատեսակով և մեծատառերով: «Անուն (անվանում)» 3.1.1 և 3.2.1, «Ազգանուն» 3.1.2 և 3.2.2, «Հայրանուն» 3.1.3 և 3.2.3 ենթակետերը լրացվում են անգլերեն, երբ անհրաժեշտ տվյալները Հաշվետվություն տրամադրող անձին հասանելի են միայն անգլերեն լեզվով: Եթե նշված տվյալները հասանելի են այլ օտար լեզվով, ապա նշված ենթակետերը լրացվում են հայերեն կամ անգլերեն լեզվով:

16. Հաշվետվության ձևի թղթային տարբերակը լրացվում է համակարգչի օգնությամբ կամ գրիչով՝ յուրաքանչյուր վանդակում նշելով մեկ նիշ: Հաշվետվության ձևի 1.4.1, 2.4, 2.5.2, 2.5.3, 2.5.4, 2.5.4.1, 2.6.3, 2.7, 2.9, 4.1.1, 4.2.1 կետերի և ենթակետերի ներքո նախատեսված դաշտերի սահմաններն անբավարար լինելու դեպքում անհրաժեշտ է օգտագործել հավելյալ թղթեր: Այդ թղթերի ձախ կողմում նշվում է այն կետը կամ ենթակետը, որի ներքո նախատեսված դաշտը լրացվում է: Այդ թղթերը ստորագրվում և հաստատվում են կնիքով (կնիքի առկայության դեպքում) և կցվում հիմնական հաշվետվության ձևին: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրվում է նաև այդ ուղղումների կողքին:

17. Հաշվետվության ձևի առաջին էջի ներքևի մասում նշվում է ներկայացվող հաշվետվության էջերի քանակը (ներառյալ՝ առաջին էջը): Հաշվետվության ձևի յուրաքանչյուր էջի ներքևի աջ անկյունում անհրաժեշտ է ստորագրել և հաստատել կնիքով (կնիքի առկայության դեպքում): Հաշվետվության ձևի այն էջերը, որոնք չեն լրացվել կարող են չներկայացվել:

18. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը լրացվում է՝ օգտագործելով ներկայացված էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները: Էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները փոփոխության ենթակա չեն: Ցանկացած ներկայացված հաշվետվություն, որը պարունակում է փոփոխություն, դիտվում է թերի կամ սխալ լրացված հաշվետվություն և հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

19. Լրացման համար պարտադիր են այն կետերը և ենթակետերը, որոնց վերաբերյալ Հաշվետվություն տրամադրող անձն ունի կամ պարտավոր է ունենալ տեղեկատվություն:

20. Յուրաքանչյուր գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ ներկայացվում է առանձին հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ

21. «Հաշվառման համարը» 1.1 կետում լրացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվառման համարը (ութ նիշ):

22. «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2 կետում լրացվում են հաշվետվության ուղարկման օրը, ամիսը, տարին (վեց նիշ):

23. «Հաշվետվության հերթական համարը» 1.3 կետում լրացվում է տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (երեք նիշ):

24. «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետում լրացվում է տվյալ հաշվետվության ուղղման և լրացման նպատակով ներկայացվող հաշվետվության հերթական համարը (մեկից երեք նիշ): Այս կետը լրացվում է, եթե հաշվետվությունն ուղարկվում է նախկինում ուղարկված հաշվետվությունում առկա սխալի կամ թերության ուղղման նպատակով, ինչպես նաև եթե սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:

25. Կարգի 8-րդ և 11-րդ կետերով սահմանված կարգով ներկայացված համարվող հաշվետվության մեջ ուղղում կամ լրացում կատարելու համար հիմք հանդիսացած պատճառները և հանգամանքները լրացվում են «Ուղղման (լրացման) պատճառը» 1.4.1 ենթակետում: Այս ենթակետը ենթակա է պարտադիր լրացման, եթե ուղղում կամ լրացում կատարվել է նախորդ հաշվետվությունը ներկայացնելու պահից երեք աշխատանքային օր հետո:

26. Ուղղում կամ լրացում կատարելու դեպքում ներկայացվում է նոր հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 5. ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

27. «Կասկածելի գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը» 2.1 կետում լրացվում է կասկածելի գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման օրը, տարին, ամիսը: Եթե կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը դեռևս չի կատարվել, լրացվում է այն օրը, ամիսը, տարին, երբ ներկայացվել է գործարք կատարելու կամ գործարար հարաբերություն հաստատելու առաջարկը, իսկ այն դեպքում, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է, նշվում են գործարքի կամ գործարար հարաբերության մերժման օրը, ամիսը, տարին:

28. «Կանխիկ եղանակով իրականացվող գործարք» 2.2 կետը նշվում է, եթե գործարքն իրականացվել է կանխիկ եղանակով:

29. «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 2.3 կետը նշվում է, եթե գործարքն իրականացվել է անկանխիկ եղանակով:

30. Այն դեպքում, երբ գործարքն իրականացվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակով, ապա միաժամանակ նշվում են «Կանխիկ եղանակով իրականացվող գործարք» 2.2 և «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 2.3 կետերը, ինչպես նաև լրացվում են դրանց ներքո նախատեսված ենթակետերը:

31. «Արժույթը» 2.2.1 և 2.3.1 ենթակետերում լրացվում է այն արժույթը, որով կատարվել է գործարքը:

32. «Գումարը տվյալ արժույթով» 2.2.2 և 2.3.2 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի չափը այն արժույթով, որով կատարվել է գործարքը: Եթե «Արժույթը» 2.2.1 և 2.3.1 ենթակետերում լրացվում է ՀՀ դրամ, ապա նույն գումարը լրացվում է և՛ «Գումարը տվյալ արժույթով» 2.2.2 ու 2.3.2, և՛ «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 2.2.3 ու 2.3.3 ենթակետերում:

33. «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 2.2.3 և 2.3.3 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

34. «Գործարքի էությունը» 2.4 կետում նկարագրվում են այն գործարքները կամ գործարար հարաբերությունները, որոնց հետ կապված Հաշվետվություն տրամադրող անձը մատուցում է ծառայություն:

35. «Գործարքի առարկան» 2.5 կետում նշվում է գործարքի առարկայի տեսակը՝ դրամական միջոց, արժեթուղթ, շարժական այլ գույք կամ անշարժ գույք:

36. «Դրամական միջոց» 2.5.1 ենթակետը նշվում է, եթե գործարքի առարկան ՀՀ դրամ կամ օտարերկրյա արտարժույթ է:

37. «Արժեթուղթ» 2.5.2 ենթակետը նշվում է, եթե գործարքի առարկան արժեթուղթ է: 3.8.2 ենթակետի ներքո առկա «Նկարագրություն» դաշտում լրացվում են արժեթղթի տեսակը, ինչպես նաև արժեթուղթը նույնականացնող այլ տվյալների վերաբերյալ տեղեկությունները:

38. «Շարժական այլ գույք» 2.5.3 ենթակետը նշվում է, եթե գործարքի առարկան հանդիսանում է այլ գույք, քան 2.5.1 և 2.5.2 ենթակետերում նշված գույքը, օրինակ՝ ավտոմեքենա: 2.5.3 ենթակետի ներքո առկա «Նկարագրություն» դաշտում լրացվում են այդ գույքի անվանման և նույնականացման այլ տվյալների վերաբերյալ տեղեկությունները:

39. «Անշարժ գույք» 2.5.4 ենթակետը նշվում է, եթե գործարքի առարկան անշարժ գույք է: 2.8.4 ենթակետի ներքո առկա «Նկարագրություն» դաշտում լրացվում են այդ գույքի անվանման, նույնացման համարի և անհատականացնող այլ տվյալների մասին տեղեկությունները, օրինակ՝ եթե անշարժ գույքը հողամաս է, ապա պետք է նշվեն հողամասի չափի, նշանակության (տնամերձ, արտադրական, գյուղատնտեսական) վերաբերյալ տեղեկություններ:

40. «Անշարժ գույքի գտնվելու վայրը» 2.5.4.1 դաշտում լրացվում է անշարժ գույքի գտնվելու վայրի (հասցեի) վերաբերյալ տեղեկատվությունը, որը պարունակում է հետևյալ վավերապայմանները՝ մարզ, համայնք, ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտ (թաղամաս, հրապարակ, փողոց,պողոտա, նրբանցք, անցում, փակուղի, զբոսայգի և այլն):

41. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը» 2.6 կետում նշվում է 2.6.1-2.6.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը: Եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշը կամ տիպաբանությունը սահմանված չէ 2.6.1 և 2.6.2 ենթակետերով նախատեսված իրավական ակտերում, ապա նշվում է «Այլ» 2.6.3 ենթակետը: 2.6.1 - 2.6.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը նշելու դեպքում այդ ենթակետերի ներքո նախատեսված դաշտում լրացվում է Լիազոր մարմնի իրավական ակտով, Հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտով սահմանված կամ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության այլ չափանիշ կամ տիպաբանություն:

42. «Կասկածների նկարագրությունը» 2.7 կետում հնարավորինս մանրամասն նկարագրվում են գործարքի կամ գործարար հարաբերության նախապատմությունը, այն բոլոր հանգամանքները, որոնք վկայել են գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության մասին: Այս կետում կարող են նկարագրվել նաև Հաշվետվություն տրամադրող անձի՝ հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները:

43. «Կապված հաշվետվության անվանումը» 2.8 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության անվանումը, եթե ներկայացվող հաշվետվությամբ կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը, ըստ Հաշվետվություն տրամադրող անձի, պատճառահետևանքային կամ այլ առումով կապված է Հաշվետվություն տրամադրող անձի կողմից նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքի կամ գործարար հարաբերության հետ: «Կապված հաշվետվության անվանումը» 2.8 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության ձևի «Հաշվառման համարը» 1.1, «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2, «Հաշվետվության հերթական համարը» 1.3, «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետերում (առկայության դեպքում) լրացված տեղեկատվությունը: Թղթային տարբերակով հաշվետվություն ներկայացնելիս, եթե առկա է մեկից ավելի կապված հաշվետվություն, «Կապված հաշվետվության անվանումը» 2.8 կետը պատճենահանվում և լրացվում է համապատասխան քանակով:

44. «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 2.9 կետում նշվում են գործարքին կամ գործարար հարաբերությանն առնչվող՝ Հաշվետվություն տրամադրող անձի կողմից կարևորվող այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

45. «Հաճախորդ» 3.1 կետի ներքո նախատեսված «Հաճախորդի կարգավիճակը» դաշտում լրացվում է հաճախորդի կարգավիճակը՝ կախված գործարքի տեսակից, օրինակ, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի հետ կապված ծառայության մատուցման դեպքում վաճառող:

46. «Հաճախորդ» 3.1 կետում նշվում է հաճախորդի տեսակը՝ ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր, իրավաբանական անձ կամ պետական մարմին կամ համայնք:

47. «Անուն (անվանում)» 3.1.1 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ անունը կամ իրավաբանական անձի կամ պետական մարմնի կամ համայնքի անվանումը:

48. «Ազգանուն» 3.1.2 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը: Այն դեպքում, երբ հստակ չէ, թե որն է հաճախորդի անունը և որը ազգանունը, ապա 3.1.1 և 3.1.2 ենթակետերը լրացվում են Հաշվետվություն տրամադրող անձի հայեցողությամբ:

49. «Հայրանուն» 3.1.3 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հայրանունը:

50. «Ծննդյան ամսաթիվը» 3.1.4 ենթակետում լրացվում են ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան օրը, ամիսը, տարին:

51. «Բնակության վայր (գտնվելու վայր)» 3.1.5. ենթակետի ներքո նախատեսված 3.1.5.1-3.1.5.4 դաշտերում ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում լրացվում է այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ

ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում են, իսկ իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը): 3.1.5.1-3.1.5.4 դաշտերը չեն լրացվում, եթե Ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը և հաշվառման վայրը նույն են:

52. «Հաշվառման վայրը» 3.1.6 ենթակետի ներքո նախատեսված 3.1.6.1 - 3.1.6.4 դաշտերում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը հաշվառված է:

53. «Քաղաքացիությունը» 3.1.7 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ քաղաքացիությունը:

54. «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 3.1.8 ենթակետում նշվում է անձնագիրը, նույնականացման քարտը կամ նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձը (ինքնություն) հաստատող այլ փաստաթուղթ:

55. «Փաստաթղթի սերիան և համարը» 3.1.8.1, «Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը» 3.1.8.2 դաշտերում համապատասխանաբար լրացվում են «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 3.1.8 ենթակետում նշված փաստաթղթի սերիան, համարը, ինչպես նաև տրամադրման օրը, ամիսը, տարին:

56. «Ում կողմից է տրամադրվել» 3.1.8.3 դաշտում լրացվում է այն պետական մարմնի անվանումը կամ ծածկագիրը, որի կողմից տրամադրվել է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 3.1.8 ենթակետում նշված փաստաթուղթը:

57. «Փաստաթղթի վավերականության ժամկետը» 3.1.8.4 դաշտում լրացվում է այն օրը, ամիսը, տարին, երբ լրանում է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 3.1.8 ենթակետում նշված փաստաթղթի վավերականության ժամկետը:

58. «Կազմակերպական-իրավական ձևը» 3.1.9 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը կամ դրա հապավումը (օրինակ՝ ՍՊԸ, ԲԲԸ և այլն): Օտարերկրյա իրավաբանական անձանց կազմակերպական-իրավական ձևի վերաբերյալ տվյալները լրացվում են լատիներեն տառ:

59. «Անհատականացման (հաշվառման) համարը» 3.1.10 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցումը (հաշվառումը) իրականացնող մարմնի կողմից տրամադրված անհատականացման (հաշվառման) համարը:

60. «ՀՎՀՀ» 3.1.11 ենթակետում լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը:

61. «Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն» 3.1.12 ենթակետում լրացվում են գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը:

62. «Գործարքի մյուս կողմ» 3.2 կետի ներքո նախատեսված «Գործարքի մյուս կողմի կարգավիճակը» դաշտում լրացվում է գործարքի մյուս կողմի կարգավիճակը, եթե առկա է գործարքի մյուս կողմ:

63. Հաշվետվության ձևի 3.2.1 - 3.2.12 ենթակետերը լրացվում են Կարգի 47-61 կետերով սահմանված կարգով:

64. «Լիազորված անձ» 3.3 կետը լրացվում է, եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կատարվում է լիազորված անձի միջոցով:

65. «Լիազորող անձ» 3.3.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում լիազորված անձն է հանդիսանում տվյալ անձը:

66. Հաշվետվության ձևի 3.3.2 - 3.3.9.2 ենթակետերը և դաշտերը լրացվում են Կարգի 47-57 կետերով սահմանված կարգով:

67. «Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը չի կարողանում ստանալ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու, թե՝ ոչ:

68. «Չկա իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը պարզել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա չէ իրական շահառու (օրինակ՝ այդ մասին գրավոր հայտարարություն է տվել հաճախորդը):

69. «Առկա է իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդից կամ այլ աղբյուրից տեղեկացել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու:

70. «Առկա է իրական շահառու» դաշտը նշելուց հետո «Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)» 3.4.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում իրական շահառուն է հանդիսանում տվյալ անձը:

71. «Իրական շահառուի տվյալները» 3.4.2-4.3.9.2 ենթակետերը և դաշտերը լրացվում են միայն «Առկա է իրական շահառու» դաշտը նշելու դեպքում՝ Կարգի 47-57 կետերով սահմանված կարգով:

72. Հաշվետվության ձևի 3-րդ բաժինը, կախված անձանց թվից, լրացվում է համապատասխան քանակով:

ԳԼՈՒԽ 7. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

73. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում» 4.1 կետը նշվում է, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է:

74. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառները» 4.1.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժելու համար:

75. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում» 4.2 կետը նշվում է, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցվել է:

76. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառները» 4.2.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցնելու համար:

77. «Գույքի սառեցում» 4.3 կետը նշվում է, երբ հաճախորդի գույքը սառեցվել է:

78. «Սառեցման ամսաթիվ» 4.3.1 ենթակետում լրացվում են գույքի սառեցման օրը, ամիսը, տարին:

79. «Սառեցման ժամկետը» 4.3.2 ենթակետում լրացվում է սառեցման ժամկետը:

80. «Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը» 4.3.3 ենթակետում լրացվում է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերի և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կատարման նպատակով Ֆինանսական դիտարկումների կենտրոն կողմից հրապարակած ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը:

ԳԼՈՒԽ 8. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

81. «Անուն» 5.1 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի անունը:

82. «Ազգանուն» 5.2 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի ազգանունը:

83. «Լրացման ամսաթիվը» 5.3 կետում լրացվում են հաշվետվության ձևը լրացնելու օրը, ամիսը, տարին:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Ռիելթորական գործունեություն իրականացնող անձանց կողմից կասկածելի գործարքի վերաբերյալ թիվ 024 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 15-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին[*]

Նպատակ ունենալով նախատեսել հաշվետվություն տրամադրող անձանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների նոր ձևեր, փոփոխության ենթարկել դրանց տրամադրման կարգը և սահմանել ժամկետներին վերաբերող առավել մանրամասն կանոններ,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին»: Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Ռիելթորական գործունեություն իրականացնող անձանց կողմից կասկածելի գործարքի վերաբերյալ թիվ 024 հաշվետվության ձևը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2. Հաստատել «Ռիելթորական գործունեություն իրականացնող անձանց կողմից կասկածելի գործարքի վերաբերյալ թիվ 024 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի «ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումը ռիելտորական գործունեություն իրականացնող անձանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման թիվ 024 հաշվետվական ձևը, տրամադրման կարգը և ժամկետները, ռիելտորական գործունեություն իրականացնող անձանց հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 15-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N 275-Ն

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 275-Ն որոշմամբ

ՁԵՎ

ՌԻԵԼԹՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 024 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

1.1. Հաշվառման համարը	1.2. Հաշվետվության ուղարկման ամսաթիվը	1.3. Հաշվետվության հերթական համարը	1.4.. Ուղղման (լրացման) հերթական համարը

1.4.1. Ուղղման (լրացման) պատճառը

2. ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Գործարքի կատարման ամսաթիվը

☐ 2.2. Կանխիկ եղանակով իրականացվող գործարք

☐ 2.2.1. Արժույթը

☐ 2.2.2. Գումարը տվյալ արժույթով

☐ 2.2.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

☐ 2.3. Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք

☐ 2.3.1. Արժույթը

☐ 2.3.2. Գումարը տվյալ արժույթով

☐ 2.3.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

2.4. Գործարքի անվանումը

2.4.1. Անշարժ գույքի առք

2.4.2. Անշարժ գույքի վաճառք

2.4.3. Այլ

2.5. Գործարքի առարկան

2.5.1. Գործարքի առարկայի գտնվելու վայրը

2.6. Կասկածելի գործարքի չափանիշ կամ տիպաբանություն

☐ 2.6.1. Լիազոր մարմնի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 2.6.2. Հաշվետվություն տրամադրող անձի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 2.6.3. Այլ

2.7. Կասկածների նկարագրությունը

2.8. Կապված հաշվետվության անվանումը - - - -

2.9. Գործարքին վերաբերող այլ տեղեկատվություն

3. ԳՈՐԾԱՐՔԻ ԿՈՂՄԵՐ

3.1. ՀԱՃԱԽՈՐԴ

Հաճախորդի կարգավիճակը

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ ☐ Պետական մարմին կամ համայնք

3.1.1. Անուն (անվանում)

3.1.2. Ազգանուն

3.1.3. Հայրանուն

3.1.4. Ծննդյան ամսաթիվը - -

3.1.5. Բնակության վայր (գտնվելու վայր)

3.1.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.1.5.2. Քաղաք կամ գյուղ

3.1.5.3. Մարզ

3.1.5.4. Երկիր

3.1.6. Ֆիզիկական անձի հաշվառման վայր

3.1.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.1.6.2. Քաղաք կամ գյուղ

3.1.6.3. Մարզ

3.1.6.4. Երկիր

3.1.7. Քաղաքացիություն

3.1.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

3.1.8.1. Անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը

3.1.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

3.1.8.3. Ում կողմից է տրամադրվել

3.1.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

3.1.9. Կազմակերպական-իրավական ձև

3.1.10. Անհատականացման (հաշվառման) համարը

3.1.11. ՀՎՀՀ

3.1.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

3.2. ԳՈՐԾԱՐՔԻ ՄՅՈՒՍ ԿՈՂՄ

Գործարքի մյուս կողմի կարգավիճակը

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ ☐ Պետական մարմին կամ համայնք

3.2.1 . Անուն (անվանում)

3.2.2. Ազգանուն

3.2.3. Հայրանուն

3.2.4. Ծննդյան ամսաթիվը - -

3.2.5. Բնակության վայր (գտնվելու վայր)

3.2.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.2.5.2. Քաղաք կամ գյուղ

3.2.5.3. Մարզ

3.2.5.4. Երկիր

3.2.6. Ֆիզիկական անձի հաշվառման վայր
3.2.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.2.6.2. Քաղաք կամ գյուղ

3.2.6.3. Մարզ

3.2.6.4. Երկիր

3.2.7. Քաղաքացիություն

3.2.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

3.2.8.1. Անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը

3.2.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

3.2.8.3. Ում կողմից է տրամադրվել

3.2.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

3.2.9. Կազմակերպական-իրավական ձև

3.2.10. Անհատականացման (հաշվառման) համարը

3.2.11. ՀՎՀՀ

3.2.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

3.3. ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ
3.3.1. Լիազորող անձ

(հաճախորդի անուն, ազգանուն (անվանում))

3.3.2. Անուն

3.3.3. Ազգանուն

3.3.4. Հայրանուն

3.3.5. Ծննդյան ամսաթիվը - -

3.3.6. Բնակության վայր
3.3.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.3.6.2. Քաղաք կամ գյուղ

3.3.6.3. Մարզ

3.3.6.4. Երկիր

3.3.7. Հաշվառման վայր
3.3.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.3.7.2. Քաղաք կամ գյուղ

3.3.7.3. Մարզ

3.3.7.4. Երկիր

3.3.8. Քաղաքացիություն

3.3.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

3.3.9.1. Փաստաթղթի սերիա և համար

3.3.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

3.3.9.3. Ում կողմից է տրամադրվել

3.3.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

3.4. ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ

☐ Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը ☐ Չկա իրական շահառու ☐ Առկա է իրական շահառու

3.4.1. Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)

3.4.2. Անուն

3.4.3. Ազգանուն

3.4.4. Հայրանուն

3.4.5. Ծննդյան ամսաթիվը - -

3.4.6. Բնակության վայր

3.4.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.4.6.2. Քաղաք կամ գյուղ

3.4.6.3. Մարզ

3.4.6.4. Երկիր

3.4.7. Հաշվառման վայր

3.4.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.4.7.2. Քաղաք կամ գյուղ

3.4.7.3. Մարզ

3.4.7.4. Երկիր

3.4.8. Քաղաքացիություն

3.4.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

3.4.9.1. Փաստաթղթի սերիա և համար

3.4.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

3.4.9.3. Ում կողմից է տրամադրվել

3.4.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

☐ 4.1. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում

4.1.1. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառները

☐ 4.2. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում

4.2.1. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառները

☐ 4.3. Գույքի սառեցում

4.3.1. Սառեցման ամսաթիվը - -

4.3.2. Սառեցման ժամկետը

4.3.3. Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը

5. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

5.1. Անուն

5.2. Ազգանուն

5.3. Լրացման ամսաթիվը - -

Հավելված 2

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 275-Ն որոշմամբ

ԿԱՐԳ
ՌԻԵԼԹՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 024 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՋԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ռիելթորական գործունեություն իրականացնող անձանց կողմից կասկածելի գործարքի վերաբերյալ թիվ 024 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է ռիելթորական գործունեություն իրականացնող անձանց (այսուհետ՝ Հաշվետվություն տրամադրող անձ) կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հաշվետվության ձևի լրացման կարգը և հաշվետվությունների ներկայացման դեպքերը:

2. Կարգում հասկացություններն օգտագործվում են Օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Հաշվետվության ձևը լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվառված Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից:

4. Հաշվետվությունը ներկայացվում է Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հաշվետվության ձևի 2.4.1-2.4.3 կետերով նախատեսված դեպքերում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով կամ թղթային տարբերակով:

6. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը կարող է ձեռք բերվել Ֆինանսական դիտարկումների կենտրոնին դիմելու կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջից արտահանելու միջոցով:

7. Հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով ներկայացվում են միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու կարգի» 4-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնագիր կնքելուց հետո:

8. Էլեկտրոնային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը ներկայացված է համարվում, եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաշվետվություն տրամադրող անձը չի ստանում սխալի վերաբերյալ հաղորդագրություն:

9. Սխալի վերաբերյալ հաղորդագրություն ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով՝ առանց հաշվետվության անվանման փոփոխության: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

10. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում փակ կնքված (կնիքի առկայության դեպքում) ծրարով՝ «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին» նշագրմամբ, հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

1) ֆիզիկապես ներկայացնելու միջոցով,

2) փոստի միջոցով:

11. Կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացված է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացականի, իսկ կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ «Հայփոստ» ՓԲԸ կողմից համապատասխան անդորրագրի տրամադրման պահից: Կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փոստային հասցեով (ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6):

12. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվության սխալի վերաբերյալ հետադարձ կապ ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

13. Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում գործարքում կասկածելիության չափանիշ հայտնաբերելու դեպքում նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ն:

14. Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվության տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել՝

1) աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

2) ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

15. Հաշվետվության ձևը լրացվում է հնարավորինս պարզ, հակիրճ, միանշանակ ընկալվող հայերեն լեզվով, «յունիկոդ» տառատեսակով և մեծատառերով: «Անուն (անվանում)» 3.1.1 և 3.2.1, «Ազգանուն» 3.1.2, և 3.2.2, «Հայրանուն» 3.1.3 և 3.2.3 ենթակետերը լրացվում են անգլերեն, երբ անհրաժեշտ տվյալները Հաշվետվություն տրամադրող անձին հասանելի են միայն անգլերեն լեզվով: Եթե նշված տվյալները հասանելի են այլ օտար լեզվով, ապա նշված ենթակետերը լրացվում են հայերեն կամ անգլերեն լեզվով:

16. Հաշվետվության ձևի թղթային տարբերակը լրացվում է համակարգչի օգնությամբ կամ գրիչով՝ յուրաքանչյուր վանդակում նշելով մեկ նիշ: Հաշվետվության ձևի 1.4.1, 2.4, 2.5.2, 2.5.3, 2.5.4, 2.5.4.1, 2.6.3, 2.7, 2.9, 4.1.1, 4.2.1 կետերի և ենթակետերի ներքո նախատեսված դաշտերի սահմաններն անբավարար լինելու դեպքում անհրաժեշտ է օգտագործել հավելյալ թղթեր: Այդ թղթերի ձախ կողմում նշվում է այն կետը կամ ենթակետը, որի ներքո նախատեսված դաշտը լրացվում է: Այդ թղթերը ստորագրվում և հաստատվում են կնիքով (կնիքի առկայության դեպքում) և կցվում հիմնական հաշվետվության ձևին: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրվում է նաև այդ ուղղումների կողքին:

17. Հաշվետվության ձևի առաջին էջի ներքևի մասում նշվում է ներկայացվող հաշվետվության էջերի քանակը (ներառյալ՝ առաջին էջը): Հաշվետվության ձևի յուրաքանչյուր էջի ներքևի աջ անկյունում անհրաժեշտ է ստորագրել և հաստատել կնիքով (կնիքի առկայության դեպքում):Հաշվետվության ձևի այն էջերը, որոնք չեն լրացվել կարող են չներկայացվել:

18. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը լրացվում է՝ օգտագործելով ներկայացված էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները: Էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները փոփոխության ենթակա չեն: Ցանկացած ներկայացված հաշվետվություն, որը պարունակում է փոփոխություն, դիտվում է թերի կամ սխալ լրացված հաշվետվություն և հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

19. Լրացման համար պարտադիր են այն կետերը և ենթակետերը, որոնց վերաբերյալ Հաշվետվություն տրամադրող անձն ունի կամ պարտավոր է ունենալ տեղեկատվություն:

20. Յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ ներկայացվում է առանձին հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

21. «Հաշվառման համարը» 1.1 կետում լրացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվառման համարը (ութ նիշ):

22. «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2 կետում լրացվում են հաշվետվության ուղարկման օրը, ամիսը, տարին (վեց նիշ):

23. «Հաշվետվության հերթական համարը» 1.3 կետում լրացվում է տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (երեք նիշ):

24. «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետում լրացվում է տվյալ հաշվետվության ուղղման և լրացման նպատակով ներկայացվող հաշվետվության հերթական համարը (մեկից երեք նիշ): Այս կետը լրացվում է, եթե հաշվետվությունն ուղարկվում է նախկինում ուղարկված հաշվետվությունում առկա սխալի կամ թերության ուղղման նպատակով, ինչպես նաև եթե սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:

25. Կարգի 8-րդ և 11-րդ կետերով սահմանված կարգով ներկայացված համարվող հաշվետվության մեջ ուղղում կամ լրացում կատարելու համար հիմք հանդիսացած պատճառները և հանգամանքները լրացվում են «Ուղղման (լրացման) պատճառը» 1.4.1 ենթակետում: Այս ենթակետը ենթակա է պարտադիր լրացման, եթե ուղղում կամ լրացում կատարվել է նախորդ հաշվետվությունը ներկայացնելու պահից երեք աշխատանքային օր հետո:

26. Ուղղում կամ լրացում կատարելու դեպքում ներկայացվում է նոր հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 5. ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

27. «Կասկածելի գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը» 2.1 կետում լրացվում են կասկածելի գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման օրը, տարին, ամիսը: Եթե կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը դեռևս չի կատարվել, լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ ներկայացվել է գործարք կատարելու կամ գործարար հարաբերություն հաստատելու առաջարկը, իսկ այն դեպքում, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է, նշվում են գործարքի կամ գործարար հարաբերության մերժման օրը, ամիսը, տարին:

28. «Կանխիկ եղանակով իրականացվող գործարք» 2.2 կետը նշվում է, եթե գործարքն իրականացվել է կանխիկ եղանակով:

29. «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 2.3 կետը նշվում է, եթե գործարքն իրականացվել է անկանխիկ եղանակով:

30. Այն դեպքում, երբ գործարքն իրականացվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակով, ապա միաժամանակ նշվում են «Կանխիկ եղանակով իրականացվող գործարք» 2.2 և «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 2.3 կետերը, ինչպես նաև լրացվում են դրանց ներքո նախատեսված ենթակետերը:

31. «Արժույթը» 2.2.1 և 2.3.1 ենթակետերում լրացվում է այն արժույթը, որով կատարվել է գործարքը:

32. «Գումարը տվյալ արժույթով» 2.2.2 և 2.3.2 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի չափը այն արժույթով, որով կատարվել է գործարքը: Եթե «Արժույթը» 2.2.1 և 2.3.1 ենթակետերում լրացվում է ՀՀ դրամ, ապա նույն գումարը լրացվում է և՛ «Գումարը տվյալ արժույթով» 2.2.2 ու 2.3.2, և՛ «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 2.2.3 ու 2.3.3 ենթակետերում:

33. «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 2.2.3 և 2.3.3 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

34. «Գործարքի անվանում» 2.4 կետում նշվում է այդ կետի ներքո նախատեսված ենթակետերից որևէ մեկը: «Այլ» ենթակետը նշելու դեպքում այդ ենթակետի ներքո նախատեսված դաշտում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության անվանումը:

35. «Գործարքի առարկա» 2.5 կետում նշվում է անշարժ գույքի անվանման և նույնականացման այլ տվյալների մասին տեղեկությունները, օրինակ՝ եթե անշարժ գույքը հողամաս է, ապա պետք է նշվի հողամասի չափի, նպատակային և գործառնական նշանակության (օրինակ՝ տնամերձ, արտադրական, գյուղատնտեսական) մասին տեղեկություններ:

36. «Գործարքի առարկայի գտնվելու վայրը» 2.5.1 կետում նշվում է անշարժ գույքի գտնվելու վայրի (հասցեի) վերաբերյալ տեղեկատվությունը, որը պարունակում է առնվազն հետևյալ վավերապայմանները՝ մարզ, համայնք, ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտ (թաղամաս, հրապարակ, փողոց, պողոտա, նրբանցք, անցում, փակուղի, զբոսայգի և այլն):

37. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը» 2.6 կետում նշվում է 2.6.1-2.6.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը: Եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշը կամ տիպաբանությունը սահմանված չէ 2.6.1 - 2.6.2 ենթակետերով նախատեսված իրավական ակտերում, ապա նշվում է «Այլ» 2.6.3 ենթակետը: 2.6.1 - 2.6.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը նշելու դեպքում այդ ենթակետերի ներքո նախատեսված դաշտում լրացվում է Լիազոր մարմնի իրավական ակտով, Հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտով սահմանված կամ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության այլ չափանիշ կամ տիպաբանություն:

38. «Կասկածների նկարագրությունը» 2.7 կետում հնարավորինս մանրամասն նկարագրվում են գործարքի կամ գործարար հարաբերության նախապատմությունը, այն բոլոր հանգամանքները, որոնք վկայել են գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության մասին: Այս կետում կարող են նկարագրվել նաև Հաշվետվություն տրամադրող անձի՝ հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները:

39. «Կապված հաշվետվության անվանումը» 2.8 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության անվանումը, եթե ներկայացվող հաշվետվությամբ կասկածելի գործարքը, ըստ Հաշվետվություն տրամադրող անձի, պատճառահետևանքային կամ այլ առումով կապված է Հաշվետվություն տրամադրող անձի կողմից նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքի հետ: «Կապված հաշվետվության անվանումը» 2,8 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության ձևի «Հաշվառման համարը» 1.1, «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը 1.2, «Հաշվետվության հերթական համարը» 1.3, «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետերում (առկայության դեպքում) լրացված տեղեկատվությունը: Թղթային տարբերակով հաշվետվություն ներկայացնելիս, եթե առկա է մեկից ավելի կապված հաշվետվություն, «Կապված հաշվետվության անվանումը» 2.8 կետը պատճենահանվում և լրացվում է համապատասխան քանակով:

40. «Գործարքին վերաբերող այլ տեղեկատվություն» 2.9 կետում նշվում են գործարքին առնչվող՝ Հաշվետվություն տրամադրող անձի կողմից կարևորվող այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

41. «Հաճախորդ» 3.1 կետի ներքո նախատեսված «Հաճախորդի կարգավիճակը» դաշտում լրացվում է հաճախորդի կարգավիճակը, օրինակ, գնորդ:

42. «Հաճախորդ» 3.1 կետում նշվում է հաճախորդի տեսակը՝ ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր, իրավաբանական անձ կամ պետական մարմին կամ համայնք:

43. «Անուն (անվանում)» 3.1.1 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ անունը կամ իրավաբանական անձի կամ պետական մարմնի կամ համայնքի անվանումը:

44. «Ազգանուն» 3.1.2 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը: Այն դեպքում, երբ հստակ չէ, թե որն է հաճախորդի անունը և որը ազգանունը, ապա 3.1.1 և 3.1.2 ենթակետերը լրացվում են Հաշվետվություն տրամադրող անձի հայեցողությամբ:

45. «Հայրանուն» 3.1.3 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հայրանունը:

46. «Ծննդյան ամսաթիվը» 3.1.4 ենթակետում լրացվում են ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան օրը, ամիսը, տարին:

47. «Բնակության վայր (գտնվելու վայր)» 3.1.5 ենթակետի ներքո նախատեսված 3.1.5.1 - 3.1.5.4 դաշտերում ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում լրացվում է այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում են, իսկ իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը): 3.1.5.1-3.1.5.4 դաշտերը չեն լրացվում, եթե Ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը և հաշվառման վայր նույն են:

48. «Հաշվառման վայր» 3.1.6 ենթակետի ներքո նախատեսված 3.1.6.1- 3.1.6.4 դաշտերում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը հաշվառված է:

49. «Քաղաքացիությունը» 3.1.7. ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ քաղաքացիությունը:

50. «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 3.1.8 ենթակետում նշվում է անձնագիրը, նույնականացման քարտը կամ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձը (ինքնություն) հաստատող այլ փաստաթուղթ:

51. «Փաստաթղթի սերիան և համարը» 3.1.8.1, «Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը» 3.1.8.2 դաշտերում համապատասխանաբար լրացվում են «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 3.1.8 ենթակետում նշված փաստաթղթի սերիան, համարը, ինչպես նաև տրամադրման օրը, ամիսը, տարին:

52. «Ում կողմից է տրամադրվել» 3.1.8.3 դաշտում լրացվում է այն պետական մարմնի անվանումը կամ ծածկագիրը, որի կողմից տրամադրվել է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 3.1.8 ենթակետում նշված փաստաթուղթը:

53. «Փաստաթղթի վավերականության ժամկետը» 3.1.8.4 դաշտում լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ լրանում է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 3.1.8 ենթակետում նշված փաստաթղթի վավերականության ժամկետը

54. «Կազմակերպական-իրավական ձևը» 3.1.9 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը կամ դրա հապավումը (օրինակ՝ ՍՊԸ, ԲԲԸ և այլն): Օտարերկրյա իրավաբանական անձանց կազմակերպական-իրավական ձևի վերաբերյալ տվյալները լրացվում են լատինատառ:

55. «Անհատականացման (հաշվառման) համարը» 3.1.10 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցումը (հաշվառումը) իրականացնող մարմնի կողմից տրամադրված անհատականացման (հաշվառման) համարը:

56. «ՀՎՀՀ» 3.1.11 ենթակետում լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը:

57. «Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն» 3.1.12 ենթակետում լրացվում են գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը:

58. «Գործարքի մյուս կողմ» 3.2 կետի ներքո նախատեսված «Գործարքի մյուս կողմի կարգավիճակը» դաշտում լրացվում է գործարքի մյուս կողմի կարգավիճակը, եթե առկա է գործարքի մյուս կողմ:

59. Հաշվետվության ձևի 3.2.1 - 3.2.12 ենթակետերը լրացվում են Կարգի 43-57 կետերով սահմանված կարգով:

60. «Լիազորված անձ» 3.3 կետը լրացվում է, եթե գործարքը կատարվում է լիազորված անձի միջոցով:

61. «Լիազորող անձ» 3.3.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում լիազորված անձն է հանդիսանում տվյալ անձը:

62. Հաշվետվության ձևի 3.3.2 - 3.3.9.2 ենթակետերը և դաշտերը լրացվում են Կարգի 43-53 կետերով սահմանված կարգով:

63. «Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը չի կարողանում ստանալ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք գործարքում առկա է իրական շահառու, թե՝ ոչ:

64. «Չկա իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը պարզել է, որ գործարքում առկա չէ իրական շահառու (օրինակ՝ այդ մասին գրավոր հայտարարություն է տվել հաճախորդը):

65. «Առկա է իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդից կամ այլ աղբյուրից տեղեկացել է, որ գործարքում առկա է իրական շահառու:

66. «Առկա է իրական շահառու» դաշտը նշելուց հետո «Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)» 3.4.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում իրական շահառուն է հանդիսանում տվյալ անձը:

67. «Իրական շահառուի տվյալները» 3.4.2 - 4.3.9.2 ենթակետերը և դաշտերը լրացվում են միայն «Առկա է իրական շահառու» դաշտը նշելու դեպքում՝ Կարգի 43 - 53 կետերով սահմանված կարգով:

68. Հաշվետվության ձևի 3-րդ բաժինը, կախված անձանց թվից, լրացվում է համապատասխան քանակով:

ԳԼՈՒԽ 7. ԳՈՐԾԱՐՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

69. «Գործարքի իրականացման մերժում» 4.1 կետը նշվում է, երբ գործարքի իրականացումը մերժվել է:

70. «Գործարքի իրականացման մերժման պատճառները» 4.1.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքի իրականացումը մերժելու համար:

71. «Գործարքի դադարեցում» 4.2 կետը նշվում է, երբ գործարքը դադարեցվել է:

72. «Գործարքի դադարեցման պատճառները» 4.2.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքը դադարեցնելու համար:

73. «Գույքի սառեցում» 4.3 կետը նշվում է, երբ հաճախորդի գույքը սառեցվել է:

74. «Սառեցման ամսաթիվ» 4.3.1 ենթակետում լրացվում է գույքի սառեցման օրը, ամիսը, տարին:

75. «Սառեցման ժամկետը» 4.3.2 ենթակետում լրացվում է սառեցման ժամկետը:

76. «Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը» 4.3.3 ենթակետում լրացվում է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերի և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կատարման նպատակով Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից հրապարակած ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը:

ԳԼՈՒԽ 8. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

77. «Անուն» 5.1 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի անունը:

78. «Ազգանուն» 5.2 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի ազգանունը:

79. «Լրացման ամսաթիվը» 5.3 կետում լրացվում են հաշվետվության ձևը լրացնելու օրը, ամիսը, տարին:

Աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 025 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 17-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին[*]

Նպատակ ունենալով նախատեսել հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառման նոր կարգ, նրանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների նոր ձևեր, փոփոխության ենթարկել դրանց տրամադրման կարգը և սահմանել ժամկետներին վերաբերող առավել մանրամասն կանոններ,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 025 հաշվետվության ձևը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2. Հաստատել «Աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 025 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի «ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումը անհատ ձեռնարկատեր աուդիտորների և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման թիվ 026 հաշվետվական ձևը, տրամադրման կարգը և ժամկետները, անհատ ձեռնարկատեր աուդիտորների և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 17-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N 276-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 276-Ն որոշմամբ

ՁԵՎ

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ, ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԹԻՎ 025 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

1.1. Հաշվառման համարը	1.2. Հաշվետվության ուղարկման ամսաթիվը	1.3. Հաշվետվության հերթական համարը	1.4. Ուղղման (լրացման) հերթական համարը

1.4.1. Ուղղման (լրացման) պատճառը

2. ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը

2.2. Կանխիկ եղանակով իրականացված գործարք

2.3. Անկանխիկ եղանակով իրականացված գործարք

3. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

3.1. ՀԱՃԱԽՈՐԴ

Հաճախորդի կարգավիճակը

Ֆիզիկական անձ

Անհատ ձեռնարկատեր

Իրավաբանական անձ

Պետական մարմին կամ համայնք

3.1.1. Անուն (անվանում)

3.1.2. Ազգանուն

3.1.3. Հայրանուն

3.1.4. Ծննդյան ամսաթիվը

3.1.5. Բնակության վայր (գտնվելու վայր)

3.1.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.1.5.2. Քաղաք կամ գյուղ

3.1.5.3. Մարզ

3.1.5.4. Երկիր

3.1.6. Ֆիզիկական անձի հաշվառման վայր

3.1.6.1. Փողոց, շենք, բնակարան(տուն)

3.1.6.2. Քաղաք կամ գյուղ

3.1.6.3. Մարզ

3.1.6.4. Երկիր

3.1.7. Քաղաքացիություն

3.1.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

3.1.8.1. Անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը

3.1.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը

3.4.9.3. Ում կողմից է տրամադրվել

3.1.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

3.1.9. Կազմակերպական- իրավական ձև

3.1.10. Անհատականացման (հաշվառման) համարը

3.1.11. ՀՎՀՀ

3.1.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

3.2. ԳՈՐԾԱՐՔԻ ՄՅՈՒՍ ԿՈՂՄ
Գործարքի մյուս կողմի կարգավիճակը

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ ☐ Պետական մարմին կամ համայնք

3.2.1. Անուն (անվանում)

3.2.2. Ազգանուն

3.2.3. Հայրանուն

3.2.4. Ծննդյան ամսաթիվը - -

3.2.5. Բնակության վայր (գտնվելու վայր)
3.2.5.1. Փողոց, շենք, բնակարան(տուն)

3.2.5.2. Քաղաք կամ գյուղ

3.2.5.3. Մարզ

3.2.5.4. Երկիր

3.2.6. Ֆիզիկական անձի հաշվառման վայր
3.2.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.2.6.2. Քաղաք կամ գյուղ

3.2.6.3. Մարզ

3.2.6.4. Երկիր

3.2.7. Քաղաքացիություն

3.2.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

3.2.8.1. Անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը

3.2.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

3.2.8.3. Ում կողմից է տրամադրվել

3.2.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

3.2.9. Կազմակերպական-իրավական ձև

3.2.10. Անհատականացման (հաշվառման) համարը

3.2.11. ՀՎՀՀ

3.2.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

3.3. ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ
3.3.1. Լիազորող անձ
(հաճախորդի անուն, ազգանուն (անվանում))

3.3.2. Անուն

3.3.3. Ազգանուն

3.3.4. Հայրանուն

3.3.5. Ծննդյան ամսաթիվը - -

3.3.6. Բնակության վայր
3.3.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.3.6.2. Քաղաք կամ գյուղ

3.3.6.3. Մարզ

3.3.6.4. Երկիր

3.3.7. Հաշվառման վայր
3.3.7.1. Փողոց, շենք, բնակարան(տուն)

3.3.7.2. Քաղաք կամ գյուղ

3.3.7.3. Մարզ

3.3.7.4. Երկիր

3.3.8. Քաղաքացիություն

3.3.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

3.3.9.1. Փաստաթղթի սերիա և համար

3.3.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

3.3.9.3. Ում կողմից է տրամադրվել

3.3.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

3.4. ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ

☐ Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը ☐ Չկա իրական շահառու ☐ Առկա է իրական շահառու

3.4.1. Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)

3.4.2. Անուն

3.4.3. Ազգանուն

3.4.4. Հայրանուն

3.4.5. Ծննդյան ամսաթիվը - -

3.4.6. Բնակության վայր
3.4.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.4.6.2. Քաղաք կամ գյուղ

3.4.6.3. Մարզ

3.4.6.4. Երկիր

3.4.7. Հաշվառման հասցե
3.4.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.4.7.2. Քաղաք կամ գյուղ

3.4.7.3. Մարզ

3.4.7.4. Երկիր

3.4.8. Քաղաքացիություն

3.4.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

3.3.9.1. Փաստաթղթի սերիա և համար

3.4.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

3.4.9.3. Ում կողմից է տրամադրվել

3.4.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

4.1. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում

4.1.1. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառները

4.2. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում

4.2.1. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառները

4.3. Գույքի սառեցում

4.3.1. Սառեցման ամսաթիվը - -

4.3.2. Սառեցման ժամկետը

4.3.3. Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը

5. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

5.1. Անուն

5.2. Ազգանուն

5.3. Լրացման ամսաթիվը - -

Հավելված 2
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 276-Ն որոշմամբ

ԿԱՐԳ

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ, ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 025 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 025 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց (այսուհետ՝ Հաշվետվություն տրամադրող անձ) կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հաշվետվության ձևի լրացման կարգը և հաշվետվությունների ներկայացման դեպքերը:

2. Կարգում հասկացություններն օգտագործվում են Օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Հաշվետվության ձևը լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվառված Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից:

4. Հաշվետվությունը ներկայացվում է Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ 6-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին ենթակետի «ա» - «ե» պարբերությամբ սահմանված դեպքերում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով կամ թղթային տարբերակով:

6. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը կարող է ձեռք բերվել Ֆինանսական դիտարկումների կենտրոնին դիմելու կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջից արտահանելու միջոցով:

7. Հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով ներկայացվում են միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու կարգի» 4-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնագիր կնքելուց հետո:

8. Էլեկտրոնային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը ներկայացված է համարվում, եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաշվետվություն տրամադրող անձը չի ստանում սխալի վերաբերյալ հաղորդագրություն:

9. Սխալի վերաբերյալ հաղորդագրություն ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով՝ առանց հաշվետվության անվանման փոփոխության: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

10. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում փակ կնքված (կնիքի առկայության դեպքում) ծրարով՝ «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին» նշագրմամբ, հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

1) ֆիզիկապես ներկայացնելու միջոցով,

2) փոստի միջոցով:

11. Կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացված է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացականի, իսկ կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ «Հայփոստ» ՓԲԸ կողմից համապատասխան անդորրագրի տրամադրման պահից: Կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փոստային հասցեով (ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6):

12. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվության սխալի վերաբերյալ հետադարձ կապ ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

13. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում գործարքում կամ գործարար հարաբերությունում կասկածելիության չափանիշ հայտնաբերելու դեպքում՝ նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ն:

14. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել՝

1) աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

2) ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

15. Հաշվետվության ձևը լրացվում է հնարավորինս պարզ, հակիրճ, միանշանակ ընկալվող հայերեն լեզվով, «յունիկոդ» տառատեսակով և մեծատառերով: «Անուն (անվանում)» 3.1.1 և 3.2.1, «Ազգանուն» 3.1.2 և 3.2.2, «Հայրանուն» 3.1.3 և 3.2.3 ենթակետերը լրացվում են անգլերեն, երբ անհրաժեշտ տվյալները Հաշվետվություն տրամադրող անձին հասանելի են միայն անգլերեն լեզվով: Եթե նշված տվյալները հասանելի են այլ օտար լեզվով, ապա նշված ենթակետերը լրացվում են հայերեն կամ անգլերեն լեզվով:

16. Հաշվետվության ձևի թղթային տարբերակը լրացվում է համակարգչի օգնությամբ կամ գրիչով՝ յուրաքանչյուր վանդակում նշելով մեկ նիշ: Հաշվետվության ձևի 1.4.1, 2.4, 2.5.2, 2.5.3, 2.5.4, 2.5.4.1, 2.6.3, 2.7, 2.9, 4.1.1, 4.2.1 կետերի և ենթակետերի ներքո նախատեսված դաշտերի սահմաններն անբավարար լինելու դեպքում անհրաժեշտ է օգտագործել հավելյալ թղթեր: Այդ թղթերի ձախ կողմում նշվում է այն կետը կամ ենթակետը, որի ներքո նախատեսված դաշտը լրացվում է: Այդ թղթերը ստորագրվում և հաստատվում են կնիքով (կնիքի առկայության դեպքում) և կցվում հիմնական հաշվետվության ձևին: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրվում է նաև այդ ուղղումների կողքին:

17. Հաշվետվության ձևի առաջին էջի ներքևի մասում նշվում է ներկայացվող հաշվետվության էջերի քանակը (ներառյալ՝ առաջին էջը): Հաշվետվության ձևի յուրաքանչյուր էջի ներքևի աջ անկյունում անհրաժեշտ է ստորագրել և հաստատել կնիքով (կնիքի առկայության դեպքում):Հաշվետվության ձևի այն էջերը, որոնք չեն լրացվել կարող են չներկայացվել:

18. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը լրացվում է՝ օգտագործելով ներկայացված էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները: Էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները փոփոխության ենթակա չեն: Ցանկացած ներկայացված հաշվետվություն, որը պարունակում է փոփոխություն, դիտվում է թերի կամ սխալ լրացված հաշվետվություն և հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

19. Լրացման համար պարտադիր են այն կետերը և ենթակետերը, որոնց վերաբերյալ Հաշվետվություն տրամադրող անձն ունի կամ պարտավոր է ունենալ տեղեկատվություն:

20. Յուրաքանչյուր գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ ներկայացվում է առանձին հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

21. «Հաշվառման համարը» 1.1 կետում լրացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվառման համարը (ութ նիշ):

22. «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2 կետում լրացվում են հաշվետվության ուղարկման օրը, ամիսը, տարին (վեց նիշ):

23. «Հաշվետվության հերթական համարը» 1.3 կետում լրացվում է տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (3 նիշ):

24. «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետում լրացվում է տվյալ հաշվետվության ուղղման և լրացման նպատակով ներկայացվող հաշվետվության հերթական համարը (մեկից երեք նիշ): Այս կետը լրացվում է, եթե հաշվետվությունն ուղարկվում է նախկինում ուղարկված հաշվետվությունում առկա սխալի կամ թերության ուղղման նպատակով, ինչպես նաև եթե սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:

25. Կարգի 8-րդ և 11-րդ կետերով սահմանված կարգով ներկայացված համարվող հաշվետվության մեջ ուղղում կամ լրացում կատարելու համար հիմք հանդիսացած պատճառները և հանգամանքները լրացվում են «Ուղղման (լրացման) պատճառը» 1.4.1 ենթակետում: Այս ենթակետը ենթակա է պարտադիր լրացման, եթե ուղղում կամ լրացում կատարվել է նախորդ հաշվետվությունը ներկայացնելու պահից երեք աշխատանքային օր հետո:

26. Ուղղում կամ լրացում կատարելու դեպքում ներկայացվում է նոր հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 5. ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

27. «Կասկածելի գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը» 2.1 կետում լրացվում են կասկածելի գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման օրը, տարին, ամիսը: Եթե կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը դեռևս չի կատարվել, լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ ներկայացվել է գործարք կատարելու կամ գործարար հարաբերություն հաստատելու առաջարկը, իսկ այն դեպքում, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է, նշվում են գործարքի կամ գործարար հարաբերության մերժման օրը, ամիսը, տարին:

28. «Կանխիկ եղանակով իրականացվող գործարք» 2.2 կետը նշվում է, եթե գործարքն իրականացվել է կանխիկ եղանակով:

29. «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 2.3 կետը նշվում է, եթե գործարքն իրականացվել է անկանխիկ եղանակով:

30. Այն դեպքում, երբ գործարքն իրականացվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակով, ապա միաժամանակ նշվում են «Կանխիկ եղանակով իրականացվող գործարք» 2.2 և «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 2.3 կետերը, ինչպես նաև լրացվում են դրանց ներքո նախատեսված ենթակետերը:

31. «Արժույթը» 2.2.1 և 2.3.1 ենթակետերում լրացվում է այն արժույթը, որով կատարվել է գործարքը:

32. «Գումարը տվյալ արժույթով» 2.2.2 և 2.3.2 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի չափը այն արժույթով, որով կատարվել է գործարքը: Եթե «Արժույթը» 2.2.1 և 2.3.1 ենթակետերում լրացվում է ՀՀ դրամ, ապա նույն գումարը լրացվում է և «Գումարը տվյալ արժույթով» 2.2.2 ու 2.3.2, և «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 2.2.3 ու 2.3.3 կետերում:

33. «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 2.2.3 և 2.3.3 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

34. «Գործարքի էությունը» 2.4 կետում նկարագրվում են այն գործարքները կամ գործարար հարաբերությունները, որոնց հետ կապված Հաշվետվություն տրամադրող անձը մատուցում է ծառայություն:

35. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը» 2.5 կետում նշվում է 2.5.1 - 2.5.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը: Եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշը կամ տիպաբանությունը սահմանված չէ 2.5.1 և 2.5.2 ենթակետերով նախատեսված իրավական ակտերում, ապա նշվում է «Այլ» 2.5.3 ենթակետը: 2.5.1 - 2.5.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը նշելու դեպքում այդ ենթակետերի ներքո նախատեսված դաշտում լրացվում է Լիազոր մարմնի իրավական ակտով, Հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտով սահմանված կամ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության այլ չափանիշ կամ տիպաբանություն:

36. «Կասկածների նկարագրությունը» 2.6 կետում հնարավորինս մանրամասն նկարագրվում են գործարքի կամ գործարար հարաբերության նախապատմությունը, այն բոլոր հանգամանքները, որոնք վկայել են գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության մասին: Այս կետում կարող են նկարագրվել նաև Հաշվետվություն տրամադրող անձի՝ հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները:

37. «Կապված հաշվետվության անվանումը» 2.7 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության անվանումը, եթե ներկայացվող հաշվետվությամբ կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը, ըստ Հաշվետվություն տրամադրող անձի, պատճառահետևանքային կամ այլ առումով կապված է Հաշվետվություն տրամադրող անձի կողմից նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքի կամ գործարար հարաբերության հետ: «Կապված հաշվետվության անվանումը» 2.7 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության ձևի «Հաշվառման համարը» 1.1, «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2, «Հաշվետվության հերթական համարը» 1.3, «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետերում (առկայության դեպքում) լրացված տեղեկատվությունը: Թղթային տարբերակով հաշվետվություն ներկայացնելիս, եթե առկա է մեկից ավելի կապված հաշվետվություն, «Կապված հաշվետվության անվանումը» 2.7 կետը պատճենահանվում և լրացվում է համապատասխան քանակով:

38. «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 2.8 կետում նշվում են գործարքին կամ գործարար հարաբերությանն առնչվող՝ Հաշվետվություն տրամադրող անձի կողմից կարևորվող այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

39. «Հաճախորդ» 3.1 կետի ներքո նախատեսված «Հաճախորդի կարգավիճակը» դաշտում լրացվում է հաճախորդի կարգավիճակը՝ կախված գործարքի տեսակից:

40. «Հաճախորդ» 3.1 կետում նշվում է հաճախորդի տեսակը՝ ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր, իրավաբանական անձ կամ պետական մարմին կամ համայնք:

41. «Անուն (անվանում)» 3.1.1 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ անունը կամ իրավաբանական անձի կամ պետական մարմնի կամ համայնքի անվանումը:

42. «Ազգանուն» 3.1.2 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը: Այն դեպքում, երբ հստակ չէ, թե որն է հաճախորդի անունը և որը ազգանունը, ապա 3.1.1 և 3.1.2 ենթակետերը լրացվում են Հաշվետվություն տրամադրող անձի հայեցողությամբ:

43. «Հայրանուն» 3.1.3 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հայրանունը:

44. «Ծննդյան ամսաթիվը» 3.1.4 ենթակետում լրացվում են ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան օրը, ամիսը, տարին:

45. «Բնակության վայր (գտնվելու վայր)» 3.1.5 ենթակետի ներքո նախատեսված 3.1.5.1 - 3.1.5.4 դաշտերում ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում լրացվում է այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում են, իսկ իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը): 3.1.5.1-3.1.5.4 դաշտերը չեն լրացվում, եթե Ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը և հաշվառման վայր նույն են:

46. «Հաշվառման վայր» 3.1.6 ենթակետի ներքո նախատեսված 3.1.6.1 - 3.1.6.4 դաշտերում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը հաշվառված է:

47. «Քաղաքացիությունը» 3.1.7. ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ քաղաքացիությունը:

48. «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 3.1.8 ենթակետում նշվում է անձնագիրը, նույնականացման քարտը կամ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձը (ինքնություն) հաստատող այլ փաստաթուղթ:

49. «Փաստաթղթի սերիան և համարը» 3.1.8.1, «Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը» 3.1.8.2 դաշտերում համապատասխանաբար լրացվում են «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 3.1.8 ենթակետում նշված փաստաթղթի սերիան, համարը, ինչպես նաև տրամադրման օրը, ամիսը, տարին:

50. «Ում կողմից է տրամադրվել» 3.1.8.3 դաշտում լրացվում է այն պետական մարմնի անվանումը կամ ծածկագիրը, որի կողմից տրամադրվել է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 3.1.8 ենթակետում նշված փաստաթուղթը:

51. «Փաստաթղթի վավերականության ժամկետը» 3.1.8.4 դաշտում լրացվում է այն օրը, ամիսը, տարին, երբ լրանում է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 3.1.8 ենթակետում նշված փաստաթղթի վավերականության ժամկետը:

52. «Կազմակերպական-իրավական ձևը» 3.1.9 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը կամ դրա հապավումը (օրինակ՝ ՍՊԸ, ԲԲԸ և այլն): Օտարերկրյա իրավաբանական անձանց կազմակերպական-իրավական ձևի վերաբերյալ տվյալները լրացվում են լատինատառ:

53. «Անհատականացման (հաշվառման) համարը» 3.1.10 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցումը (հաշվառումը) իրականացնող մարմնի կողմից տրամադրված անհատականացման (հաշվառման) համարը:

54. «ՀՎՀՀ» 3.1.11 ենթակետում լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը:

55. «Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն» 3.1.12 ենթակետում լրացվում են գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը:

56. «Գործարքի մյուս կողմ» 3.2 կետի ներքո նախատեսված «Գործարքի մյուս կողմի կարգավիճակը» դաշտում լրացվում է գործարքի մյուս կողմի կարգավիճակը, եթե առկա է գործարքի մյուս կողմ:

57. Հաշվետվության ձևի 3.2.1 – 3.2.12 ենթակետերը լրացվում են Կարգի 41-55 կետերով սահմանված կարգով:

58. «Լիազորված անձ» 3.3 կետը լրացվում է, եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կատարվում է լիազորված անձի միջոցով:

59. «Լիազորող անձ» 3.3.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում լիազորված անձն է հանդիսանում տվյալ անձը:

60. Հաշվետվության ձևի 3.3.2 - 3.3.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են Կարգի 41-51 կետերով սահմանված կարգով:

61. «Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը չի կարողանում ստանալ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու, թե՝ ոչ:

62. «Չկա իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը պարզել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա չէ իրական շահառու (օրինակ՝ այդ մասին գրավոր հայտարարություն է տվել հաճախորդը):

63. «Առկա է իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդից կամ այլ աղբյուրից տեղեկացել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու:

64. «Առկա է իրական շահառու» դաշտը նշելուց հետո ,Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)ե 3.4.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում իրական շահառուն է հանդիսանում տվյալ անձը:

65. «Իրական շահառուի տվյալները» 3.4.2 - 4.3.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են միայն «Առկա է իրական շահառու» դաշտը նշելու դեպքում՝ Կարգի 41 - 51 կետերով սահմանված կարգով:

66. Հաշվետվության ձևի 3-րդ բաժինը, կախված անձանց թվից, լրացվում է համապատասխան քանակով:

ԳԼՈՒԽ 7. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

67. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում» 4.1 կետը նշվում է, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է:

68. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառները» 4.1.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժելու համար:

69. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում» 4.2 կետը նշվում է, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցվել է:

70. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառները» 4.2.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցնելու համար:

71. «Գույքի սառեցում» 4.3 կետը նշվում է, երբ հաճախորդի գույքը սառեցվել է:

72. «Սառեցման ամսաթիվ» 4.3.1 ենթակետում լրացվում են գույքի սառեցման օրը, ամիսը, տարին:

73. «Սառեցման ժամկետը» 4.3.2 ենթակետում լրացվում է սառեցման ժամկետը:

74. «Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը» 4.3.3 ենթակետում լրացվում է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերի և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կատարման նպատակով Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից հրապարակած ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը:

ԳԼՈՒԽ 8. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

75. «Անուն» 5.1 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի անունը:

76. «Ազգանուն» 5.2 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի ազգանունը:

77. «Լրացման ամսաթիվը» 5.3 կետում լրացվում են հաշվետվության ձևը լրացնելու օրը, ամիսը, տարին:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Թանկարժեք մետաղների դիլերների, թանկարժեք քարերի դիլերների, արվեստի գործերի դիլերների և սակարկությունների կազմակերպիչների կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 026 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի փետրվարի 16-ի թիվ 22-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին[*]

Նպատակ ունենալով նախատեսել հաշվետվություն տրամադրող անձանց կողմից կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ հաշվետվությունների նոր ձևեր, փոփոխության ենթարկել դրանց տրամադրման կարգը և սահմանել ժամկետներին վերաբերող առավել մանրամասն կանոններ,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Թանկարժեք մետաղների դիլերների, թանկարժեք քարերի դիլերների, արվեստի գործերի դիլերների և սակարկությունների կազմակերպիչների կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 026 հաշվետվության ձևը»՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

2. Հաստատել «Թանկարժեք մետաղների դիլերների, թանկարժեք քարերի դիլերների, արվեստի գործերի դիլերների և սակարկությունների կազմակերպիչների կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 026 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի փետրվարի 16-ի «ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումը թանկարժեք մետաղների դիլերների, թանկարժեք քարերի դիլերների, արվեստի գործերի դիլերների, սակարկությունների կազմակերպիչների կողմից կանխիկ դրամով կատարվող կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման թիվ 026 հաշվետվական ձևը, տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները, թանկարժեք մետաղների դիլերների, թանկարժեք քարերի դիլերների, արվեստի գործերի դիլերների, սակարկությունների կազմակերպիչների հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 22-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ

10 հոկտեմբերի 2014 թ., N 277-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:

Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 277-Ն որոշմամբ

ՁԵՎ

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԴԻԼԵՐՆԵՐԻ, ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ԴԻԼԵՐՆԵՐԻ, ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԻ ԴԻԼԵՐՆԵՐԻ ԵՎ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 026 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

1.1 Հաշվառման համարը	1.2 Հաշվետվության ուղարկման ամսաթիվը	1.3 Հաշվետվության հերթական համարը	1.4 Ուղղման(լրացման) հերթական համարը

1.4.1 Ուղղման (լրացման) պատճառը

2. ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը

2.2. Կանխիկ եղանակով իրականացվող գործարք ☐ 2.3. Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք ☐

2.2.1. Արժույթը

2.3.1. Արժույթը

2.2.2. Գումարը տվյալ արժույթով

2.3.2. Գումարը տվյալ արժույթով

2.2.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

2.3.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

2.4. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

☐ 2.4.1. Թանկարժեք մետաղների առք

☐ 2.4.2. Թանկարժեք մետաղների վաճառք

☐ 2.4.3. Թանկարժեք քարերի առք

☐ 2.4.4. Թանկարժեք քարերի վաճառք

☐ 2.4.5. Արվեստի գործերի առք

☐ 2.4.6 . Արվեստի գործերի վաճառք

☐ 2.4.7. Սակարկության միջոցով գույքի, գույքային իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների կամ դրանց նկատմամբ իրավունքների իրացում

2.4.7.1. Սակարկության ձևը

☐ Բաց աճուրդ ☐ Բաց մրցույթ

☐ Փակ աճուրդ ☐ Փակ մրցույթ

☐ 2.4.8. Այլ

2.5. Գործարքի առարկան

2.6. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը

☐ 2.6.1. Լիազոր մարմնի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 2.6.2. Հաշվետվություն տրամադրող անձի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 2.6.3. Այլ

2.7. Կասկածների նկարագրությունը

2.8. Կապված հաշվետվության անվանումը

2.9. Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն

3. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐ

3.1. *ՀԱՃԱԽՈՐԴ*

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ ☐ Պետական մարմին կամ համայնք

3.1.1 Անուն (անվանում)

3.1.2 Ազգանուն

3.1.3 Հայրանուն

3.1.4 Ծննդյան ամսաթիվը - -

3.1.5. Բնակության վայր (գտնվելու վայր)

3.1.5.1 Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.1.5.2 Քաղաք կամ գյուղ

3.1.5.3 Մարզ

3.1.5.4 Երկիր

3.1.6 Հաշվառման վայր

3.1.6.1 Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.1.6.2. Քաղաք կամ գյուղ

3.1.6.3. Մարզ

3.1.6.4. Երկիր

3.1.7. Քաղաքացիություն

3.1.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

3.1.8.1. Փաստաթղթի սերիան և համարը

3.1.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

3.1.8.3. Ում կողմից է տրամադրվել

3.1.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

3.1.9. Կազմակերպական-իրավական ձև

3.1.10. Անհատականացման (հաշվառման) համարը

3.1.11. ՀՎՀՀ

3.1.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

3.2. ԳՈՐԾԱՐՔԻ ՄՅՈՒՍ ԿՈՂՄ

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ ☐ Պետական մարմին կամ համայնք

3.2.1. Անուն (անվանում)

3.2.2. Ազգանուն

3.2.3. Հայրանուն

3.2.4. Ծննդյան ամսաթիվը

3.2.5. Բնակության վայր (գտնվելու վայր)
3.2.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.2.5.2. Քաղաք կամ գյուղ

3.2.5.3. Մարզ

3.2.5.4. Երկիր

3.2.6. Հաշվառման վայր
3.2.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.2.6.2. Քաղաք կամ գյուղ

3.2.6.3. Մարզ

3.2.6.4. Երկիր

3.2.7. Քաղաքացիություն

3.2.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

3.2.8.1. Փաստաթղթի սերիա և համար

3.2.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը

3.2.8.3. Ում կողմից է տրամադրվել

3.2.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը

3.2.9. Կազմակերպական-իրավական ձև

3.2.10. Անհատականացման (հաշվառման) համարը

3.2.11. ՀՎՀՀ

3.2.12. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

3.3. ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ
3.3.1. Լիազորող անձ

(հաճախորդի անուն, ազգանուն (անվանում))

3.3.2. Անուն

3.3.3. Ազգանուն

3.3.4. Հայրանուն

3.3.5. Ծննդյան ամսաթիվը

3.3.6. Բնակության վայր
3.3.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.3.6.2. Քաղաք կամ գյուղ

3.3.6.3. Մարզ

3.2.6.4. Երկիր

3.3.7. Հաշվառման վայր
3.3.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.3.7.2. Քաղաք կամ գյուղ

3.3.7.3. Մարզ

3.3.7.4. Երկիր

3.3.8. Քաղաքացիություն

3.3.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

3.3.9.1. Փաստաթղթի սերիա և համար

3.3.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

3.3.9.3. Ում կողմից է տրամադրվել

3.3.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

3.4. ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ

☐ Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը ☐ Չկա իրական շահառու ☐ Առկա է իրական շահառու

3.4.1. Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)

3.4.2. Անուն

3.4.3. Ազգանուն

3.4.4. Հայրանուն

3.4.5. Ծննդյան ամսաթիվը - -

3.4.6. Բնակության վայր

3.4.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.4.6.2. Քաղաք կամ գյուղ

3.4.6.3. Մարզ

3.4.6.4. Երկիր

3.4.7. Հաշվառման վայր

3.4.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

3.4.7.2. Քաղաք կամ գյուղ

3.4.7.3. Մարզ

3.4.7.4. Երկիր

3.4.8. Քաղաքացիություն

3.4.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

3.4.9.1. Փաստաթղթի սերիա և համար

3.4.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

3.4.9.3. Ում կողմից է տրամադրվել

3.4.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

☐ 4.1. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում

4.1.1. Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառները

☐ 4.2. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում

4.2.1. Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառները

☐ 4.3. Գույքի սառեցում

4.3.1. Սառեցման ամսաթիվը - -

4..3.2. Սառեցման ժամկետը

4.3.3. Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը

5. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

5.1. Անուն

5.2. Ազգանուն

5.3. Լրացման ամսաթիվը

- -

Հավելված 2
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 277-Ն որոշմամբ

ԿԱՐԳ

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԴԻԼԵՐՆԵՐԻ, ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ԴԻԼԵՐՆԵՐԻ, ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԻ ԴԻԼԵՐՆԵՐԻ ԵՎ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 026 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Թանկարժեք մետաղների դիլերների, թանկարժեք քարերի դիլերների, արվեստի գործերի դիլերների և սակարկությունների կազմակերպիչների կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 026 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է թանկարժեք մետաղների դիլերների, թանկարժեք քարերի դիլերների, արվեստի գործերի դիլերների և սակարկությունների կազմակերպիչների (այսուհետ՝ Հաշվետվություն տրամադրող անձ) կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հաշվետվության ձևի լրացման կարգը և հաշվետվությունների ներկայացման դեպքերը:

2. Կարգում առկա հասկացություններն օգտագործվում են Օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Հաշվետվության ձևը լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվառված Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից:

4. Հաշվետվությունը ներկայացվում է Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով կամ թղթային տարբերակով:

6. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը կարող է ձեռք բերվել Ֆինանսական դիտարկումների կենտրոնին դիմելու կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջից արտահանելու միջոցով:

7. Հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով ներկայացվում են միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու կարգի» 4-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնագիր կնքելուց հետո:

8. Էլեկտրոնային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը ներկայացված է համարվում, եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաշվետվություն տրամադրող անձը չի ստանում սխալի վերաբերյալ հաղորդագրություն:

9. Սխալի վերաբերյալ հաղորդագրություն ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով՝ առանց հաշվետվության անվանման փոփոխության: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

10. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում փակ կնքված (կնիքի առկայության դեպքում) ծրարով՝ «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին» նշագրմամբ՝ հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

1) ֆիզիկապես ներկայացնելու միջոցով,

2) փոստի միջոցով:

11. Կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացված է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացականի, իսկ կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ «Հայփոստ» ՓԲԸ կողմից համապատասխան անդորրագրի տրամադրման պահից: Կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փոստային հասցեով (ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6):

12. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվության սխալի վերաբերյալ հետադարձ կապ ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

13. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում գործարքում կամ գործարար հարաբերությունում կասկածելիության չափանիշ հայտնաբերելու դեպքում՝ նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ը:

14. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել՝

1) աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

2) ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

15. Հաշվետվության ձևը լրացվում է հնարավորինս պարզ, հակիրճ, միաձևանակ ընկալվող հայերեն լեզվով, «յունիկոդ» տառատեսակով և մեծատառերով: «Անուն (անվանում)» 3.1.1, 3.2.1, 3.3.2 և 3.4.2, «Ազգանուն» 3.1.2, 3.2.2, 3.3.3 և 3.4.3, «Հայրանուն» 3.1.3, 3.2.3, 3.3.4 և 3.4.4 ենթակետերը լրացվում են անգլերեն, երբ անհրաժեշտ տվյալները Հաշվետվություն տրամադրող անձին հասանելի են միայն անգլերեն լեզվով: Եթե նշված տվյալները հասանելի են այլ օտար լեզվով, ապա նշված ենթակետերը լրացվում են հայերեն կամ անգլերեն լեզվով:

16. Հաշվետվության ձևի թղթային տարբերակը լրացվում է համակարգչի օգնությամբ կամ գրիչով՝ յուրաքանչյուր վանդակում նշելով մեկ նիշ: Հաշվետվության ձևի 1.4.1, 2.4.8, 2.5, 2.6.3, 2.7, 2.9, 4.1.1 և 4.2.1 կետերի և ենթակետերի ներքո նախատեսված դաշտերի սահմաններն անբավարար լինելու դեպքում անհրաժեշտ է օգտագործել հավելյալ թղթեր: Այդ թղթերի ձախ կողմում նշվում է այն կետը կամ ենթակետը, որի ներքո նախատեսված դաշտը լրացվում է: Այդ թղթերը ստորագրվում և հաստատվում են կնիքով (կնիքի առկայության դեպքում) և կցվում հիմնական հաշվետվության ձևին: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրվում է նաև այդ ուղղումների կողքին:

17. Հաշվետվության ձևի առաջին էջի ներքևի մասում նշվում է ներկայացվող հաշվետվության էջերի քանակը (ներառյալ՝ առաջին էջը): Հաշվետվության ձևի յուրաքանչյուր էջի ներքևի աջ անկյունում անհրաժեշտ է ստորագրել և հաստատել կնիքով (կնիքի առկայության դեպքում): Հաշվետվության ձևի այն էջերը, որոնք չեն լրացվել, կարող են չներկայացվել:

18. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը լրացվում է՝ օգտագործելով ներկայացված էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները: Էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները փոփոխության ենթակա չեն: Ցանկացած ներկայացված հաշվետվություն, որը պարունակում է փոփոխություն, դիտվում է թերի կամ սխալ լրացված հաշվետվություն և հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

19. Լրացման համար պարտադիր են այն կետերը և ենթակետերը, որոնց վերաբերյալ Հաշվետվություն տրամադրող անձն ունի կամ պարտավոր է ունենալ տեղեկատվություն:

20. Յուրաքանչյուր գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ ներկայացվում է առանձին հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

21. «Հաշվառման համարը» 1.1 կետում լրացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվառման համարը (ութ նիշ):

22. «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2 կետում լրացվում են հաշվետվության ուղարկման օրը, ամիսը, տարին (վեց նիշ):

23. «Հաշվետվության հերթական համարը» 1.3 կետում լրացվում է տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (երեք նիշ):

24. «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետում լրացվում է տվյալ հաշվետվության ուղղման կամ լրացման նպատակով ներկայացվող հաշվետվության հերթական համարը (մեկից երեք նիշ): Այս կետը լրացվում է, եթե հաշվետվությունն ուղարկվում է նախկինում ուղարկված հաշվետվությունում առկա սխալի կամ թերության ուղղման նպատակով, ինչպես նաև եթե սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:

25. Կարգի 8-րդ և 11-րդ կետով սահմանված կարգով ներկայացված համարվող հաշվետվության մեջ ուղղում կամ լրացում կատարելու համար հիմք հանդիսացած պատճառները և հանգամանքները լրացվում են «Ուղղման (լրացման) պատճառը» 1.4.1 ենթակետում: Այս ենթակետը ենթակա է պարտադիր լրացման, եթե ուղղում կամ լրացում կատարվել է նախորդ հաշվետվությունը ներկայացնելու պահից երեք աշխատանքային օր հետո:

26. Ուղղում կամ լրացում կատարելու դեպքում ներկայացվում է նոր հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 5. ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

27. «Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը» 2.1 կետում լրացվում է կասկածելի գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման օրը, ամիսը, տարին: Եթե կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը դեռևս չի կատարվել, լրացվում է այն օրը, ամիսը, տարին, երբ ներկայացվել է գործարք կատարելու կամ գործարար հարաբերություն հաստատելու առաջարկը, իսկ այն դեպքում, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է, նշվում են գործարքի կամ գործարար հարաբերության մերժման օրը, ամիսը, տարին:

28. «Կանխիկ եղանակով իրականացվող գործարք» 2.2 կետը նշվում է, եթե գործարքը կատարվել է կանխիկ եղանակով:

29. «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 2.3 կետը նշվում է, եթե գործարքը կատարվել է անկանխիկ եղանակով:

30. «Արժույթը» 2.2.1 և 2.3.1 կետերում նշվում է այն արժույթը, որով կատարվել է գործարքը:

31. «Գումարը տվյալ արժույթով» 2.2.2 և 2.3.2 կետերում լրացվում է գործարքի գումարի չափը այն արժույթով, որով կատարվել է գործարքը: Եթե «Արժույթը» 2.2.1 և 2.3.1 կետերում նշվում է ՀՀ դրամ, ապա նույն գումարը լրացվում է և՛ «Գումարը տվյալ արժույթով» 2.2.2 և 2.3.1, և՛ «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 2.2.3 և 2.3.3 կետերում:

32. «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 2.2.3 և 2.3.3 կետերում լրացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

33. «Գործարքի կամ գործարար հարաբերության տեսակը» 2.4 կետում նշվում է այդ կետի ներքո նախատեսված ենթակետերից որևէ մեկը: «Սակարկության միջոցով գույքի, գույքային իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների կամ դրանց նկատմամբ իրավունքների իրացում» 2.4.7 ենթակետը նշելու դեպքում անհրաժեշտ է նշել նաև «Սակարկության ձևը» 2.4.7.1 դաշտի ներքո նախատեսված սակարկության այն ձևը, որի միջոցով իրացվել է կամ նախատեսվում է իրացնել գույքը, գույքային իրավունքը, մտավոր գործունեության արդյունքը կամ դրա նկատմամբ իրավունքը: «Այլ» 2.4.8 ենթակետը նշելու դեպքում այդ ենթակետի ներքո նախատեսված դաշտում լրացվում է գործարքի կամ գործարար հարաբերության անվանումը:

34. «Գործարքի կամ գործարար հարաբերության առարկան» 2.5 կետում լրացվում է գործարքի առարկան և դրա նկարագրությունը:

35. «Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը կամ տիպաբանությունը» 2.6 կետում նշվում է 2.6.1 - 2.6.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը: Եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշը կամ տիպաբանությունը սահմանված չէ 2.6.1 և 2.6.2 ենթակետերով նախատեսված իրավական ակտերում, ապա նշվում է «Այլ» 2.6.3 ենթակետը: 2.6.1 - 2.6.3 ենթակետերից մեկը կամ մի քանիսը նշելու դեպքում այդ ենթակետերի ներքո նախատեսված դաշտում լրացվում է Լիազոր մարմնի իրավական ակտով, Հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտով սահմանված կամ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության այլ չափանիշ կամ տիպաբանություն:

36. «Կասկածների նկարագրությունը» 2.7 կետում հնարավորինս մանրամասն նկարագրվում են գործարքի կամ գործարար հարաբերության նախապատմությունը, այն բոլոր հանգամանքները, որոնք վկայել են գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության մասին: Այս կետում կարող են նկարագրվել նաև Հաշվետվություն տրամադրող անձի՝ հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները:

37. «Կապված հաշվետվության անվանումը» 2.8 կետը լրացվում է, եթե ներկայացվող հաշվետվությամբ կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը, ըստ Հաշվետվություն տրամադրող անձի, պատճառահետևանքային կամ այլ առումով կապված է Հաշվետվություն տրամադրող անձի կողմից նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքի հետ: «Կապված հաշվետվության անվանումը» 2.8 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության ձևի «Հաշվառման համարը» 1.1, «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2, «Հաշվետվության հերթական համարը» 1.3, «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետերում (առկայության դեպքում) լրացված տեղեկատվությունը: Թղթային տարբերակով հաշվետվություն ներկայացնելիս, եթե առկա է մեկից ավելի կապված հաշվետվություն, «Կապված հաշվետվության անվանումը» 2.8 կետը պատճենահանվում և լրացվում է համապատասխան քանակով:

38. «Գործարքին կամ գործարար հարաբերությանը վերաբերող այլ տեղեկատվություն» 2.9 կետում նշվում են գործարքին կամ գործարար հարաբերությանն առնչվող՝ Հաշվետվություն տրամադրող անձի կողմից կարևորվող այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐԸ

39. «Հաճախորդ» 3.1 կետում նշվում է հաճախորդի տեսակը՝ ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ պետական մարմին կամ համայնք:

40. «Անուն (անվանում)» 3.1.1 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ անունը կամ իրավաբանական անձի կամ պետական մարմնի կամ համայնքի անվանումը:

41. «Ազգանուն» 3.1.2 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը: Այն դեպքում, երբ հստակ չէ, թե որն է հաճախորդի անունը և որը ազգանունը, 3.1.1 և 3.1.2 ենթակետերը լրացվում են Հաշվետվություն տրամադրող անձի հայեցողությամբ:

42. «Հայրանուն» 3.1.3 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հայրանունը:

43. «Ծննդյան ամսաթիվը» 4.1.4 ենթակետում լրացվում են ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան օրը, ամիսը, տարին:

44. «Բնակության վայր (գտնվելու վայր)» 3.1.5 ենթակետի ներքո նախատեսված 3.1.5.1 - 3.1.5.4 դաշտերում ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում լրացվում է այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում են, իսկ իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը): 3.1.5.1 - 3.1.5.4 դաշտերը չեն լրացվում, եթե Ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը և հաշվառման վայրը նույն է:

45. «Հաշվառման վայր» 3.1.6 ենթակետի ներքո նախատեսված 3.1.6.1 - 3.1.6.4 դաշտերում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը հաշվառված է:

46. «Քաղաքացիությունը» 3.1.7 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ քաղաքացիությունը:

47. «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 3.1.8 ենթակետում նշվում է անձնագիրը, նույնականացման քարտը կամ նորմատիվ իրավական ակտով սահմանված՝ ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձը (ինքնություն) հաստատող այլ փաստաթուղթը:

48. «Փաստաթղթի սերիան և համարը» 3.1.8.1, «Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը» 3.1.8.2 դաշտերում համապատասխանաբար լրացվում են «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 3.1.8 ենթակետում նշված փաստաթղթի սերիան, համարը, ինչպես նաև տրամադրման օրը, ամիսը, տարին:

49. «Ում կողմից է տրամադրվել» 3.1.8.3 դաշտում լրացվում է այն պետական մարմնի անվանումը կամ ծածկագիրը, որի կողմից տրամադրվել է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 3.1.8 ենթակետում նշված փաստաթուղթը:

50. «Փաստաթղթի վավերականության ժամկետը» 3.1.8.4 դաշտում լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ լրանում է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 3.1.8 ենթակետում նշված փաստաթղթի վավերականության ժամկետը:

51. «Կազմակերպական-իրավական ձևը» 3.1.9 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը կամ դրա հապավումը (օրինակ՝ ՍՊԸ, ԲԲԸ և այլն): Օտարերկրյա իրավաբանական անձանց կազմակերպական-իրավական ձևի վերաբերյալ տվյալները լրացվում են լատինատառ:

52. «Անհատականացման (հաշվառման) համարը» 3.1.10 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցումը (հաշվառումը) իրականացնող մարմնի կողմից տրամադրված անհատականացման (հաշվառման) համարը:

53. «ՀՎՀՀ» 3.1.11 ենթակետում լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը:

54. «Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն» 3.1.12 ենթակետում լրացվում են գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը:

55. Հաշվետվության ձևի 3.2.1 - 3.2.12 ենթակետերը լրացվում են Կարգի 40-54-րդ կետերով սահմանված կարգով:

56. «Լիազորված անձ» 3.3 կետը լրացվում է, եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կատարվում է լիազորված անձի միջոցով:

57. «Լիազորող անձ» 3.3.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում լիազորված անձն է հանդիսանում տվյալ անձը:

58. Հաշվետվության ձևի 3.3.2 - 3.3.9.2 ենթակետերը և դաշտերը լրացվում են Կարգի 40-50-րդ կետերով սահմանված կարգով:

59. «Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը չի կարողանում ստանալ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու, թե՝ ոչ:

60. «Չկա իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը պարզել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա չէ իրական շահառու (օրինակ՝ այդ մասին գրավոր հայտարարություն է տվել հաճախորդը):

61. «Առկա է իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդից կամ այլ աղբյուրից տեղեկացել է, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա է իրական շահառու:

62. «Առկա է իրական շահառու» դաշտը նշելուց հետո «Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)» 3.4.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում իրական շահառուն է հանդիսանում տվյալ անձը:

63. «Իրական շահառուի տվյալները» 3.4.2 - 3.4.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են միայն «Առկա է իրական շահառու» դաշտը նշելու դեպքում՝ Կարգի 40 - 50-րդ կետերով սահմանված կարգով:

64. Հաշվետվության ձևի 3-րդ բաժինը, կախված անձանց թվից, լրացվում է համապատասխան քանակով:

ԳԼՈՒԽ 7. ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄ

65. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում» 4.1 կետը նշվում է, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է:

66. «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման պատճառները» 4.1.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժելու համար:

67. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում» 4.2 կետը նշվում է, երբ գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցվել է:

68. «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցման պատճառները» 4.2.1 ենթակետում լրացվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել գործարքը կամ գործարար հարաբերությունը դադարեցնելու համար:

69. «Գույքի սառեցում» 4.3 կետը նշվում է, երբ հաճախորդի գույքը սառեցվել է:

70. «Սառեցման ամսաթիվ» 4.3.1 ենթակետում լրացվում են գույքի սառեցման օրը, ամիսը, տարին:

71. «Սառեցման ժամկետը» 4.3.2 ենթակետում լրացվում է սառեցման ժամկետը:

72. «Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը» 4.3.3 ենթակետում լրացվում է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերի և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կատարման նպատակով Լիազոր մարմնի կողմից հրապարակված ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի անվանումը:

ԳԼՈՒԽ 8. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ

73. «Անուն» 5.1 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի անունը:

74. «Ազգանուն» 5.2 կետում լրացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի ազգանունը:

75. «Լրացման ամսաթիվը» 5.3 կետում լրացվում են հաշվետվության ձևը լրացնելու օրը, ամիսը, տարին:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի վերաբերյալ թիվ 007 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 236-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին[*]

Նպատակ ունենալով նախատեսել հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների նոր ձևեր, փոփոխության ենթարկել դրանց տրամադրման կարգը և սահմանել ժամկետներին վերաբերող առավել մանրամասն կանոններ,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին»: Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի վերաբերյալ թիվ 007 հաշվետվության ձևը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի վերաբերյալ թիվ 007 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թ. հուլիսի 31-ի «ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող լիազորված մարմնի տարածքային ստորաբաժանումների (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձինք) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 007 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թ. փետրվարի 20-ի թիվ 61-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 236-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N 278-Ն

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 278-Ն որոշմամբ

ՁԵՎ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 007 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

	-		-		-	
1.1.Հաշվառման համարը		1.2. Հաշվետվության ուղարկման ամսաթիվը		1.3. Հաշվետվության հերթական համարը		1.4. Ուղղման(լրացման) հերթական համարը

1.4.4. Ուղղման(լրացման) պատճառը

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

☐ 2.1. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն

☐ 2.2. Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն

3. ԳՈՐԾԱՐՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Գործարքի կատարման ամսաթիվը ☐☐ - ☐☐ - ☐☐☐☐

☐ 3.2. Կանխիկ եղանակով իրականացված գործարք ☐ 3.3. Անկանխիկ եղանակով իրականացված գործարք

3.2.1. Արժույթը

3.3.1. Արժույթը

3.2.2. Գումարը տվյալ արժույթով

3.3.2. Գումարը տվյալ արժույթով

3.2.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

3.3.3. Գումարը համարժեք ՀՀ դրամին

3.4. Գրանցման համար հիմք հանդիսացած փաստաթղթերի համարը

3.5. Գործարքի առարկան

☐ 3.5.1. Գրավադրում

3.5.2. Գործարքի առարկայի գտնվելու վայրը

3.5.3. Գործարքի առարկայի նպատակային նշանակությունը

3.5.4. Գործարքի առարկայի մակերեսը

3.5.5. Գործարքի առարկայի կադաստրային արժեքը

3.6. Կասկածելի գործարքի չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.6.1. Լիազոր մարմնի իրավական ակտով սահմանված չափանիշ կամ տիպաբանություն

☐ 3.6.2. Այլ

3.7. Կասկածների նկարագրությունը

3.8. Կապված հաշվետվության անվանումը

3.9. Գործարքին վերաբերող այլ տեղեկատվություն

4. ԳՈՐԾԱՐՔԻ ԿՈՂՄԵՐ

- Գնորդ
- Գնորդ (գրավատու,վարկառու)
- Վարկատու (գրավառու)
- Գրավատու,
- «Այլ»

4.1. ՀԱԵԱԽՈՐԴ 1

Հաճախորդի 1-ի կարգավիճակը

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ ☐ Պետական մարմին կամ համայ

4.1.1. Անուն (Անվանում)

4.1.2. Ազգանուն

4.1.3. Հայրանուն

4.1.4. Ծննդյան ամսաթիվը ☐☐ - ☐☐ - ☐☐☐☐

4.1.5. Բնակության վայր

4.1.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.1.5.2. Քաղաք կամ գյուղ

4.1.5.3. Մարզ

4.1.5.4. Երկիր

4.1.6. Ֆիզիկական անձի հաշվառման վայր

4.1.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.1.6.2. Քաղաք կամ գյուղ

4.1.6.3. Մարզ

4.1.6.4. Երկիր

4.1.7. Քաղաքացիություն

4.1.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.1.8.1. Փաստաթղթի սերիա և համար

4.1.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.1.8.3. Ում կողմից է տրամադրվել

4.1.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4.1.9. Կազմակերպական իրավական ձև

4.1.10. Անհատականացման (հաշվառման) համարը

4.1.11. ՀՎՀՀ

4.1.12 Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

4.2. ՀԱԵԱԽՈՐԴ 2

- Վաճառող
- «Այլ»

Հաճախորդ 2-ի կարգավիճակը

(Սույն բաժինը լրացնելիս կախված հաճախորդի տեսակից լրացման են ենթակա այն հատվածները, որոնք վերաբերվում են տվյալ հաճախորդին)

☐ Ֆիզիկական անձ ☐ Անհատ ձեռնարկատեր

☐ Իրավաբանական անձ ☐ Պետական մարմին կամ համայնք

4.2.1. Անուն (Անվանում)

4.2.2. Ազգանուն

4.2.3. Հայրանուն

4.2.4. Ծննդյան ամսաթիվը - -

4.2.5. Բնակության վայր

4.2.5.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.2.5.2. Քաղաք կամ գյուղ

4.2.5.3. Մարզ

4.2.5.4. Երկիր

4.2.6. Ֆիզիկական անձի հաշվառման վայր

4.2.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.2.6.2. Քաղաք կամ գյուղ

4.2.6.3. Մարզ

4.2.6.4. Երկիր

4.2.7. Քաղաքացիություն

4.2.8. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.2.8.1. Փաստաթղթի սերիա և համար

4.2.8.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.2.8.3. Ում կողմից է տրամադրվել

4.2.8.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4.2.9. Կազմակերպական իրավական ձև

4.2.10. Անհատականացման (հաշվառման) համարը

4.2.11. ՀՎՀՀ

4.2.12 Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն

4.3 ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ

4.3.1. Լիազորված անձը ռիելթոր է

4.3.2. Լիազորող անձ

(հաճախորդի անուն, ազգանուն (անվանում))

4.3.3. Անուն

4.3.4. Ազգանուն

4.3.5. Հայրանուն

4.3.6. Ծննդյան ամսաթիվը - -

4.3.7. Բնակության վայր

4.3.7.1. Փողոց, շենք, բնակարան(տուն)

4.3.7.2. Քաղաք կամ գյուղ

4.3.7.3. Մարզ

4.3.7.4. Երկիր

4.3.8. Հաշվառման վայր

4.3.8.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.3.8.2. Քաղաք կամ գյուղ

4.3.8.3. Մարզ

4.3.8.4. Երկիր

4.3.9. Քաղաքացիություն

4.3.10. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ

4.3.10.1. Փաստաթղթի սերիա և համար

4.3.10.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը - -

4.3.10.3. Ում կողմից է տրամադրվել

4.3.10.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը - -

4.4. ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ

☐ Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը ☐ Չկա իրական շահառու ☐ Առկա է իրական շահառու

4.4.1. Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)

4.4.2. Անուն

4.4.3. Ազգանուն

4.4.4. Հայրանուն

4.4.5. Ծննդյան ամսաթիվը - -

4.4.6. Բնակության վայր

4.4.6.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)

4.4.6.2. Քաղաք կամ գյուղ

4.4.6.3. Մարզ

4.4.6.4. Երկիր

4.4.7. Հաշվառման վայր

4.4.7.1. Փողոց, շենք, բնակարան (տուն)	
4.4.7.2. Քաղաք կամ գյուղ	
4.4.7.3. Մարզ	
4.4.7.4. Երկիր	
4.4.8. Քաղաքացիություն	
4.4.9. Անձը հաստատող փաստաթղթի տեսակ	
4.4.9.1. Փաստաթղթի սերիա և համար	
4.4.9.2. Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը	- -
4.4.9.3. Ում կողմից է տրամադրվել	
4.4.9.4. Փաստաթղթի վավերականության ժամկետը	- -

5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՇԽԱՏԱԿԻՑ

5.1. Անուն

5.2. Ազգանուն

5.3. Լրացման ամսաթիվը - -

Հավելված 2
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 278-Ն որոշմամբ

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 007 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի վերաբերյալ թիվ 007 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Հաշվետվություն տրամադրող անձ) կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հաշվետվության ձևի լրացման կարգը և հաշվետվությունների ներկայացման դեպքերը:

2. Կարգում հասկացություններն օգտագործվում են Օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Հաշվետվության ձևը լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվառված Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից:

4. Հաշվետվությունը ներկայացվում է անշարժ գույքի առուվաճառքի հետ կապված գործարքների հիման վրա պետական գրանցման վերաբերյալ՝ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքերում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով կամ թղթային տարբերակով:

6. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ ՀՀ կենտրոնական բանկի «Միասնական տեղեկատվական տիրույթ» համակարգի կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի կամ այլ ընդունելի էլեկտրոնային միջոցներով:

7. «Միասնական տեղեկատվական տիրույթ» համակարգի խափանման դեպքում պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի կամ այլ ընդունելի էլեկտրոնային միջոցներով:

8. Էլեկտրոնային եղանակով պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնելու անհնարինության դեպքում հաշվետվությունը ներկայացվում է թղթային տարբերակով:

9. Սույն կարգի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքերում հաշվետվություն ներկայացվում է, եթե անշարժ գույքի առուվաճառքի գործարքի գումարը (կադաստրային կամ պայմանագրային) գերազանցում է 50 միլիոն ՀՀ դրամը: Նշված դեպքում, եթե անշարժ գույքի առուվաճառքի գործարքը իրականացվել է կանխիկ եղանակով, հաշվետվություն ներկայացվում է, եթե անշարժ գույքի առուվաճառքի գործարքի գումարը (կադաստրային կամ պայմանագրային) գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը:

10. «Միասնական տեղեկատվական տիրույթ» համակարգի միջոցով հաշվետվությունը ներկայացված է համարվում այն դեպքում, երբ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից ապահովվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի հասանելիությունը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «Միասնական տեղեկատվական տիրույթ»» համակարգին միացման և դրա շահագործման մասին» պայմանագրի Հավելված 3-ով սահմանված տեղեկատվությանը:

11. Հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի միջոցով ներկայացվում են միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու կարգի» 4-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնագիր կնքելուց հետո:

12. Էլեկտրոնային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը ներկայացված է համարվում, եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաշվետվություն տրամադրող անձը չի ստանում սխալի վերաբերյալ հաղորդագրություն:

13. Սխալի վերաբերյալ հաղորդագրություն ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

14. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում փակ կնքված (կնիքի առկայության դեպքում) ծրարով՝ «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին» նշագրմամբ, հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

1) ֆիզիկապես ներկայացնելու միջոցով,

2) փոստի միջոցով:

15. Կարգի 14-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացված է համարվում ՀՀ կենտրոնական բանկի կողմից ստացականի, իսկ կարգի 14-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ «Հայփոստ» ՓԲԸ կողմից համապատասխան անդորրագրի տրամադրման պահից: Կարգի 14-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում հաշվետվությունն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փոստային հասցեով (ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6):

16. Թղթային տարբերակով տրամադրվող հաշվետվության սխալի վերաբերյալ հետադարձ կապ ստանալու դեպքում Հաշվետվություն տրամադրող անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան փոփոխություններով: Տվյալ դեպքում հաշվետվության ներկայացումը չի համարվում ժամկետանց:

17. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում այդ գործարքը կատարելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Գործարքի կատարման պահ է համարվում գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման պահը: Գույքի նկատմամբ իրավունքները և սահմանափակումները համարվում են գրանցված գրանցման մատյանում սահմանված գրառումները կատարելու և պետական գրանցման իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից հաստատվելու պահից:

18. Հաշվետվության տրամադրման օրերի հաշվարկը սկսվում է գործարքի կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից և ավարտվում է այդ օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 18:00-ին:

19. Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում գործարքում կասկածելիության չափանիշ հայտնաբերելու դեպքում՝ նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ն:

20. Կասկածելի գործարքի տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել՝

1) աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

2) ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով:

21. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը կարող է ձեռք բերվել Ֆինանսական դիտարկումների կենտրոն դիմելու կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջից արտահանելու միջոցով:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՋԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

22. Հաշվետվության ձևը լրացվում է հնարավորինս պարզ, հակիրճ, միանշանակ ընկալվող հայերեն լեզվով, «յունիկոդ» տառատեսակով և մեծատառերով: «Անուն (անվանում)» 4.1.1 և 4.2.1, «Ազգանուն» 4.1.2 և 4.2.2, «Հայրանուն» 4.1.3 և 4.2.3 ենթակետերը լրացվում են անգլերեն, երբ անհրաժեշտ տվյալները Հաշվետվություն տրամադրող անձին հասանելի են միայն անգլերեն լեզվով: Եթե նշված տվյալները հասանելի են այլ օտար լեզվով, ապա նշված ենթակետերը լրացվում են հայերեն կամ անգլերեն լեզվով:

23. Հաշվետվության ձևի թղթային տարբերակը լրացվում է համակարգչի օգնությամբ կամ գրիչով՝ յուրաքանչյուր վանդակում նշելով մեկ նիշ: Հաշվետվության ձևի կետերի և ենթակետերի ներքո նախատեսված դաշտերի սահմաններն անբավարար լինելու դեպքում անհրաժեշտ է օգտագործել հավելյալ թղթեր: Այդ թղթերի ձախ կողմում նշվում է այն կետը կամ ենթակետը, որի ներքո նախատեսված դաշտը լրացվում է: Այդ թղթերը ստորագրվում և հաստատվում են կնիքով և կցվում հիմնական հաշվետվության ձևին: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրվում է նաև այդ ուղղումների կողքին:

24. Հաշվետվության ձևի առաջին էջի ներքևի մասում նշվում է ներկայացվող հաշվետվության էջերի քանակը (ներառյալ՝ առաջին էջը): Հաշվետվության ձևի յուրաքանչյուր էջի ներքևի աջ անկյունում անհրաժեշտ է ստորագրել և հաստատել կնիքով: Հաշվետվության ձևի այն էջերը, որոնք չեն լրացվել, կարող են չներկայացվել:

25. Հաշվետվության ձևի էլեկտրոնային տարբերակը լրացվում է՝ օգտագործելով ներկայացված էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները: Էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները փոփոխության ենթակա չեն: Ցանկացած ներկայացված հաշվետվություն, որը պարունակում է փոփոխություն, դիտվում է թերի կամ սխալ լրացված հաշվետվություն և հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

26. Լրացման համար պարտադիր են այն կետերը և ենթակետերը, որոնց վերաբերյալ Հաշվետվություն տրամադրող անձն ունի կամ պարտավոր է ունենալ տեղեկատվություն:

27. Յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ ներկայացվում է առանձին հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

28. «Հաշվառման համարը» 1.1 կետում լրացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվառման համարը (ութ նիշ):

29. «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2 կետում լրացվում է հաշվետվության ուղարկման օրը, ամիսը, տարին (վեց նիշ):

30. «Հաշվետվության հերթական համարը» 1.3 կետում լրացվում է տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (երեք նիշ):

31. «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետում լրացվում է տվյալ հաշվետվության ուղղման կամ լրացման նպատակով ներկայացվող հաշվետվության հերթական համարը (մեկից երեք նիշ): Այս կետը լրացվում է, եթե հաշվետվությունն ուղարկվում է նախկինում ուղարկված հաշվետվությունում առկա սխալի կամ թերության ուղղման նպատակով, ինչպես նաև եթե սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:

32. Նախկինում ուղարկված հաշվետվության մեջ ուղղում կամ լրացում կատարելու համար հիմք հանդիսացած պատճառները և հանգամանքները լրացվում են «Ուղղման (լրացման) պատճառը» 1.4.1 ենթակետում: Այս ենթակետը ենթակա է պարտադիր լրացման, եթե ուղղում կամ լրացում կատարվել է նախորդ հաշվետվությունը ներկայացնելու պահից երեք աշխատանքային օր հետո:

33. Ուղղում կամ լրացում կատարելու դեպքում ներկայացվում է նոր հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

34. «Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն» 2.1 կետը նշվում է, եթե՝

ա) անկանխիկ եղանակով իրականացվող անշարժ գույքի առուվաճառքի գործարքի գումարը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով գերազանցում է 50 միլիոն ՀՀ դրամը,

բ) կանխիկ եղանակով իրականացվող անշարժ գույքի առուվաճառքի գործարքի գումարը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը:

35. «Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն» 2.2 կետը նշվում է, եթե ներկայացվում է կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

36. «Գործարքի կատարման ամսաթիվը» 3.1 կետում լրացվում է տեղեկացման ենթակա գործարքի կատարման՝ գույքի նկատմամբ իրավունքի փաստացի գրանցման օրը, ամիսը, տարին: Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելիս, եթե գործարքը դեռևս չի կատարվել կամ գործարար հարաբերությունը դեռևս չի հաստատվել, լրացվում են այն օրը, ամիսը, տարին, երբ ներկայացվել է գործարք կատարելու կամ գործարար հարաբերություն հաստատելու առաջարկը, իսկ այն դեպքում, երբ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվել է, նշվում են գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման օրը, ամիսը, տարին:

37. «Կանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.2 կետը նշվում է, եթե գործարքը կատարվել է կանխիկ եղանակով: Այն դեպքում, երբ գործարքն իրականացվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակով, սակայն միայն կանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցել 5 միլիոն ՀՀ դրամը, ապա նշվում է «Կանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.2 կետը, իսկ «Գործարքին վերաբերող այլ տեղեկատվություն» 3.9 կետում նշվում է գործարքի գումարի նաև անկանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

38. «Անկանխիկ եղանակով իրականացված գործարք» 3.3 կետը նշվում է, եթե գործարքը կատարվել է անկանխիկ եղանակով: Այն դեպքում, երբ գործարքն իրականացվել է միաժամանակ անկանխիկ և կանխիկ եղանակով, սակայն միայն անկանխիկ եղանակով վճարված գումարն է գերազանցում 50 միլիոն ՀՀ դրամը, ապա նշվում է «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.3 կետը, իսկ «Գործարքին վերաբերող այլ տեղեկատվություն» 3.9 կետում նշվում է գործարքի գումարի նաև կանխիկ եղանակով վճարված լինելու հանգամանքի և դրա չափի մասին տեղեկատվությունը:

39. Այն դեպքում, երբ գործարքն իրականացվել է միաժամանակ կանխիկ և անկանխիկ եղանակով և կանխիկ եղանակով վճարված գումարը գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը, անկանխիկ եղանակով վճարված գումարը գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը, իսկ անշարժ գույքի առուվաճառքի գործարքի դեպքում՝ 50 միլիոն ՀՀ դրամը, ապա միաժամանակ նշվում են «Կանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.2 և «Անկանխիկ եղանակով իրականացվող գործարք» 3.3 կետերը, ինչպես նաև լրացվում են դրանց ներքո նախատեսված ենթակետերը:

40. «Արժույթը» 3.2.1 և 3.3.1 ենթակետերում լրացվում է այն արժույթը, որով կատարվել է գործարքը:

41. «Գումարը տվյալ արժույթով» 3.2.2 և 3.3.2 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի չափը, այն արժույթով, որով կնքվել է գործարքը: Եթե «Արժույթը» 3.2.1 և 3.3.1 ենթակետերում նշվում է ՀՀ դրամ, ապա նույն գումարը լրացվում է և՛ «Գումարը տվյալ արժույթով» 3.2.2 ու 3.3.2, և՛ «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.3 ու 3.3.3 ենթակետերում:

42. «Գումարը համարժեք ՀՀ դրամին» 3.2.3 և 3.3.3 ենթակետերում լրացվում է գործարքի գումարի դրամական արտահայտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

43. «Գրանցման համար հիմք հանդիսացած փաստաթղթերի համարը» 3.4 կետում լրացվում է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի վրա նշված նոտարի սեղանամատյանի համարը, եթե գործարքը վավերացվել է նոտարի կողմից, իսկ նոտարական վավերացում չպահանջվող անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի դեպքում՝ Հաշվետվություն տրամադրող անձի կողմից այդ պայմանագրի վրա նշված համարը կամ այլ անհատականացման տվյալ:

44. «Գործարքի առարկա» 3.5 կետում նշվում է անշարժ գույքի անվանումը:

45. «Գրավադրում» 3.5.1 ենթակետը նշվում է, եթե անշարժ գույքի առուվաճառքի առարկան (կամ այլ անշարժ գույք) գրավադրվել է երրորդ կողմի մոտ որպես այդ պայմանագրից բխող պարտավորության ապահովման միջոց: Այն դեպքում, եթե գրավադրվել է առուվաճառքի պայմանագրի առարկա չհանդիսացող այլ գույք, ապա այդ գույքի անվանումը լրացվում է «Գործարքի առարկա» 3.5 կետում, իսկ գույքին վերաբերող այլ տվյալները՝ 3.5.2 - 3.5.5 կետերում:

46. «Գործարքի առարկայի գտնվելու վայրը» 3.5.2 ենթակետում նշվում է անշարժ գույքի գտնվելու վայրի (հասցեի) վերաբերյալ տեղեկատվությունը, որը պարունակում է առնվազն հետևյալ վավերապայ-

մանները՝ մարզ, համայնք, ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտ (թաղամաս, հրապարակ, փողոց, պողոտա, նրբանցք, անցում, փակուղի, զբոսայգի և այլն):

47. «Գործարքի առարկայի նպատակային նշանակությունը» 3.5.3 ենթակետում նշվում են գործարքի առարկայի նպատակային նշանակության վերաբերյալ տեղեկություններ:

48. «Գործարքի առարկայի մակերեսը» 3.5.4 ենթակետում նշվում է գործարքի առարկայի չափի վերաբերյալ տեղեկություններ:

49. «Գործարքի առարկայի կադաստրային արժեքը» 3.5.5 ենթակետում նշվում է գործարքի առարկայի կադաստրային արժեքը:

50. «Կասկածելի գործարքի չափանիշը կամ տիպաբանությունը» 3.6 կետում նշվում է 3.6.1 կամ 3.6.2 ենթակետերից մեկը կամ երկուսը: Եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու չափանիշը կամ տիպաբանությունը սահմանված չէ 3.6.1 ենթակետով նախատեսված լիազոր մարմնի իրավական ակտով, ապա նշվում է «Այլ» 3.6.2 ենթակետը և հնարավորինս մանրամասն նկարագրվում է կասկածելի որակելու հիմքը: 3.6.1 կամ 3.6.2 ենթակետերից մեկը կամ երկուսը նշելու դեպքում այդ ենթակետերի ներքո նախատեսված դաշտում լրացվում է Լիազոր մարմնի իրավական ակտով սահմանված կամ կասկածելի գործարքի այլ չափանիշ կամ տիպաբանություն:

51. «Կասկածների նկարագրությունը» 3.7 կետում հնարավորինս մանրամասն նկարագրվում են գործարքի կամ գործարար հարաբերության նախապատմությունը, այն բոլոր հանգամանքները, որոնք վկայել են գործարքի կասկածելիության մասին: Այս կետում կարող են նկարագրվել նաև Հաշվետվություն տրամադրող անձի՝ հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումները:

52. Եթե գործարք չի կատարվել գործարքի կողմի կողմից այն կատարելու վերաբերյալ դիմումը տալուց հետո գրանցումից հրաժարվելու հիմքով, և հաշվետվություն տրամադրող անձը դա որակել է որպես կասկածելի գործարք, ապա Հաշվետվության ձևում լրացվում են այն տվյալները, որոնք հայտնի են դարձել գործարքի կատարման առաջարկի վերաբերյալ դիմումը տալու պահից սկսած մինչև գործարքի կողմի կողմից այն կատարելու մտադրությունից հրաժարվելու պահը: «Կասկածների նկարագրությունը» 3.7 կետում նշվում է, թե Հաշվետվություն տրամադրող անձին հայտնի ինչ պատճառներով այն չի կատարվել:

53. «Կապված հաշվետվության անվանումը» 3.8 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության անվանումը, եթե ներկայացվող հաշվետվությամբ կասկածելի գործարքը, ըստ Հաշվետվություն տրամադրող անձի, պատճառահետևանքային կամ այլ առումով կապված է Հաշվետվություն տրամադրող անձի կողմից նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքի հետ: «Կապված հաշվետվության անվանումը» 3.8 կետում լրացվում է նախկինում ուղարկված հաշվետվության ձևի «Հաշվառման համարը» 1.1, «Հաշվետվության ուղարկման ամսաթիվը» 1.2, «Հաշվետվության հերթական համարը» 1.3, «Ուղղման (լրացման) հերթական համարը» 1.4 կետերում (առկայության դեպքում) լրացված տեղեկատվությունը: Թղթային տարբերակով հաշվետվություն ներկայացնելիս, եթե առկա է մեկից ավելի կապված հաշվետվություն, «Կապված հաշվետվության անվանումը» 3.8 կետը պատճենահանվում է և լրացվում է համապատասխան քանակով:

54. «Գործարքին վերաբերող այլ տեղեկատվություն» 3.9 կետում նշվում է Կարգի 37-րդ և 38-րդ կետերով նախատեսված տեղեկությունները, վճարման եղանակը, եթե պայմանագրում առկա է նշում վճարման եղանակի վերաբերյալ, ինչպես նաև գործարքին առնչվող՝ Հաշվետվություն տրամադրող անձի կողմից կարևորվող այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 7. ԳՈՐԾԱՐՔԻ ԿՈՂՄԵՐ

55. «Հաճախորդ 1» 4.1 կետի ներքո առկա «Հաճախորդ 1-ի կարգավիճակը» դաշտում նշվում է այն հաճախորդի վերաբերյալ տեղեկատվությունը, ում իրավունքը գույքի նկատմամբ գրանցմամբ ծագում է (գնորդ (գրավատու, վարկառու), վարկատու (գրավառու), գրավատու): «Այլ» տարբերակը նշվում է, եթե «Հաճախորդ 1» 4.1 կետի ներքո հանդես է գալիս գնորդ (գրավատու, վարկառու), վարկատու (գրավառու), գրավատու չհանդիսացող հաճախորդ ու լրացվում է վերջինիս կարգավիճակը:

56. «Հաճախորդ 1» 4.1 կետում նշվում է հաճախորդի տեսակը՝ ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր, իրավաբանական անձ կամ պետական մարմին կամ համայնք:

57. «Անուն (անվանում)» 4.1.1 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ անունը կամ իրավաբանական անձի կամ պետական մարմնի կամ համայնքի անվանումը:

58. «Ազգանուն» 4.1.2 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը: Այն դեպքում, երբ հստակ չէ, թե որն է հաճախորդի անունը և որը ազգանունը, ապա 4.1.1 և 4.1.2 ենթակետերը լրացվում են Հաշվետվություն տրամադրող անձի հայեցողությամբ:

59. «Հայրանուն» 4.1.3 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հայրանունը:

60. «Ծննդյան ամսաթիվը» 4.1.4 ենթակետում լրացվում են ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծննդյան օրը, ամիսը, տարին:

61. «Բնակության վայր (գտնվելու վայր)» 4.1.5 ենթակետի ներքո նախատեսված 4.1.5.1-4.1.5.4 դաշտերում ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում լրացվում է այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը մշտապես կամ առավելապես բնակվում են, իսկ իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի մշտական գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը): 4.1.5.1-4.1.5.4 դաշտերը չեն լրացվում, եթե Ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը և հաշվառման հասցեն նույն են:

62. «Հաշվառման վայր» 4.1.6 ենթակետի ներքո նախատեսված 4.1.6.1- 4.1.6.4 դաշտերում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ այն հասցեն (փողոցը, շենքը, տունը (բնակարանը), քաղաքը կամ գյուղը, մարզը, երկիրը), որտեղ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը հաշվառված է:

63. «Քաղաքացիությունը» 4.1.7 ենթակետում լրացվում է ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ քաղաքացիությունը:

64. «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշվում է նշվում է անձնագիրը, նույնականացման քարտը կամ նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձը (ինքնություն) հաստատող այլ փաստաթուղթ:

65. «Փաստաթղթի սերիան և համարը» 4.1.8.1, «Փաստաթղթի տրամադրման ամսաթիվը» 4.1.8.2 դաշտերում համապատասխանաբար լրացվում են «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթղթի սերիան, համարը, ինչպես նաև տրամադրման օրը, ամիսը, տարին:

66. «Ում կողմից է տրամադրվել» 4.1.8.3 դաշտում լրացվում է այն պետական մարմնի անվանումը կամ ծածկագիրը, որի կողմից տրամադրվել է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթուղթը:

67. «Փաստաթղթի վավերականության ժամկետը» 4.1.8.4 դաշտում լրացվում է այն օրը, ամիսը, տարին, երբ լրանում է «Անձը հաստատող փաստաթղթի տեսակը» 4.1.8 ենթակետում նշված փաստաթղթի վավերականության ժամկետը:

68. «Կազմակերպական-իրավական ձևը» 4.1.9 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը կամ դրա հապավումը (օրինակ՝ ՍՊԸ, ԲԲԸ և այլն): Օտարերկրյա իրավաբանական անձանց կազմակերպական-իրավական ձևի վերաբերյալ տվյալները լրացվում են լատինատառ:

69. «Անհատականացման (հաշվառման) համարը» 4.1.10 ենթակետում լրացվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցումը (հաշվառումը) իրականացնող մարմնի կողմից տրամադրված անհատականացման (հաշվառման) համարը:

70. «ՀՎՀՀ» 4.1.11 ենթակետում լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը:

71. «Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն» 4.1.12 ենթակետում լրացվում են գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը:

72. «Հաճախորդ 2» 4.2 կետի ներքո նախատեսված «Հաճախորդ 2-ի կարգավիճակը» դաշտում նշվում է այն հաճախորդի վերաբերյալ տեղեկատվությունը, ում իրավունքը գույքի նկատմամբ գրանցմամբ դադարում է (վաճառող): «Այլ» տարբերակը նշվում է, եթե «Հաճախորդ 2» 4.2 կետի ներքո հանդես է գալիս վաճառող չհանդիսացող հաճախորդ ու լրացվում է վերջինիս կարգավիճակը:

73. Հաշվետվության ձևի 4.2.1 - 4.2.12 ենթակետերը լրացվում են Կարգի 57 - 71 կետերով սահմանված կարգով:

74. «Լիազորված անձ» 4.3 կետը լրացվում է, եթե գործարքը կատարվում է լիազորված անձի միջոցով:

75. «Լիազոր անձը ռիելթոր է» 5.3.1 կետը նշվում է, եթե գործարքը կատարվել է ռիելթորական գործունեություն իրականացնող անձի միջոցով:

76. «Լիազորող անձ» 4.3.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում լիազորված անձն է հանդիսանում տվյալ անձը:

77. Հաշվետվության ձևի 4.3.3 - 4.3.10.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են Կարգի 57 - 67 կետերով սահմանված կարգով:

78. «Չի տիրապետում իրական շահառուի մասին տեղեկատվությանը» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը չի կարողանում ստանալ տեղեկատվություն այն մասին, թե արդյո՞ք գործարքում առկա է իրական շահառու, թե՝ ոչ:

79. «Չկա իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը պարզել է, որ գործարքում առկա չէ իրական շահառու (օրինակ՝ այդ մասին գրավոր հայտարարություն է տվել հաճախորդը):

80. «Առկա է իրական շահառու» դաշտը նշվում է այն դեպքում, երբ Հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդից կամ այլ աղբյուրից տեղեկացել է, որ գործարքում առկա է իրական շահառու:

81. «Առկա է իրական շահառու» դաշտը նշելուց հետո «Հաճախորդի անուն, ազգանուն (անվանում)» 4.4.1 ենթակետում լրացվում է այն հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ում իրական շահառուն է հանդիսանում տվյալ անձը:

82. «Իրական շահառուի տվյալները» 4.4.2 - 4.4.9.4 ենթակետերը և դաշտերը լրացվում են միայն «Առկա է իրական շահառու» դաշտը նշելու դեպքում՝ Կարգի 57-67 կետերով սահմանված կարգով:

83. Հաշվետվության ձևի 4-րդ բաժինը, կախված անձանց թվից, լրացվում է համապատասխան քանակով:

ԳԼՈՒԽ 8. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՇԽԱՏԱԿԻՑ

84. «Անուն» 5.1 կետում լրացվում է պատասխանատու աշխատակցի անունը:

85. «Ազգանուն» 5.2 կետում լրացվում է պատասխանատու աշխատակցի ազգանունը:

86. «Լրացման ամսաթիվը» 5.3 կետում լրացվում են հաշվետվության ձևը լրացնելու օրը, ամիսը, տարին:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 269-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգը հաստատելու մասին [*]

Նպատակ ունենալով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ նոր խմբագրությամբ ընդունումից հետո «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգը համապատասխանեցնել օրենքում կատարված փոփոխություններին, ինչպես նաև նման պահանջներ սահմանել ոչ ֆինանսական հաստատությունների համար,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 9-ի «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգը և գործարքում իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ հայտարարության ձևը հաստատելու մասին» թիվ 269-Ն որոշումը:

2. Հաստատել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N 279-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 279-Ն որոշմամբ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգի դրույթները տարածվում են ,Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա»-«ի» ենթակետերով նախատեսված ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատությունների և անձանց վրա:

2. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացությունները մեկնաբանվում են Օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Սույն կանոնակարգը սահմանում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում՝

1) հաշվետվություն տրամադրող անձի կառավարման մարմինների, այդ թվում՝ ներքին դիտարկումների մարմնի գործառույթների իրականացման կարգին ներկայացվող նվազագույն պահանջները.
2) հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտերի հաստատման ու փոփոխման կարգը.
3) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկի չափանիշներն ու դրանց որոշման կարգը.
4) հաճախորդի, այդ թվում՝ առկա հաճախորդի պատշաճ ուսումնասիրությանը ներկայացվող նվազագույն պահանջները.
5) գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու հետ կապված դիտարկման ընթացքին (վերլուծության կատարմանը) ներկայացվող նվազագույն պահանջները.
6) տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) հավաքմանը, հաշվառմանն ու պահպանմանը ներկայացվող նվազագույն պահանջները.
7) հաշվետվություն տրամադրող անձի ներքին աուդիտի իրականացման դեպքերը և հաճախականությունը, ինչպես նաև արտաքին աուդիտի հրավիրման կարգը.
8) հաշվետվություն տրամադրող անձի՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում իրավասու աշխատակիցների ուսուցման նվազագույն պահանջները:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. Հաշվետվություն տրամադրող անձի խորհուրդը՝

1) սահմանում է հաշվետվություն տրամադրող անձի՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման քաղաքականությունը,
2) հաստատում է ներքին դիտարկումների մարմնի, իսկ սույն կանոնակարգի 55-րդ կետով նախատեսված դեպքում՝ նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում ներքին աուդիտի տարեկան ծրագրերը, դրանց կատարման հաշվետվությունները, հսկողություն է իրականացնում այդ ծրագրերի իրագործման նկատմամբ,
3) անհրաժեշտության դեպքում ներքին դիտարկումների մարմնին հանձնարարում է իրականացնել Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ուսումնասիրություններ, հաստատում է աուդիտի արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները և վերահսկում դրանց իրականացումը,
4) համաձայնություն է տալիս գործադիր մարմնի կողմից ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի նշանակման և ազատման վերաբերյալ,
5) հաստատում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված ներքին իրավական ակտերը (այսուհետ՝ ներքին իրավական ակտեր),
6) քննարկում և հաստատում է ներքին աուդիտի եզրահանգումները, ինչպես նաև իր սահմանած հաճախականությամբ, բայց ոչ ուշ, քան կիսամյակը մեկ անգամ՝ ներքին դիտարկումների մարմնի՝ Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հաշվետվությունները,

7) իրականացնում է Օրենքով, սույն կանոնակարգով և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:

5. Հաշվետվություն տրամադրող անձի գործադիր մարմինը՝

1) ապահովում է խորհրդի սահմանած փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման քաղաքականության ներդրումը, ինչպես նաև դրա արդյունավետ իրականացումը,
2) ապահովում է Օրենքի, սույն կանոնակարգի և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի ամբողջական ու արդյունավետ կիրառումը և հսկողություն է իրականացնում դրա նկատմամբ,
3) խորհրդի համաձայնությամբ՝ նշանակում և ազատում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցին,
4) ապահովում է իր աշխատակիցների՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում պատշաճ ուսուցումը,
5) կազմակերպում է ներքին դիտարկումների մարմնի գործունեությանն անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովվածությունը,
6) ապահովում է ներքին դիտարկումների մարմնի՝ Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ուսումնասիրությունների, աուդիտի արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացումը,
7) իրականացնում է Օրենքով, սույն կանոնակարգով և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:

6. Իրավաբանական անձ հանդիսացող հաշվետվություն տրամադրող անձի կառավարման համակարգում խորհրդի բացակայության դեպքում սույն կանոնակարգի 4-րդ կետով սահմանված գործառույթներն իրականացնում է գործադիր մարմինը: Տնտեսական ընկերակցություն հանդիսացող հաշվետվություն տրամադրող անձի դեպքում սույն կանոնակարգի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված գործառույթներն իրականացնում են լիակատար ընկերները:

7. Անհատ ձեռնարկատեր հանդիսացող հաշվետվություն տրամադրող անձի դեպքում անհատ ձեռնարկատերն իրականացնում է սույն կանոնակարգի 4-րդ և 5-րդ կետերի 2-7-րդ ենթակետերով սահմանված գործառույթները:

ԳԼՈՒԽ 3. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8. Օրենքով, սույն կանոնակարգով և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված գործառույթները պատշաճ իրականացնելու նպատակով ֆինանսական հաստատության ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցը պետք է ունենա բարձրագույն կրթություն կամ Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայական և նշանակմանը նախորդող 10 տարիների ընթացքում առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ (ֆինանսական ոլորտում կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում):

9. Ներքին դիտարկումների մարմնի աշխատակից չի կարող լինել այն անձը, ով օրենքով սահմանված կարգով՝

1) ունի դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործության համար,
2) դատարանի կողմից զրկված է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական կամ իրավական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից,
3) սնանկ է ճանաչվել և ունի չմարված (չներված) պարտավորություններ,
4) ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված է որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ,
5) չի համապատասխանում սույն կանոնակարգի 8-րդ կետով սահմանված չափանիշներին:

10. Սույն կանոնակարգի 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված տեղեկությունները ներկայացվում են «Ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի վերաբերյալ» հայտարարագրով (այսուհետ՝ Հայտարարագիր)՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի, որը հաշվետվություն տրամադրող անձին է ներկայացվում ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի պաշտոնում նշանակվելուց առաջ: Հայտարարագրով ներկայացված տեղեկությունների հավաստիությունը կարող է ստուգվել օրենքով չարգելված ցանկացած եղանակով:

11. Բանկերում ներքին դիտարկումների մարմնի գործառույթը չի կարող դրվել հաճախորդների հետ անմիջականորեն առնչվող աշխատակիցների և ներքին աուդիտի ստորաբաժանման կամ աշխատակցի վրա:

12. Ներքին դիտարկումների մարմնի գործառույթը հաշվետվություն տրամադրող անձի՝ այլ գործառույթներ իրականացնող ստորաբաժանման կամ աշխատակցի վրա դնելու դեպքում այն պետք է հստակ նկարագրված լինի այդ ստորաբաժանման կամ աշխատակցի աշխատանքային պարտականություններում:

13. Ներքին դիտարկումների մարմինը փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման հետ կապված գործառույթների իրականացման հարցում օժանդակում և խորհրդատվություն է տրամադրում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում իրավասու այլ աշխատակիցներին:

14. Ներքին դիտարկումների մարմինը գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցնելու վերաբերյալ իր կայացրած որոշման մասին կարող է տեղեկացնել գործադիր մարմնին և խորհրդին, համապատասխանաբար, ներքին իրավական ակտերով նախատեսված լինելու դեպքում, միայն կասկածելի որակված գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը լիազոր մարմնին տրամադրելուց, գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցները կամ այլ գույքը սառեցնելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո:

15. Ներքին դիտարկումների մարմինը նվազագույնը՝

1) ապահովում է հաշվետվություն տրամադրող անձի անունից լիազոր մարմնին տեղեկությունների տրամադրումը, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձի կապը լիազոր մարմնի հետ,
2) կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության բացահայտման նպատակով իրականացնում է վերլուծություններ,
3) պահպանում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության բացահայտման նպատակով իրականացված վերլուծությունների արդյունքները,
4) ապահովում է հաճախորդի և գործարքի կամ գործարար հարաբերության ռիսկի գնահատումը,
5) գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցնելու հարցը, ըստ անհրաժեշտության, քննարկում է սույն կանոնակարգի 45-րդ կետով սահմանված՝ ներքին ազդակ տրամադրած համապատասխան աշխատակցի հետ,
6) իրականացնում է Օրենքով, սույն կանոնակարգով և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:

16. Ներքին դիտարկումների մարմինը կարող է՝

1) մշակել ներքին իրավական ակտեր, դրանք ներկայացնել խորհրդի հաստատմանը,
2) իրականացնել ներքին իրավական ակտերի արդյունավետության մոնիտորինգ, ներկայացնել առաջարկներ դրանց բարելավման վերաբերյալ,
3) իրականացնել գործադիր մարմնի կամ խորհրդի հանձնարարած այլ գործառույթներ այնքանով, որքանով դա չի սահմանափակում ներքին դիտարկումների մարմնի անկախությանը:

17. Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ հաշվետվություն տրամադրող անձի իրավասու մարմնին ներկայացվող ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը պետք է նվազագույնը ներառի՝

1) պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների թիվը, կասկածելի գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և համառոտ նկարագրությունը,
2) այն գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և ամփոփ նկարագրությունը, որոնց վերաբերյալ իրականացվել են վերլուծություններ, սակայն չեն որակվել կասկածելի,
3) հաշվետվություն տրամադրող անձի կասեցրած, իրականացումը մերժած կամ դադարեցրած գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և համառոտ նկարագրությունը, յուրաքանչյուր կասեցված գործարքի կամ գործարար հարաբերության արժեքը,
4) սառեցված գույքի չափը,
5) հաշվետվություն տրամադրող անձի աշխատակիցների գործողությունների արդյունքում Օրենքի, սույն կանոնակարգի և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջների խախտման դեպքերը,
6) ներքին իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 4. ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՈՒ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

18. Հաշվետվություն տրամադրող անձը լիազոր մարմնում հաշվառվելուց հետո մեկամսյա ժամկետում հաստատում և Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացնում Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ներքին իրավական ակտեր՝ բացառությամբ հաշվետվություն տրամադրող այն անձի, որի համար օրենսդրությամբ նախատեսված չէ ներքին իրավական ակտեր ունենալու պարտականություն:

19. Հաշվետվություն տրամադրող այն անձը, որի համար օրենսդրությամբ սահմանված է ներքին իրավական ակտերի ներկայացման ավելի վաղ ժամկետ, հաստատված ներքին իրավական ակտերը ներկայացնում է համապատասխան ավելի վաղ ժամկետում:

20. Ներքին իրավական ակտերում հաշվետվություն տրամադրող անձի նախաձեռնությամբ կամ Լիազոր մարմնի պահանջով փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում փոփոխված կամ լրացված ներքին իրավական ակտերը հաստատվում և Լիազոր մարմնին ներկայացվում են Օրենքով և սույն կանոնակարգով նախատեսված ընթացակարգով ու ժամկետներում:

ԳԼՈՒԽ 5. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՌԻՍԿԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ

21. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով սահմանված՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկը գնահատվում է որպես միջին (ստանդարտ), բարձր կամ ցածր: Ռիսկը գնահատվում է ըստ ռիսկը բնութագրող չափանիշի, իսկ մեկից ավելի չափանիշների առկայության դեպքում՝ դրանց համակցությամբ: Ռիսկի չափանիշները սահմանվում են Օրենքով, սույն կանոնակարգով և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով: Ներքին իրավական ակտերով կարող են սահմանվել միայն բարձր ռիսկի լրացուցիչ չափանիշներ:

22. Ռիսկը գնահատվում է միջին (ստանդարտ) այն դեպքում, երբ բացակայում են բարձր կամ ցածր ռիսկի չափանիշները՝ բացառությամբ սույն կանոնակարգի 24-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքի:

23. Ռիսկը գնահատվում է բարձր այն դեպքում, երբ առկա է բարձր ռիսկի թեկուզ մեկ չափանիշ՝ բացառությամբ սույն կանոնակարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված դեպքի:

24. Ռիսկը գնահատվում է ցածր այն դեպքում, երբ՝

1) առկա են միայն ցածր ռիսկի չափանիշներ,
2) առկա է միջին (ստանդարտ) ռիսկի որևէ չափանիշ, սակայն կատարվում է սույն կանոնակարգի 28-րդ կետով նախատեսված ցածր ռիսկի գործարք,
3) առկա է բարձր ռիսկի որևէ չափանիշ, սակայն կատարվում է սույն կանոնակարգի 28-րդ կետի 1-3-րդ ենթակետերով նախատեսված ցածր ռիսկի գործարք կամ սույն կանոնակարգի 28-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված ցածր ռիսկի գործարք, որի արժեքը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

25. Տարբեր ռիսկերի համար բնութագրական մի քանի չափանիշների միաժամանակ առկայության դեպքում ռիսկը գնահատվում է առկա չափանիշներից առավել բարձր ռիսկայինին համապատասխան՝ բացառությամբ սույն կանոնակարգի 24-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետով սահմանված դեպքերի:

26. Հաճախորդի հետ գործարար հարաբերության ընթացքում ռիսկի որևէ նոր չափանիշ ի հայտ գալու դեպքում հաշվետվություն տրամադրող անձը պետք է վերանայի տվյալ ռիսկի գնահատումը ձեռնարկելով նոր որոշված ռիսկին համապատասխան հաճախորդի պատշաճ ուսումնասիրության միջոցառումներ:

27. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի համաձայն՝ բարձր ռիսկի չափանիշներ են նաև՝

1) իրավաբանական անձինք կամ կազմավորումները, որոնց գործունեության ոլորտը ակտիվների անհատական տնօրինումն է,
2) անվանական բաժնետերեր կամ ըստ ներկայացնողի բաժնետոմսեր ունեցող ընկերությունները,
3) կանխիկի լայնամասշտաբ կիրառությամբ բնութագրվող բիզնեսները և գործարար հարաբերությունները,
4) սեփականատերերի արտասովոր կամ անհարկի բարդ կազմ ունեցող ընկերությունները,
5) անհատականացված բանկային ծառայությունների մատուցումը,
6) առանց առերես շփման գործարքը կամ գործարար հարաբերությունը:

28. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ ցածր ռիսկի չափանիշներ են նաև՝

1) կյանքի ապահովագրության պայմանագրերը, որոնց դեպքում տարեկան ապահովագրավճարը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկը կամ միանվագ ապահովագրավճարը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը,
2) կենսաթոշակային համակարգերի շրջանակում կնքված ապահովագրական պայմանագրերը, եթե դրանք չեն պարունակում հրաժարման մասին դրույթ, և պայմանագիրը չի կարող օգտագործվել որպես գրավի առարկա,
3) Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքի բյուջե կատարվող վճարումները,
4) հանրային ծառայությունների դիմաց կատարվող վճարումները,
5) աշխատավարձի, կենսաթոշակի կամ հայտնի աղբյուրներից ստացվող սոցիալական նպաստների հետ կապված վճարումները:

ԳԼՈՒԽ 6. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

29. Հաշվետվությունը տրամադրող անձը պետք է Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում իրականացնի հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն՝ ձեռնարկելով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկին համապատասխան միջոցառումները:

30. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացը ներառում է հաճախորդին (այդ թվում՝ լիազորված անձին և իրական շահառուին) նույնականացնելը և նրա ինքնությունը ստուգելը, գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը պարզելը, ինչպես նաև գործարար հարաբերության ամբողջ ընթացքում (ներառյալ՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու պահը) ընթացիկ պատշաճ ուսումնասիրություն իրականացնելը:

31. Միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում իրականացվում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրության՝ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով սահմանված գործընթացը, որի շրջանակներում հաշվետվություն տրամադրող անձը, ի կատարումն այդ կետով և Օրենքի համապատասխան այլ դրույթներով միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում սահմանված պահանջների, իրականացնում է գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության կանոնավոր միջոցառումներ:

32. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հաճախորդի հետ գործարքների դիտանցման նպատակով հաշվետվություն տրամադրող անձը միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում ձեռնարկում է հետևյալ միջոցառումները.

1) ստուգում է գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) իսկությունը և հավաստիությունը՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից, կատարելով հարցումներ իրավասու մարմիններին և այլ հաշվետու անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին,
2) համադրում է հաճախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները,
3) պարզում է հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը,
4) ստուգում է գործարքի կամ գործարար հարաբերության համադրելիությունը հաճախորդի գործարար բնութագրին,
5) ներքին իրավական ակտով սահմանված դեպքում պարզում է հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը,
6) ձեռնարկում է ներքին իրավական ակտերով սահմանված այլ միջոցառումներ:

33. Բարձր ռիսկի դեպքում իրականացվում է հաճախորդի հավելյալ պատշաճ ուսումնասիրության Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով սահմանված գործընթացը, որի շրջանակներում հաշվետվություն տրամադրող անձը, ի կատարումն այդ կետով և Օրենքի համապատասխան այլ դրույթներով բարձր ռիսկի դեպքում սահմանված պահանջների, իրականացնում է գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության խորացված միջոցառումներ:

34. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հաճախորդի հետ գործարքների դիտանցման նպատակով հաշվետվություն տրամադրող անձը բարձր ռիսկի դեպքում ձեռնարկում է հետևյալ խորացված միջոցառումները.

1) գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) իսկությունը և հավաստիությունը ստուգելիս պահանջում է անհրաժեշտ տեղեկություններ (ներառյալ՝ լրացուցիչ փաստաթղթեր), օգտվում է տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից, կատարում է հարցումներ հնարավոր մեծ թվով իրավասու մարմինների և այլ հաշվետու անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին,
2) հաճախորդի՝ տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները համադրելիս ընտրում է հնարավորինս ավելի երկար կամ մի քանի համադրելի միավոր ժամանակահատված,
3) հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը պարզելիս կատարում է դրանց բազմաստիճան վերլուծություն, այդ թվում՝ հնարավոր անուղղակի կապերը բացահայտելու նպատակով,
4) հաճախորդի գործարար բնութագրին որևէ գործարքի կամ գործարար հարաբերության համադրելիությունը ստուգելիս պահանջում է դրանց շրջանակներում կատարված գործողությունները լիարժեքորեն հիմնավորող տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր),
5) հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը պարզելիս պահանջում է դրանց օրինականությունը հիմնավորող տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր),
6) ձեռնարկում է ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործողություններ:

35. Ցածր ռիսկի դեպքում կարող է իրականացվել հաճախորդի պարզեցված պատշաճ ուսումնասիրության՝ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով սահմանված գործընթացը, որի շրջանակներում հաշվետվություն տրամադրող անձը, ի կատարումն այդ կետով և Օրենքի համապատասխան այլ դրույթներով ցածր ռիսկի դեպքում սահմանված պահանջների, կարող է իրականացնել գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության նվազեցված միջոցառումներ:

36. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հաճախորդի հետ գործարքների դիտանցման նպատակով հաշվետվություն տրամադրող անձը ցածր ռիսկի դեպքում կարող է ձեռնարկել հետևյալ նվազեցված միջոցառումները.

1) ստուգել գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) իսկությունը և հավաստիությունը՝ հիմք ընդունելով հաճախորդի տրամադրած տեղեկատվությունը,
2) համադրել հաճախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները միայն այն դեպքում, երբ դրանք գերազանցում են հաճախորդի գործարար բնութագրի տեսանկյունից ողջամիտ գումարային սահմանաչափը,
3) պարզել հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը միայն այն դեպքում, երբ ի հայտ են եկել միջին (ստանդարտ) կամ բարձր ռիսկայնության հաճախորդների, գործարքների կամ գործարար հարաբերությունների հետ կապեր:

37. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում դիտանցումը կատարվում է գործարար հարաբերության ամբողջ ընթացքում (ներառյալ՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու պահը), ընդ որում՝ սույն կանոնակարգի 32-րդ և 34-րդ կետերի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված միջոցառումները պետք է ձեռնարկվեն ներքին իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ, բայց ոչ ուշ, քան.

1) տարին մեկ անգամ՝ միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում,
2) վեց ամիսը մեկ անգամ՝ բարձր ռիսկի դեպքում, բացառությամբ սույն կանոնակարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

38. Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակում հավաքված տեղեկությունների (բացառությամբ հաճախորդի նույնականացման և ինքնության ստուգման արդյունքում ձեռք բերված տեղեկությունների) թարմացումը կատարվում է ներքին իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ, բայց ոչ ուշ, քան.

1) տարին մեկ անգամ՝ միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում,
2) վեց ամիսը մեկ անգամ՝ բարձր ռիսկի դեպքում, բացառությամբ սույն կանոնակարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի,
3) երկու տարին մեկ անգամ՝ ցածր ռիսկի դեպքում:

39. Ներպետական օրենսդրության նոր պահանջներն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ առկա հաճախորդների նկատմամբ պատշաճ ուսումնասիրության պահանջները կիրառվում են՝ ձեռնարկելով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման համապատասխան ռիսկի համար նախատեսված միջոցառումները հետևյալ դեպքերում և ժամկետներում.

1) հաճախորդին (այդ թվում՝ լիազորված անձին և իրական շահառուին) նույնականացնելու և նրա ինքնությունը ստուգելու, ինչպես նաև գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը պարզելու մասով՝ նոր պահանջներն ուժի մեջ մտնելուց հետո նախքան հաճախորդի հետ առաջին գործարքը կատարելը կամ սույն կանոնակարգի 38-րդ կետով նախատեսված՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակում հավաքված տեղեկատվությունը հերթական անգամ թարմացնելիս, եթե մինչև հերթական թարմացումը հաճախորդի հետ գործարք չի կատարվել,
2) գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունն իրականացնելու մասով՝ նոր պահանջներն ուժի մեջ մտնելու պահից սկսած:

40. Առանց առերես շփման գործարար հարաբերություններ հաստատելիս հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակներում պետք է նաև պահանջի, որ առաջին վճարումը կատարվի Օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի «ա» - «գ» ենթակետերով սահմանված պահանջները բավարարող ֆինանսական հաստատությունում հաճախորդի անվամբ բացված հաշվով:

41. Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց դեպքում Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի «դ» ենթակետով սահմանված ընթացիկ հավելյալ դիտարկումն ընդգրկում է սույն կանոնակարգի 34-րդ կետով նախատեսված միջոցառումները, որոնց իրականացման՝ սույն կանոնակարգի 37-րդ և 38-րդ կետերով նախատեսված պարբերականությունը սահմանվում է ներքին իրավական ակտերով, բայց ոչ ուշ, քան երեք ամիսը մեկ անգամ:

42. Օրենքի 16-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված՝ հաճախորդի գործարար բնութագիրը պարզելիս հաշվետվություն տրամադրող անձը պետք է հավաստիանա, որ բավարար տեղեկություններ է ձեռք բերել հաճախորդի՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձ լինելու հանգամանքը պարզելու համար:

43. Օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ իրական շահառուի առկայությունը պարզելիս լրացվում է «Իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ» հայտարարություն»՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի: Սույն կետով նախատեսված հայտարարությունը գործարար հարաբերության ընթացքում լրացվում է նաև, երբ ի հայտ է գալիս իրական շահառու, կամ երբ իրական շահառուն փոխվում է:

ԳԼՈՒԽ 7. ԳՈՐԾԱՐՔԸ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԿԱԾԵԼԻ ՈՐԱԿԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ (ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆԸ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱՋԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

44. Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու գործընթացը իրականացվում է ներքին դիտարկումների մարմնի կողմից՝ Օրենքով, սույն կանոնակարգով և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով, ինչպես նաև ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

45. Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու գործընթացը սկսվում է ինչպես ներքին և արտաքին ազդակների ստացման դեպքում, այնպես էլ ներքին դիտարկումների մարմնի նախաձեռնությամբ, բոլոր այն դեպքերում, երբ.

1) առկա է հնարավոր համընկնում հաճախորդի կամ գործարքի մյուս կողմի տվյալների և ահաբեկչության հետ կապված անձանց կամ լիազոր մարմնի հանձնարարականներում նշված այլ անձանց նույնականացման տվյալների միջև.
2) դիտարկվող իրավիճակը ամբողջությամբ կամ մասամբ համապատասխանում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշներին կամ տիպաբանություններին.
3) կնքված կամ առաջարկվող գործարքի կամ գործարար հարաբերության կատարման տրամաբանությունը, շարժը (դինամիկան) կամ այլ հանգամանքներ հիմք են տալիս ենթադրելու, որ այն կարող է իրականացվել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակով.
4) առկա են ներքին իրավական ակտերով սահմանված՝ գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության մասին վկայող այլ հանգամանքներ:

46. Ներքին ազդակներ են համարվում հաճախորդներին սպասարկող ստորաբաժանումների աշխատակիցների, բանկի կառավարման մարմինների, ներքին աուդիտի ստորաբաժանման, ինչպես նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում իրավասու այլ աշխատակիցների կողմից ներքին դիտարկումների մարմնին ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում փոխանցված ազդակները:

47. Արտաքին ազդակներ են համարվում լիազոր մարմնից, իրավասու մարմիններից, այլ հաշվետու անձանցից, օտարերկրյա գործընկերներից, ինչպես նաև տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից ստացված ազդակները:

48. Ներքին դիտարկումների մարմինը սույն կարգի 45-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված այն դեպքերում, երբ առկա է հնարավոր համընկնում.

1) ահաբեկչության հետ կապված անձանց նույնականացման տվյալների հետ, անմիջապես իրականացնում է համապատասխան համադրումներ և դրական համընկնման, ինչպես նաև այն դեպքում, երբ չի հաջողվում հավաստիանալ դրական համընկնման բացակայության հարցում, Օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնին ներկայացնում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն և ձեռնարկում Օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված միջոցառումները.
2) լիազոր մարմնի հանձնարարականներում նշված այլ անձանց նույնականացման տվյալների հետ, հանձնարարականներում նշված ժամկետներում իրականացնում է համապատասխան համադրումներ և դրական համընկնման, ինչպես նաև այն դեպքում, երբ չի հաջողվում հավաստիանալ դրական համընկնման բացակայության հարցում, կատարում է հանձնարարականներով սահմանված գործողությունները:

49. Ներքին դիտարկումների մարմինը սույն կարգի 45-րդ կետի 2-4-րդ ենթակետերով սահմանված դեպքերում ողջամիտ ժամկետում կատարում է համակողմանի վերլուծություն՝ օգտվելով հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հավաքված և լրացուցիչ ձեռք բերվող տեղեկատվությունից, անհրաժեշտության դեպքում ճշտումներ է կատարում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Ֆինանսական դիտարկումների կենտրոնի հետ և եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը որակում է որպես կասկածելի, Օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնին ներկայացնում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն, ինչպես նաև ձեռնարկում է Օրենքով նախատեսված այլ միջոցառումներ:

50. Եթե ներքին և արտաքին ազդակների հիման վրա, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ կատարած վերլուծության արդյունքում ներքին դիտարկումների մարմինը գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չի որակում, և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն չի տրամադրում լիազոր մարմնին, ապա գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չորակելու հիմնավորումները, կատարված եզրահանգումները, վերլուծության ընթացքը և արդյունքները փաստաթղթավորվում ու պահպանվում են Օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

ԳԼՈՒԽ 8. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ) ՀԱՎԱՔՄԱՆԸ, ՀԱՇՎԱՌՄԱՆՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱՋԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

51. Օրենքով սահմանված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) կարող են հավաքվել և պահպանվել թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

52. Օրենքով սահմանված պահպանման ենթակա տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) պետք է հաշվառվեն: Հաշվառումը պետք է կատարվի այնպես, որ անհրաժեշտության դեպքում հնարավորություն լինի վերականգնել այն աշխատակցի տվյալները, ով իրականացրել է հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը կամ պահպանման ենթակա տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) ձեռքբերմանն ուղղված այլ գործողությունները:

53. Հաշվետվություն տրամադրող անձը պետք է ապահովի պահպանվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) անվտանգությունը և գաղտնիությունը:

ԳԼՈՒԽ 9. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՀՐԱՎԻՐՄԱՆԸ ԿԱՐԳԸ

54. Հաշվետվություն տրամադրող անձն իրականացնում է ներքին աուդիտ՝ հավաստիանալու համար, որ իր գործունեությունը համապատասխանում է Օրենքի, սույն կանոնակարգի և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջներին:

55. Եթե հաշվետվություն տրամադրող անձի համար օրենսդրությամբ սահմանված է ներքին աուդիտի գործառույթ ունենալու պարտականություն, հաշվետվություն տրամադրող անձը ներքին աուդիտի տարեկան ծրագրով պետք է նախատեսի Օրենքին, սույն կանոնակարգին և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերին իր գործունեության համապատասխանությունն ուսումնասիրելու պահանջ:

56. Եթե հաշվետվություն տրամադրող անձի համար օրենսդրությամբ սահմանված չէ ներքին աուդիտի գործառույթ ունենալու պարտականություն, հաշվետվություն տրամադրող անձը պետք է ներքին իրավական ակտերով սահմանի Օրենքին, սույն կանոնակարգին և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերին իր գործունեության համապատասխանությունն ուսումնասիրելու կարգ և հաճախականություն:

57. Սույն կանոնակարգի 55-րդ և 56-րդ կետերի պահանջների իրականացման արդյունքում կատարված եզրահանգումները (այդ թվում՝ ներքին աուդիտի տարեկան ծրագրի կատարման հաշվետվության համապատասխան բաժինը) պատշաճ կերպով ներկայացվում են լիազոր մարմնին հաշվետվություն տրամադրող անձի խորհրդի հաստատելուց հետո մեկշաբաթյա ժամկետում:

58. Եթե հաշվետվություն տրամադրող անձն ունի օրենսդրությամբ սահմանված դեպքերում և հաճախականությամբ արտաքին աուդիտ հրավիրելու պարտականություն, արտաքին աուդիտի իրականացման ժամանակ պետք է ուսումնասիրվի նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի օրենսդրության պահանջների ներդրումը և դրանց կատարման արդյունավետությունը:

59. Լիազոր մարմինը հաշվետվություն տրամադրող անձից կարող է պահանջել իրականացնել արտաքին աուդիտ, եթե հաշվետվություն տրամադրող անձը պարբերաբար խախտում է Օրենքի, սույն կանոնակարգի և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջները կամ ծավալում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման բարձր ռիսկի չափանիշներով բնութագրվող գործունեություն:

60. Լիազոր մարմնի կողմից արտաքին աուդիտ իրականացնելու պահանջ ստանալու դեպքում հաշվետվություն տրամադրող անձը մեկամսյա ժամկետում հրավիրում է արտաքին աուդիտ, որի եզրակացությունը ստանալուց հետո մեկշաբաթյա ժամկետում տրամադրվում է լիազոր մարմնին:

61. Հաշվետվություն տրամադրող անձը, որն ունի դուստր կազմակերպություն, մասնաճյուղ կամ ներկայացուցչություն, պատասխանատու է դրանց գործունեությունը Օրենքի, սույն կանոնակարգի և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան իրականացվելու համար: Այդ նպատակով հաշվետվություն տրամադրող անձը պետք է ստանա և ուսումնասիրի իր դուստր կազմակերպություններում, մասնաճյուղերում և ներկայացուցչություններում իրականացված աուդիտի վերաբերյալ եզրակացության պատճենը:

ԳԼՈՒԽ 10. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԻ՝ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎԱՍՈՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

62. Հաշվետվություն տրամադրող անձը պետք է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման թեմայով պարբերաբար ուսուցում կազմակերպի խորհրդի, գործադիր մարմնի, ներքին դիտարկումների մարմնի, հաճախորդների սպասարկման և ներքին աուդիտի գործառույթներ իրականացնող, ինչպես նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում իրավասու այլ աշխատակիցների համար:

63. Սույն կանոնակարգի 62-րդ կետով նախատեսված նոր աշխատակիցների համար փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման թեմայով ուսուցումը պետք է կազմակերպվի աշխատանքի ընդունումից հետո երեք ամսվա ընթացքում:

64. Հաշվետվություն տրամադրող անձի իրականացրած ուսուցման նյութերը, դրանց մասնակցած աշխատակիցների տվյալները և մասնակցությունը հավաստող փաստաթղթերը պետք է հաշվառվեն և պահպանվեն առնվազն 5 տարի ժամկետով:

Հավելված 1
«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման
ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող
նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի»

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի վերաբերյալ

1. Անձնական տվյալներ

1.1. Անունը, ազգանունը, հայրանունը _____

1.2 Սեռը _____ 1.3. Ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը _____
(օր/ամիս/տարի)

1.4. Ծննդավայրը _____1.5. Քաղաքացիությունը _____

1.6. Անձը հաստատող փաստաթղթի համարը և սերիան, ում կողմից և երբ է տրված _____

1.7. Սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում) _____

1.8. Բնակության վայրը _____

1.9. Հեռախոսահամար _____ 1.10. Էլեկտրոնային փոստի հասցե _____

2. Պաշտոնը

2.1. Եթե զբաղեցնում եք այլ պաշտոն, ապա նշեք այդ պաշտոնի անվանումը
_____

3. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգի 8-րդ և 9-րդ կետերով նշված հիմքերի մասին.
Մեկնաբանությունների համար կարող եք օգտագործել լրացուցիչ թերթեր

3.1. Արդյո՞ք Դուք կատարել եք դիտավորյալ հանցագործություն, որի համար դատվածությունը սահմանված կարգով մարված կամ հանված չէ	Այո □ Ոչ □
3.2. Արդյո՞ք դատարանը Ձեզ զրկել է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից	Այո □ Ոչ □
3.3. Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ և ունեք չմարված (չներված) պարտավորություններ	Այո □ Ոչ □
3.4. Արդյո՞ք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինները Ձեզ քրեական գործով ներգրավել են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ	Այո □ Ոչ □

3.5. Կրթություն

Այս կետը լրացնելու փոխարեն աշխատակիցը կարող է ներկայացնել իր ինքնակենսագրությունը (տպագիր և հայերեն), որտեղ նվազագույնը պետք է ներկայացվի սույն կետով սահմանված տեղեկատվությունը

3.5.1. Ուսումնական հաստատության անվանումը	Գտնվելու վայրը	Հաճախումների ժամանակաշրջանը (____թ-ից մինչև ____թ.)	Գիտական աստիճանը

3.6.Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարվա ընթացքում

Կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսը	Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետները	Պաշտոնը

3.7. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն
4. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն ամբողջական և արժանահավատ է: Գիտակցում եմ, որ որևէ կեղծ փաստի կամ տեղեկատվության ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվության: *Ես պարտավորվում եմ իմ ներկայացրած վերոնշյալ տեղեկատվության փոփոխության դեպքում պատշաճ կերպով և ժամանակին տեղեկացնել հաշվետվություն տրամադրող անձին:* Ստորագրություն _____ Ամսաթիվ _____ *օր/ամիս/տարի*

Հավելված 2
«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի»

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ

Ես՝_____, «__» _____ _____ թ._____ հաստատելով գործարար հարաբերություն կամ գործարքում հանդես գալով որպես _____, հայտարարում եմ, որ գործարար հարաբերության մեջ կամ գործարքում առկա է/առկա չէ իրական շահառու:

Իրական շահառու է _____:

Պարտավորվում եմ նաև գործարար հարաբերության ընթացքում իրական շահառուի փոփոխության կամ իրական շահառուի ի հայտ գալու դեպքում տեղյակ պահել Ձեզ:

«__» _____ _____ թ.

_____
Ստորագրություն

«««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառման կարգը» հաստատելու մասին[*]

Նպատակ ունենալով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ նոր խմբագրությամբ ընդունումից հետո նախատեսել հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառման միասնական կարգ,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառման կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N 280-Ն

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 7-ի
թիվ 280-Ն որոշմամբ

ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳ

«ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը սահմանում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված հաշվետվություն տրամադրող անձանց (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձ) հաշվառման կարգը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն):

2. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց համար հաշվառման պարտականությունն առաջանում է միայն օրենքով սահմանված կարգով լիցենզավորման (նշանակման, որակավորման կամ այլ կերպ գործունեության թույլտվություն տրամադրելու) ու դրա նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պահանջների ամրագրումից հետո:

Գլուխ 2. Հաշվետվություն տրամադրող անձի կողմից հաշվառման դիմում ներկայացնելու կարգը

3. Հաշվետվություն տրամադրող անձը հաշվառվելու համար Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացնում է հաշվառման դիմում՝ համաձայն սույն կարգի Հավելված 1-ի:

4. Հաշվառման դիմումում լրացվում են միայն այն տվյալները, որոնք, օրենսդրության համաձայն, կիրառելի են տվյալ հաշվետվություն տրամադրող անձի նկատմամբ:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

5. Հաշվառման դիմումը Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացվում է հաշվետվություն տրամադրող անձի լիցենզավորմանը (նշանակմանը, որակավորմանը կամ այլ կերպ գործունեության թույլտվություն տրամադրելուն) հաջորդող մեկամսյա ժամկետում:

6. Հաշվառման դիմումը ստորագրվում է հաշվետվություն տրամադրող անձի կողմից և հավաստվում հաշվետվություն տրամադրող անձի կնիքով (կնիքի առկայության դեպքում):

7. Հաշվետվություն տրամադրող անձը հաշվառման դիմումը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացնում հետևյալ եղանակներից որևէ մեկով.

1) ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնելու միջոցով՝ փակ կնքված ծրարով «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին» նշագրմամբ, որի դեպքում հաշվառման դիմումը Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացված է համարվում ՀՀ կենտրոնական բանկի կողմից ստացականի տրամադրման պահից.
2) պատվիրված նամակի միջոցով՝ փակ կնքված ծրարով «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին» նշագրմամբ, որի դեպքում հաշվառման դիմումը Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացված է համարվում «Հայփոստ» ՓԲԸ կողմից համապատասխան անդորրագրի տրամադրման պահից: Ընդ որում, հաշվառման դիմումն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փոստային հասցեով (ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6).
3) էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային կայքէջի կամ «Սի-Բի-էյ-Նեթ» համակարգի միջոցով, որի դեպքում հաշվառման դիմումը ներկայացված է համարվում Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից դիմումը ներկայացված լինելու վերաբերյալ հասանելի կապի միջոցներով ուղարկված հաղորդագրություն ստանալու պահից:

8. Հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման դիմումի մեջ ներկայացված տվյալների փոփոխության կամ լրացման դեպքում հաշվետվություն տրամադրող անձը փոփոխություն կամ լրացում կատարելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր ծանուցում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնին սույն կարգի 7-րդ կետով սահմանված կարգով:

9. Ներքին դիտարկումների մարմնի մեկ աշխատակից ունենալու դեպքում հաշվետվություն տրամադրող անձն այդ աշխատակցին պաշտոնից ազատելու կամ աշխատակցի բացակայության այլ դեպքերում (գործուղում, ամենամյա կամ նպատակային արձակուրդ, ժամանակավոր անաշխատունակություն) այդ մասին որոշումն ընդունելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև առաջին հաշվետվության տրամադրումը, Ֆինանսական դիտարկումների կենտրոնին ծանուցում է ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու մասին՝ սույն կարգի 7-րդ կետով սահմանված կարգով:

Գլուխ 3. Հաշվետվություն տրամադրող անձի հաշվառումը

10. Հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման պարտականությունը կատարված է համարվում սույն կարգի Հավելված 1-ով նախատեսված հաշվառման դիմումը սույն կարգի 7-րդ կետով սահմանված կարգով ներկայացնելու պահից:

11. Հաշվառման դիմումը Ֆինանսական դիտարկումների կենտրոնում մուտքագրվելուց հետո հաշվետվություն տրամադրող անձին տրվում է հաշվառման համար:

12. Հաշվետվություն տրամադրող անձին հաշվառման համար կարող է տրվել նաև Ֆինանսական դիտարկումների կենտրոնի նախաձեռնությամբ՝ պաշտոնական աղբյուրներից (վերահսկող մարմինների պաշտոնական գրություններ, պաշտոնական ինտերնետային կայքէջ և այլն) ստացված տեղեկատվության հիման վրա:

13. Հաշվետվություն տրամադրող անձին հաշվառման վերաբերյալ ուղարկվում է սույն կարգի Հավելված 2-ով նախատեսված ծանուցումը՝ սույն կարգի 7-րդ կետով նախատեսված կարգով:

Հավելված 1
««Փողերի լվացման և ահաբեկչության
ֆինանսավորման դեմ պայքարի մասին»
ՀՀ օրենքով նախատեսված հաշվետվություն
տրամադրող անձանց հաշվառման» կարգի

ՀԱՇՎԱՌՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի ֆինանսական
դիտարկումների կենտրոնի ղեկավար
պարոն _____- ին

Խնդրում եմ Ձեզ _____-ին տրամադրել հաշվառման համար:

Հաշվետվություն տրամադրող անձի տվյալները՝

Գործունեության տեսակ _____
Գործունեության վայրը _____
Հարկ վճարողի հաշվառման համարը _____
Պետական գրանցման (հաշվառման) համարը _____
Լիցենզիայի (փաստաբանական գործունեության արտոնագրի, որակավորման վկայականի) համարը _____
Հեռախոսահամարը _____
էլեկտրոնային փոստի/«ՍիԲիէյՆեթ» հասցեն _____

Ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի կամ պատասխանատու աշխատակցի տվյալները

1. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, հեռախոս
2. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, հեռախոս
3. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, հեռախոս
4. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, հեռախոս

Հաշվետվություն տրամադրող անձ

_____
(ստորագրություն)

«__» _____ _____ թ.

Երևան

Կ. Տ.

Հավելված 2
««Փողերի լվացման և ահաբեկչության
ֆինանսավորման դեմ պայքարի մասին»
ՀՀ օրենքով նախատեսված հաշվետվություն
տրամադրող անձանց հաշվառման» կարգի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հաշվառման համար տրամադրելու վերաբերյալ

Սույնով հայտնում ենք, որ _____՝ որպես հաշվետվություն տրամադրող անձ, «__» _____ _____ թ-ին հաշվառվել է ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում _____ հաշվառման համարով:

Ֆինանսական դիտարկումների

կենտրոնի ղեկավար

_____

ստորագրություն

«__» _____ _____ թ.

Երևան

Կ. Տ.

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտը կարգավորող իրավական ակտերի՝ նոր խմբագրությամբ ընդունումից հետո ապահովել այդ ակտերի վերնագրերի համապատասխանությունը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի ««Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 1-ը հաստատելու մասին» թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 1-ի Հավելված 34-ի 8-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.11.2014 թ. (ՀՀԳՏ N28 (507)[1], 12.11.2014):

1) Ցանկի 22-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 231-Ն որոշմամբ հաստատված «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ թիվ 001 հաշվետվական ձևը, դրա տրամադրման կարգը և ժամկետները» վերնագրով 22-րդ հարցը փոխարինել ««Բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 101 հաշվետվության ձևի լրացման և հաշվետվության ներկայացման» կարգ»:

2) Ցանկի 25-րդ ենթակետում «օրենսգրքի» բառից հետո լրացնել «103.1-րդ,» բառերը:

3) Ցանկի 27-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 հոկտեմբերի 2014 թ., N 281-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«Գնային չարաշահման դեպքերի առկայության չափանիշները, գնային չարաշահման դեպքերի արձանագրման համար հիմք հանդիսացող հանգամանքները և գնային չարաշահում չհամարվող դեպքերն ու գործողությունները» կանոնակարգ 4/17-ը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 171-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Գնային չարաշահման դեպքերի առկայության չափանիշները, գնային չարաշահման դեպքերի արձանագրման համար հիմք հանդիսացող հանգամանքները և գնային չարաշահում չհամարվող դեպքերն ու գործողությունները» սահմանող կանոնակարգ 4/17-ը՝ համաձայն սույն որոշման հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
24 հոկտեմբերի 2014 թ., N 288-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 21-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 20.11.2014 թ. (ՀՀԳՏ N 31 (510)[1], 3.12.2014):

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 21-ի
թիվ 288-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/17

ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԴԵՊՔԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 171-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված գնային չարաշահման դեպքերի առկայության չափանիշները և գնային չարաշահման դեպքերի արձանագրման համար հիմք հանդիսացող հանգամանքների առավել մանրամասն նկարագրությունը և 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված այն դեպքերը կամ գործողությունները, որոնք գնային չարաշահում չեն համարվում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.
1) Օրենք՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը,
2) գնային չարաշահման դեպքի առկայության չափանիշ է համարվում՝ Օրենքի 171-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնային չարաշահման գործողությունների քայլերի տրամաբանությունն ու հաջորդականությունը նկարագրող հնարավոր սխեման,
3) պատվեր է համարվում Օրենքի 159-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված արժեթղթերով գործարքների կնքման նպատակով ներկայացվող հանձնարարականը, ինչպես նաև ներդրումային ծառայություն մատուցող անձի կարգադրությունը, հանձնարարությունը, հայտը կամ առաջարկը,
4) առևտրային համակարգ է համարվում էլեկտրոնային եղանակով արժեթղթերի հրապարակային առևտրի կազմակերպման, անցկացման և դրա հետ կապված տեղեկատվության մշակման և պահպանման համար կարգավորվող շուկայի օպերատորի կողմից օգտագործվող տեխնիկական, ծրագրային և այլ միջոցների համախումբը,
5) երկար դիրք է համարվում այն իրավիճակը, երբ անձը ձեռք է բերել տվյալ դասի արժեթղթերը (տիրապետում է տվյալ դասի արժեթղթերի) կամ կնքել է այնպիսի գործարք, որի համաձայն անձն իրավունք ունի կամ պարտավոր է նախապես համաձայնեցված գնով ձեռք բերել տվյալ դասի արժեթղթերը և անձի համար տնտեսապես շահավետ է այդ արժեթղթերի գների աճը,
6) կարճ դիրք է համարվում այնպիսի իրավիճակը, երբ անձն իրականացրել է կարճ վաճառք (փոխառնված արժեթղթերի վաճառք) կամ կնքել է այնպիսի գործարք, որի համաձայն անձն իրավունք ունի կամ պարտավոր է նախապես համաձայնեցված գնով վաճառել տվյալ դասի արժեթղթեր, և անձի համար տնտեսապես շահավետ է այդ արժեթղթերի գների նվազումը:

3. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն Օրենքում կիրառվող իմաստը:

ԳԼՈՒԽ 3. ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԴԵՊՔԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Գնային չարաշահման դեպքերի առկայության չափանիշները, գնային չարաշահման դեպքերի արձանագրման համար հիմք հանդիսացող հանգամանքները և գնային չարաշահում չհամարվող դեպքերը սահմանվում են սույն կանոնակարգի 1-3 Հավելվածներով:

5. Գնային չարաշահման դեպքերի առկայության չափանիշներ և գնային չարաշահման դեպքերի արձանագրման համար հիմք հանդիսացող հանգամանքներ կարող են լինել սույն կանոնակարգի 1-3 Հավելվածներով սահմանված չափանիշների և արձանագրման հանգամանքների համակցությունները կամ սույն կանոնակարգի 1-3 Հավելվածներով չսահմանված այլ չափանիշներ:

6. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 1-3 Հավելվածներով սահմանված գնային չարաշահման դեպքերի առկայության չափանիշների և գնային չարաշահման դեպքերի արձանագրման համար հիմք հանդիսացող հանգամանքների, ինչպես նաև գնային չարաշահում չհամարվող դեպքերի ու գործողու-

թյունների իրավաչափությունը գնահատելիս, ի թիվս այլ հանգամանքների, հաշվի է առնում հետևյալ հանգամանքների առկայությունը՝

1) գործարքը կամ գործարքի կնքման պատվերն իրականացվել է հաշվի առնելով շուկայի արդար և արդյունավետ գործունեության չափանիշները,

2) գործարքը կնքող կամ գործարքի կնքման պատվեր տված անձի գործողություններով այլ անձանց համար չի նվազել գործարքներ կնքելու հնարավորությունը կամ չի պատճառվել վնաս, կամ իրեն բարենպաստ ուղղությամբ չի փոփոխվել կամ պահպանվել այն արժեթղթի գինը, որի գծով անձն ունի երկար կամ կարճ դիրք:

7. Սույն կանոնակարգի իմաստով արժեթղթերով կնքված գործարքի էական քանակի կամ ծավալի գնահատման համար ուղղորդիչ է համարվում տվյալ արժեթղթով մեկ առևտրային օրվա ընթացքում կնքվող գործարքների շուկայական միջին օրական քանակի կամ ծավալի 20% և ավելի քանակը կամ ծավալը:

8. Սույն կանոնակարգի իմաստով արժեթղթի գնի էական փոփոխությունը, արժեթղթի գնից ոչ օրինաչափ շեղումը գնահատելու համար ուղղորդիչ է համարվում արժեթղթի շուկայական միջին գնից 10% շեղումը:

Հավելված 1
«Գնային չարաշահման դեպքերի առկայության չափանիշները, դրանց արձանագրման համար հիմք հանդիսացող հանգամանքները և գնային չարաշահում չհամարվող դեպքերն ու գործողությունները» սահմանող կանոնակարգ 4/17-ի

ՕՐԵՆՔԻ 171-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԿԵՏԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ, ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ ԵՎ ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԴԵՊՔԵՐ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ/Հ	Գնային չարաշահման դեպքի առկայության չափանիշներ	Գնային չարաշահման դեպքի արձանագրման համար հիմք հանդիսացող հանգամանքներ	Գնային չարաշահում չհամարվող դեպքեր ու գործողություններ
1	2	3	4
1.	Որոշակի արժեթղթով մեկ կամ մի քանի փոխհամաձայնեցված գործարքների՝ առանց արժեթղթի իրական սեփականատիրոջ փոփոխության կնքում, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել շուկայում արժեթղթի գնի, դրա պահանջարկի կամ առաջարկի վերաբերյալ սխալ կամ ապակողմնորոշիչ պատկերի ստեղծման կամ ազդակների հաղորդման կամ հանգեցնում է արժեթղթի գնի ոչ օրինաչափ շեղումների կամ արհեստական մակարդակի սահմանման	Մեկ կամ մի քանի հաջորդական գործարքների կնքման արդյունքում արժեթուղթը կրկին վերադառնում է նախկին սեփականատիրոջը կամ արժեթղթերի փոխանցումն իրականացվում է միմյանց հետ փոխկապակցված անձանց միջև	Գործարքներ, որոնք կդիտարկվեն իրավաչափ սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված կարգով, այդ թվում նաև՝ 1) ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքները, 2)արժեթղթով փոխառության գործարքները, 3) այն գործարքները, որոնց դեպքում արժեթղթերի փոխանցումը պայմանավորված է գրավի իրավունքի իրականացմամբ կամ դատարանի որոշմամբ
2.	Որոշակի արժեթղթով գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվեր տալը, որն իրականացվում է փոխկապակցված անձանց միջև՝ գնման և վաճառքի համընկնող պատվերների տրման միջոցով և որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել շուկայում արժեթղթի գնի, դրա պահանջարկի կամ առաջարկի վերաբերյալ սխալ կամ ապակողմնորոշիչ պատկերի ստեղծման կամ ազդակների հաղորդման կամ հանգեցնում է արժեթղթի գների ոչ օրինաչափ շեղումների կամ արհեստական մակարդակի սահմանման	Որոշակի արժեթղթի գնման և վաճառքի հանդիպակաց պատվերները ներկայացվում են տվյալ առևտրային օրվա առևտրային ժամանակաշրջանի էապես նույն ժամանակահատվածում, նույն արժեթղթի էապես նույն ծավալի համար, էապես նույն գնով և առկա է համաձայնեցված գործարքի կնքման կամ շուկայում արդար գնագոյացման խաթարման կասկած	Գործարքներ կամ գործարքի կնքման պատվերներ, որոնք կդիտարկվեն իրավաչափ սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված կարգով

3.	Որոշակի արժեթղթով գործարքի կնքման պատվեր տալը նպատակ չունենալով այն բավարարել, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել շուկայում արժեթղթի գնի, դրա պահանջարկի կամ առաջարկի վերաբերյալ սխալ կամ ապակողմնորոշիչ պատկերի ստեղծման կամ ազդակների հաղորդման կամ հանգեցնում է արժեթղթի գների ոչ օրինաչափ շեղումների կամ արհեստական մակարդակի սահմանման	Որոշակի արժեթղթի գնման (վաճառքի) պատվեր տալը, որի գինն ավելի բարձր է (ցածր է) նախորդ գնման (վաճառքի) պատվերի գնից, այնուհետև տվյալ պատվերի հեռացումը առևտրային համակարգից նախքան դրա բավարարումը: Ընդ որում՝ նման պատվերները կարող են ներկայացվել փոքր ծավալով դրանք առևտրային համակարգից հեռացնելու ձախողման դեպքում փոքր ծավալով բավարարելու նպատակով	Գործարքներ կամ գործարքի կնքման պատվերներ, որոնք կդիտարկվեն իրավաչափ սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված կարգով
4.	Որոշակի արժեթղթով գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվեր տալը, որոնք կենտրոնացված են առևտրային նստաշրջանի որոշակի ժամանակահատվածում (երբ հաշվարկվում են փակման կամ այլ հաշվարկային գներ) միայն այն պատճառով, որպեսզի տվյալ գործարքի կնքումը կամ կնքման պատվեր տալը հանգեցնի շուկայում արժեթղթի գնի, դրա պահանջարկի կամ առաջարկի վերաբերյալ սխալ կամ ապակողմնորոշիչ պատկերի ստեղծման կամ ազդակների հաղորդման կամ հանգեցնում է արժեթղթի գնի ոչ օրինաչափ շեղումների կամ արհեստական մակարդակի սահմանման	Առևտրային օրվա փակման պահին որոշակի արժեթղթով էական քանակի կամ ծավալի կամ որոշակի արժեթղթի գնի էական փոփոխությամբ գործարքների կնքում կամ դրանց կնքման պատվերների ներկայացում	Գործարքներ կամ գործարքի կնքման պատվերներ, որոնք կդիտարկվեն իրավաչափ սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված կարգով
5.	Որոշակի արժեթղթի գնի ոչ օրինաչափ շեղումների կամ արհեստական մակարդակի սահմանում՝ դրա հետ կապված մեկ այլ արժեթղթի գնի ոչ օրինաչափ շեղման կամ արհեստական մակարդակի սահմանման նպատակով	1) Որոշակի արժեթղթով մեկ կամ մի քանի գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվերների ներկայացում տվյալ արժեթղթի հետ կապված այլ արժեթղթի կամ դրա հետ կապված ածանցյալ գործիքի գնի վրա ազդելու նպատակով 2) Մի կարգավորվող շուկայում որոշակի արժեթղթով մեկ կամ մի քանի գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվեր տալը մեկ այլ կարգավորվող շուկայում տվյալ արժեթղթի կամ դրա հետ կապված ածանցյալ գործիքի գնի վրա արհեստականորեն ազդելու նպատակով	Գործարքներ կամ գործարքի կնքման պատվերներ, որոնք կդիտարկվեն իրավաչափ սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված կարգով, այդ թվում նաև՝ տարբեր կարգավորվող շուկաներում նույն կամ իրար հետ կապված արժեթղթերի գների տարբերություններից օրինական օգուտների ստացման նպատակով կնքվող գործարքները
6.	Որոշակի արժեթղթով հաջորդաբար փոխկապակցված անձանց կողմից արժեթղթով գործարքների կնքում նպատակ հետապնդելով յուրաքանչյուր անգամ սահմանել տվյալ արժեթղթի առավել բարձր (ցածր) գին, քան նախորդ գործարքով սահմանված գինն է, որն էլ ի վերջո հանգեցնում է կամ կարող է հանգեցնել շուկայում արժեթղթի գնի, դրա պահանջարկի կամ առաջարկի վերաբերյալ սխալ կամ ապակողմնորոշիչ պատկերի ստեղծման կամ ազդակների հաղորդման կամ հանգեցնում է արժեթղթի գնի ոչ օրինաչափ շեղումների կամ արհեստական մակարդակի սահմանման	Մեկ կամ մի քանի հաջորդական առևտրային օրերի ընթացքում որոշակի արժեթղթով կնքվում են գործարքներ, որոնց գնման (վաճառքի) գները յուրաքանչյուր հաջորդ գործարքի կնքման արդյունքում ավելի բարձր (ցածր) են, քան տվյալ արժեթղթով կնքված նախորդ գործարքի կնքման արդյունքում	Գործարքներ, որոնք կդիտարկվեն իրավաչափ սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված կարգով,

Հավելված 2
«Գնային չարաշահման դեպքերի առկայության չափանիշները,
դրանց արձանագրման համար հիմք հանդիսացող հանգամանքները
և գնային չարաշահում չհամարվող դեպքերն ու գործողությունները»
սահմանող կանոնակարգ 4/17-ի

ՕՐԵՆՔԻ 171-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ, ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ ԵՎ ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԿԱԶՄՈՂ ԴԵՊՔԵՐ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ/Հ	Գնային չարաշահման դեպքի առկայության չափանիշներ	Գնային չարաշահման դեպքի՝ արձանագրման համար հիմք հանդիսացող հանգամանքներ	Գնային չարաշահում չհամարվող դեպքեր ու գործողություններ
1	2	3	4
1.	Մեկ կամ մի քանի գործարքների կնքման միջոցով արժեթղթի սեփականության իրավունքի քողարկումը	Արժեթղթի սեփականության վերաբերյալ տեղեկատվության բացահայտման պահանջներից խուսափելու միջոցով՝ նախապես պայմանավորվածության վերաբերյալ տեղեկատվության բացահայտում	Գործարքներ, որոնք կդիտարկվեն իրավաչափ սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված կարգով, այդ թվում նաև՝ 1) եթե գործարքի կնքման արդյունքում արժեթուղթը այլ անձի անունով պահելու իրավասությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտով: 2) արժեթղթի սեփականության վերաբերյալ տեղեկատվությունը չի բացահայտվել կամ բացահայտվել է ուշացմամբ
2.	Սխալ կամ ապակողմնորոշիչ տեղեկատվության տարածման միջոցով արժեթղթով գործարքների կնքում	1) Որոշակի արժեթղթի երկար (կարճ) դիրքի բացումը, հետո տվյալ արժեթղթի առքի (վաճառքի) գործարքների կնքումը և (կամ) սխալ կամ ապակողմնորոշիչ տեղեկատվության տարածումը՝ արժեթղթի գինը բարձրացնելու (իջեցնելու) նպատակով, այնուհետև տվյալ արժեթղթի վաճառքը (գնումը) և (կամ) երկար (կարճ) դիրքի փակումը բարձր (իջեցված) գնով 2) Որոշակի արժեթղթի կարճ դիրքի բացումը, հետո տվյալ արժեթղթի վաճառքի գործարքների կնքումը և (կամ) սխալ կամ ապակողմնորոշիչ տեղեկատվության տարածումը՝ արժեթղթի գինը իջեցնելու նպատակով, այնուհետև՝ տվյալ արժեթղթերի գնումը և(կամ) կարճ դիրքի փակումը իջեցված գնով	Գործարքներ, որոնք կդիտարկվեն իրավաչափ սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված կարգով, այդ թվում նաև՝ երբ շուկայի խոշոր մասնակիցների կողմից բացված դիրքի մասին տեղեկատվությունը հրապարակվում է օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով

Հավելված 3
«Գնային չարաշահման դեպքերի առկայության չափանիշները,
դրանց արձանագրման համար հիմք հանդիսացող հանգամանքները
և գնային չարաշահում չհամարվող դեպքերն ու գործողությունները»
սահմանող կանոնակարգ 4/17-ի

ՕՐԵՆՔԻ 171-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ, ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ ԵՎ ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԴԵՊՔԵՐ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ/Հ	Գնային չարաշահման դեպքի առկայության չափանիշներ	Գնային չարաշահման դեպքի արձանագրման համար հիմք հանդիսացող հանգամանքներ	Գնային չարաշահում չհամարվող դեպքեր ու գործողություններ
1	2	3	3
1.	Թողարկողի կամ նրա արժեթղթերի մասին սխալ, ապակողմնորոշիչ կամ խեղաթյուրված տեղեկատվության տարածումը, որը տվյալ թողարկողի արժեթղթի գնի վերաբերյալ ստեղծում է սխալ կամ ապակողմնորոշիչ պատկեր	1) Հեռուստատեսությամբ, ռադիոյով, ինտերնետով կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով, ինչպես նաև ցանկացած այլ եղանակով արժեթղթի գնահատման համար սխալ, ապակողմնորոշիչ կամ խեղաթյուրված տեղեկությունների տարածում 2) Արժեթղթերի գնահատման համար էական համարվող տեղեկատվության չբացահայտում	
2.	Ցանկացած տեղեկատվության տարածումը, որը տվյալ թողարկողի արժեթղթի գնի վերաբերյալ ստեղծում է սխալ կամ ապակողմնորոշիչ պատկեր	Այնպիսի տեղեկատվության տարածումը, որն ուղղակիորեն չի առնչվում արժեթղթին, սակայն տվյալ արժեթղթի գնի վերաբերյալ սխալ կամ ապակողմնորոշիչ պատկեր է ստեղծում	

*Երկու հարյուր դրամ անվանական արժեքով՝ 2014 թվականի նմուշի Հայաստանի Հանրապետության շրջանառու հիշատակային մետաղադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը, 41-րդ, 42-րդ, 47-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. 2014 թվականի դեկտեմբերի 29-ից շրջանառության մեջ դնել երկու հարյուր դրամ անվանական արժեքով՝ 2014 թվականի նմուշի «Կաղնի», «Սոսի», «Ուռենի», «Հաճարենի», «Սոճի» և «Բարդի» Հայաստանի Հանրապետության շրջանառու հիշատակային մետաղադրամները:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով սահմանված մետաղադրամները Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական վճարամիջոց են և ենթակա են անվերապահ ընդունման իրենց անվանական արժեքով՝ փողով արտահայտված բոլոր պարտավորությունների դիմաց:

3. Սահմանել, որ երկու հարյուր դրամ անվանական արժեքով 2003 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության մետաղադրամները մնում են շրջանառության մեջ առանց սահմանափակումների և շրջանառության պայմանների փոփոխության:

4. Հաստատել երկու հարյուր դրամ անվանական արժեքով 2014 թվականի նմուշի Հայաստանի Հանրապետության շրջանառու հիշատակային մետաղադրամների նկարագրությունը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
24 հոկտեմբերի 2014 թ., N 289-Ն

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 21-ի
թիվ 289-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

200 դրամ անվանական արժեքով 2014 թ. նմուշի Հայաստանի Հանրապետության շրջանառու հիշատակային մետաղադրամների

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է տարբեր դիմերեսներով և միևնույն դարձերեսով 6 տեսակի 200 դրամ անվանական արժեքով շրջանառու հիշատակային մետաղադրամներ՝ նվիրված Հայաստանի վայրի ծառերին:

Մետաղադրամների դիմերեսի կենտրոնում պատկերված են կաղնու, սոսու, ուռենու, հաճարենու, սոճու և բարդու ընձյուղներ:

Պատկերների ներքևում մետաղադրամների թողարկման տարեթիվն է՝ «2014», իսկ շրջագծով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» և համապատասխանաբար՝ «ԿԱՂՆԻ», «Quercus araxina», «ՍՈՍԻ», «Platanus orientalis», «ՈՒՌԵՆԻ», «Salix babylonica», «ՀԱՃԱՐԵՆԻ», «Fagus orientalis», «ՍՈՃԻ», «Pinus kochiana», «ԲԱՐԴԻ», «Populus tremula» մակագրությունները:

Մետաղադրամների դարձերեսի կենտրոնում անվանական արժեքն է՝ «200 դրամ», իսկ շրջագծով՝ զարդանախշեր:

Դիմերեսի էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

Դարձերեսի էսքիզի հեղինակն է Կարապետ Աբրահամյանը:

Շրջանառու հիշատակային մետաղադրամները հատվել են Սլովակիայի դրամահատարանում:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 21-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 20.11.2014 թ. (ՀՀԳՏ N 31 (510)[1], 3.12.2014):

Շրջանառու հիշատակային մետաղադրամների բնութագիրը

Անվանական արժեքը	200 դրամ
Մետաղը	CuAlNi
Քաշը	4,50 գ
Տրամագիծը	24,0 մմ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	200.000 հատ յուրաքանչյուր տեսակից

200 դրամ անվանական արժեքով 2014 թ. նմուշի ՀՀ շրջանառու հիշատակային մետաղադրամների դիմերեսի և դարձերեսի էսքիզները

Դիմերեսի էսքիզներ

1. Կաղնի



2. Սոսի



3. Ուռենի



4. Հաճարենի



5. Սոճի



6. Բարդի



Դարձերեսի էսքիզ



*2015 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «է» ենթակետը, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2011 թ. դեկտեմբերի 6-ի թիվ 340Ա որոշմամբ հաստատված արծաթե ներդրումային դրամների թողարկման ծրագիրը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. 2015 թ. հունվարի 12-ից շրջանառության մեջ դնել 2015 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված ներդրումային դրամների նկարագրություննե-րը, որոնք էսքիզների հետ միասին ներկայացված են Հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
24 հոկտեմբերի 2014 թ., N 290-Ն

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 21-ի
թիվ 290-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
1. 2015 թ. թողարկման «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը

1) Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «100 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2015»: Աջ կողմում տեղադրված են «1/4 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1/4 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	20,18 +/- 0,07 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 2.000.000 հատ

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հոկտեմբերի 21-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 20.11.2014 թ. (ՀՀԳՏ N 31 (510)[1], 3.12.2014):

6) 2015 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





2. 2015 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը

1) Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «200 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2015»: Աջ կողմում տեղադրված են «1/2 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	200 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1/2 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	27,66 +/- 0,15 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 2.000.000 հատ

6) 2015 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





3. 2015 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը

1) Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «500 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2015»: Աջ կողմում տեղադրված են «1 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	500 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	38,60 +/- 0,3 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 8.000.000 հատ

6) 2015 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





4. 2015 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը

1) Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «1000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2015»: Աջ կողմում տեղադրված են «5 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	5 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	60,15 +/- 0,5
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 500.000 հատ

6) 2015 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





5. 2015 թվականի թողարկման «Նոյյան տապան» 10 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը

1) Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «5000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2015»: Աջ կողմում տեղադրված են «10 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	5000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	10 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	75,50 +/- 0,7
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 500.000 հատ

6) 2015 թվականի թողարկման «Նոյյան տապան» 10 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





6. 2015 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 կգ քաշով ներդրումային դրամի նկարագրությունը

1) Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «10000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2015»: Աջ կողմում տեղադրված են «1 kg» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) էսքիզների հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	10 000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1 կգ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	100,00 +/- 0,9
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 500.000 հատ

6) 2015 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 կգ քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





7. 2015 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 կգ քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «20000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2015»: Աջ կողմում տեղադրված են «5 kg» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) էսքիզների հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	20 000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	5 կգ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	149,62 +/- 1,2
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 50.000 հատ

6) 2015 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 կգ քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





*«Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտի թողարկման, սպասարկման և տարածման, ինչպես նաև վճարային քարտով գործառնությունների իրականացման կարգը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հունվարի 31-ի թիվ 39-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտ կարող են թողարկել, սպասարկել և իրացնել (տարածել) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերը (այսուհետ՝ բանկեր),

Ցանկանալով հստակեցնել վճարային քարտի թողարկման, սպասարկման և տարածման հետ առնչվող բանկերի կողմից բարձրացված հարցադրումները՝ կապված վճարային քարտի տեսակների հետ,

հնարավորինս պարզեցնել բանկերի կողմից թողարկված վճարային քարտի տրամադրման ընթացակարգը՝ ապահովելով հաճախորդների նույնականացման պահանջը,

առավել արդյունավետ կերպով կառավարել բոլոր այն ռիսկերը, որոնք կարող են պայմանավորված լինել բանկերի ներքին ընթացակարգերի և իրենց հաճախորդների հետ հարաբերությունները կարգավորող փաստաթղթերի բացակայությամբ կամ դրանցում առկա թերություններով և բացերով, որոնց առկայությունը կարող է բացասաբար անդրադառնալ Հայաստանի Հանրապետության տարածքում վճարահաշվարկային ծառայությունների մատուցման նկատմամբ հանրության վստահության վրա,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կետը, 5-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետը, 2-րդ կետի «ե» ենթակետը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իդ» կետերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտի թողարկման, սպասարկման և տարածման, ինչպես նաև վճարային քարտով գործառնությունների իրականացման կարգը»՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հունվարի 31-ի թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտերի թողարկման, սպասարկման և տարածման, ինչպես նաև վճարային քարտերով գործառնությունների իրականացման կարգը»:

3. Սույն որոշմամբ հաստատված կարգը չի տարածվում բանկերի կողմից թողարկված և տրամադրված այն կանխավճարային քարտերի վրա, որոնք թողարկվել են մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը՝ մինչև տվյալ կանխավճարային քարտերի գործողության ավարտը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
6 նոյեմբերի 2014 թ., N 300-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. նոյեմբերի 4-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 14.11.2014 թ. (ՀՀՊՏ N 31 (510)[1], 3.12.2014):

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի նոյեմբերի 4-ի
թիվ 300-Ն որոշմամբ

Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտի թողարկման, սպասարկման և տարածման, ինչպես նաև վճարային քարտով գործառնությունների իրականացման կանոնները:

2. Սույն կարգը տարածվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից լիցենզավորված և վճարային քարտ թողարկելու և սպասարկելու թույլտվություն ստացած կազմակերպությունների (այսուհետ բանկեր) վրա:

ԳԼՈՒԽ 2. ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն կարգում օգտագործվող հասկացությունները կիրառվում են «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իմաստով:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտ թողարկող բանկերը (այսուհետ՝ թողարկող) թողարկում են անձնականացված/նույնականացված վճարային գործիք, որը թույլ է տալիս ֆիզիկական և իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերին (այսուհետ՝ քարտապան) թողարկողի հետ կնքված համապատասխան պայմանագրի հիման վրա, կատարել կանխիկացման և անկանխիկ գործառնություններ:

5. Վճարային քարտերը դասակարգվում են.

1) ըստ քարտապանների.
   ա. ֆիզիկական անձ,
   բ. իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր:
2) ըստ տեղեկատվության պահպանման (գրառման).
   ա. մագնիսական,
   բ. միկրոպրոցեսորային (չիպային),
   գ. հիբրիդ (համատեղված),
   դ. վիրտուալ:
3) ըստ վճարման տեսակի (սխեմայի).
   ա. դեբետային,
   բ. հաշվարկային,
   գ. վարկային:
4) ըստ կիրառման միջավայրի.
   ա. իրական միջավայրում կիրառվող,
   բ. վիրտուալ (ինտերնետ) միջավայրում կիրառվող:

6. Բանկը կարող է թողարկել հետևյալ տեսակների վճարային քարտեր.

1) ***դեբետային քարտ***՝ քարտ, որը նախատեսված է քարտապանին պատկանող դրամական միջոցների սահմաններում կանխիկացման, կանխիկի մուտքագրման և անկանխիկ գործառնություններ իրականացնելու համար՝ քարտապանի բանկային հաշվում առկա դրամական միջոցների հաշվին,
2) ***հաշվարկային քարտ***՝ քարտ, որը նախատեսված է քարտապանին պատկանող դրամական միջոցների սահմաններում կանխիկացման, կանխիկի մուտքագրման և անկանխիկ գործառնություններ իրականացնելու համար՝ քարտապանի բանկային հաշվում առկա դրամական միջոցների և սույն կարգի 8-րդ կետով սահմանված պայմանագրի հիման վրա թողարկողի կողմից տրամադրված վարկի (օվերդրաֆտի) հաշվին,
3) ***վարկային քարտ (կրեդիտային)***՝ քարտ, որը նախատեսված է քարտապանի կողմից գործառնություններ իրականացնելու համար՝ թողարկողի կողմից քարտապանին տրամադրված դրամական միջոցների հաշվին վարկային պայմանագրի պայմանների համաձայն:

7. Բանկը իրականացնում է դեբետային, հաշվարկային և վարկային քարտերի (այսուհետ՝ վճարային քարտ) թողարկում քարտապանների համար:

8. Վճարային քարտի տրամադրման ժամանակ թողարկողի և քարտապանի միջև կնքվում է վճարային քարտի թողարկման և սպասարկման համար բանկային հաշվի պայմանագիր/պայմանագրեր (այսուհետ՝ վճարային քարտի թողարկման և սպասարկման պայմանագիր):

9. Սույն կարգում կիրառվող հիմնական հասկացություններն են՝

1) ***ավտոմատ գանձման մեքենա (բանկոմատ)***՝ ՀՀ ԿԲ խորհրդի կողմից հաստատված Ավտոմատ ինքնասպասարկող սարքերի տեղադրման, շահագործման և դրանց միջոցով ֆինանսական գործառնությունների իրականացման վերաբերյալ կարգով սահմանված գրասենյակային կամ արտաքին օգտագործման համար նախատեսված սարք,
2) ***ՊՈՍ տերմինալ***՝ էլեկտրոնային սարք, որը նախատեսված է առևտրի և (կամ) սպասարկման կետում վճարային քարտով անկանխիկ գործառնություն կատարելու կամ բանկի և (կամ) վերջինիս տարածքային ստորաբաժանման տարածքում վճարային քարտով կանխիկացման գործառնություն կատարելու համար,
3) ***սպասարկող (merchant)*** առևտրի և/կամ ծառայությունների մատուցման կետ, որը վճարային քարտի սպասարկում իրականացնող բանկի հետ կնքել է պայմանագիր իր կողմից վաճառվող ապրանքների և/կամ մատուցվող ծառայությունների դիմաց վճարային քարտը, որպես վճարամիջոց ընդունելու վերաբերյալ,
4) ***վճարային քարտի սպասարկում (acquiring)***՝ բանկի կողմից մատուցվող ծառայություն, որի արդյունքում ապահովվում է սպասարկողների մոտ վճարային քարտով սահմանված գործառնությունների և դրանց դիմաց հաշվարկների կատարման ապահովումը, ինչպես նաև տվյալ բանկի հաճախորդների կողմից կանխիկի մուտքագրումը, հաճախորդներին կանխիկ դրամական միջոցների տրամադրումը, փոխանցումը և/կամ հաճախորդ չհանդիսացող քարտապաններին կանխիկ դրամական միջոցների տրամադրումը,
5) ***անվանագրում***՝ վճարային քարտի դաջման (էմբոսացման, ինջինիրինգի) մագնիսական ժապավենի վրա և (կամ) միկրոպրոցեսորային հիշողության մեջ տեղեկատվության գրառման ընթացակարգ՝ համաձայն քարտային վճարահաշվարկային համակարգի կանոնների,
6) ***վճարային քարտով կատարված վճարումների գրանցամատյան (այսուհետ՝ վճարումների գրանցամատյան)***՝ փաստաթուղթ կամ փաստաթղթերի ամբողջություն, որը պարունակում է քարտային վճարահաշվարկային համակարգի կանոնով և (կամ) այլ փաստաթղթերով սահմանված ժամանակահատվածի համար վճարային քարտի միջոցով իրականացված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ կազմված պրոցեսինգ իրականացնող իրավաբանական անձի կամ թողարկողի կողմից, որի արդյունքում իրականացնում է վճարային քարտի միջոցով իրականացված գործառնությունների տեղեկատվության հավաքագրում, մշակում և փոխանցում/տրամադրում (պրոցեսինգ) բանկերին և ներկայացվում է էլեկտրոնային տեսքով և (կամ) թղթային կրիչի վրա,
7) ***էլեկտրոնային մատյան***՝ քարտային վճարահաշվարկային համակարգի կանոնով և (կամ) այլ փաստաթղթով սահմանված ժամանակահատվածի համար վճարային քարտով իրականացված գործառնությունների ժամանակ բանկոմատի, ՊՈՍ տերմինալի կամ վճարային քարտ սպասարկող այլ տեխնիկական սարքավորման միջոցով ձևավորված էլեկտրոնային տեսքով փաստաթուղթ կամ փաստաթղթերի ամբողջություն,
8) ***անհատական նույնականացման համար ՊԻՆ-կոդ***՝ թողարկողի կողմից քարտապանին նույնականացնող ծածկագիր, որը կիրառվում է քարտապանի կողմից քարտային վճարահաշվարկային համակարգի կանոններով նախատեսված դեպքերում,
9) ***հավաստագրում (ավտորիզացիա)***՝ թողարկողի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից վճարային քարտով գործառնությունների կատարման թույլտվության ստացման գործընթաց,
10) ***հաշվետու ժամանակաշրջան***՝ քարտապանի վճարային քարտով կատարված գործառնությունների ժամանակաշրջան, որի վերաբերյալ բանկը քարտապանին ներկայացնում է հաշվետվություն:
11) ***Վճարային քարտի վավերապայմաններն են հանդիսանում.***

ա. վճարային քարտի քարտապանի անուն, ազգանուն (իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր քարտապանի դեպքում՝ լիազորված անձի անուն, ազգանուն),

բ. վճարային քարտ թողարկողի անվանում (ապրանքային նշան),

գ քարտային վճարահաշվարկային համակարգի անվանում (ապրանքային նշան/նշաններ), որին պատկանում է տվյալ վճարային քարտը (սահմանված լինելու դեպքում),

դ. վճարային քարտի համար,

ե. վճարային քարտի գործողության ժամկետ (սահմանված լինելու դեպքում),

զ. քարտապանի ստորագրություն և (կամ) այլ տվյալներ, որոնք թույլ կտան հաստատել, որ տվյալ գործառնությունը նախաձեռնված է քարտապանի կողմից (օրինակ՝ CVV կամ CVC):

Վճարային քարտի վավերապայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում վճարային քարտը համարվում է անվավեր, բացառությամբ սույն կարգի 10-րդ կետով սահմանված դեպքերի:

10. Սույն կարգի 9-րդ կետի 11-րդ ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված վավերապայմանը կարող է բացակայել, եթե ապահովված են հետևյալ պայմանների ամբողջությունը.

1) վճարային քարտը՝

ա. թողարկվել է ոչ ավելի, քան երկու տարի գործողության ժամկետով՝ միայն ՀՀ դրամով,

բ. կարող է օգտագործվել բացառապես ՊԻՆ-կոդի կիրառմամբ,

գ. ենթակա չէ նույն անձի անունով վերաթողարկման,

դ. ենթակա չէ օգտագործման ինտերնետ միջավայրում:

11. Սույն կարգի 10-րդ կետով սահմանված պահանջները բավարարող վճարային քարտը կարող է ձեռք բերվել.

1) ձեռքբերողի կողմից անձնական օգտագործման նպատակով,

2) ձեռքբերողի կողմից՝ երրորդ անձի կողմից օգտագործման նպատակով:

12. Վճարային քարտը սույն կարգի 11-րդ կետի 1)-ին ենթակետով սահմանված նպատակով ձեռք բերելու դեպքում սույն կարգի 8-րդ կետով սահմանված վճարային քարտի թողարկման և սպասարկման պայմանագրի կողմ պետք է հանդիսանա վճարային քարտը ձեռք բերող անձը:

13. Վճարային քարտը սույն կարգի 11-րդ կետի 2)-րդ ենթակետով սահմանված նպատակով ձեռք բերելու դեպքում սույն կարգի 8-րդ կետով սահմանված վճարային քարտի թողարկման և սպասարկման պայմանագրի կողմ պետք է հանդիսանա վճարային քարտը օգտագործող անձը:

ԳԼՈՒԽ 3. ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ, ՏԱՐԱԾՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

14. Քարտապանները իրենց պատկանող դրամական միջոցների շարժը (մուտքագրումներ և (կամ) ելքագրումներ), այդ թվում վարկային միջոցների, կարող են իրականացնել կանխիկ/անկանխիկ եղանակով՝ վճարային քարտի թողարկման և սպասարկման պայմանագրի և (կամ) քարտային վճարահաշվարկային համակարգի կանոնների համաձայն:

15. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը իրականացնում են սպասարկողների մոտ վճարային քարտով կատարված գործառնությունների դիմաց հաշվարկների ապահովում, ինչպես նաև տվյալ բանկի հաճախորդներին կանխիկի մուտքագրման, կանխիկ դրամական միջոցների տրամադրման և հաճախորդ չհանդիսացող քարտապաններին կանխիկ դրամական միջոցների տրամադրման գործառնություններ:

16. Բանկը իրավասու է միաժամանակ իրականացնել վճարային քարտի թողարկում, սպասարկում և տարածում: Վճարային քարտի թողարկումը, սպասարկումը և տարածումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության, սույն կարգի և կենտրոնական բանկի այլ նորմատիվային ակտերի, ինչպես նաև քարտային վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված կանոնների համաձայն:

17. Բանկը պարտավոր է մինչև քարտապանի հետ պայմանագիր կնքելը ծանոթացնել նրան վճարային քարտի թողարկման, սպասարկման և տարածման հիմնական կանոններին:

18. Բանկի վճարային քարտի թողարկման, սպասարկման և տարածման հիմնական կանոնները պարտադիր ներառում են՝

1) վճարային քարտի և ՊԻՆ-կոդի և (կամ) անձը նույնականացնող՝ քարտային վճարահաշվարկային համակարգի կանոններով նախատեսված այլ ծածկագրի (ծածկագրերի) օգտագործման և պահպանման կանոնները,
2) վճարային քարտով իրականացված գործառնությունների տեսակները (եթե քարտային վճարահաշվարկային համակարգի կանոններով կան գործառնության կատարման հաճախականության, տեսակների կամ գումարի մեծության սահմանափակումներ, ապա վերջիններս պետք է նույնպես նշված լինեն),
3) վճարային քարտ թողարկողի և քարտապանի պարտավորությունները և նրանց պատասխանատվության չափն ու պայմանները (քարտապանի պատասխանատվությունն անվավեր գործառնությունների համար, թողարկողի պատասխանատվությունը քարտապանի առջև վերջինիս կողմից չկատարված գործառնությունների համար, քարտապանի կողմից չկատարված գործառնությունների վերաբերյալ վերջինիս կողմից տեղեկացման կարգի և պայմանների, պատասխանատվության չափի և վնասների բաշխման, այլ սահմանված ընթացակարգերի վերաբերյալ),
4) վճարային քարտի բլոկավորման և ապաբլոկավորման կարգն ու պայմանները, ժամկետը ինչպես քարտապանի նախաձեռնությամբ, այնպես էլ բանկի,
5) քարտային/բանկային հաշվից դեբետագրման/ելքագրման կամ քարտային/բանկային հաշվի կրեդիտագրման/մուտքագրման կարգն ու պայմանները, ժամկետը,
6) ցանկացած տիպի միջնորդավճարներ, որոնք գանձվում են քարտապանից նրան մատուցված ծառայությունների դիմաց, կիրառվող սակագներ: Միջնորդավճարները ներառում են վճարային քարտի տրամադրման և (կամ) տարեկան սպասարկման գումարները, վճարային քարտով գործառնությունների իրականացման համար գանձվող միջնորդավճարները կամ այլ վճարները,

7) քարտապանի կողմից քարտային գործառնության բողոքարկման ժամանակահատվածը, ինչպես նաև բողոքարկման և ճշգրտման ժամանակ կիրառվող ընթացակարգերը և քարտապանի կողմից դրանց կիրառման կարգն ու պայմանները, ժամկետները,
8) քարտային/բանկային հաշվի արժույթից տարբերվող արժույթով (արտարժույթով) գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փոխարժեքի որոշման մեխանիզմը,
9) քարտապանի կողմից վճարային քարտի կորստի/գողանալու դեպքում կիրառվող ընթացակարգերը և դրանց կիրառման կարգը, պայմանները և ժամկետները,
10) վճարային քարտի վերաթողարկման կարգն ու պայմանները, ժամկետները,
11) վճարային քարտով իրականացված գործառնությունների դիմաց հաշվարկի ընթացակարգերը, մասնավորապես.

ա. Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով քարտապանին դրամական միջոցների տրամադրման կամ կանխիկի մուտքագրման կարգը, պայմանները և ժամկետները,

բ. համապատասխան դրամական պարտավորությունների վերադարձման (մարման) կարգն ու պայմանները, ժամկետները,

գ. տրամադրված դրամական միջոցների վարկավորման տոկոսադրույքը, տոկոսների հաշվարկման և քարտապանի պարտավորությունների մարման կարգն ու պայմանները, ժամկետները,

12) քարտապանին վերաբերող այլ ընթացակարգեր, որոնցով կարգավորվում են վճարային քարտով կատարված գործառնությունները:

19. Բանկի վճարային քարտի թողարկման, սպասարկման և տարածման հիմնական կանոնները պետք է մշակված լինեն գրավոր, հնարավորության դեպքում նաև էլեկտրոնային եղանակով, գրված պարզ, մատչելի ձևով, հայերեն, անհրաժեշտության դեպքում նաև այլ լեզուներով:

ԳԼՈՒԽ 4. ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

20. Քարտապանին տրամադրված մի քանի վճարային քարտերով գործառնությունները կարող են իրականացվել մեկ բանկային հաշվով:

21. Քարտապանին տրամադրված մեկ վճարային քարտով գործառնություններ կարող են իրականացվել մի քանի հաշիվներով:

22. Ֆիզիկական անձ քարտապանի կողմից վճարային քարտով կարող են իրականացվել հետևյալ տեսակի գործառնություններ՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում և դրանից դուրս ստանալ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով կանխիկ դրամական միջոցներ,
2) Հայաստանի Հանրապետության տարածքում վճարել ապրանքների (աշխատանքների, ծառայությունների, մտավոր աշխատանքի արդյունքների) դիմաց Հայաստանի Հանրապետության արժույթով, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս նաև արտարժույթով,
3) Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով այլ գործառնություններ, եթե դրանց կատարման համար օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված չեն սահմանափակումներ:

23. Իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր (այսուհետ իրավաբանական անձ) քարտապանի կողմից վճարային քարտով իրականացվում են հետևյալ տեսակի գործառնություններ

1) Հայաստանի Հանրապետության տարածքում տնտեսական գործունեության հետ կապված հաշվարկների, այդ թվում՝ գործառնական և վարչական ծախսերով կատարված հաշվարկների դիմաց Հայաստանի Հանրապետության արժույթով ստանալ կանխիկ դրամական միջոցներ,
2) Հայաստանի Հանրապետության տարածքում տնտեսական գործունեության հետ կապված անկանխիկ հաշվարկների, այդ թվում՝ գործառնական և վարչական ծախսերով կատարված հաշվարկների դիմաց վճարել Հայաստանի Հանրապետության արժույթով,
3) Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով այլ գործառնություններ, եթե դրանց կատարման համար Հայաստանի Հանրապետության օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանափակումներ նախատեսված չեն:

24. Քարտապանները վճարային քարտով կարող են իրականացնել գործառնություններ՝ Հայաստանի Հանրապետության արժույթով և (կամ) արտարժույթով բացված բանկային հաշիվներով: Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործառնությունները կատարվում են օրենքով, վճարային քարտի թողարկման և սպասարկման պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով:

ԳԼՈՒԽ 5. ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

25. Վճարային քարտի կամ վճարային քարտի վավերապայմանների կիրառման ընթացքում թղթային և (կամ) էլեկտրոնային տեսքով ձևավորվում է վճարահաշվարկային փաստաթուղթ, որը վավերացված է քարտապանի ստորագրությամբ կամ ՊԻՆ-կոդի կամ անձը նույնականացնող՝ քարտային վճարահաշվարկային համակարգի կանոններով նախատեսված այլ ծածկագրերի կիրառմամբ և հիմք է հանդիսանում

վճարային քարտով իրականացված գործառնությունների հաշվարկի իրականացման համար և հավաստում դրանց կատարումը:

26. Վճարային քարտի կիրառման ընթացքում թղթային և (կամ) էլեկտրոնային եղանակով ձևավորվում են հետևյալ վճարահաշվարկային փաստաթղթերը (այսուհետ՝ քարտային անդորրագիր).

1) ավտոմատ գանձման մեքենայով (այսուհետ՝ ԱԳՄ-ով) կանխիկացման, կանխիկի մուտքագրման կամ անկանխիկ գործառնության ընթացքում ձևավորված քարտային անդորրագիր,
2) առևտրի և (կամ) ծառայությունների մատուցման կետում տեղադրված ՊՕՍ տերմինալով և (կամ) իմպրինտերով անկանխիկ գործառնության ընթացքում ձևավորված քարտային անդորրագիր,
3) Ֆինանսական կազմակերպության և (կամ) վերջինիս տարածքային ստորաբաժանման տարածքում տեղադրված ՊՈՍ տերմինալով և (կամ) իմպրինտերով կանխիկացման գործառնության ընթացքում ձևավորված քարտային անդորրագիր,
4) վիրտուալ կամ այլ էլեկտրոնային միջավայրում՝ առևտրի և (կամ) ծառայությունների մատուցման կետում վիրտուալ ՊՕՍ տերմինալով անկանխիկ գործառնության ընթացքում ձևավորված քարտային անդորրագիր: Ընդ որում, սույն կետում նշված միջավայրում վճարում կատարելիս կարող է քարտային անդորրագիր չձևավորվել, եթե ձևավորվում է վճարային քարտով վճարման կատարումը հավաստող և (կամ) ծախսը հիմնավորող այլ փաստաթուղթ, որը թույլ է տալիս հաստատել, որ տվյալ գործառնությունը նախաձեռնված է վճարային քարտով:

27. Քարտային անդորրագիրը պետք է պարունակի հետևյալ պարտադիր վավերապայմանները.

1) փաստաթղթի համարը,
2) փաստաթղթի կազմման ամսաթիվը և գործառնության կատարման վայրը բնութագրող տվյալներ (սպասարկողի կամ սպասարկում իրականացնողի անվանումը, հասցեն, կոնտակտային տվյալներ),
3) ԱԳՄ-ի, ՊՕՍ տերմինալի, իմպրինտերի կամ վճարային քարտի սպասարկման համար նախատեսված ապարատածրագրային այլ միջոցի (վիրտուալ կամ մոբայլ ՊՕՍ տերմինալ, այլ) նույնականացուցիչը,
4) գործառնության գումարը,
5) գործառնության արժույթը,
6) գործառնության տեսակը (կանխիկացում, անկանխիկ վճարում, կանխիկի մուտքագրում կամ փոխանցում),
7) քարտի վավերապայմանները (քարտային վճարահաշվարկային համակարգի կանոններով թույլատրելի չափով),
8) քարտապանի ստորագրությունը՝ կախված կիրառվող տեխնոլոգիայից, քարտային վճարահաշվարկային համակարգի կանոնից կամ ՊԻՆ-կոդ կիրառելու դեպքում՝ նշում ՊԻՆ-կոդ կիրառելու վերաբերյալ,
9) գործառնության համար գանձվող միջնորդավճար (կիրառելիության դեպքում), որի վերաբերյալ քարտապանը տեղեկացված չէ բողարկողի կողմից սահմանված վճարային քարտի թողարկման և սպասարկման հիմնական կանոններով,
10) հավաստագրումը հաստատող կոդ (կիրառելիության դեպքում),
11) քարտային վճարահաշվարկային համակարգի կանոնների համաձայն այլ տվյալներ:

28. Բանկի կողմից քարտապաններին տրամադրված ՊԻՆ-կոդի և (կամ) անձը նույնականացնող՝ քարտային վճարահաշվարկային համակարգի կանոններով նախատեսված այլ ծածկագրի կիրառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, վճարային քարտի թողարկման և սպասարկման պայմանագրի և (կամ) քարտային վճարահաշվարկային համակարգի կանոնի համաձայն:

29. Սույն կարգի 27-րդ կետի 8-րդ ենթակետում նշված վավերապայմանի պահանջը համարվում է կատարված, եթե կիրառվում է ՊԻՆ-կոդը կամ անձը նույնականացնող՝ քարտային վճարահաշվարկային համակարգի կանոններով նախատեսված այլ ծածկագիր, որը դրվում է (կիրառվում է) գործառնությունն իրականացնելու պահին:

30. Վճարային քարտի կիրառման ընթացքում ձևավորված վճարահաշվարկային և այլ փաստաթղթերի կազմման հիմք հանդիսացող վճարումների գրանցամատյանը կամ էլեկտրոնային մատյանը բանկում և (կամ) նրան սպասարկող պրոցեսինգային կազմակերպությունում պահպանվում է առնվազն 5 տարի:

ԳԼՈՒԽ 6. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ/ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ/ՔԱՂՎԱԾՔԻ ՁԵՎԸ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

31. Թողարկողը քարտապանին տեղեկացնում է վճարային քարտով նախորդ ամսվա ընթացքում կատարված գործառնությունների վերաբերյալ՝ տրամադրելով նրան հաշվետվություն (այսուհետ՝ քաղվածք): Քաղվածքի տրամադրման ժամկետը, պայմանները և կարգը սահմանվում են վճարային քարտի թողարկման և սպասարկման պայմանագրով: Վճարային քարտի թողարկման և սպասարկման պայմանագրում

քաղվածքի տրամադրման ժամկետի բացակայության դեպքում քաղվածքը տրամադրվում է առնվազն յուրաքանչյուր ամիս:

32. Քարտապանին տրամադրվող քաղվածքը պարունակում է՝

1) քարտի վավերապայմանները (քարտային վճարահաշվարկային համակարգի կանոններով թույլատրելի չափով),
2) հաշվետու ժամանակաշրջանը,
3) հաշվետու ժամանակաշրջանի սկզբում հասանելի գումարը (մնացորդը),
4) ըստ յուրաքանչյուր քարտային գործառնության.
   ա. գործառնության գումարը,
   բ. գործառնության կատարման և հաշվարկի ապահովման ամսաթիվը,
   գ. գործառնության համար գանձվող միջնորդավճարները,
   դ. գործառնության տեսակի բնութագիրը,
   ե. քարտային/բանկային հաշվի արժույթից տարբերվող արժույթով (արտարժույթով) գործառնությունների կատարման ժամանակ՝ կիրառվող փոխարժեքը,
   զ. գործառնության գումարը և գործառնության կատարման արժույթը,
   է. սպասարկողին կամ սպասարկում իրականացնողին նույնականացնող տվյալներ,
5) հաշվետու ժամանակաշրջանի վերջում հասանելի գումարը,
6) քաղվածքը կազմելու ամսաթիվը,
7) քարտապանի փաստացի պարտավորության չափը հաշվետու ժամանակաշրջանի համար (վարկային կամ հաշվարկային քարտի դեպքում),
8) թողարկողի կողմից սահմանված այլ տվյալներ:

33. Սույն կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված պահանջը կարող է բացակայել, եթե բանկը վճարային քարտի թողարկման, սպասարկման և տարածման հիմնական կանոններով կամ վճարային քարտի թողարկման և սպասարկման պայմանագրով քարտապանին տեղեկացրել է քարտային/բանկային հաշվի արժույթից տարբերվող արժույթով (արտարժույթով) գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փոխարժեքի հաշվարկման մեխանիզմի վերաբերյալ:

34. Թողարկողը՝ քարտապանի կողմից քաղվածքում արտացոլված գործառնությունների վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում պարտավոր է ընդունել դրանք՝ քաղվածքի տրամադրման օրվանից առնվազն 30 օրվա ընթացքում, եթե վճարային քարտի թողարկման և սպասարկման պայմանագրով ավելի երկար ժամկետ սահմանված չէ: Սահմանված ժամանակահատվածում առարկություններ չներկայացնելու դեպքում այն համարվում է քարտապանի հետ համաձայնեցված:

35. Թողարկողը քարտապանի կողմից ներկայացված առարկությունների ստացման օրվանից 90 օրվա ընթացքում ներկայացնում է հիմնավոր պատասխան, եթե վճարային քարտի թողարկման և սպասարկման պայմանագրով ավելի կարճ ժամկետ սահմանված չէ:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«Աշխարհի ամենահին ծառերը» շարքի «Հարյուրավոր ձիերի շագանակենի», «Սխտորաշենի սոսի», «Հրեշտակի կաղնի» և «Գեներալ Շերմանի ծառը» հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին[*]

